# ԹՕՄԱՅԻ ԿԵՄՓԱՑՒՈՅ:

Կանոնաւորելոյն Կրօնաւորի 'ի Կարգէ Սրբոյն Օգոստինեայ:

Յաղագս

# ՀԱՄԱՀԵՏԵՒՄԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ:

## ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ:

Առաջնորդեցութիւնք օգտակարք առ կեանս հոգեւորս:

### Գլուխ Ա:

Յաղագս համահետեւմանն Քրիստոսի, եւ խոտման բնաւից ունայնութեանց աշխարհի:

ՈՐ ՀԵՏԵՒԻ ԻՆՁ. ՈՉ ՇԸՐ- Յով. 8. 12.
ջի 'ի խաւարի. ա-
սէ Տէրն: Այսոքիկ են բանք

Քրիս

## Առ միաՀամուռ Ուսումնա- սէր Հօյլս Մերազնեայց։

Բաձա վրէպ, և ամենասուրբ դը-րեալ սորոյ Հոգւոյն, և մեր դարդարեալ զարդարումն Սիոնի որոյ՝ երգէ յերուսաղէմ նուագէ· Ճրագ ոտից իմոց բան քո, և լոյս շաւղաց իմոց. Սաղմոս՝ 118։ Այսու խրախուսանաւ ձայնիս վառէ, և Հը-րաւիրէ զՀամայն դասս՝ և զխումբս աշակերտակաց վարժողաց, ոգնիլ՝ և դեգերիլ յուսումն, և՛ի կրթութեան՝ բառ յօդողական Համբակաց Փրկ-չին. Քննեցէք՝ ասէ՝ զԳիրս, զի դուք Համարիք նոքօք ունել զկեանս յաւի-տենականս. Յովհ. 5. 39։ Եւ արդ՝ Սիրելիք, և անձկալիք Հոգւոյս իմոյ՝ Հարք իմ, և եղբարք իմ. որովՀետև ոչ այլով իմիք չաՀել զկեանս աւխանակաւն, եթէ ոչ գրովք որովք· վասն որոյ՝ և իմ խրատ-եմ, և արժան Համարելով՝ ասել ցի զգիրս մեծ իերանելեաց, և վայ ել շարունակ աղբերն Թ. օմասա-քեմիայց, ՚ի զուարճութեն, և յա-րեւութիւն մանկանց Եկեղեցւոյ։ Այսքան պատուելի, և սիրելի է՝ աշակ այսմ գրոց, մինչզի՝ ըլեան

ըն

լեզուք գոն 'ի կարևանս Եւրո-
պայու, ամենեքեան ունին թարգ-
մանեցեալ զս̃ բարբառոյ իւրեանց-
ցու թերթեանս, և կան միմեանց: Եւ
և նմանք միշտ կրեն զնոյն 'ի ծոցի իւ-
րեանց իբրև՝ զմեծ ինչ մխիթարութի
հոգւոց: Եւ մերս գոյր թարգմանե-
ցեալ 'ի լաւթին լեզուէ, 'ի Հայկ
կան բարբառ աշխատանօք Յովհան-
նէս վարդապետին Կոստանդնու-
պօլսեցւոյ յամի փրկչին մերոյ՝
1670. 'ի խնդրոյ ամենապատուական Զա-
ղոյեցի Շահրիմանեանց Պարոն
Քաղաքարին: Արդ՝ մեծաւ թա-
խանձանօք խնդրեմ յեղբարցդ սի-
րելեաց, զի նմանք բառնալի զայս
բարեկամն, և բուժիչ ամենից ախ-
տից. զի առաւ բաղթափեցեալք 'ի
նիրհմանէ ծանրագունէ, բուռն
հարցէ զանգիտ չտապոյ բառ ձայնի
մանկական բարբառոյն. Ծնող ու-
տից խնդիր բանն քո, և այլն:
Այլ և՝ զայս յաշխարհից ատագու-
թեան ձերոյ. զի որքան վկայու
րանք առաջան՝ և եղան 'ի սբ գիրս
յայս, են այլիրաս, և անխարժա
թուիս Վանանդեցի՝ բառ խնամ
ոհատութեան, և անկատարութե,
աշխատեցայ՝ և յանդիմանն ածի
զի-

դիւրաքանչիւր վերակացութեանց 'ի սմա եղելոց գհամառօտագիրս գլխոց համայնից, և առընթեր նոցա՝ ըդ թիւս տանց պարունակեցելոց. զի զնոյնս խնդրողաց. և որոնողաց՝ դիւրագոյն լիցի առ ձեռն ունել զոր խնդրեսցեն: Եթէ՝ որոց առ ատենի, և զգածն՝ երևեցի հաճոյի մեզ՝ և ընդունելի, շնորհողին պատիւ, և գոհութիւն. զի ես ոչ այլ ինչ՝ եթէ ոչ պղինձ, որ յայլմէ հարեցեալ հնչէ. խակ եթէ առ

Եղորդ. ինձ՝ և անախորժ,

և քամահելի. զներումն,

և զանդարտութիւն ըն

պատեմ՝ ունել. Թ.

մաս պարտաւոր,

և ախտալական

Վարդա

պետ:

Բան

Բան առ Սիոն Երէկոյին,

Զերանաւանդօրէն յուսով կող
գուրեալ՝ բառանջարից զան
չարժարունեն, և զճառաղաւթեաց Յէ-
նէ քումդ՝ Սիոն պանծացեալ, ըստ
դուշակման մեծի Երգողին։
Լեառն՝ ընդ որ հաճեցաւ Աստ բնակել
՚ի նմա. Սաղմ. 67, 16։ Բ. անդի՝
դու երկին յերկրի, և բազմապատ
կառաւք սպասաւորաց քան զնա. զի
նա ունող արեգականն զգայլոց, իսկ
դու զԱրեգակն անեղ միջաւ ՚ի քեզ
ունիս, յոր ոչ երբեք հային առաւելք
պիշերամանձք։ և նա մեծապանծեալ
պարծի յերկրաւորան Կենդանա
տեսակս այլ՝ դու ունիս յառաջաւա
ւր քումդերբիմատան Աւարելին,
յառ երկնաւորան այլելոց Յաղի
մայ. ՚ի նմա զան եօթն մարմնական
կառավարիչք բոլորից ախեղերաց-
ոյլ առաջոյն՝ ՚ի դարձոյն, և ՚ի խարսա
նի քումդ էն եօթն զօրաւորութիւնք,
և ազդապատիւք զործառութիւնք-
յորոց կիրառութեց մերանգին, և
զրեն ամենեքին որդիք Լուսոյ, ըստ
Հրամանի առաքելոյն Իշխանաց
Եկեղեցւոյ. և՛ սամեալ նոա զսալու
ծանն վառն բազմահոյլ ատեղց,
զորս մեջն կրէ ՚ի ծոցի իւրում. և

դու

գու տառապելոյս ունելով զմին
թիւ երամն, և զգունդս առաւելա
փայլ Արեգ, որք յամենայն գծիւր, և զ
ծառայեմն իմ զամենայնից չորրորդ
հեզիւն, և առն յուսով խնդրողաց.
և այս են՝ զի եղիցին զաւրինչ և առ
նէ առաքելոյ, գործոցն՝ և
պաշտել. բոլորն, և համայնն են
փափախակնդ՝ և անկայունք. խոկ՝
յորդ խնամք, և այցելութիւն յա
նա զօրաւորացն՝ և օգնականք՝
և մերձաւորք յես մեծագոյն վայել
չութիւնս, և 'ի փառս անշառա
կանս : Իսկ այսու ամենայնիւ ծա
նուցու պարզապես, և անեղծեալ
օրէն գերազանցութիւն՝ համեմա
տութ իա երկին՝ ով տերը. Մի
ոն՝ գոգ, և ժողովարան ամենից առի
այելոյ, և վառելոյ 'ի սէր անման
փեսային : ուստի և ես առարամեր
ժեալս, և անապատագ յերամն այսմ
ասացելոյ՝ և արդ խնդրելով ընդե
լոց 'ի քեզ, մաղթեմ յաւագնն ան
ձանց՝ ձօնել գիշրանս գթութեց
քոց յիս, և յիմն. զի նաւաստա
թի քով՝ յաշխն կացելութք, բարե
պէս՝ և արտահայտն ամարտես
ցուք՝ և հանգուք 'ի դրունս զմերս՝
համայն ձեռնարկութիւնս, 'ի
փառս

Փառս և 'ի Պատիւ Ամենասուրբ
Երրորդութեանն, այժմ, և ան
զրաւ յաւիտենից. Ամէն:

Թովմաս Եպիսկոպոս Վանայն
գեղջի, ծառայ ծառայից այ:

✠

Լուսաւորեալ արփիանէս քան նին.
Երևալ 'ի դշխուս բարձու լերին:
Փողել զզարդ երկնաւոր րին.
յարփութեան վարգու հօ ալին:
Թովմաս քեմիհեան երանել լին.
վաւերալ օրոմ առաւօտոյ ին:
Կազմեալ ընթրիս մեծ արքային.
հրաւիրեալ զեկեղե ցին:
Եւ կոչեք որդեակք ամենե քին.
ուրախ լերուք 'ի սէր փրկ չին:
Ճաշակելով զնորին մարմ նին.
ակցի և առն զուլ անձնմ հին:
Սա բարեկամ տուիք փեսայ յին.
կոչէ զմանկունս առաջաւոր ային:
Պարակից զուլ անբիծ հարսին.
'ի հարսանիս յաղթող Գառա նին:
Խնդրողք ակնոց քին մեծա գին.
և պատուական հաստ մարգարտին:
Վաճառեցէք ըզ շահեալ լին.
զի ունիցիք զանշահ բար ին:
Աղօթէ Թովմաս լեալ ուս. մերձին.

'ի

՚ի Վանանդայ Գողթնեաց մասին։
Տպագրեցի զհիւսուած մեր հին·
և համարձակ քարոզօ զին։
Երգեալ զՃրագ յաչամանս կին·
՚ի զուարճութիւն բազմականին։
Զձեզ աղաչեմ զամենե սին·
յիշել զՀէքս առ միշտ բա րին։
Այլ և զծնօղսն իմ քաղցրագին·
ըղՆուրիջանն ընդ Գրիգորին։
Աստի և ցօղն համուրց Փրկչին,
ձեզ և նոցա յաւէտ տացին։

# Thomæ à Kempis
## De Imitatione Christi
## Armeno idiomate.

Ի Հայրապետութեան Լուսաւո-
րչայ Գահոյին Սրբոյ Էջմիածնի
Տեառն Նահապետի՝ ամ Հայոց
Եդեսացւոյ Կաթուղիկոսի։

# ԹՕՄԱՅԻ ԿԵՄՓԱՑԻՈՅ՝

կանոնաւորի կրօնաւորի 'ի կարգէ Սրբոյն Օգոստինոսի։

Յաղագս

# ՀԱՄԱՁԵՏԵՒՄԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ՝

## ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ։

Առաջնորդութիւնք օգտակարք առ կեանս հոգեկանս։

Գլուխ ա։

Յաղագս համաձայնութեան Քրի, եւ խոտման բնաւից ունայնութեանց աշխարհի։

ՈՐ ՀԵՏԵՒԻ ԻՆՁ. ՈՉ ՇՐՋ Յով. 8. 12.
ջի 'ի խաւարի. ա-
սէ Տէրն։ Այսոքիկ են բանք
Քրիս

Քրիստոսի, որով և առաջնորդիմք, որ պէսզի կենաց նորին և վարուց նմա մանեսցիմք. Եթէ կամիցիմք ճշմարտապէս լուսաւորիլ և յամենայն կուրութենէ սրտի զերծանիլ. ուրեմն ծայրագոյն ջանն մեր լիցի, զի զվարուցն Յիսուսի Քրիստոսի համախորհիցիմք:

2. Վարդապետութիւն Ք.Ի, ըզ-
րնաւ վարդապետութիւնս սրբոց գե-
րազանցէ. և որ ունի զհոգի նո-
Տեսլ. րին, զմանանայն ծածկեցեալ ՚ի
2. 17 նմա գտանէ: Բայց պատահի, զի
բազումք ՚ի յաճախել լսել աւետա-
րանին՝ զգօյն ինչ իղձ զգան. վա-
Հռոմ. զի ոչ ունին զհոգին Ք.Ի: Իսկ
8. 9 որ կամի լսել և քաղցրանալ
իմանալ զբանս Ք.Ի. պարտի համ
մաձայնել նմին զկեանս իւր
բնաւ:

3. Զի՞նչ օգուտ է քեզ խորհրդածել, վիճաբանել զԵրրորդութենէ. եթէ ոչ ունիցիս զխոնարհութիւն, որով Երրորդութեանն անհաճոյ լինիս: Իրաւի՝ բանք խորինք ոչ առնեն զմարդ սուրբ, և ոչ արդարոյ. կեանք առաքինականք սիրելի առնեն զմարդ այ: Ըղձամ մանաւանդ զգալ զղջմանութիւն, քան թէ

թէ՝ գիտել զամենայն նորին ։
Եթէ ունէիր զբոլոր Աստուածաշունչն
ուսեալ 'ի բերան, և զասացուածս
համայն փիլիսոփայից . թարց սի-
րոյն այլ և շնորհաց նորին, զի՞նչ
օգտէին քեզ բնաւքն ։ ՚Ունայնութ Ժող.
թի ունայնութեանց, և ամ՛ ինչ ըն 1. 2
դունայն է, բաց 'ի սիրելոյն այլ, և 'ի
ծառայութենէ նորին միայնոյ ։
Այս է ծայրագոյն իմաստութիւն,
խոտել զաշխարհս, և փութալ առ
արքայութիւնն երկնային ։

4. Ունայնութիւն է ուրեմն,
խնդրել զփարթամութիւնս կորըս-
տականս, և յուսալ 'ի նա ։ Ունայ-
նութիւն է և՛ փարիլն զպատուոց,
և զինքն 'ի յաստիճանս վեհագոյնս
բարձրացուցանել ։ Ունայնութիւն
է՝ հետևելն մարմնոյ ցանկութեան . և
բաղձալ այնմ, որոյ աղագաւ զկնի
տանջիլ պարտ է ծանրապէս ։
Ունայնութիւն է՝ հայցելն զկեանս
երկարս, և զկենաց բարեաց զգոյն
ինչ փոյթ ունելն ։ Ունայնութիւն
է՝ միայն նշմարելն զկեանս ներ-
կայս . և ոչ զայնս՝ որք ապառնիքն
են, նախատեսանել ։ Ունայնութի
է՝ սիրելն զայն, որ անցանէ խիստ արա-
գապէս՝ անցանել . և ոչ ձգտելն
յայն

յայն, ուր մշտնջենաւորն խնդու-
թիւն մնայ:

5. Յիշեա՛ յաճախապէս՝ զա-
Ժող. ռակն զայն. թէ՝ ոչ յագենի ակն ՚ի
1. 8 տեսութենէ, և ոչ լնանի լսելիք
՚ի լսելոյ: Ջանա՛ ուրեմն զսիրտ քո
՚ի սիրոյն երևելեաց արտաքարշել՝
և առ աներևոյթս գտել անդրադարձ-
նել: Քանզի հետևողք զգայու-
թեանց իւրեանց՝ բծաւորեն զը
խղճմտանս իւրեանց, և կորուսա-
նեն զշնորհն Աստուծոյ:

---

## Գլուխ Բ:

## Յաղագս չնչինն կարծեաց խոնարհաց:

1. Ամենայն մարդ բնականա-
պէս ցանկայ գիտել.
բայց գիտութիւն թարց երկիւ-
ղին այ զի՞նչ օգուտ է. արդարև՝
բարեգործ է գեղջուկ խոնարհն, որ
ծառայէ այ. քան զփիլիսոփայ հպ-
արտ, որ զինքն անփոյթ եղեալ՝
զընթացս երկնից նկատէ: Որ բա-
րւոք՝ ճանաչէ զինքն, խոտի յին-
քեան՝ և ոչ հրճուի գովութեամբ
մարդկայնոց: Եթէ գիտիցեմ զա-
1. Կոր. մենայն ինչ՝ որ յաշխարհի է, և՝ ըն-
13. 2
սէր

ձեր ոչ ունիցիմ. զի ո՛չ օգուտ է ինձ առաջի Աստուծոյ, որ դատելոց է զիս ՚ի գործոյ:

2. Համոզիմ ՚ի պատմագրութեան գիտելոյ. զի ՚ի նմա գտանին ցուցմունք մեծամեծք՝ և սքանչելիք: Գիտունքն՝ յօժարութիւն կամին ուսանիլ, և խնամունիք անուանել. Բազում ինչ գոն, որոց գիտութիւնքն՝ կամ ասելով ինչ՝ կամ, ընտրելն ոչինչ օգուտ են հոգւոյն: Եւ յայժ անմիտ է այնպիսին, որ տուեալ գիտէ առ այլ իրս, քան յայնս՝ որք իւրում հոգւոյն օգտակարք են: Բանից բազմութիւնք ոչ յագեցուցանեն զհոգին. այլ կեանք բարիք զովացուցանեն ըզմիտս. և խղճմտանք մաքուրք՝ տան մեզ զյոյս մեծ առ Ած:

3. Որքան առաւել՝ և բարեւէս գիտես, այնքան ծանրագոյն՝ առաւել դատեսցիս, եթէ ոչ սրբութի՛ կեցցես: Մի փքանար ուրեմն որ յարուեստ՝ կամ գիտութիւն. այլ մանաւանդ երկիր՝ սակս շնորհեցելոյ քեզ ծանօթութեան: Եթէ թուի քեզ, թէ՝ զբազում ինչ գիտիցես, և բարւոք՝ իմանայցես. սակայն գիտես, զի գոն ևս բազում

զուր ինչ՝ զորս անգիտանաս։ Մի՛ կամիր բարձրանալ՝ այլ մանաւանդ զգիտութիւն քո խոստովանեաց։ Ընդէ՞ր կամիս զքեզ յառաջ արկանել՝ որովհետեւ գտանին բազումք քան զքեզ գիտունք, և հմտագոյնք յօրէնս։ Եթէ կամիս օգտակարապէս գիտել զինչ ինչ՝ և ուսանել. սիրեա՛ զչ գիտելն, և զոչինչ համարելն։

4. Այս այն է բարձրագունեղ և օգտակարագունեղ ընթերցուածն, որ՝ իւրոյ անձին ճշմարիտ ճանաչումն, և արհամարհումն. իւրոյ ինքեան ոչինչ համարեցումն, և զայլոց միշտ բարի, և վեհ զգացումն, մեծ իմաստութիւն է, և կատարելութիւն։ Եթէ տեսանիցես զոք յայտնապէս՝ ՚ի մեղս, կամ թէ անկեալ ՚ի ծանրագոյն ինչ փորձութիւն, ոչ պարտիս զքեզ բարեգոյն քան զնա վարկել. զի ոչ գիտես, թէ՝ որչափ ժամանակս տեւելոց իցես ՚ի բարութեան։ Ամենեքեան տկար եմք. բայց դու մի համարիցես զոք տկարագոյն քան զքեզ։

Գլուխ Է:

### Յաղագս հաւատարմութեան մտերմութեան:

1594

1. Բարեկամ է նա, որում ճշմարտութիւն իւրեանն ուսուցանէ, ոչ ձեռնակերտութիւնք և ձայնիւք անցաւորք, այլ բան ոգւոյ իւրեանն է: Կարծիք մեր և զգուշութիւնք, ցանկ զեղ պատրեն, և զայն ինչ առասպելն:
Ո՜րչափ օգուտ է յանձին խաղաղութիւն գիրաց խորհրդեան՝ և զգաստութեանց, յաղագս որոյ ոչ յանդիմանիցիմք ՚ի դատաստանի, եթէ արդեօք իցեմք: Մեծ իմն անխոհեմութիւն է, մինչ խառնեմանեմք զիրաց օգուտ կարծիք՝ և հարկաւորք, և յաւէտ արժէ՞ պարապիմք ՚ի վայելչութիւնս, և ՚ի մնացականս. այլ թէ՝ զոյգ ունիմք, և ոչ առասպելեմք:

2. Այդ՝ զի՞նչ փոյթ է մեզ զսեռից՝ և զտեսակաց. ընդ որում յաւխանեան բանն խօսի, նա ՚ի բազմանց տարակուսութեանց զերծանել: յանգի ՚ի բանէ միոյ բնութեն, և զմինն խօսի բնութեն. և այս է սկիզբն, որև խօսի ընդ մեզ Ո՛չ ոք թարգմանել կար է իմանալ՝ և կամ ուղղակի դա
տել

ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

տեղ։ Եւ որ ամենայնիւ մի են, և զամենայն քարշէ առ մին, և զամ 'ի միում տեսանէ, կարէ լինել հաստատուն սրտիւ, և առ Ած խաղաղ դադար յարամնալ։ Ով ճշմարտութիւն Ած, միաւորեա զիս ընդ քեզ սիրով մշտնջենաւորիւ։
Զի յոր ձանձրացուցանէ զիս բազում ընթեռնուլն, և լսելն 'ի քեզ է ամենն՝ զոր կամիմ, և փափաքիմ։ Լռեսցեն վարդապետք համօրէն, կարկեսցին մանկաւորայն առեղծուածք ընդ առաջի քո. դու միայն խօսեաց ընդ իս։

3. Ո՛րչափ ոք առաւել՝ յանձին միաբան, և պարզ ընդերքով մարդոյն, այնչափ զբաղումս, և զբարձրագոյնս թարց աշխատութեան իմանայ։ քանզի 'ի վերուստ առնու զլոյս իմացութեան։ Մաքուր, պարզ՝ և հաստատուն հոգի, 'ի հոգս բազումս ոչ տարածանի. քանզի անէ զամենայն 'ի փառս Այ, և ջանայ ներք յինքեան մեկուսանալ յամենեցունց որոնմանց յանձնականաց։ Ո՛վ է, որ գերել առաւել արգելու՝ և տագնապէ, եթէ ոչ քոյոյ սրտին ախտակրութիւն անձին։ Այր բարի՝ և երկիւղած, զամենայն իւրս

նախ

՚նախ յինքեան կարգաւորէ, զորս արտաքս ՚ի կիրարկանել մարթի։ Եւ ոչ քարշէն զնա առնելիքն ՚ի ցանկութիւնս՝ և ՚ի յօժարութիւնս մեղկականս, այլ ինքն սանձահարէ զնոսա բռնաւորութեամբ ուղիղ բանին։ Ո՞վ է՝ որ քաջամտես պատերազմի, եթէ ոչ որ ջանայ զինքն յաղթահարել։ Այս որոյ ակնայ է, զի այս լինիցի մեր փոյթ, իբր՝ յաղթահարել զանձն իւր, և օրըստօրէ լինել զօրեղագոյն քան զինքն՝ և առ բարեգոյն ինչ յառաջանալ։

4. Ամ՛ կատարելութիւն այսարիկ կենցաղոյս, զանխառնութիւն ինչ ինքեան առանցնելոյ ունի. և ամ՛ տեսողութիւն մեր, ՚ի մութ մնալոյ ոչ զերծանի։ Զինքենէ զխոնարհութիւն ճանաչել, ստուգագոյն ճանապարհ է առ Այ, քան զխոր ինչ խուզական գիտութեանց։ Ոչ է խոտելի գիտութիւն, կամ խտրապարանցութիւն իրիք պարզ ծանօթութիւն, որ բարի է ըստ ինքեան նկատեցեալ, և յոյժ կարգաւորեցեալ. բայց՝ նախամեծարելիք են միշտ՝ խղճմտանք բարիք, և կեանք առաքինականք։ Եւ քանզի բազումք առաւել ջանան ուսանել,

քան

քան բարեպէս՝ կեալ. վասն որոյ՝ բազմիցս մայրքին, և թերևս զոյգին՝ կամ զգոյն ինչ պտուղ առնեն։

Ո՛չ թէ՝ զայնպիսի զգուշութիւն 'ի կերակրականէ մեր, առ 'ի յառաջել զմշակութիւնս, և 'ի աճել զառաքինութիւնս, զորպիսիս 'ի կերակկանեմք 'ի հետազօտութեան մերոյ խնդրոյ փիլիսոփայականի, ոչ լինէին այնպիսի չարութիւնք՝ և գայթակղութիւնք 'ի ժողովրդեան, և ոչ առ բամբասութիւնք 'ի մարմնոյս։

Իրաւ ի՞ մեան, յաւուր դատաստանին՝ ոչ խնդրի 'ի մէնջ թէ զի՞նչ ընթերցաք, այլ թէ՝ զի՞նչ արարաք. ոչ թէ բարեպէս խօսեցաք, այլ թէ որպէս բարեկրօնութեամբ կեցաք։ Ասա՛ ինձ ո՞ւր են նորդեանս ամենայն այնոքիկ՝ և վարդապետք, զորս ծանեաք մինչ կենդանիքն էին, և ուսմամբք ծաղկէին։ Որոց այժմ զընչեռուածս այլք վայելեն, և ոչ գիտեմ թէ արդեօք խորհիցին զնոցանէ։ 'Ի կեանս իւրեանց գոլ ինչ համարէին, բայց այժմ լռութիւն է վասն նոցա։

6. Ո՛հ թէ որպէս վաղվաղակի՝ անցանեն փառք աշխարհի, երանի՝

թէ

թէ կեանն նոցին համեմատիւք գիտութեանց նոցին, քանզի յայն ժամ բարեպէս՝ ուսանելին և ընթեռնուլին։ Որքան անձինք կորընչին անտանաւ գիտութիւն աշխարհիս այսորիկ, որք ունին զսակաւ ինչ՝ փոյթ զծառայութեանն ոչ։ Ոչ զի առաւել ընտրեն զմեծութիւն, քան զխոնարհութիւն. ուսոյն նմանութեան ՚ի խորհուրդս կերեանց։ Չափաւորութեան մեծ է այն, որ ունի զմեծ սէր։ Եւ Չափաւորութեան՝ մեծ է այն, որ յինքեան փոքր է։ Չափաւորութեան՝ խաղաղ է այն, որ զամ ինչ կենցաղոյս, իբրև զկեղկղանս համարի, որ պէսզի ՚զՔս շահեսցի։ Իսկ Չափս փիլրիս գիտուն է այն, որ առնէ ըղ 3 · 8 · կամս ոչ, և զկամս խուրս ՚ի բաց թողու։

## Գլուխ Դ։

### Յաղագս նախադասութեան, և խոնարհութեան ՚ի յառաքելն։

1 ՈՉ ամենեցուն բանից հաւատալ պարտ է, և ոչ ներգործմանց ընդունելոց. այլ զգուշութեամբ, և երկայնմտութեամբ զամենայն

նոյն լինել ըստ Այ կշռել: Բայց ոհ ցաւոյս, զի բազմիցս դիւրաւ չար լինի, քան թէ բարի լինի զայլոց ասի, և հաւատացեալ լինի. ահա այսպէս՝ տկարք եմք: Բայց որք կատարեալք ամենեցուն ձայնից դիւրաւ ոչ հաւատան. քանզի գիտեն զտկարութիւն մարդկային, զհակումն նորին ՚ի չարն, և զսահումն նորին ՚ի բանս:

2 Մեծ իմաստութիւն է՝ ոչ ընթանալն ՚ի յառնելիս, և ոչ մնալն կամակորութեամբ ՚ի կարծիս իւրս յամառս: Առ այս ևս պատշաճի, ոչ հաւատալն ասացելոց ամենեցուն մարդկան. և ոչ ներհեղուլն փութով յականջս այլոց, զայն զոր լուան, և զոր հաւատան: Ընդ առն իմաստնոյ՝ և երկիւղածի խորհրդակցիր. և խնդրեա մանաւանդ ՚ի բարեգունից ներկրթիլ, քան թէ հետևիլ քոյոց հանճարոց: Կեանք բարիք՝ առնեն զմարդ իմաստուն ըստ Այ, և խելամուտ ՚ի յիրս բազումս: Որքան ոք խոնարհագոյն է յինքեան, և հնազանդագոյն Այ, այնքան յամենայնում է իմաստնագոյն, և խաղաղագոյն:

## Գլուխ Ե,

### Յաղագս ընթերցման Գրոց սրբոց։

1 Ճշմարտութիւնն է խնդրելի 'ի գիրս սուրբս, և ոչ գեղեցկութիւն բանից։ Այնու հոգւով ընթեռնուլ պարտի ամենայն գիրք սր․, որով և է արտագրեցեալ։ Մանաւանդ խնդրել պարտիմք զօգտութիւն 'ի գիրս սբս, քանթէ՝ զնրբութիւն բանից։ Այնու յօժարութեամբ ընթեռնուլ պարտիմք զգիրս հոգևորս, և զպարզաբանս, որով զնրբահայեցս, և զխորինս։ Մի գայթակղեցուսցանիցէ զքեզ հեղինակութիւն շարադրողին, թէ զշատ կամ զսակաւ տեղեկութիւն գրոց ունիցի, այլ զուտ սէր ճշմարտութեան, առաջնորդեսցէ զքեզ 'ի յընթերցումն. մի խնդրեսցես, թէ յորմէ իցէ ասացեալ՝ այլ լուր, թէ զի՛նչ ասիցէ։

2. Անցանեն ամք կենաց մարդկան, բայց ճշմարտութիւն տն մնայ յաւիտեան։ Օրինակօք բազմօք, թարց աչառութեան խօսի ընդ մեզ Ած։ Հետաքննութիւն մեր արգելու զմեզ բազմիցս 'ի յընթերցման գրոց սրբոց. քանզի կամիմք Սաղմ 116. 2

միայն խոնարհ, եւ առաքինի՛ որ անցանելն պարտաւորի պարզապէս ։ Թէ կամիս զհետ իմ գնալ, ըն թեռցիր խոնարհութիւն, պարզա բար, եւ համբերութեամբ, եւ մի կա միր ընդունել զանուն գիտնոյ ։ Հայց հեզութիւն, եւ ունկնդիր լեր սրբոց բանից ։ Մի՛ անհաճոյք թուես ցին քեզ առակք ծերոց, զի առանց պատճառանի ոչ են ասացեալք ։

---

Գլուխ Է։

Յաղագս անխորհուրդ գործոց ։

1 ՈՉ բանից որ լսիր ինչ ան կարգաւորեա՛ առաջիկան, այն քանզի յինքեան անհաստատ լի նի ։ Գովալ ք, եւ աղօթք ոչ էր բեր հանդերձ ․ աղքատք, եւ խո նարհ հոգւով նուաստամիտ չքմեղն խաղաղութեն ։ Ա՛յլ որ ոչ է առ կանին մեռանել յինքեան, դիւրաւ փորձի, եւ բաղթի 'ի յիրս փոքունս, եւ յունայնս ։ Տկարն հոգւով, եւ կերպիւ իւիք դեռ եւս մարմնաւորն, եւ առ զգալիս հակամիտեալն, դժու արաւ կարէ զինքն արտաքսել բոլորովին 'ի յերկրային ցանկից ․ ուստի ցանկ 'ի արտաքնութեան կայ

մինչ հրամայրի · գիրքս եւ տեղի
այս վշտացուցանելեան, եթէ՛ ոչ
նմա ընդդիմանայցէ :

2. Իսկ եթէ համանիցի այնմ, որում ցանկայ, խնդոյն յաղագս պարտաւորութեան խղճի՛ն ծանրանայ. քանզի՝ հետևեցաւ իւրոցն կրից, որք ոչ պատճառանն նմա զխաղաղութիւնն զայն, զոր խնդրեաց: Արդ ապաշխարութեամբ ոչ իւրոցն կրից, գտանէ զճշմարիտ խաղաղութիւն սրտի, այլ ոչ ծառայելով նոցին: Արդեամբ ոչ է խաղաղութիւն 'ի սրտի առն մարմնաւորի, և ոչ առն զգայելոց հետևողի՝ այլ միայն ընդ սրտի առն բարեպաշտի, և հոգևորի:

---

Գլուխ: Է

Յաղագս ունայնի յուսոյ, և խորշելոյ հպարտութեան:

1 Ունայն է այրն այն, որ ըզյոյս իւր դնէ 'ի մարդիկ՝ կամ 'ի ստեղծուածս: Մի՛ ամօթ լիցի քեզ ծառայել այլոց 'ի սէրն Յի Քի, կամ երևիլ իբրև աղքատ նորանիկ աշխարհի: Մի՛ ապաւինիր յանձն քո, այլ կոյ

աղէ՛ զյոյս քո առ Ա͞Ծ: Արա՛ զոր ինչ 'ի քեզ է, և Ա͞Ծ օգնական եղիցի քում բարեհաճութեան: Մի յուսար 'ի գիտութիւնս քոյս, և մի 'ի խորամանկութիւնս այլոց կենդանեաց, այլ մանաւանդ յուսա՛ 'ի շնորհս ա͞յ, որ օգնական լինի հեզոց և խոնարհեցուցանէ զամբարտաւանս:

2. Մի պարծիր 'ի յինչս, եթէ ունիցիս. և մի 'ի բարեկամս, եթէ հզօրք իցեն. այլ՝ պարծիր յԱ͞Ծ, որ զամենայն շնորհէ, և 'ի վերայ ևս՝ զանձն իւր տալ կամի: Մի մեծանայցես թէ մեծ իցես, կամ թէ զգեղեցկութիւն մարմնոյ ունիցիս, որ գոյնիւ իմիք տկարութեան ապականի, և ժահահոտի: Մի տայցես զտեղի ինքնահաւանութեան, թէ ուշիմ իցես՝ կամ մտացի, մի գուցէ լինիս անհաճոյ ա͞յ. որոյ է բնաւն զոր ունիս բնականաբար:

3. Մի կարծիցես զքեզ բարեգոյն քան զայլս, մի գուցէ առաջի ա͞յ խոտան լինիցիս, որ գիտէ թէ զինչ գոյ 'ի մարդում: Մի հպարտանայցես վ͞ս բարեաց գործոց, զի այլ է դատաստանն ա͞յ, և այլ է մարդկան. որում բազմիցս որք հա-

ճե

Ճ՚ելիքն են մարդկան, անհաճոյք լինին։ Եթէ ունիս դու զբարի գործ ինչ, համարեա՛ թէ այլք զբարեգոյնս ունիցին, զի զխոնարհութիւնդ պահիցես։ Ո՛չ ինչ է վնաս, թէ ամենեցուն դու զկնանիցես. բայց վնաս մեծ է թէ ՚ի վերայ միոյ հըպարտանայցես։ Ուստի յար խաղաղութիւն մնայ ՚ի խոնարհս. իսկ նախանձ, եւ վրդովումն յաճախ ՚ի սիրտս հպարտաց։

---

## Գլուխ Է։

### Յաղագս զգուշանալոյ ՚ի յանձնէն ըն- փառասիրութենէ։

1. Մի՛ * ամենայնի մարդոյ յայտներ զսիրտ քո, այլ Երեմ
Ժէ · Ե
միայն ընդ իմաստնոյ եւ երկիւղածի յայտ արա՛ զբան քո։ Մի՛ լինիր յաճախ ընդ մանկունս, եւ ընդ օտարս, եւ մի՛ ընդ արս ազնուականս շողոքորթակցիր. մի՛ եւ առաջի մեծամեծաց յաճախ երեւիր. ընդ խոնարհաց, եւ ընդ միամտաց, ընդ առաքինեաց եւ ընդ բարեկրօնից՝ լեր ընկերակից. եւ որք շինութեան աւիթք են զայնցանէ յարաձեւնեա՛։ Մի՛ լինիր ընտանեկից ընդ ու-

ումեք կեալ, այլ առ հասարակ ըն-
կեալ բարիս կամայ յանձնէն Աստուծոյ: Յանկամ զի լինիցիս ընտանեկից մխիթարեալ ոչ, և հրեշտակաց նորին, և զծանօթութիւն մարդկան 'ի քէն տարաներեա:

2. Թէպէտ պարտ է մեզ զգուշ ունիլ առ ամենեսեան, բայց զըն-տանեկութիւն ունիլն առ ամենեսեան ոչ վայելուչ է: Պատահի երբեմն, զի անծանօթք ոմանք՝ համբաւով բարիք լուսաւորին, բայց ներկայութիւնք նոցին զայս գիտացայ մխիթարութեան: Ճանապարհիմք երբեմն թէ ընկերակ-ցութ ինչ մերով համաձայնութ այլոց, բայց սկսանիմք անհաճոյք լինիլ, յաղագս անկատարութեան բարուցն 'ի մեզ նկատեցելոց:

---

## Գլուխ Թ:

### Յաղագս ճանաչողութեան, և զգուշացութեան:

1. Մեծ է յոյժ կալն 'ի հնազանդութեան, առ-ջին 'ի ներքոյ հրամանաց առաջնորդին, և ոչ գալն ըստ համաձայնից իւրոց: Աստուծոյ յանդորրագոյն է:

է կայն 'ի հպատակութեան, քան յառաջնորդութեան ։ Բազումք յանձանց կան 'ի հարկէ 'ի հնազանդութեան, քան թէ 'ի սիրոյ․ և այնպիսիք նեղանային, և յորս ժամ տրտնջեն, և զազատութիւն մտաց ոչ գտանեն, եթէ ոչ բոլորիւ սրտիւ վ՟ն այ հպատակեսցին ։ Ընթասջիր այսր՝ և անդր․ ոչ ուրեք գտանիցես զհանգստութիւն, եթէ ոչ ընդ խոնարհութեամբ հպատակութեան, որ է 'ի ներքոյ կառավարութեան առաջնորդին ։ Զբազումս պատրեաց խոկումն տեղեաց զանազանութիւն, և փոփոխումն ։

2. Ստոյգ է, զի իւրաքանչիւրոք գիտութեամբ հաճի իւրոյն կարծեաց․ և առաւել միտէ առ այնս, ոյք նոյնպէս՝ կարծեն․ բայց՝ եթէ ԱԾ է 'ի մէջի մերում, պարտ ոչ թողուլ երբեմն զմերս կարծիս վ՟ն բարւոյ խաղաղութեան ։ Ո՞վ է այնքան իմաստուն, որ լիովպէս կարիցէ գիտել զամ․ վասն որոյ՝ մի յոյժ հաւանիցիս քոյոյն կարծեաց․ այլ լուր եւ զիւրս պէս զկարծիս այլոց ։ Եթէ՝ բարիք են քոյք կարծիքդ, վասն այ 'ի

բաց

բաց թողուլ զնոսա, և հետևիլ այլոց, առաւել անտանելի շահես ցիս :

3. Բանզի լռեայ բազմիցս, սոյն հակառակն է լսելն, և հարցանելն զհարկաւորդ իմն յայլոց. քան զնոյն տալն : Սակայն ևս պատահիլ զի բարի իցեն կարծիք խորհրդականե- րոյ : Բայց ոչ կամիլն այլոց հաւանիլ, մինչ զայն պահանջէ հանճարն, կամ բանն, նշան է հպարտութեան և խստասրտութեան :

---

## Գլուխ Ժ :

### Յաղագս պերճաբանութեան յօրինուա- ծութեանն :

1. Գոյշ լեր 'ի յամփոփ- մարդկան որքան և կարես, զի յայժ արդեւն զմեզ ընծեռութիւնք աշխարհականաց իրաց կութեանց, թէև՝ սակս դիտաւորութե արտաքերլցին : Բանզի՝ գիտութ գերինգ ունայնութ իւ, և վստաթ ապաւանք : Եթէ բանի թէ՝ բազմիցս լսեալէի, և 'ի մէջ մարդկան ոչ եղեալէի : Սոր ընդէր այնքանին յաժարութ իսկ կամ մինչ ընդ մինանս, և առակօրեա նել

նել, որովհետեւ հոգին երբեք
թարց ընծայորելոյ զխոդմնմանն՝
պատուականք 'ի լուսութին. զի խօսակ
ցելով ընդ մեծամեն զմխիթարու-
թիւն ինչ 'ի մեծամեց խնդրեմք. և
զխրատ զանազանիւք խոկամաք
համեմատեալս՝ սփոփել կամիմք։
Իսկ այնքան յօժարութիւն զայնցա
նէ իրաց խօսիլ կամիմք, որքան սի
րեմք զնոյնս, և ըղձամք, և կամ,
զայնցանէ իրաց խօսիմք, և խոր
հիմք, զոր մեզ հակառակս վար
կանիմք։

2. Բայց՝ վաշ ցաւոյս, զի բազ
միցս ընդմայր՝ և 'ի զուր՝ խօսիմք,
քանզի արտաքին մխիթարութիւնս
այս, ներքնայնոյն, և Աստուծոյն
մխիթարութեան, ոչ զատկաս տա
քերդ տուժանս. ուստի հսկել
պարտիմք մեզ՝ և աղօթել, զի մի
ժամանակ մեր զատարկութ՝ ան
ցանիցէ։ Եթէ պիտոյ իցէ խօ
սիլ ինչ, խօսեսցուք զշինութենէ։
Սովորութիւն չար, և զանցառութիւն
մերոյ օգտին, բազմիցս աւելի ըն
ներն անպահպանութեան բերանոյ
մերոյ։ Բայց իրաց հոգևորաց յա
ռաջ բերութիւնք առաքինականք՝
ոչ սակաւ օգնեն հոգևորականի

օգ-

օգտի. մանաւանդ ուր հանդերձ հաղուով, և մանր ընդ միանանս Աստուծով միաբանեին:

---

## Գլուխ ԺԱ:

### Յաղագս ստանալոյ խաղաղութեան, և ջերմոյ նախանձու:

1. Բազում խաղաղութիւն ստանալ մարթ էաք, եթէ ոչ զբաղեաք ՚ի բանս, և ՚ի գործս այլոց, այլև՝ յայնս, որք ոչ պատշաճին մեզ: Որպէս կարէ ոք զժամանակ ինչ առնել ՚ի խաղաղութեան, եթէ ՚ի հոգս օտարաց զինքն ներխառնէ, զպատճառս արտաքինս խնդրէ, և ներքուստ սակաւ՝ զայն ինչ, կամ հազիւ երբէք զինքն ժողովէ: Երանի այնոցիկ, որք միամիտք են, զի ունին զբաղում խաղաղութիւն:

2. Ընդէր ոմանք ՚ի սրբոց այնքան կատարեալք՝ և այնքան անձանձկատք եղեն, վասն զի՝ բնաւին զինքեանս մեռուցանել ջանային ՚ի համայնից երկրաւորաց ցանկից, ուստի ուղղեւ սրտիւ յԱծ յենուլ ՚ի հոգս խորհրդոց կարողին պարապել: Մեք զբաղեմք յոյժ ՚ի կիրս

յա

յաստուկս, և յաղագս անցաւորաց
ստացուածոց՝ վրդովմանք։ Հարկ է ա՛
զախտ ինն կատարելապէս՝ յաղ-
թելք, և առ հանդարտապարագականն
յառաջադիմութեան ոչ փութամք-
վասն որոյ՝ մնամք ցրտացեալք՝ և
դաղձացեալք։

3. Եթէ էաք կատարելապէս
մեռեալք, և ոչ ինքն ներքսապէս՝
ամփոփեցեալք, կարէաք զաստուածայինս
իմանալ, և երկնայինք իսկ համս
նկատամունք ներքնամանալ։ Արդա-
րև լաւագոյն՝ և մեծագոյն արգելումն
մեր այն է, զի ոչ եմք ՚ի կրից, և
՚ի ցանկութեանց ազատք. և ոչ ՚ի
կատարեալ շաւիղս սրբոց ջանամք
մտանել։ Վա՛ս որոյ՝ թէև սակաւ
ինչ պատահագի հանդիպելոցի մեզ,
իսկոյն տրտմականիմք, և դառ-
նամք ՚ի մխիթարութիւնս մարդ-
կայինս։

4. Թէ ջանայաք, իբրև զայրս
հզօրս՝ ՚ի պատերազմի կալ, արդա-
րև Տեառն զօրութիւն ՚ի յերկնից
՚ի վերայ մեր տեսանէաք։ Զի նա
պատրաստ է օգնել այնոցիկ, որք
պատերազմին, և որք յուսան ՚ի
շնորհս նո. որ տայ մեզ պատե-
րազմելոյ մեզ նախահնգայ, զի կա-

րեցուք յաղթել: Եթէ միայն ՚ի յարտաքին զգուշութիւն հիմնեմ-աք զուսումնասիրութիւն մերոյ կըրթաւորութեան, վաղուրեմն առաջինութիւն մեր առեալ էր զվախճան: Բայց զօրաւորին առ արմին դիցուք, զի մերձեցեալ ՚ի կրկին՝ զխաղաղականս առանձնացելոց միոյ:

5. Եթէ յիւրաքանչիւր ում ամենին ՚ի մերոց վասն արութեանց առ ամփոփեալ, գիւրաւ լինէաք առըկատարեալ ք: Բայց այժմ զհակառակն մանաձանոց զգամք, քան զի բարեգոյն՝ և մաքրագոյն ըղմեղ լեալ դոլ գտանեմք յառաջ քան զդարձումն մեր առ Ած, քան թէ՝ յետ ամաց բազմաց զկնի դարձմանն: Ջերմեռանդութիւն մեր՝ և յառաջադիմութիւն, որ բաւորէ պարտէր, յաճախել՝ ինձ այժմ, մեծ համարիմք զայն, որ ունի զմասն նախկնոյ ջերմեռանդութեան: Եթէ՝ ՚ի սկզբան դարձմանն մերոյ սակաւ ինչ ջանիւք աշխատեալ քեաք, այժմ զնոյն ինչ կարէաք առնել դիւրութեամբ, և խընդութեամբ:

6. Դժնդակ է ՚ի բաց ձգել զսովորութիւնս, առաւել ծանրագոյն է՝

առ,

առնելն ընդդէմ կամաց մերոց
առանձնականաց։ Սուտ է թէ
ոչ յաղթահարիցես զփոքրագոյնս,
և զթեթևագոյնս, ո՞չ յաղթահա-
րիցես զգժուարագոյնս. ընդդէմ
կաց 'ի յսկզբանն քոյոց յօժարու-
թեանց, և խորշեաց 'ի սովորու-
թեանց չարաց, մի գուցէ սակաւ-
առ սակաւ 'ի մեծագոյնս առածի-
ցէ զքեզ գժուարութիւն։ Վա՜յ
թէ զգայիր՝ թէ զորքան քեզ զխա-
ղաղութիւն, և այլոց զխնդութիւն
առնէիր քոյովք կենօք բարեօք,
կարծեմ թէ՝ դիւրաւէս՝ պարա-
պէիր 'ի հոգևականս յառաջադի-
մութիւնս։

---

## Գլուխ ԺԲ։

### Յաղագս օգտի ընդդիմամարտութեան։

1. Բարի է մեզ՝ թէ ունիցիմք
երբեմն զծանրութիւնս
ոմանս, և զընդդիմամարտութիւ-
նս զի բազմիցս նորօք արթնանամք,
մինչ տեսանեմք զմեզ 'ի յաքսորինս,
և զյոյսն մեր ոչ դնեմք 'ի յիրս
աշխարհականս։ Բարի է մեզ՝ ե-
թէ երբեմն կրիցեմք զպատերազ-
մունս, և եթէ չար ինչ, և զան

կա

կատարութիւն ինչ զգայցէ ըղձինք, թէև՝ զբարիս գործիցեմք, և զբարիս խորհիցիմք։ Առաքելոյ բաղձիցս սպառնացեն մեզ չհանդարտութիւն, և յանմայնից փառաց զմեզ զերծուցանեն։ Քանզի յայն ժամ բարեացն՝ խնդրեմք զնա, որ է ներքին մեր վէրք, յորժամ որ տպաւորեալ մարդիկ զմեզ առ ոչ ինչ համարեն, և բարեացն՝ ոչ հաւատան մեզ։

2. Ամենայն այնպէս՝ մարդ պար տի յենուլ յնա, զի մի հարկաւորիցի խնդրել յանձնաձայնեալ զմիտ թարութիւնս մարդկային։ Յորժամ այր որ բարւոյ յօժարութեան վկայութեն կամ փորձի, և կամ վասնիւք խոկմանցն ներգործի, յայնժամ զնա ինքեան տուաբը հարկաւոր խնդրոյ, և հաւատայ թէ՝ թարց նորա ոչ որ գործ բարի գոլ կարէ։ Յայնժամ և՝ տեսի, հետէ, և արդօթէ ասկս թշուառութեան, զոր կրէ։ Յայնժամ ձայն բանսոյ յերկրպագեալ՝ կեցցն, և բըղձայ տեսանել զնա. զի լուծեցեալ ի մարմնոյն՝ լինի ընդ Քի. Յայնժամ և՝ բարեացեն առաջ գայ թէ՝ կատարելոյ անմերկեա-

թիւնն

թիւնն, եւ լրացեալ խաղաղու-
թիւնն յաշխարհի աստ կայանալ
ոչ կարէ:

---

Գլուխ ԺԳ:

Յաղագս ընդդիմանալոյ փորձութեանց:

1․ Որքան կեամք յաշխարհի
աստ, թարց վշտի, եւ փոր
ձութե՛ գոլ ոչ կարեմք: Ուստի
ասէ Յոբ․ ՝ Փորձութիւն է կեանք Յոբ
մարդոյ ՚ի վերայ երկրի: Վա՛ որոյ 7․ 1
իւրաքանչիւրոք ՚ի մէնջ հոգալ
պարտի սակս իւրոցն փորձութեանց,
եւ հսկել յաղօթս․ զի մի գտանի
ցէ սատանայ զտեղի պատրելոյ․
որ ոչ երբեք ննջէ, այլ ՝ շրջի խնդ 1 Պետ
րելով թէ զո կլանիցէ: Ո՛չ ոք է 5․ 8
այնքան կատարեալ, եւ այնքան
սուրբ, որ ոչ ունիցի երբեմն զփոր
ձութիւնս․ բոլորովին ՚ի փորձու
թեանց զերծանել ոչ կարեմք:

2․ Բայց երբեմն փորձութիւնք
յոյժ օգտակարք են մարդկան,
թէեւ՝ վշտացնիւք իցեն՝ եւ ծա
նունք․ քանզի մարդ ՚ի փորձու
թեանս խոնարհի, մաքրի՝ եւ հմտանայ:
Սրբք ամենեքեան ՝ նեղութիւնք՝ եւ Գործ
փորձութիւնք կրեցին՝ եւ օգտեցան: 14․ 21
Իսկ

իսկ՝ որք ոչ կարացին տանել փորձութեանց՝ խոտեցան, և նուաղեցան։ Ո՛չ ուրեք գտանի կրօն ինչ այնքան սբ̃, և ոչ տեղի ինչ այնքան առանձին, ուր ոչ լիցին փորձութիւնք՝ կամ պատերազմունք։

3. Ո՛չ կարէ մարդ բնաւին համգարտիլ ՚ի փորձութեանց ՚ի կեանս իւրս. զի ՚ի մեզէ առիթն՝ որով փորձիմք, յորմէ հետէ ծնաք ՚ի տռփութեան. մինչ հեռանայ մինն, ՚ի վերայ գայ միւսն. և միշտ ունիմք զփորձութիւն ինն առ ՚ի կրել, քանզի՝ զբարին երջանկութեան մերոյ կորուսաք։ Բազումք ջանմին փախչել ՚ի փորձութեանց, բայց առաւել անկանին ՚ի նոսա. ոչ կարեմք յաղթել՝ նոցին փախստեամբ միայնով, այլ համբերութբ̃՝ և խոնարհութբ̃՝ քան զբնաւ մեր թշնամիս լինիմք հզօրագոյնք։

4. Որ արտաքուստ՝ միայն խոտորի ՚ի փորձութենց, և ոչ արտախլէ զարմատս նոցին, սակաւ ինչ օգտի, զի փութանակի՝ դառնան
Մ. առ նա փորձութիւնք,* և զգայ զնա
12. 45 չարագոյնս քան զառաջինն։
Մակաւ առ սակաւ համբերութբ̃, և օգնութեամբն այ̃ դիւրագոյնս

պէս

պէս յաղթեսցես, քան թէ՝ խստու-
թեամբ, և փոքրահոգութեամբ քոյով։
Բազմիցս խնդրեա զխորհուրդ 'ի
փորձութեն քում, և ընդ փորձեցե-
լոյ մի վարիր խստութեամբ, այլ
մխիթարեա զնա, ոպ՝ և դու կա-
միս՝ թէ այլք քեզ առնիցեն։ Ղուկ. 6. 31

5. Սկիզբն ամենեցուն չարաց
փորձութեանց, է անկայութիւն
մտաց՝ և պակասութի յուսոյն առ
ԱԾ, զի որպէս նաւ առանց ղեկի,
աստուստ՝ և անտուստ 'ի ծփանաց
բախի, այսպէս այր անարի, և զհե-
րոց իւրաց զհոյթ ոչ ունողն՝ զանա
զանապէս՝ փորձի։ Հուր փորձէ
զերկաթ, և փորձութիւն զայր ար-
դար։ Բազմիցս ոչ գիտեմք՝ թէ
զինչ կարեմք, բայց փորձութիւն
ցուցանէ մեզ՝ թէ զինչ եմք մեք։
Սակայն զգուշանալ պարտիմք,
մանաւանդ 'ի յսկզբան փորձու-
թեն. զի յայնժամ դիւրապէս յաղ-
թի թշնամին, յորժամ ոչ իւիք ե-
դանակաւ թոյլ տամք նմա մտա-
նել ընդ դուռն մտաց, այլ վաղվա-
ղակի ընդդէմ եղանեմք նմա մինչ
բախէ կալով արտաքոյ սեմին։
Սորին ասաց ոմն.
Յ'սկզբանն ընդդիմամարտեա, զի ուշա

գան

գո՞ն ողջունիւք պտտրոյքն :
Քանզի նախ հանդիպելի մեզ սոսկ միածութեն, ապա սաստիկ երևս կայութեն, յետոյ հեշտութիւն և մախիզ շարժումն, և հաւանումն և այսպէս՝ սակաւ առաւակաւ ներ մուծանէ թշնամին մետասակար բոլո րովիմբ, մինչ ոչ ընդդիմանամք նմա 'ի յսկզբանն : Իբրև որքան յու լանայ ոք 'ի պատերազմելոյ, այն քան օր ըստ օրէ յինքեան տկարա գոյն լինի՝ և թշնամին հակառա կող հզօրագոյն :

6 . Ոմանք 'ի յսկզբան դարձ մանն իւրեանց զծանրագոյնս կրեն փորձութիւս, և ոմանք 'ի վախճա նի . ոմանք 'ի կենաց իւրեանց բո լորս չարչարեալ կեան, և ոմանք թեթևաղէս, և այս՝ ըստ ճմայ նոյն կարգաւորութեան իմաստու թեանն, և արդարութեանն, որ զաստիճանս՝ և զարդիւնս մարդ կան կշռէ, և զինուս 'ի կեցու թիւն ընտրեցելոց իւրոց նախայօ րինէ :

7 . Մի՛ այնուհետև ոչ պարտիմք յու սահատիլ՝ մինչ փորձիմք, այլ մա նաւանդ ջերմեռանդագոյնս՝ աղեր սել զԱծ, զի նա յամենայն վշտի օր

ժա

ժամնի առնել զմեզ՝ օգնել մեզ. որ
և՛ որպէս ասէ առաքեալն՝ տայ
ընդ փորձութեանն և զելս, զի 1 Կոր.
կարիցուք տանել։ Խոնարհեցուս 10. 13
ցուք ուրեմն զմեր միտս 'ի ներքոյ
ձեռին Տ՟ն՝ յամենայնում փորձու-
թեան՝ և նեղութեան. զի նա զխո Առակ.
նարհս հոգւով՝ կեցուցանէ, և 33. 19
բարձրացուցանէ։

Բ. 'Ի փորձութեան, և 'ի տառա-
պանս երևի որ՝ թէ որքան օգտե-
ցաւ, և անդ արդիւնք մեր մեծա-
գոյնք արտաակայանան՝ և առաքի-
նութիւնք բացայայտին։ Եւ ոչ
է մեծ ինչ՝ թէ որ առաքինին իցէ,
և ջերմեռանդ՝ եթէ ոչ զգայցէ
զծանրութիւն ինչ. բայց թէ 'ի
ժամանակի փորձութեան, համբե-
րութեամբ տանիցէ՝ անդ յոյս է մեծի
օգտութեան։ Ոմանք պահեն զին-
քեանս 'ի փորձութեանց մեծաց,
բայց 'ի փոքունց հանապազորդա-
կանաց բազմիցս յաղթին. զի խո-
նարհեցեալք՝ մի երբէք 'ի մեծա-
մեծս փորձութիւնս ապաւինիցին
յինքեանս, որք այնքան 'ի փոք-
րագոյնս տկարանան։

## Գլուխ ԺԴ։

## Յաղագս Զերծելոյ անխոհական դատաստանէ։

1. Դարձո զաչս քո ՚ի քեզ՝ և զգուշ լեր ՚ի դատելոյ զգործս այլոց։ Մինչ դատէ որ զայլս՝ ՚ի զուր աշխատի, բազմիցս սխալի՝ և դիւրաւ մեղանչէ. եթէ զինքն դատէ՝ և յանձն դիմանէ, միշտ արդիւնաւորապէս աշխատի։ Որպէս ինչ բան մերոց սրտից էն՝ այնպէս յաճախ դատեմք. զի զճշմարիտ դատաւումն, սակս առանձնոյ սիրոյն դիւրաւ կորուսանեմք։ Եթէ Ած էր միշտ պարզ դիտաւումն մերոյ ըղձի, ոչ այնքան դիւրաւ վրդովէաք ՚ի յընդդիմանալն զգայութեանց մերոց։

2. Բայց բազմիցս ծածկի ինչ ՚ի ներքոյ՝ և կամ երևի արտաքոյ, որ զմեզ ևս նմանապէս առապարէ։ Բազումք ծածկապէս զփառս իւրեանց խնդրեն ՚ի յիրս, զորս առնեն՝ և ոչ գիտեն։ Եւ երևին կալ ՚ի բարւոյ խաղաղութէ, մինչ իրքն ըստ հաճոյից, և ըստ զգայութեանց իւրեանց լինին. բայց եթէ այլապէս՝ հանդիպիցին՝ քան

թէ

թէ ըղձանն, խակոյն այլագունեին՝
և ազնկին: Վա զանազանութեան
գխառնութեանց՝ և կարծեաց,
յաճախապէս՝ ծնանին խռովու-
թիւք 'ի մէջ սիրելեաց, և քաղաքակ-
ցաց, 'ի մէջ կրօնաւորաց՝ և առա-
քինեաց:

3. Սովորութիւն հնացեալ դժու-
արապէս՝ թողանի, և անդր քան
զտեսութիւն սեփականն՝ ոչ որ յօ-
ժարապէս ածի: Եթէ յենուցու
թիս քո՝ և 'ի հանճար առաւել յե-
նուցուս, քան թէ՝ յառաքինու-
թիւն հնազանդականն Տեառն մերոյ
Յիսուսի Քի., հազիւ՝ և յամր լու-
սաւորիցիս. քանզի կամի Աճ, զի
կատարելապէս՝ նիւթեան հպատակ
գտցիմք, և զբնաւ ընտրութիւնս
ջերմամբ սիրոյն գերազանցեսցուք:

---

Գլուխ ԺԷ:

Յաղագս կրօնից 'ի վանս եղելոց:

1. Ցանկաս մնալ իրի աշ-
խարհայնոյ՝ և յաղագս
ոչ ուրուք մարդկայնոյ սիրոյ, զբաղ-
ինչ առնել պարտ է. բայց յաղագս
օգտակարութեան կարօտելոյն՝

Ըղ

զգործ ինչ բարի երբեմն պատահա-
բար գործելն, և կամ զբարին 'ի
բարեգոյն ինչ փոխարկելն՝ վայե-
լուչ է: Քանզի զայս առնելով ոչ
խանգարեմք զգործն բարի, այլ 'ի
բարեգոյնն զնա փոխարկեմք:
Եթէ առաջին գործն բարի իցէ
թարց սիրոյ, ոչ ինչ օգուտ է. իսկ
որ ինչ 'ի սիրոյ գործի, թէպէտ և
սակաւ ինչ իցէ, կամ առ ոչ ինչ
վարկանելի՝ ամենևին իսկ արդիւնա-
ւոր է: Վ̃ զի ԱԾ առաւել համա-
րի զեղեալն 'ի սիրոյ, քան ըզ
գործն եղեալ:

2. Զբազում ինչ գործէ, որ
յոյժ սիրէ. զբազում ինչ գործէ,
որ բարեպէս գործէ. և բարե-
պէս գործէ, որ առաւել հասարա-
կութեան քան թէ կամաց իւրոց
ծառայէ: Բազմիցս թուի թէ
եղեալն է սիրելութիւն, բայց մա-
նաւանդ է մարմնաւորութիւն զի յօ-
ժարութիւն բնական, կամք սե-
փականք՝ յոյս հատուցմանն՝ և իղձ
հեշտութեան, հազիւ երբեմն 'ի
բաց հեռանան:

3. Որ զճշմարիտ և զկատարեալ
սէր ունի, 'ի յոչ ինչ իւր խնդրէ
զիւրն՝ այլ ըղձայ միայն, զի ամ̃ ինչ

լի

լինիցի 'ի փառս նոյ։ Եւ ոչ ումեք նախանձի, զի ոչ ինչ խնդութիւն առանձին ունի. և խնդալ յանձն իւր ոչ կամի՝ այլ 'ի վեր քան զամ բարութիւն, երանել 'ի Տէր փառս ջի։ Յոչ ումեքէ զբարութիւն ինչ լինել վարկանել՝ այլ յայս մի-այնոյ, յորմէ աղբիւր բարեաց՝ բղխի նամ պարգև, յորում են սէր ամե նեքեան՝ իբր ընդ վախճանի, զմայլմա ակն յարուցանողին։ Ով, եթէ ու-նէր որ զկայծ ինն ճշմարտի սիրոյ. արդարև հասանէր թէ ընդուն երկ րայինք լիք են ունայնութեամբ։

---

## Գլուխ ԺԳ։

## Յաղագս ըմբերման փորձութեանց տալոյ։

1. Որ ոչ կարէ ուղղել զկեանս անձին՝ կամ այլոց, համբերութեամբ ընկերել պարտի. մինչև այլպէս Աստ առնորինեցէ։ Խորհեաց՝ թէ զուցէ այնպէս՝ բա րւոք իցէ վա փորձ համարակութեան և համբերութեան, թարց որոյ ոչ այնքան համարելիք են առ գինք մեր։ Իսկ ապաքէն զմեծ մն այնպիսեաց արգելմանց, զի զբէզ

զքեզ արժանի առնիցէ օգնե- լեզ՝ և կարիցես դիւրապէս տա- նիլ։

2 • Եթէ որ միանգամ, կամ եր- կիցս խրատեսցեալ՝ ոչ խաղաղա- նայ, մի խօսեր զնա՝ բայց զըր- նաւն յանձնեա նմ, զի ըմնիցին կամք նորին՝ և պատուի ՚ի ծառայս իւր հանուրս, որ բարւոք գիտէ զչարս ՚ի բարիս փոխարկել։ Քանզի համբերութիւն ըմբերել պա- կասութեց այլոց՝ և իւրաքանչիւ- րոց տկարութեանց, զի և գու զբազումս ունիս, որոց այլք ըմբե- րեն։ Եթէ ոչ կարես առնել ըզ- քեզ ոմ՝ և կամիս որպէս կարես առնել զայլս ըստ հաճոյից քոց։ Ախորժեմք թերևս՝ թէ այլք կա- տարեալք իցեն, բայց զմեր պակա- սութիւնս ոչ դարմանեմք։

3 • Կամիմք՝ թէ այլք ամենևին ուղղիցին, բայց զմեզ ուղղել ոչ կա- միմք։ Անհաճոյք թուին մեզ այ- լոց ընդարձակութիւնք, բայց ոչ կամիմք թէ արգելուցուն զմեզ այլք յայնմանէ, զոր ախորժեմք։ Կամիմք թէ այլք ՚ի ներքոյ կանո- նաց իցեն, իսկ մեք ամենևին ոչ տանիմք, թէ այլք կանոնադրել- իցեն

լիցէն մեզ։ Ուստի յայտ է թէ հազիւ զմեր մերձաւորս համարիմք իբրեւ զմեզ։ Եթէ ամենեքեան էին կատարեալք՝ զի՞նչ ՚ի միմեանց վն այ, ունէաք ՚ի կրել։

4. Բայց այժմ ած այնպէս կարգաւորեաց, զի ուսանիցիմք ՚ի միմեանց զբեռն բառնալ․ քանզի ոչ ոք թարց պակասութեան, ոչ ոք թարց բեռան, ոչ ոք բաւական ինքեան, ոչ ոք լրապէս՝ վն ինքեան գիտուն․ բայց պարտիմք տանիլ միմեանց՝ միսիթարել զմիմեանս՝ այսպէս եւ օգնել միմեանց, հմտացուցանել՝ եւ խրատել զմիմեանս։ Զի իւրաքանչիւրոյ թէ որքան իցէ առաքինութիւն՝ երեւի ՚ի ժամու պատերազմի․ քանզի պատե բաղմունք ոչ առնեն զոք տկար, այլ թէ որպիսի իցէ յայտնեն։ Գաղ. 6. 2.

---

## ԳԼՈՒԽ Ժ.

### Յաղագս փախչելոյ յաւելորդ բանից։

1. Եթէ կամիս խաղաղութե՛ք, եւ միաբանութե՛ կեալ ընդ այլոց, ուսանիլ պարտիս զքեզ ՚ի յիւր բազումս խոնարհե

ցու

ցուցանել: Ոչ է փոքր ինչ, 'ի մխիթարանս' և 'ի ժողովարանս բնակել, և թարց խոտորութեան կենցաղավարել' և մինչև 'ի մահ հաստատուն գտանիլ: Երանելի է' որ կեայ անդ բարեպէս, և երջանկաբար կատարէ զընթացս: Եթէ կամիս կեալ բստ արժանոյն, վարկեա զքեզ իբրև աքսորեալ' և պանդուխտ 'ի վերայ երկրի: Եր իբրև զյիմար վասն Քի, եթէ կամիս կեալ միակեցաբար:

2. Զգեստուց փոփոխումն, և հերաց խուզումն' սակաւ ինչ օգնեն, բայց բարուց ուղղումն' և կատարեալ մահացուցումն կրից առնեն զկրօնաւոր բարի: Որ զայլ ինչ խնդրէ' և ոչ զԱստուած, և հոգւոյն իւրոյ զփրկութիւն միայն, նա ոչ այլ ինչ գտանէ, եթէ ոչ զվիշտ' և զցաւ: Եւ, որ ոչ ջանայ գոլ փոքրագոյն' և հլու ամենեցուն, նա ոչ կարէ զժամանակ ինչ կեալ 'ի խաղաղութեան:

3. Կոչեցար 'ի ծառայութիւն, և ոչ յիշխանութիւն. հրաւիրեցար 'ի համբերութիւն' և յաշխատանս, և ոչ 'ի յուլութիւն' 'ի դատարկաբանութիւն: Ահա աստ փորձին

մարդիկք, որպէս՝ փորձի ոսկի ՚ի
հնոցի. աստ ոչ ոք կարէ կեալ, և-
թէ ոչ զինքն կամիցի բոլորիւ սըր-
տիւ վն այ խոնարհեցուցանել:

---

## Գլուխ ԺԸ.

### Յաղագս օրինակաց սրբոց հարց:

1. Նկատեա յօրինակս կեն-
դանարարս սրբոց հարց,
յորս ճշմարիտ կատարելութիւն
և հաւատք պայծառացան. և տես-
ցես թէ որքան նուազ իցէ, և գը-
րեթէ ոչ ինչ է զոր մեք առնեմք:
Ո՜հ թէ զինչ են կեանք մեր, եթէ
համեմատեսցին նոցին կենաց:
Սուրբք՝ և բարեկամք Քրի, ծա-
ռայեցին Տն ընդ սովով, և՝ ընդ ծա- 2 Կոր.
րաւով, ընդ ցրտութեան, և ընդ մեր- Զ. 4
կութեան, ՚ի յաշխատութեան՝ և ՚ի վաս-
տակս, ընդ արթնութեան, և ընդ ծոմով,
՚ի յաղօթս՝ և ՚ի մտածմունս սրբս,
՚ի հալածանս՝ և ՚ի նախատինս բա-
զումս:

2. Վա՜հ թէ որքան զբաղումս,
և զծանունս նեղութեանս կրեցին
առաքեալք, մարտիրոսք՝ խոստո-
վանողք՝ կոյսք՝ և այլք ամենայն,
որք շաւղացն Քրի կամեցան հետե-
իլ:

իւ։ Քանզի առնեցին զանձինս յաշ-
խարհի այսմիկ, զի զկեանս յաւի-
տենականս ժառանգիցեն. վաս-
թէ որպէս զխոստակիրս կենա-
հարք սուրբք յանապատի վար-
ցին, որպէս երկարից՝ և ծանուն-
փորձութեանց ըմբերեցին, որպէս
յաձախ՝ ՚ի թշնամեայն վշտացն-
ցեալք եղեն, որքան զբաղումս՝
և զջերմեռանդ աղօթս առ Աստ-
ուածցին, զորքան պահս խիստս
պահեցին, որպէս զմեծ նախանձ՝
և զջերմութիւն ՚ի յառաջադիմու-
թիւնս հոգեկանս ունէին, որպէս
արիաբար պատերազմեցան առ ՚ի
ճնշել զկիրս իւրեանց, որպէս
զմարմին՝ և զհոգին դիտաւորու-
թիւն ունէին, զորիւս աշխատէին,
և զգիշերս պատրաստէին յաղօթս
ամենայնիւ, այլև՝ մինչ աշխատէին,
յաղօթելոյ մտաւորապէս ոչ դա-
դարէին։

3. Օ՛ն՝ ժամանակ օգտութ-
ծախէին, և պահք ամենեքեան
պարապելոյ յամենայնիս կարծի
ռուսք թուէին. յաղագս մեծի
քաղցրութեան համախմբեմանն՝
միաւորելոյ զհարկաւորութիւն
մարմնականի զօրացուցման։

Եւ

Եւ զընտանի փարթամութիւնս, զոր ժամանորութեանն՝ զգաստիւս, ըն-բարեկամեն՝ և զազգայինս ուրա-խոյին. ոչ ինչ յաշխարհէ ունել բաժային. և հազիւ պճարկաւորն կենաց առնուին. 'ի ծառայելն մարմնոյն, թէև հարկաւորապէս՝ ցուէին: Սերեւմն էին աղքատք խոսք երկրայինք, բայց փարթամք յոյժ շնորհիւ՝ և առաքինութեամբ: Աղքատք կարօտէին, բայց 'ի ներ-քոյ շնորհիւ՝ և մխիթարութեամբ Աստուածայնով զօրանային:

4. Օտարք էին յաշխարհէ՝ բայց մերձաւորք, և ընտանեկիցք բա-րեկամք այ: Ինքեանք ինքեանց ոչ ինչ թուէին, և յաշխարհէ աա-տի էին խառեցեալք, բայց յաս-Տ՝ ազնիւք էին, և սիրելիք. ըն-ձնձրատումն խոնարհութեան կայ-ին՝ ընդ զրատումն հնազանդութեան սպրելին, ընդ սիրոյ՝ և ընդ համբերու-թեան շղթէին: Եւ մն այնորիկ որ բաս օրէ հօգւոյ արդիւնաւոր-էին, և զշնորհ մեծ առաջի այ ըն-դունէին: Եղեն օրինակք ամե-նեցուն կրօնաւորաց. և առաւել պարտին զմեզ արա յորդորել 'ի բարի յառաջադիմութիւն, քան

թէ

թէ՝ թիւ յաւուրցելոց զմեզ 'ի թուլութիւն։

5. Վա՛յ թէ որքան էր ջերմութիւն կրօնաւորաց ամենեցուն 'ի յսկզբան սրբոյ կարգադրութեանն. թէ ո՛րքան իղձ աղօթից, և ո՛րքան նախանձ առաքինութե՛ն։ Ո՛րքան մեծամեծք կրթութիւնք ճոխացան, և ո՛րքան պատկառանք՝ և հնազանդութիւնք 'ի ներքոյ կանոնաց Առաջնորդին, 'ի յիրս բնաւ ծառայեցան։ Վկայ են մեզ դեռևս թողեցեալքն շաւիղք 'ի նոցանէ, թէ այլք ո՛չք՝ և կատարեալք իցեն եղեալք. որք այնքան քաջապէս գնեալք՝ յաղթեցին աշխարհի։ Իսկ այժմ՝ մեծ համարի նա, որ ոչ իցէ օրինազանց. և որ կրեայն՝ էթէ համբերութբ տանել կարիցէ։

6. Ո՛հ հեղգութեան, և զանգառութեան կացից մերոց, զի այնքան վաղվաղակի խոտորիմք 'ի նախկին ջերմութենէ, մինչ զի ձանձրանայցեմք կեալ ասկս աշխատութեն, և լռման։ Երանի թէ ոչ էր բեր ննջեր 'ի քեզ յառաջադիմութիւն առաքինութեն, որ բազմիցս տեսեր զօրինակս յոքունս առաքինեաց։

Գլուխ

## Գլուխ ԺԹ:

### Յաղագս կրթութեանց բարւոյ կրօնաւորի:

1. Կեանք բարւոյ կրօնաւո-
րի ամենայնիւ առաքի-
նութեամբ զարդարեալ պարտի. զի իցէ
այնպիսի՝ ՚ի ներքուստ, որպէս երեւի
մարդկան արտաքուստ: Եւ իրաւ-
ի՝ առաւել պարտի գոլ ՚ի ներ-
քուստ, քան որ տեսանիցի արտա-
քուստ. զի զննիչ մեր Ած է, յոր-
մէ բազում կարեւոր պատկառել պար-
տիմք՝ ուր եւ իցեմք, եւ իբրեւ զհրեշ-
տակս մաքուրս առաջի նր շրջիլ:
Յամենայնում աւուր նորոգել
պարտիմք զառաջադրութիւն մեր,
եւ ՚ի ջերմեռանդութիւն զմեզ զար-
թուցանել, որպէս թէ այսօր իցէ ա-
ռաջին օր դարձման մերոյ ՚ի կրօն,
եւ ասել. Օգնեա ինձ Տր Աս- Սաղմ. 108.26
տուած իմ, ընդ բարւոք խոհում յա-
ռաջադրութեան՝ եւ ընդ քում սրբոյ
պաշտաման. եւ տուր ինձ այսօր
կատարելապէս սկսանել, զի ոչ-
ինչ մինչեւ ցայժմ գործեցի:

2. Ընթացք յառաջադիմութեն
մերոյ, էն ըստ յառաջադրութեն
մերում. եւ զգուշութիւն բազմա-
պատ

պարտի ունել, որ կամի բարւոք
յառաջադիմել։ Եթէ հաստա
տապէս յառաջադրօղն՝ բազմիցս
նուաղի. զի ՚նչ լինիցի այնմ, որ հա
զիւ երբեք՝ կամ անկայտապէս յա
ռաջադրէ զինչ։ Ո՞րք զանստա
նիւք կերպիւք հաստատին լցումն
՚ի յառաջադրութեանց մերոց. և թէ
թէև ինչ ստուգապէս տանոյն վարժման,
հազիւ թարց տուժանի ինչ ան
ցանի։ Արդեանն յառաջադրութիւն՝
մանաւանդ ՚ի շնորհացն են, քան
թէ ՚ի անփորձանել իմաստութէ
իւրեանց կախի. յոր և յուսան
միշտ, մինչ սկսանիցեն զեր ինչ առ
նել։ Զի մարդ յառաջադրէ, այլ
Յերէ 10.23 Աստուած յորինէ. * և շաւիղ նո
րին ոչ է ընդ մարդով։

3. Եթէ ՚ի պատմառս առաքի
նութե, կամ ՚ի յօգուտ եղբօրն,
թողանիցի երբեմն սովորեցեալ
կրթութիւնն, դիւրաւ յետոյ
կարելի է գտանիլն։ Բայց եթէ
վն ձանձրութէ սրտի, կամ զանցա
ռութէ պատգառ՝ ընդվայրապար
թողանիցի, յոյժ վշտագնելի է, և
վնասակար համարելի։ Ջանա
ցուք ուրեմն որքան կարեմք, զի
եւ փոքրագունապէս՝ տայցեմք

տե

տեղի նուաղման, և մինչ զինն ՚ի գլխոյ մեղ յառաջադրեցուք, մանաւանդ ընդդէմ այնոցիկ, որք զմեզ առաւել նեղեն : Զներքինս մեր՝ և զարտաքինս միանգամայն ոտնել, և կարգաւորել պարտիմք՝ վասն երկուցանչիւրին պատականին յառաջադիմութեան :

4. Եթէ ոչ կարես ժողովել ըզքեզ յարամիտ, գոնեա ժողովեա զքեզ երբեմն, և թերևս յաւուրն միանգամ, այսինքն յառաւօտու կամ յերեկոյի : Յառաւօտու յառաջադրեա՛ քեզ, և յերեկոյի քննեա զվարս քոյս, թէ որպէս զայն օր անցուցեր, ՚ի բանս ՚ի գործս, և ՚ի խորհուրդս, մի գուցէ մեղուցեալ իցես ընդդէմ այդ և ընկերին Զինուեա՛ զմեզ քո արիութեամբ ընդդէմ նենգութեանց սատանայի. սանձեա զորկոր քո, և զամ յօժարութիւն մարմնական գիջութեան ձըն չել մարթիցիս : Մի՛ երբեք զգաստութիւն անձնեանկիմք. այլ կամ ընթեռցիր, կամ գրեա, կամ աղօթեա՛, կամ խորհեսցիս, և կամ յօգուտ հասարակաց օգտութեն աշխատեսցիս : Բայց՝ զմարմնական կիրառութիւնս ընտրել պարտիմք, և

և ոչ զամենեսեան հաստատապէս առնել։

5. Որք ոչ են հասարակաց, մի ցուցանել արտաքոյ. քանզի իբրև յատուկք առանձնականի դիւրագործին։ Բայց զգուշանալ պարտիս, մի զուցէ ծուլանայցես ի յիրաց հասարակաց, և արհամարհեսցես ի յիրս առանձնականս. այլ յոր ժամ կատարիցես լրապէս և հաստատութեամբ զպարտս, և զբաժինս, և թէ իցէ դեռևս ազատ ժամանակ, որում և զբոյս բառ բաշխել քոյ։ Ամենեքեան ոչ կարեմք ունել զմի և զնոյն կիրառութիւն, այլ այլոյն այսմիկ. և այլոյն այնմիկ տուեալ է ախորժանաց։ Այլև բաց արտաքոյ ժամու կիրառութիւնք զանազանք հանդիպին թուին. զի զոր որք աշխատանին առաւել ստանձնաճառութեանց, և զոր որք առաւել լռոյ։ Ոմանք ախորժական յառաւել փորձութեանց, և ոմանք յառաւել խաղաղութեան, և յանդորրութեան։ Ոմանք մինչ սրամիտք, և ոմանք մինչ ուրախ են ի Տր։

6. Յաղագս հանդիսաւորս նորոգել պարտիք զկիրառութիւ

ն

բարիս. և զօգնութիւնս սրբոց ջերմեռանդապէս մաղթել: 'Ի սո- նէ 'ի սոսն զնոր իմն մեզ յառաջս դրել պարտիմք, որպէս թէ՝ յայն ժամ յաշխարհէ աստի չուելոց ի- ցեմք, և 'ի սոյն մշտնջենաւոր ժամանակոց: Վ՟ս որոյ՝ զգուշա- պէս զմեզ պատրաստել պարտիմք 'ի ժամանակս շնորհաւորս, և առա- քինապէս վարիլ, և զմամ հեռազօ- տութիւն բարեպէս պահել, ոմք թէ՝ զկնի սակաւուց զխորհն ա- խառնանաց մերոց յԱստուծոյ ա- նելոց իցեմք:

7. Իսկ եթէ այլպէս գիտիցի, պարտիմք հաւատալ՝ թէ ոչ իցեմք զմեզ բարեպէս պատրաստեալ, այլև՝ թէ ոչ իցեմք դեռևս արժա- նիք այնքանեաց փառաց, որք յայտ- նելոց են մեզ 'ի ժամանակի նախա- վախճանեցելում. և ջանացուք զմեզ բարեգունապէս պատրաս- տել 'ի մահ, զի ասէ Տ՟ր. Երա- Ղու
նի է ծառային այնմիկ, զոր եկեալ 12. 37
Տ՟ր գտանիցէ արթուն: Ամէն ասեմ ձեզ 'ի վերայ ամէնեցուն ընչից իւրոց կացուսցէ զնա:

## Գլուխ Ի:

### Յաղագս սիրոյ առանձնութեան, և լռութեան:

1. Խնդրեա զպատշաճ ժամանակ պարապման, և խորհեաց յաճախապէս զբարերարութիւնս նորա. Թող զանօգուտս: Ընթերցիր զգրեանս, որք յարուցանիցեն ՚ի քեզ մտածութիւն զխղճմտանս, քանթէ զաշխատանս: Եթէ խոտորեսցիս յաւելորդաբանութենէ՝ և ՚ի դատարկաբանութենէ, այլև՝ ՚ի լսելոյ զլուրս նորոգս, և զհամբաւս, գտցես բաւական՝ և զպատշաճ ժամանակ պարապելոյ ՚ի խոկմունս բարիս: Գերագոյնքն ՚ի սրբոց յընկերակցութենէ մարդկան (որքան կարէր) հրաժարէին, և զաստուածային պաշտօնն ընտրէին:

2. Ասաց ոմն. Որչափ անգամ ՚ի մէջ մարդկան՝ գտայ մարդ փոքրագոյն: Զայս բազմիցս տեսանեմք, մինչ զժամ ինչ դատարկ բանեմք: Դիւրագոյն է ամենևին լռել, քան զչափաւորապէս խօսել: Դիւրագոյն է գաղել ՚ի տան, քան արտաքոյ՝ զինքն բաւական

ականաւորէս պատշաճէին: Որպէս՝ որ բղձայ առ ներքինս, և առ հաղ-որս ժամանակս, պարապի ընդ մէջ յամենայնէ խառնակել: Ոչոք աներ-կեան զինքն ցուցանէ, եթէ ոչ այն՝ որ յօժարապէս թաքչի: Ոչոք աներկեանապէս խօսի, ե-թէ ոչ այն՝ որ յօժարապէս լռէ: Ոչոք աներկեանապէս առաջնոր-դէ, եթէ ոչ այն՝ որ յօժարապէս զինքն ստոր արկանէ: Ոչոք աներ-կեանապէս հրամայէ, եթէ ոչ այն՝ որ յօժարապէս հնազանդի:

3. Ոչոք աներկեանապէս խըն-դայ, եթէ ոչ այն՝ որ բարեաց խղճմտանաց զվկայութիւն յին-քեան ունի: Բայց՝ սրբոցն աներ-կեանութիւն միշտ լի երկիւղիւն [illegible]: Նա ոչ երբեք թուլացան յաշխատանաց՝ և կամ, նուաղեցան 'ի խոնարհութենէ, զի առաքինութիւ բազմօք և շնորհօք պայծառացեալք էին: Իսկ վա-տացն աներկեանութի 'ի հպար-տութէ, և 'ի ստապարծութէ ծնա-նի, և 'ի վախճանի պատրեցեալք զինքեանս գտանեն: Ոչ երբեք խոստացիր քեզ զաներկեանութի յայտնել աշխարհի, թէև՝ լցեա

կրօ

կրօնաւոր, և միաբանից առաքինի։

4. Իսկ ամենայն որք բարեկարգոյք կարծին 'ի մարդկանէ, անկանին 'ի փորձութիւնս ծանրագոյնս, զի ինքնահաւանութիւն. ուստի օգուտ է բազմաց, թէ՝ ոչ լիցին ամենեւին թարց փորձութեանց, այլ թէ՝ երբեմն զփորձութիւն կրիցեն. և մի լիցին բնաւին անհոգեալք, զի մի գուցէ հպարտասցին, և մի մխիթարութիւնս արտաքինս ընդարձակապէս միացին։ Ո՛հ եթէ ոք ոչ երբեք խնդրէր զմխիթարութիւնս անցաւորս, և ոչ երբէք զբաղէր 'ի յիրս աշխարհի, զիարդ ան բարիս ունելոց էր խղճմտանս։ Ո՛հ եթէ ոք զամ զբաղումն ունայն 'իրաց հատանէր, և միայն զհոգեւորականաց՝ և զաստուածայնոց խորհէր, այլեւ՝ զյոյս իւր ամենայն 'յԱստուած դնէր, որքան զմեծ խաղաղութիւն, և զհանդարտութիւն ընդունելոց էր։

5. Ո՛չոք արժանի է երկնային մխիթարութեան, եթէ ոչ՝ որ զգուշապէս կրթիցէ զինքն սրբոյ զղջման ներհայեցմամբ սրտի։ Եթէ կամիս փղձկիլ սրտիւ, մուտ 'ի սենեակ քո, և արտաքսեա զա

մէ

միայն վրդով աշխարհային, որ
պէս և գրեցեալ է: ՝ Յանկողինս Սաղմ.
ձեր զղջացարուք: ՚Ի սենեկի 4. 5
քում գտանես, զոր արտաքս կո
րուսեր: Եթէ ոչ յարատևիցէ ՚ի
սենեկի քում զգաստութիւն,
խիղճ որ ոչ պահէ զսենեակ իւր,
ծնանի նմա զձանձրութիւն:
Եթէ ՚ի սկզբան դարձման քո ՚ի
Տէր՝ բարւոք պահեսցես, և սա
հմանեսցես զսենեակ քո, լինել էր
քեզ յետ այնորիկ սիրելի, և բարե
կամ, և սփոփանս քաղցրագունեղ:
6. ՚Ի լռութեան՝ և յանդորրու
թե, օգտի հոգի աստուածասէր՝ և
ուսանի զխորհուրդս գրոց: Անդ
գտանէ զհեղումն արտասուաց, ո
րովք յիւրաքանչիւրում՝ գիշերի Սաղմ.
լուանայ զինքն՝ և մաքրէ. զի առ 6. 7
ստեղծողին իւրում՝ այնքան ընտա
նեաց, որքան հեռանայ յաշխար
հայնոց վրդովմանց: Ուստի որոց
հրաժարի ՚ի ծանօթից՝ և ՚ի բարե
կամաց իւրոց, մերձենայ նմա Ած
ընդ հրեշտակաց իւրոց սրբոց:
Բարեգոյն է թաքչիլն, և ունիլն
զփոյթ զինքենէ, քանթէ՝ անփոյթ
լինել զանձնէ, զնշանս գործել:
Գովութիւն է կրօնաւորի, եթէ՝

հա

հաղիւ երբեմն ելանիցէ արտաքս, և եթէ փոխիցին՝ զի մի տեսանիցի այլև, եթէ՝ ոչ կամիցի տեսանել զմարդիկ:

7. Ընդէ՞ր կամիս տեսանել զայն, զոր ոչ է պարտ քեզ ունել:
1 Յովհ. 2. 17 Անցանէ աշխարհս՝ և ցանկութիւն
նորին. քարշէ զքեզ յօժարութիւնն զգայականութեան առ 'ի զբօսնուլ. բայց յորժամ եանց ժամ բղձին, զի՞նչ՝ եթէ ոչ զծանրութիւն խղճմտանաց, և զցրուցումն սրտի գտանես: Բազմիցս խնդալից ելումն 'ի սենեկէ, զտրտմալից դարձումն ծնանի. և զուարճ հսկումն երեկոյի, զտրտմալից առաւօտ բերէ: Այսպէս ամենայն խնդութիւն մարմնական հաճոյելով մտանէ. բայց 'ի վախճանի խայթէ՝ և սպանանէ: Զի՞նչ կարես այլուրեք տեսանել՝ զոր ոչ տեսանես 'ի քում սենեկի. ահա երկինք՝ և երկիր, և ամ տարերք. քանզի 'ի սոցանէ են համօրէն եղեալք:

8. Զի՞նչ կարես այլուրեք տեսանել, որ աւել մարթիցի 'ի ներքոյ արեգականն. Համառօտ բաղեզ յագեցուցանել, բայց ոչ կա-

րես

բեա այնմ առ ժամանել: Եթէ
տեսանէիր եւ զբնաւս ներկայօ
բէն, զի՞նչ էր՝ եթէ ոչ ունայն տե-
սութիւն: Ամբարձ զաչս քոյս 'ի
բարձունս, եւ աղօթեա զԱծ վս մե-
ղաց քոց՝ եւ յանցանաց: Թող զսնո-
տիս մտաւորացն, եւ ունկնդիր այ
նոցիկ՝ զորս հրամայեաց քեզ Ած:
Փակեա զդուռն քո առաջի երե- Եսայ 26. 20
սաց քոց, եւ հրաւիրեա առ քեզ
զՅն զսիրելին քո: Կաց ընդ նմա
'ի սենեկի քում, զի այլուրեք ոչ
գտցես զայսպիսի խաղաղութիւն:
Եթէ ոչ էիր ելեալ 'ի սենեկէ
քումմէ, ոչ էիր լուեալ զնորոգ
ինչ՝ եւ բարեգունագոյնս ըն խաղա
ղութեն մնացեալ էիր: Յորմէ հա
ճիս լսել նորեանն՝ զնորս ինչ համ
բաւ, յայնմանէ պարտ է քեզ ըզ
շփոթումն սրտի կրել:

---

Գլուխ իա:

Յաղագս համախայթման սրտի:

1. Եթէ կերպիւ իւիք օգ-
տիլ կամիս, պահեա՛ 'ի
քեզ զերկիւղն այ. եւ մի՛ լինիր այն
քան ընդ արձակ, այլ 'ի ներքոյ
սանձահարութեան ճնշեա՛ ըզ
բնաւ

բնաւ զգայութիւնս, և մի՛ մտա-նէր զքեզ անհամեստից խնդութեանց: Տո՛ւր զքեզ 'ի խղճմտա՛նս, և գտանիցես զառաքինութի՛: Խղճմտանք զբարիս բաղձմ գտանեն, զորս տարալուծումն առնել է վաղվաղակի կորուսանել: Զարմանք են՝ թէ որպէս կարէ ոք երբեք կատարելապէս յաշխարհի այսմիկ խնդալ, եթէ զաքսորանս իւր, և զայնքան կասկածանս հոգւոյ իւրոյ դիտիցէ, և մտածիցէ:

2. Յաղագս անհոգութեն սրտի մերոյ, և զանցառութեան մերոց պակասութեանց՝ ոչ զգամք ըղցաւս հոգւոյ մերոյ. իսկ՝ բազմիցս՝ ունայնաբար ծիծաղիմք՝ մինչ իրաւի լալ պարտիմք: Ո՛չ ուրեք գտանի ճշմարիտ ազատութիւն՝ և ճշմարիտ խնդութիւն, եթէ ոչ յերկիւղի այ՝ հանդերձ խղճմտանօք բարեօք: Երանի՝ որ կարէ 'ի բաց ձգել զամ արգելուածս զբաղական, և ժողովէ զինքն 'ի միութիւն սրբազանի համախոհութեան: Երանի՝ որ յինքենէ 'ի բաց հերքէ զամ ինչ, որ կարէ բծաւորել, և ծանրացուցանել զխղճմտանս: Զի-

նեա·

նեամ արիաբար՝ առաքինութիւն ու փորձութեան յաղթել։ Եթէ դու գիտես թագաւոր զոյլս, այսպէս այլք են թագաւորն զքեզ առնել զքոյս առնելիս։

3. Մի՛ զառաջնորդաց առաջոյ 'ի քեզ ապաքարէր, և մի 'ի բանս մեծագունից զքեզ ներխառներ. զարձն նախ զայս քոյս 'ի քեզ, և առաջադեա՛ քեզ յառաջադէս մանաւանդ՝ քանթէ այնքից սիրելեաց։ Եթէ անխոհամ լինես դու 'ի մարդկանէ, մի արտաքնր ընդ այնայլ արտաքնր ընդ այն միայն, զի ոչ փորձիցես բարեսպէս՝ և զգուշասցես, ոչ փոխել ծառայելոյն իմ, և առաջինեաց կրթառորայն փորձել։ Օգտակար է յոյժ՝ զի ոչ ունիցի ոք զմխիթարութիւն բարոյական յաչխարհի այսմիկ, և մանաւանդ բառ մարմնոյ։ Այլ եթէ ոչ ունիցիմք զԱծային մխիթարութիւն պատարաքեա եմք. զի ոչ խնդրեմք զխաղճանոսս, և զանհոգս՝ և զարմանքինս 'ի մերն անմնեսիմք 'ի լռոյ ոչ տարանէրբեմք։

4. Վարկեա՛ զքեզ զու անարժան մեծայնոց մխիթարութեանց, և արժանի բազմաց նեղութեանց։

Յոր

Յորժամ որ կատարելապէս՝ յին քեան ՚ներփոխի, յայնժամ ծանր՝ և դառն թուի նմա բոլոր աշխարհ: Այր բարի գտանէ զբաւական նիւթ ցաւելոյ, և լալոյ՝ եթէ յինքն նկատիցէ, և եթէ զմերձաւորն խորհեսցի, զի գիտել կարէ՝ թէ ոչ ոք է աստ թարց նեղութեան: Եւ որքան բարեպէս յինքն նկատել, այնքան առաւել ցաւի: Նիւթք ճշմարտի ցաւոյ, և ներքը նայնոյ խղճահարութեան, են մեղք մեր՝ և յանցանք, որովք այնպէս կամք պաշարեցեալք մինչ զի հազիւ զերկնայնոյ խորհել մարթիցիմք:

5. Եթէ առաւել խորհէիր զմահուանէ քումմէ, քանթէ զերկարից քոյոց կենաց, ոչ էր երկբայելի՝ թէ ոչ զգաստացուցանէիր զքեզ ջերմեռանդապէս: Եւս՝ եթէ զատանջանս ապառնիս դժոխոց, և զմեղաց քաւարանին ՚ի միտ ածէիր, համարիմ թէ յօժարաբար տանէիր աշխատանաց՝ և ցաւոց, և յոչընչէ խստութէ երկնչէիր: Բայց քանզի՝ ոչ թափանցեն այսոքիկ ՚ի սիրտ մեր, և սիրեմք դեռևս զհամոյութի մարմնոյ

սիրոյ, վն որոյ՝ մնամք ցրտացեալք, և յուլացեալք:

6. Բազում անգամ սխալեմք սակս աղքատութեան մերոյ մտաց, և դատապարտեմք զողորմելի մարմինն: Աղօթեա՛ ուրեմն առ Տր խոնարհաբար, զի տայցէ քեզ զհոգի խղճմտանաց, և ասա՛ ընդ մարգարէին. Ջամբեա՛ ինձ Տր զհաց Սաղ.
արտասուաց, և արբո՛ ինձ զարտասուս չափով: 79. 7

---

Գլուխ ԻԲ:

Յաղագս հայեցողութեան մարդկային թշուառութեան:

1. Ուր և իցես՝ յո և դառնայցես՝ ողորմելի ես, եթէ ոչ առ Այ զքեզ դարձուցանիցես: Ընդէ՞ր վրդովիս՝ մինչ ոչ յաջողի քեզ ըստ կամիս՝ և ցանկամ. ո՞վ է որ ունիցի զամ ինչ ըստ հաճոյից իւրոց: Ոչ ես, ոչ դու, և ոչ այլք մարդկան՝ ի վերայ երկրի: Ոչ ոք է յաշխարհի այսմիկ Թարց խիղճ վշտի կամ նեղութե, թէև իցէ Թագաւոր, կամ Քահանայապետ: Ո՞վ է նա՝ որ բարեւոք կեայ, եթէ ոչ այն՝ որ վասն

Աս

Աստուծոյ տանն փրկութեան։

Հ. Բազումք 'ի սկզբանց՝ և 'ի
հիմնադրաց տանն· ահա՛ այլ ոմն,
որ որքա՛ն զեղեանս բարիս ունի, որ-
քան փարթամ է, որքան մեծա-
տուն է, որքան կարող է, որքան
գերապանց է։ Բայց 'նայեաց 'ի
բարութիւնս երկնայինս, և տեսա-
նիցես թէ այնոքիկ ամենեքեան
ժամանակաւորք ոչ ինչ են՝ այլ
յոյժ անհաստատք, և առաւել
ծանրացուցիչք, զի ոչ երբէք տա-
նին թարց վրդովման՝ և երկիւղի։
Ո՛չ է առն երջանկութիւն, ու-
նելն առատապէս զժամանակա-
ւորս· այլ բաւական է թէ՝ ունիցի
որք չափաւորապէս։ Ի սկզբանէ՝
թշուառութիւն է, կեալն 'ի վերայ
երկրի։ Ո՛րքան որ կամի գոլ հոգե-
ւորագոյն, այնքան կեանք 'ներկայա-
կանք լինին նմա դառնագոյնք·
քանզի զգայ բարեպէս՝ և տեսանէ
սպառնալեաց, զպակասութիւն մարդ-
կային թշուառութեան։ Քանզի՝ ու-
տելն, ըմպելն, հոգելն, ննջելն,
հանգչելն, աշխատելն, և այլոց կա-
րեաց բնութեան 'ի ներքոյ գոլն·
արդարև թշուառութիւն է մեծ, և
տառապանաց առն առաքինւոյ, որ

յօժարապէս կամի գօղ ընդդար-
ձակ, և առաւել յամենեցունց մեղաց:

3. Քանզի յոյժ ծանրանայ ներ-
քինն մեր մարդ. կարիւք մարմնա-
կանօք յաշխարհի այսմիկ: Ուստի
մարգարէն զի 'ի սոցանէ զերծա-
նիցի ջերմեռանդապէս աղօթէ,
ասելով: "'ի վշտաց իմոց հան Առակ.
զիս, Տր: Բայց վայ ոչ ճանաչո- 24. 17
ղաց զթշուառութիւնս իւրեանց.
և առաւել վայ այնոցիկ՝ որք սի-
րեն զկեանս ապականացուս, և զա
մարմնելիս: Վն զի ոմանք այնպէս
փարին զայսոք (թէև՝ հազիւ մար
թիցեն հոգալ զհարկաւորս աշխա-
տանօք կամ ողորմութեամբ այլոց)
մինչ զի եթէ կարէին աստ միշտ
կեալ, զարքայութենէն ոչ զինչ
ինչ փոյթ ունէին:

4. Ով յիմարք՝ և թերահաւա-
տաք սրտիւ, որք այնքան ախորժա-
կէք 'ի յերկրի անկեալք կան, մինչ
զի՝ ոչ ինչ զայլ, իմէք՝ եթէ
ոչ զմարմնականաց խորհիցին:
Բայց են եղկելիք՝ դեռևս 'ի վախ-
ճանի ծանրապէս զգայցեն, թէ
զորպիսի ինչ սիրեցին: Իսկ սրբքն
այ՝ և ամենեքեան առաքինի բարե-
կամքն Քի, ոչ երբեք հետևեցան

այ

այնոցիկ՝ որք հաճելիք են մարմնոյ,
և ոչ ծառայեցան ըն կենցաղում՝
այսմիկ: բայց բոլոր յոյս նոյ. և
զխոստովանութիւն ձկանէր առ մեջ
ամենենաւոր բարութիւնն: Բոլոր
իղձ նոյ տարիւր 'ի վեր առ յարա
մնացականն՝ և յանանցանելին, մի
գուցէ սիրով երեւելեացս տարա
քարշեսցին 'ի ստորայինս: Դու
եղբայր՝ մի վհատիր 'ի յառաջելոյ
'ի հոգևորս, դեռևս ունիս ժամ,
և ժամանակ:

5. Ընդէր ձգես 'ի վաղիւն զա
ռաջադրեալն քո: Արի՝ և վաղվա
2 Կոր. ղակի սկսեալ ասել. * Ահա ժա
6. 2 մանակ ատենելոյ, ահա ժամանակ
ընդդիմամարտելոյ, և ահա ժամա
նակ ընդունակ զգաստանալոյ:
Եթէ 'ի նեղութեան իցես, ասա՝
ահա ժամանակ արդիւնաւորելոյ:
Սաղմ. պարտ է քեզ * անցանել ընդ հուր՝
65. 12 և ընդ ջուր, յառաջ քան թէ հա
սանիցես 'ի զովացումն: Եթէ ոչ
աշխատիցիս, յաղթահարել զվատ
թարութիւնս ոչ կարասցես:
Որքան եմք ըն տկարում այսմիկ
մարմնի, թարց մեղաց գոլ ոչ կա
րեմք, և ոչ կեալ թարց ձանձրու
թեան՝ և ցաւոյ: Յօժարիմք ու
նել

նել զ յանդգնութիւն յանձնից
թշնամութեանց, բայց քանզի՝
կորուսաք մեղօք զանմեղութիւն մեր,
և զերջանկութիւն մեր ճշմարիտ:
Վա որոյ՝ համբերել պարտիմք, և
սպասել ողորմութեանն Աստու-
ծոյ. * մինչև անցցէ անօրէնու- Սաղմ.
թիւնս այս, * և ընկլեսցի մահկա- 56. 2
նացութիւնս այս 'ի կենաց: 1 Կոր.
6. Ո՜հ թէ՝ որչափ է տկարութիւն 5. 4
մարդկային, որ ձգտի միշտ 'ի վատ-
թարութիւն: Այսօր խոստովանիս
զմեղս քո, և 'ի վաղիւն վերստին
գործես զխոստովանեցեալն: այժմ
յանձն առնես քեզ զգուշանալ և բա-
կնի միոյ ժամու դարձեալ գործես,
ան թէ, զոչ ինչ էիր յառաջեդեալ:
Վասն որոյ՝ բաւ իրաւանց կարեմք
զմեզ խոնարհեցուցանել, և ոչ
կարծել զմեզ զմեծ ինչ, որովհե-
տև այնքան տկարք՝ և անհաստատք
եմք: Եւս զանցառութեամբ մերով
վաղվաղակի կորուսանեմք, զոր աշ-
խատանօք բազմօք 'ի ձեռն շնորհաց
հազիւ երբեմն ստացեալ եմք:
7. Զի՞նչ գլխելոց է մեզ 'ի
վախճանի, որք այնքան կանխա-
ղէս՝ թարշամիմք: վայ մեզ է, ե-
թէ այսպէս կամիցիմք խաղալ
'ի

'ի յանդգնութիւն, ուր թէ՛ իցեմք ընդ խոնարհութեան, և յանհերիքանութե, որք՝ և ոչ զղջալոց սորութե ընդ կենցաղավարութեան մերում տեսոյք։ Բարեգոյն էր թէ՛ թերևս կրթէաք իբրև զնորավարժս վարուք բարեօք, զանձն ունելով զայս աստուծոյ զզաստութեան, և մեծագունի յառաջադիմութե հոգեկանի։

---

Գլուխ ԻԳ։

Յաղագս խորհման մահու։

1. Յոյժ վաղվաղակի հասանէ քեզ օր մահու, տես թէ զինչ առնելոց իցես. քանզի այսօր է որ և 'ի վաղիւն ոչ երևի։ Իսկ մինչ հեռանայ ոք յաչաց, բառնի ևս յիշատակ նորին 'ի մտաց։ Ո՛հ թմրութիւն և խստութիւն սրտի մարդկային, որ միայն զներկայսն խորհի՝ և զապագայսն առաւել ոչ նկատէ։ Պարտէիր զքեզ յամենայնում, և ընդ խոկմանն այնպէս ունել, ուր թէ այսօր մեռանելոց էիր։ Եթէ զբարիս ունեցեալ էիր խղճմտանս, ոչ այնչափ 'ի մահուանէ երկնչէիր։ Բարեգոյն է զգու-

չունալն 'ի մեղաց՝ քան զխափանելն 'ի մահուանէ: Եթէ այսօր ոչ ես պատրաստ, որպէս եղիցիս 'ի վաղիւն: Վաղիւն է օր անհաւաստի. և որպէս գիտես, թէ տեսանելոց իցես զվաղիւն:

2. Զի՞նչ օգուտ է մեզ կեալն երկար օրէն, որովհետև հազիւ երբէք զգաստանամք: Ո՛հ. կեանք երկարք ոչ միշտ զգաստացուցանեն, այլ մանաւանդ յաւելուն զյանցանս: Երանի թէ՝ գոնեա՛ մի օր բարեպէս կեցեալ էաք յաշխարհի այսմիկ: Բազումք թուեն զամս զդարձմանն իւրեանց առ Տէր, բայց սակաւս գտանեն 'ի նմա պտուղս զգաստութեան: Եթէ զարհուրելի է մահ, գուցէ ահաւոր վտանգոյն իցէ երկարաձգել կեալն: Երանի այնմ, որ զժամ մահուն իւրոյ ունի հանապազ առաջի աչաց իւրոց, և 'ի մահ հանապազօրդ զինքն պատրաստէ: Եթէ տեսեր երբեմն ուրումն զմահ, խորհեաց՝ զի և դու ընդ այն ճանապարհ անցանելոց ես:

3. Յորժամ առաւօտ լինի վարկեաց թէ ոչ ես ժամանելոց յերեկոյ: Իսկ յերեկոյի՝ մի խոստա

նար քեզ զժամ առաւօտուն: Մինչ ուրեմն լեր պատրաստ, և կենդանաւորեա այնպէս՝ զի մի երբէք անպատրաստ մահ զքեզ գտանիցէ: Բազումք վաղվաղակի և յանկարծ մեռանին: Ի՞նչ զի՞
Ղուկ 'ի ժամուն, յորում ոչ կարծեմք,
12. 4 գայ Որդի մարդոյ: Յորժամ այն յետին ժամ գայցէ, կարի այլապէս զգալոց եմք զկեանս մեր զանցեալս բոլորս, և յոյժ ցաւելոց եմք. զի այնքան զանցառուք՝ և թուլացաք:

4. Որքան երջանիկ է նա՝ և իմաստուն, որ ջանայ այժմ այնպիսի կեալ, որպէս բաղձայ գտանիլ 'ի ժամու մահուան: Զի տայ զմեծ համարձակութիւն երջանկապէս մեռանելոյ, կատարեալ խոստումն կենցաղոյս, ջերմեռանդն սէր յառաջանալոյ յառաքինութիւն, խղճ կսծման անձին, աշխատանք ապաշխարութեան, յօժարութիւն հնազանդութեան, ուրացումն անձին, և ընկերութիւն վարձութեանց մի՛ սիրոյն Քրիստոսի: Մինչ առողջ ես կարօղ ես զբազումս գործել բարիս, այլ մինչ ախտաժետ, ոչ գիտեմ զի՞նչ կարօղիցես առնել: Սակաւք 'ի ամպ կա

կարօտութե՛ բարեգործութեան. այսոց
և հոգւոյ՝ որք յանձինս պանդխտա
նան, արդարութեան։

5. Մի՛ յուսար ՚ի բարեկամս՝ և
՚ի մերձաւորս, և մի՛ ձգեր յապա
ղել զփոյթ կեցութեան. քանզի՝ վաղ
վաղակի մոռանալոց են զքեզ
մարդիկ, քան թէ կարծես։ Բա
րեգոյն է՝ այժմ ՚ի պատշաճում
ժամանակի նախապատրաստել, և
զբարի ինչ յառաջ առաքել, քան
թէ՝ յուսալ ՚ի յօգնութիւնս այ
լոց։ Եթէ դու ոչ հոգաս այժմ
վասն քոյ, ո՛վ ՚ի փախճանի վասն քոյ
հոգասցէ և բարեգոյն քան զքեզ։
Այժմ յոյժ ազնիւ է ժամանակ։
Այժմ է՝ օր փրկութեան։ այժմ 2 Կոր. 6. 2
է ժամ ընդունելի։ Բայց ո՛հ
ցաւոյս, զի օգտակարագոյնս ՚ի կեր
ոչ արկանես զայն, նորուն արդիւ
նաւորել կարես, որով և յաւիտե
նականս կեցցես։ Եկեսցէ
ժամանակ, յորում զմի օր՝ կամ զմի
ժամ զղջմանաւորդ ցանկասցես
ունել, և ոչ գիտեմ թէ գտա
նիցես։

6. Աղէ՛ ուրեմն ո՛վ սիրելի, յոր
քան փորձութեանց զքեզ ապա
տիցես, և ՚ի մեծէ յերկիւղէ զքեզ
փրկ

փրկիցես, եթէ միայն երկնչիցիս միշտ 'ի մահուանէ՝ և զարհուրիցիս: Ջանա այժմ այնպ̃ կեալ, զի 'ի ժամու մահուան մանաւանդ խնդասցես՝ քան թէ տրտմիցիս: Ուսիր այժմ մեռանել յաշխարհէ, զի յայնժամ 'ի Ք̃ս կենդանանայցես: Ուսիր այժմ խոտել զամ̃, զի յայնժամ ազատապէս կարիցես փութալ առ Ք̃ս: Ճնշեա այժմ զմարմին քո ապաշխարութ̃բ, զի յայնժամ ունիցիս զյոյս ճշմարիտ:

7. Ով յիմար, ընդէ՞ր խորհիս զերկարից կենաց, որովհետև և ոչ զօր մի ունիս հաստատ: Որքան քաղումք այսպէս պատրեցան, և յուսահատեցեալք ելին 'ի մարմնոյ: Որքանիցս լուար յասողաց, թէ ոմն անկաւ 'ի սուր, և ոմն 'ի ծով ընկղմեցաւ, մինն 'ի բարձանց քարավէժ եղեալ եհեր ըզգագաթն իւր, և միւսն մինչ ուտէր կարկամեցաւ, միումն մինչ զբօսնոյր վախճանեցաւ: Այլ ոմն հրով կիզեցաւ, մինն սրով, միւսն մահուամբ, և այլումն աւազակութ̃բ կորեաւ. և այսպէս ամե-
Սաղմ. նեցուն վախճանն մահ է, * և աւ-
101.10 ուրք նոցին որպ̃ հովանի անցանեն:

Ով

8. Ո՞վ յիշելոց է զքեզ զկնի մա-
հուան, և ո՞վ է աղօթելոց վասն քո:
Արդ այժմ, արդ սիրելի, և գոր-
ծեա զոր ինչ գործելոց ես. զի ոչ
գիտես թէ երբ ես մեռանելոց,
այլև ոչ գիտես թէ զի՞նչ է գալո-
ց քեզ զկնի մահուան: Մինչ
ժամանակն 'ի ձեռին քոյ է, ժողո-
վեա քեզ զգանձ անմահական:
Բաց 'ի փրկութենէ քումմէ, զո՛չ
ինչ հոգայցես. զայնմանէ միայն,
որ Այն է, զփոյթ ունիցիս: * Կա՛լ Ղուկ 16. 9
քեզ այժմ զբարեկամս, պատուէ-
լով զսուրբս Այ, և հետևելով նոցին
վարուց. զի մինչ նուաղիցիս նայս
մեկ կենցաղումս, նոքա ընկալցին
զքեզ 'ի յարկան յաւիտենականս:

9. Պահեա զքեզ իբրև զպան-
դուխտ և օտար 'ի վերայ երկրի,
որում ոչ ինչ է փոյթ զիրաց աշխար-
հի: Պահեա զսիրտ քո ազատ, և
առ Այ վերացուցեալ, զի ոչ ու-
նիս աստ քաղաք մնացական. առ
նա զաղօթս և զհառաչանս արտա-
սուալիցս առաւօտեան հանապազ,
զի հոգի քո արժանաւորիցի երև-
իլ երջանիկ առաջի Տեառն զկնի
մահուան:

Գլուխ

## Գլուխ ԻԳ։

### Յաղագս դատաստանի, եւ պատժոց մեղաւորաց։

1. Ամենայնում իրի նկատեա զվախճանն, եւ թէ որպէս կալոց իցես առաջի անաչառն դատաւորին, յորմէ ոչ ինչ ծածկի, որ ընծայիւք ոչ հաճի, եւ զպատճառանս ոչ ընդունի, այլ միայն ըստ իրաւանց դատէ։ Ո՛վ յիմարդ՝ եւ ողորմելի մեղաւոր, զի՞նչ պատասխանիս տայցես Այ, որ գիտէ զբոլոր չարիսն յայտնութիւ, որ երբեմն երկնչիս ամենայնէ յերեսս առն բարկացելոյ։ Ընդէ՞ր ոչ պատրաստես զքեզ մի աւուր դատաստանին, յորում ոչ որ այլով միջնորդել կարէ, կամ ջատագովել մեք, այլ իւրաքանչիւր ոք է բաւական բեռամբն իւրեան։ Այժմ արդիւնաւորք են քոյք աշխատանք, ընդունելիք են քոյք արտասուք, լսելիք են քոյք հեծութիւնք, հաճոյիցք՝ եւ մաքրիչք մեղաց են քոյք ցաւք։

2. Ունի, եւ զառողջարար ապաշխարութիւն ունի այրն, որ համբերէ վրդովմութեանց, եւ որ ընկա-

լեալ

լեալ զանհրաժեշտութիւնս, առա-
ւել զաւելի մի չարութեան գործոյն,
քան զմի անհրաւութեանցն զորս
ընկալաւ. որ յաղագս ընդդիմա-
կաց իւրոց յօժարութեամբ աղօթէ, և
'ի բազում սրտէ նոյնին յանցանաց
ներէ, որ 'ի խնդրելոյ զթողութիւ-
նն յայտնէ ոչ յապաղէ. և որ զիւրա
պէս զթողութեան բարեկամաց. որ
զանձն իւր յանձնառուէս վասա
դեւ, և զմարմինն հարկաւոր իւ-
րամ [illegible] բարերարութեանն հնազանդե-
ցուցանել: Բարեկարգն է այժմ մեզ
ըստ զանձն, և հնազանդել զհոգութիւն,
քան թէ ապա մինչ 'ի վախճան
դարձուցանէ: Ճշմարտապէս արդ
ընդ զանձն ամէն անհնարին [illegible]
զոր առ [illegible] մարմինս մեր:

3. Զի՞նչ կրկնելոյ է հաւանեալ,
եթէ ոչ զանձն քոյ: Որքան ա-
ռաւել անհնարին այժմ 'ի բեղ, և
Հետեւ մարմնոյ քում, այնքան
առաւելն յառաջ արտածեսցես,
և զանձնագոյն մեղթ հրոյն կիզանի
ժողովեսցես: Որով որ մեղանչէ, Յոհ. II. 17
նովին կործանեսցի:
'Ի գեհեան ժանտոյ, խաղթոյնք
հրոյնս կիզեսցին. և որկրա
մոլքն ծարաւով տոչորեսցին և սո-
վով

վով տաղնապեսցին, անդ բղջա-
խոհք՝ և հեշտութեանց սիրողք,
ընկալթայս եռացուցելս կպրով.
և ծծմբով գարշահոտիւ մաշես-
ցին. և նախանձոտք իբրև զշունս
կատաղիս սակս ցաւոց իւրեանց
կոծեսցին:

4. Ոչ են յանցանք որք զպա-
տիժս իւրս յատուկս ոչ ունիցին:
Անդ գոռոզք ցնդմամբ մեծա-
ահարեկեսցին. և ագահք թշուա-
ռիւ կարօտութեան վշտանկեսցին:
Անդ ծանրագոյն է կալն զժամ
մի ընդպատժութեամբ, քան աստ զամս
հարիւրս 'ի մէջ ծանունց ապաշխա-
րութեանց: Անդ ոչ ոք է հան-
գիստ, և ոչ ինչ մխիթարութիւն
դատապարտելոց. բայց աստ
երբեմն հանգչել կարելի է որ յաշ-
խատանաց, և կամ սփոփիլ մխի-
թարութեամբ 'ի բարեկամաց: Արդ՝
զգուշացիր աստ, և ցաւիր սակս
քոյոց մեղաց, զի յաւուր դատաս-
տանի լինիցիս աներկեւան ընդ ար-
Իմաստ. դարոց: * Քանզի յայնժամ կայ-
Ե. 1 ցեն արդարքն մեծաւ համարձա-
կութեամբ յանդիման այնոցիկ՝ որք
վշտացուցին զնոսա, և տառապե-
ցուցին: Յայնժամ ոչ դատեսցին

ուր

այնոքիկ, որք սաստ զատտողութեց
մարդկան խոնարհաբար զինքեանս
սատարարկեցին: Յայնժամ զինծ-
համբաւելութին ունիցի աղքատն՝
և խոնարհն, և աճապէկ լիցի յա-
մենայնէ կողմանէ հոգարան:

5. Յայնժամ համարիցի նա ի-
մաստնագետ կեցեալ յաշխարհի
այսմիկ, որ ուսեալէ լինիլ յիմար
և խոտելի վա Քի: Յայնժամ հա-
մոյ թուեսցի ամ՛նեղութին համբե-
րութեր կրեցեալ, * և ամ անօրէն Ս—ւմ
խցցէ զբերան իւր: Յայնժամ 106.42
խնդասցէ ամ բարեպաշտ, և տրխ-
մեսցի ամ ամբարիշտ: Յայնժամ
առաւել զուարճասցի մարմին
վշտագնեցեալ, քան զմարմին հե-
շտութիւք յոր սնուցեալ: Յայն
ժամ փայլեսցին հանդերձք խոտե-
լիք, և խաւարեսցին հանդերձք
ազնիւք: Յայնժամ առաւել գո-
վեսցի տուն ինչ աղքատաչէն, քան
զպալատ ինչ ոսկէնկար: Յայն
ժամ առաւել օգնեսցէ համառատ
համբերութիւն, քան զամ աշխար
հի զօրութիւն: Յայնժամ առաւ-
ել բարձրասցի զուտ հնազանդու-
թիւն, քան զամենայն աշխարհի
նրբահայեցութիւն:

6. Յայնժամ առաւել համա
րեսցին խղճմտանք մաքուրք, քան
գիտնեա փիլիսոփայութիւն: Յայն
ժամ առաւել վարկեսցի խոտումն
փարթամութեանց, քան զընտիր
գանձս երկրաւորաց: Յայն
ժամ առաւել մխիթարեսցիս վ՜ն
քայոց ջերմեռանդից աղօթից,
քան վ՜ն քայոց նրբից ուտելակե
րութեանց: Յայնժամ առաւել
խնդասցես վ՜ն քայոց լռապահու
թեանց, քան վ՜ն քայոց երկարից
առասպելաբանութեանց: Յայն
ժամ առաւել արժեսցին գործք
սուրբք, քան զբանս բազումս և գե
ղեցիկս: Յայնժամն առաւել հա
ճոյ թուեսցի խստակրօնութիւն,
և կարծր ապաշխարութիւն, քան
զամ՜ հեշտութիւն երկրայնի:
Ուսիր ուրեմն կրել այժմ զայն
ինչ նեղութիւն, զի յայնժամ 'ի
մեծագունից կարիցես զերծանել:
Աստ՝ նախ փորձեա զքեզ թէ
զի՞նչ կարիցես յետոյ տանել:
Եթէ այժմ զսակաւ ինչ փորձու
թիւն ոչ կարես կրել, որպէս մար
թասցես կրել զյաւիտենականսն պա
տիժս: Եթէ այժմ սակաւ ինչ
կիրք զանհամբերութիւն բերեն,

զի՞նչ

զի՞նչ տուրեւերեցուցք էն քեզ յայն ժամ դժոխք։ Աշխատանիկ արդարև՛ տանէ, ոչ կարեն ունել մեագամայն զերբերուս խնդութիւնս, այսինքն՝ զզուարճանալն յաշխարհի այսմիկ, և զթագաւորելն անդէն ընդ Քրիստոսի։

7. Եթէ մինչև ցայսօր մինչ այս տանջեալք և հեշտութիւնք կեցեալ էիր, զի՞նչ օգուտ լինէր քեզ այժմ, թէ հանդիպէր քեզ մահ։ Աստի ամ ինչ ունայնութիւն է, բայց ՚ի սիրոյն այ՝ և ՚ի ծառայութենէ նորին։ Քանզի՝ որ զած յամէ սիրէ իսրմէ սիրէ, նա ոչ ՚ի մահուանէ, և ոչ ՚ի տանջանաց, և ոչ ՚ի դատաստանէ, և ոչ ՚ի դժոխոց երկնչի. զի սէր կատարեալ զանհրկեան մատչումն առ ած մեզ շնորհէ։ Իսկ՝ որ դեռևս մեղօք հեշտանայ, ոչ էն զարմանք, թէ երկնչիցի ՚ի մահուանէ՝ և ՚ի դատաստանէ։ Սակայն բարի է, զի եթէ որ սիրովդ ոչ հեռանայ ՚ի չարէ, երկիւղիւ գոնեա դժոխոց, զգայցի։ Իսկ՝ որ զերկիւղն այ ոչ այնքան հանդարտէ, ՚ի բարիս անէլ ոչ կարէ, այլ վաղվաղակի՝ անկանի յորոգայթս սատանայի։

Գլուխ

Գլուխ ԻԵ:

Յաղագս ջերմեռանդն ուղղման բոլորին մերոյ կենաց:

1. Ե՛ր զգաստ՝ և զգոյշ 'ի պաշտաման Տեառն, և խորհեաց յաճախագէս, առ ի՞նչ հասեցար, և ընդէ՞ր թողեր զաշխարհ: Ո՞չ ապաքէ՞ն վասն այնր, զի Այ կեցցես, և այր հոգևոր լինիցիս: Արդ՝ եռանդն փութա 'ի քոյդ յառաջադիմութիւն, զի զվարձս աշխատանաց քոց փութով ես ընդունելոց. և յայնժամ ոչ եղիցի ես երկիւղ, և ոչ ցաւ 'ի սահմանս քոյս: Փոքր ինչ այժմ աշխատիս, և զմեծ հանգիստ, և առաւել ես՝ զմշտնջենաւոր խնդութիւն գտցես: Եթէ դու մնասցես հաւատարիմ, և անվհատ 'ի յառնելիս, թարց ումեք կարծեաց եղիցի ես Ած հաւատարիմ, և ձոխ 'ի հատուցմանն: Զյոյս բարի ունիլ պարտիս, թէ ընդունելոց իցես զյաղթանակն. բայց զանհոգութիւնն ոչ է պարտ ունիլ, մի գուցէ յուլանայցես, կամ մեծամտիցես:

2. Մ՛ինչ անձն նեղութէ 'ի մէջ երկիւղի, և յուսոյ յաճախագէս այլ-

ալէկոծիւր, և երբեմն տխրութեամբ
խռովեալ, յեկեղեցւոջն առաջի
սրբոյ սեղանին ուրուք, անկեալ 'ի
վ՛ր երկուց ծնգաց կայր յաղօթս,
և զայս 'ի միտս իւրում խորհէր
ասելով, վա՜յ թէ գիտէի՝ թէ տա
կաւին յարատևելոց իցեմ, և յան
կարծակի՝ լուաւ զձայնին ներ
քինի պատասխանի. եթէ գի
տէիր զայդ՝ զի՞նչ կամէիր առնել:
Արա՛ այժմ, զոր յայնժամ կամէ
իր առնել, և եղիցիս աներկեան:
Ուստի մխիթարեալ՝ և արիացեալ
յանձնեաց զինքն կամացն այ, և
հանգեաւ 'ի տարակուսէ անտի ալէ
կոծմանէ: Եւ ոչ կամեցաւ հե
տաքրքրութե՛բ խուզել, թէ զի՞նչ
իցէ գիտելոց նմա 'ի հանդերձե
լումն, այլ մանաւանդ ջանայր
խնդրել թէ զի՞նչ իցէ կամն այ
բարեհաճելին՝ և կատարեալն,
առ 'ի սկսանելն՝ և կատարել զամե
նայն գործ բարի:

3. Յուսա՛ 'ի Տր, և արա՛ զբա Սաղմ.
րի (ասէ մարգարէն) բնակեա՛ց 36. 3
յերկրի, և հովուեսցիս 'ի մեծու
թեան նր: Մի ինչ է՝ որ զբա
զումս 'ի յառաջադիմութենէ, և 'ի
ջերմեռանդն զգաստութենէ տարա

վար

քաղցէ, այսինքն՝ երկկուղ դժուա րութեան, կամ աշխատանքը այս ներբաղձնաց։ Այլ սակայն այնո քիկ առաւել քան զայլս ՚ի յառա քինութիւնս յառաջնանոն, որք առա ւել ծանունք՝ և համաստակը թու թն արիաբար յաղթել ջանան։ Քանզի անդ որ առաւել շահի, և արգելմանն զինորհի մեծաւ, ուր զինքն առաւել յաղթէ, և հա գեօրայես ծնչէ։

4. Բայց ոչ ամէն ոանն զյաղ թելոյ համառօտ՝ և զծինչելոյ։ Սակայն հետադաձննախանձաւոր, հզօրագոյն է առ՚ի յառաջել, թէև զբաղումն ոանցի զփորձութիւնս, քան զբարեկիրն որ, որ ոչ իցէ քերաանդ ՚ի մրցմունս։ Երկու են՝ որք ներառկարար օգնեն մեծի զգաստութեան, այսինքն, տարա քաղցել զինքն բռամբ յայնմանէ, առ որ բնութիւնն փափաքարտ հակէ. և քաջաւալես տարերապոփէլ ակս բարուցն, որում առաւել ոչ կարօտի։ Քանզի յայնցանէ սպառ ածս զգուշանալ, և զայնոսիկս յաղթել, որք քեզ անհաճելիք յա ծանաղես թուին։

5. Ամենայն ուրեք զգաստութի

քս

քո կալցես. զի եթէ զօրինակս բարիս դիտիցես, կամ լուիցես, համաձայնեսցիս նոցին ջանայցես։ Բայց եթէ զպարսաւելի ինչ տեսանիցես, զգոյշ լեր, մի զնոյն առնիցես. կամ եթէ գործեալ իցես երբեմն, վաղվաղակի ուղղել զնոյն ջանասցես։ Որպէս տեսանես զայլս, այսպէս եւ տեսանիս յայլոց։ Վա՜յ թէ որպէս վայելուչ է եւ քաղցր, տեսանել զջերմեռանդս, եւ զառաքինի եղբարս, բարեկրօնս, եւ զկրթեցեալս։ Որպէս տրտմալի է՝ եւ ծանր, տեսանելն զշրջօղս անկարգաւորս, որք զայնոսիկ՝ առ որս են կոչեցեալք, 'ի կիր ոչ արկանեն։ Ո՜վ որպէս վնասակար լինել է, զանց առնել զառաջադրութիւն կոչմանն իւրոյ, եւ առ յոչ հրամայեցելոյն զգաստութեն իւր ձկտեցուցանելն։

6. Լե՛ր յիշող առաջեցելոյն 'ի քեզ յառաջադրութեան, եւ դիր առաջի աչաց քոց զխաչելելոյն պատկեր։ Եւ յոյժ պատկառեցիս տեսանելով զկեանս Յի՛ Քի՛, զի չեւս զգեղ նմին առաւել համաձայնել ջանայցեր, թէ եւ՝ զբազում ժամանակս շրջեցար 'ի շաւիղս այս։

Կրօնաւոր՝ որ կրթէ զինքն զգուշապէս, և ջերմապէս 'ի վարս սրբութեան, և 'ի չարչարանս Տն մերոյ Յի Քի, զամ ինչ օգտակար՝ և զկարևոր ինքեան առատապէս գտանէ. և ոչ է հարկ, թէ խնդրեսցէ զինչ բարեգոյն քան 'ի Քէ: Ո՜ թէ խաչեցեալն Յս բնակէր 'ի սրտի մերում, որքան փութով, և բաւականապէս լինէաք հմուտք:

7. Կրօնաւոր ջերմեռանդ՝ բարեպէս կրէ, և առնէ զամ ինչ պատուիրեսցեալ նմա: Կրօնաւոր ծոյլ և թոյլ, ունի զվիշտ 'ի վերայ վշտաց, և յամէ կողմանէ կրէ զնեղութիւնս, զի ոչ ունի զներքին մխիթարութիւն, և 'ի խնդրելոյ զարտաքինն արգելանի: Կրօնաւոր՝ որ կեայ արտաքոյ խրատու, արտադրէ զինքն մեծի գլորման: Որ զթուլագոյնս, և զհեշտագոյնս խնդրէ, կայ միշտ 'ի նեղութեան. քանզի մինն, կամ միւսն անհաճոյ թուի նմա:

Որպէս կարեն տանել այլք կրօնաւորք, որք այնքան խստութ̃ կան 'ի ներքոյ վանականի կառավարութեան: Հազիւ երբեք ելանեն 'ի դուրս, բնազանցապէս՝

կեան

կեամբ, աղքատասէս՝ ուտեն, խո
շորասէս՝ զգենուն, շատ աշխա
տին, սակաւ խօսին, երկարասէս՝
հակեն, կանխասէս՝ յառնեն, զա
զօթս երկարեն, յաճախասէս՝ ըն
թեռնուն, և զնկրեանս բնաւին
ներկրթութիւք պահպանեն: Հայ
եաց 'ի Կարթուզեանսն, և'ի Ջիս
տերցեանսն, և յայլս միանձեայս,
և'ի կուսանս զանազանից կրօնից.
որպէս յանձնամ գիչերի յառնեն 'ի
սաղմոսել ՏՆ: Ուստի անպատեհ
ինն է, թէ զու 'ի յայնքան սրբա
զանէ գործոյ ծուլանայցես, որով
այնքան բազմութեան կրօնաւորաց
սպասեն առ ԱԾ հրճուիլ:

9. Ո՞հ, եթէ որ բոլորին սրտիւ՝
և բերանով, պարապիւր 'ի գովու
թիւն Տեառն ԱՅ. և ոչ յայլինչ:
Ո՛հ, թէ որ ոչ երբեք կարօտէր ու
տել, և ոչ ըմպել, և ոչ ննջել.
կարող էր միշտ գովել զԱԾ, և
'ի յիրս հոգևորս միայն պարապիլ.
յայնժամ՝ առաւել երջանիկա
գոյն լինէր քան այժմ, զի այժմ
սակս խուրբանդիւրոց կարեաց ծա
ռայէ մարմնոյ: Երանի թէ ոչ
էին այսպիսի կարիք, այլ միայն
անձին հոգևորականքն մնուց

մանք

մանք, զորս ամենայն հոգւով եր-
բէք ճաշակեմք ։

10. Յորժամ որ առժամանէ-
այն աստիճանս, զի ոչ խնդրիցէ
'ի յառաջնորդաց ումեքէ զկարիթա-
րութիւն, յայնժամ նման իւր նախատ-
ակս եւ կատարելագոյն ակամբ
քարոզութեան. յայնժամ եւ զոհա-
նակ զամենեցունց զխրախուսանաց ըն-
դի ։ Յայնժամ ոչ յաղագս մեծի
իրի ուրուք խնդրոյ, եւ ոչ յաղագս
փոքու իրի ուրուք արտաքի, այլ
զնէ զյոյս իւր բարերարին եւ հաւ-
ատարմութեան 'ի յոյժ, որ է նմ յա
մենայնում որում ոչ ինչ կորիցի եւ
ոչ ինչ մեռանի, այլ բնաւքն 'ի նմա
կեան, եւ 'ի նշանակէն նորին,
թարց ումեք ներխուժութեան
ծառայեն նմին ։

11. Լե՛ր միշտ յիշող քոյոյ վախ-
ճանի եւ այնորիկ, թէ ժամանակն
կորուսեալ անդրէն ոչ դառնայ ։
Թէպէտ ումեք հեռաւորութեն, եւ
զգուշութեան ոչ երբէք առանձին
առաքինութիւնք ։ Եթէ ակաս-
նեցին թուլանալ. ակամբ եւ չա-
րակրադ կեալ ։ Իսկ եթէ առ-
ցես կրել 'ի ջերմեռանդութիւն,
դառնես զխստաղալութիւն աւե-
ճոր

չորրհացյն ոչ, և սիրոյն սատարենու-
թեամբ։ Այր ջերմեռանդ՝ և ըն-
դդէմ պատրաստ է՝ առ ամ ինչ։
Մեծագոյն աշխատանք են, ընդ-
դիմամարտութիւն վատթարութեանց՝ և
տխմարաց, քան մարմնականաց աշխա-
տութիւնք։ ⁕Որ զողորմութիւն Ղուկ.
թիւնս փութայ ոչ՝ ի բաց ձգէ, 19. 1
որ բան որէ՝ ի մեծագոյնս առնի։
Աղքատն մեծաց յերկիւղի, և թէ
արգելանք զոփան անցուցէր։
Զգաստացն զգէք, զարթն զգեք,
տառագուլ զեկ, և որ ինչ զայլոց
առնիցի, մի զանցառներ առակոյն
զգէ։ Անձեան յառաջագինեն
ցես, որքան ջանացցես։

ՎԵՐՋ։

Ո. Թ

Ութսուն և իններորդ։

Բան Սրբոյն Հօրն Գրիգորի, Նարեկայ Վանաց Վանականի, հոգեմաքրեան Հռետորի, և Հրեշտակակրօնին Վարդապետի Հայոց։

Աստուած՝ և Տէր. կեանք՝ և արարիչ. ողորմած. գթած. լոյս. երկայնամիտ. անոխակալ. մարդասէր. ամենազօրութ. պարգևատու. փրկիչ. Օրհնեալ. Գովեալ. Բարեբանեալ։ Դու արան ամբոութեան։ Պատսպարան վստահութեան։ առանց ննջութեան բարի։ առանց խաւարի ճառագայթ։ քաւիչ մեղաց։ ողջացուցիչ վիրաց։ անհնարելեաց հնար։ անմատչելեաց հպատոր։ անյուսութեան ելք։ անուն քո խոստովանեալ՝ Աստուծոյ որդի։ Եւ Հօր քոյ ընդ քեզ հզօրի, և Հոգւոյդ ամենակալի, և ընդ քեզ երկրպագելոյ՝ փառք, և պաշտօն զոհաբանութեան՝ յաւիտեանս.

Ամէն։

[illegible]

Թ.Օ

# ԹՕՄԱՅԻ ՔԵՄՓԱՑԻՈՅ:

Յաղագս

# ՀԱՄԱՀԵՏԵՒՄԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ:

## ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ:

Ազդարարութիւնք վարուցն առներքինայինս:

### Գլուխ Ա:

Յաղագս ներքնայնոյ կենցաղավարութեան:

*ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆՆ ԱՍՏՈՒԾոյ 'ի ներքս 'ի Ղուկ. 17. 21
ձեզ է, ասէ Տէրն: Դարձիր առ Տէր 'ի բոլորէ սրտէ քումմէ, և թող զաշխարհս ողորմելի, և գտցէ հոգի քո զհանգիստ: Ուսի՛ր խոտել զիրս արտաքինս՝ և պարապիլ 'ի ներքինայինս, և տեսցես գալ

գալ 'ի քեզ զարքայութիւնն Այ :
Հռովմ. Քանզի արքայութիւնն Այ է խա
14. 17 ղաղութիւն, և խնդութիւն 'ի
Հոգին սբ, որ ոչ շնորհի երբեք
ամբարշտաց : Եկեսցէ առ քեզ
Քս ցուցանելով քեզ զիւրն մխի
թարութիւն, եթէ զարժանա-
ւորն բնակութիւն նմին ներքուս
տես պատրաստեսցես : Նորին ամե
նայն փառք, և վայելչութիւնք
են ներքնայինք, և անդ հաճոյա
ցի լինելոյն : Նորին յաճախ այցե
լութիւն է ընդ մարդոյն ներքնոյ,
քաղցր խօսակցութիւն, դիւրա
զգած մխիթարութիւն, բազում խա
ղաղութիւն, և զարմանադոյն ըն
տանութիւն :

2. Արդ՝ ով դու հոգի
հաւատարիմ, պատրաստեա այս
միկ փեսայի զսիրտ քո, զի արժա
նացուցանիցէ զքեզ գալ՝ և բնա
Յովհ. կել 'ի քեզ : Քանզի ասէ, եթէ
14. 23 ոք սիրէ զիս, զբանն իմ պահեսցէ,
և առ նա եկեսցուք, և օթևան
առ նմա արասցուք : Տուր ա
րեմն տեղի Քի, և այլոց ամենե
ցուն փակեա զմուտ : Մինչ զՔս
ունիցիս, փարթամ իսկ ես, և
բաւական է քեզ : Նա լինի նա
խա

խառնեաւ առ ջ.քո լինիցի, և հաստատ
ըիմ հաղորդարձու յանձնամ, և ոչ եր
բեք կարասցիս յուսալ 'ի մարմին-
-քանցի՝ մարմին վաղվաղակի փո
փոխին, և փութասցես 'ամ.աղին-
նակ -Քն մնայ 'ի յաւիտեան, և կայ
ըեզ մերձ հաստատապէս մինչև 'ի
կախնձան:

3. Ոչ է պարտ գնել * գյոյս Եզեկ
մեծ ըն մարդամ ամէք բնկանեն 17·5
ըամ և մահկանացումն, թէ և՝
ազատութ, և բարեկամ իցէ, և ոչ
է վայելուչ ախորժել այնպան, թէ և՝
դարձցի երբեմն, և ընդդիմամար
ոխցի: Ոմ որ այսօր ընդ քեզ է,
վաղիւն կարէ դառնալ 'ի քէն. և
հակառակամնալ, բազմիցս փոխե
լով կրկնախոհել: Բայց զբոլոր
յոյս քո ըն յԱստուծոյ, և նա է
զիցի յերկիւղ քո, և սէր քո:
Նա պատասխանեսցէ վ.ն քոյ, և
արասցէ բարեպէս, որ բարեգոյն
լիցի: Ոչ ունիս աստ զբաղաք
մնացական, այլ ուրեք իցես, օտար
ես և * պանդուխտ, և ոչ երբեք Սաղ.
գտցես զհանգիստ, եթէ ոչ ընդ 118·19
-Ք.ի հաստատապէս միացուցես:

4. Ընդէ՞ր անդանօրէս պայր և
անոյք, որով հեռեւ ոչ է այս տեղի

քոյ

քոյս յանդորրութն : 'Ի յերկինս պատրաստ է լինել քոյդ բնակութն. և իբր անցաւոր՝ միայն պարտիս նկատել զբնաւս : Այսպիսի համ ենչ միանգամայն, և դու ընդ նոսին, զգոյշ լեր, զի մի աղքնուցուս 'ի նոսա, զի մի և դու ընդ նոսին ըմբռնեսցիս, և կորնչիցիս : Քոյդ խորհուրդ առ Այ միշտ վերասցի, և աղերսանք քոյդ առ Քս անդադարապէս ուղղեսցին : Եթէ ոչ կարես նկատել զմեծագոյնս՝ և զերկնայինս, հանգիր 'ի չարչարանս Քի, և 'ի վերս նորին սրբազանս յօժարութեն բնակեաց : Զի եթէ 'ի խոցս՝ և 'ի սպիս ազնիւս Յի, ջերմեռանդապէս ապաւինիցիս, զմեծ մխիթարութի գտցես 'ի մէջ նեղութեան. և ոչ այնքան զփոյթ ունիցիս զարհամարհանացն մարդկայնոց, և զխարապէս մարթեսցիս տանել զբանս պարսաւականս :

5. Քրիստոս ևս մինչ էր յաշխարհի, պարսաւիւր 'ի մարդկանէ. և՝ ընդ հարկաւորում ժամու, 'ի ծանօթից՝ և 'ի բարեկամաց իւրոց թողանիւր 'ի մէջ նախատանաց : Քս կամեցաւ չարչարիլ՝ և

խորհիլ, և դու վասն քոյ լինիս վր
բանդ խնդրես ։ Քրիստոս ունէր զհա
կառակորդս, և զընդդիմամարտս,
և դու կամիս, զի ընտանիք իցեն
քեզ բարեկամք՝ և բարերարք ։
Ո՞րպէս կամիս արդիւնաւորիլ
առանց քոյոյ համբերութեան ։ Եթէ
ոչ ինչ ընդդիմամարտութիւն քեզ
[illegible] ։ Ո՞րպէս լինիցիս բա
րեկամ Քրիստոսի, եթէ ոչ կամիս առ
նուլ հակառակս քոյ ։ Ըմպեսջիր՝
ընդ Քրիստոսի, և վասն Քրիստոսի, եթէ կա
միս թագաւորել ընդ Քրիստոսի ։

6. Եթէ միանգամ կատարելա
պէս մտանէիր ի խորս Քրիստոսի, և
սակաւ ինչ ի սիրոյ նորին ճաշակիր
նե ճաշակեալ էիր, ոչ ինչ զփոյթ
ունէիր զխափանմանց, [illegible]
թեանց՝ և զանխնդրութեանց,
այլ մանաւանդ խնդայիր սակս
արհամարհանաց քոց [illegible]
զի սէր Յիսուսի առնէ զմարդ քա
մահ խնդացեալ ։ Սէրն Յիսուսի,
և ճշմարտութեանն առնէ զմարդ
խոնարհ ներքին, և ազատ յամե
նայն կրից անկարգելոց . և որ ու
նի զնա, կարէ ազատապէս դառ
նալ առ Աստուած, և վերա
նալ հոգւով ի վեր քան զինքն,

և զմտյլաւլէս՝ յարահանգիլ։

7. Որ համարի զիրսն բաց այնմ որ են, և ոչ բաց այնմ որ ասին, կամ վարկեցեալք լինին, նա է ճշմարիտ իմաստուն, և ուսուցեալ մանաւանդ յԱյ, քան 'ի մարդկանէ։ Որ ներքսապէս գիտէ զբօսնուլ, և զիրս արտաքինս իբր զգոյն ինչ վարկանել, նա ոչ խնդրէ տեղիս, և ոչ սպասէ ժամանակաց, առ 'ի ունել զհոգևոր ներկրթութի։ Այր ներքին վաղվաղակի՝ զինքն ժողովէ. զանզի ոչ երբէք հեղանի բովանդակ՝ առ արտաքինս։ Ոչ արգելուն զնա աշխատանք արտաքինք, կամ պարապմունք առ ժամանակ ինչ հարկաւորք. այլ ըստ իրաց եկելոց, զինքն պատրաստէ։ Որ ըստ ներքնոյն բարեպէս է յօրինեցեալ, և կարգաւորեցեալ. ոչ հոգայ զզարմանալեաց՝ և զխաւթարից առ ից մարդկայնոց։ Այնչափ մարդ արգելանի՝ և տարացրուի, որչափ զիրս արտաքինս առ ինքն քարշէ։

8. Թէ էր ներքսապէս ուղղեցեալ էիր, և բարեպէս մաքրեցեալ, ամ ինչ աջողիւր քեզ բարեպէս. և

և արդիւնաւորապէս ։ Վասն այն բազում լինի քեզ անհանգիստ լինել, զի դեռևս ոչ ես կատարելապէս ներ 'ի քեզ մեռեալ, և ոչ որոշեցեալ յիրաց երկրայնոց ։ Ո՛չ ինչ այնքան բծաւորէ՝ և վրդովէ զսիրտ մարդկան, որքան սէր անմաքուր արարածոց ։ Եթէ ոչ հրաժարեսցես 'ի մխիթարութենէ արտաքնոյ, ոչ կարես նկատել զիրս երկնայինս, և յաճախապէս հրճուիլ ներքնապէս ։

---

## Գլուխ Բ ։

## Յաղագս Խոնարհական Հլութեան ։

1. Մի՛ համարիցիս մեծ ինչ, եթէ ունիցիս զոք ընդ քեզ և կամ ընդդէմ քեզ. բայց զայս ջանա՛՝ և հոգա՛ զի իցէ ած ընդ քեզ յամենայնում զոր առնես ։ Ունիցիս զխղճմտանս բարիս, և ած բարւոքապէս ջատագովեսցէ վասն քո ։ Քանզի որում ած օգնել կամի, նմին ոչ ուրուք թիւրութիւն վնասել կարէ ։ Եթէ գիտիցես լռել՝ և համբերել, տեսցես անտարակուսապէս Տեառն զօգնութիւն ։ Նա գիտէ զժամանակն՝

և

և զերդանակ գրեղ ազատելոյ, մը
որոյ՝ պարտիս գրեղ նմին առատնս
գրել: ԱՅ է օգնելն, և յոմէ
չփոխեմ մանէ զմեղ ազատելն: Բայց
միջն՝ յոյժ օգտակար է մեզ առ 'ի
պահել զմեծ խոնարհութիւն,
մինչ այլք խմանան զմեզ պակաս
ութիւնս, և յանդիմանեն զմեզ:

2. Յորժամ որ մամն պակասու-
թեանց իւրոց խոնարհի, յայնժամ
զիւրաքեա զայլս հաճեցուցանէ,
և թեթևացեալս զկնուցանէ զայ
ումն նախատանօք իւրոց:
Զխոնարհն պահէ նա՝ և ազատէ,
զխոնարհն սիրէ, և մխիթարէ. առ
խոնարհն մատէ. խոնարհաց ընձե
ռէ զմեծամեծս շնորհս, և զկնի
նուաստութեան՝ բարձրացուցանէ
զնոսա 'ի փառս: Խոնարհաց յայտ
նէ զխորհուրդս իւր, և առ ինքն
քաղցրութեամբ քարշէ՝ և հրաւիրէ:
Խոնարհն մինչ ընդունի զխիղճս,
բաւականապէս է 'ի խաղաղութեան.
զի կայ յԱստուծոյ, և ոչ յաշ
խարհի: Մի՛ համարիր զքեզ յա
ռաջադիմել կերպիւ իւիք, եթէ
ոչ ստորնագոյն զքեզ քան զամե
նեսեան զքեզ զգայցես:

Գլուխ

## Գլուխ Գ:

## Յաղագս Մարդոյ բարւոյ՝ և խաղաղարարի:

1. Աստատագոյն նախ զու-ղեկդ, և ապա կարաս-ցես զայլս խաղաղացուցանել: Օգտակարագոյն է այր խաղաղա-սէր՝ քան զայր հմուտ: Այր ախ-տաւոր զբարին եւս՝ ի չարն արկա-նէ, և դիւրաւ հաւատայ չարին: Այր բարի՝ և խաղաղարար զամե-նայն դարձուցանէ ՚ի բարին: Որ բարւոք կայ ՚ի խաղաղութեան, յոչ ումեքէ կասկածի, իսկ որ դժգոհակ է՝ և վրդովեցեալ, զանազանս կասկածանօք տագնա-պեալ, և ոչ ինքն հանգչի, և ոչ զայլս հանգուցանէ: Բազմիցս արտաբերէ զայն, զոր ոչ պարտ էր արտաբերել, և զանց առնէ զայն ամենայն, որ առաւել նմա վայելէր: Նշմարէ թէ զինչ այլք պարտին առնել, և անտեսանէ զայնմանէ, զոր ինքն պարտի առնել: Նախանձ ձեռաց ուրեմն զքոյ նախանձն նախ վասն քոյ, և ապա իրաւամբք նախանձել կարասցես սակս ուղ-ղութեան մերձաւորին քոյ:

2. Բա

2. Բարւոյդ՝ գիտես զարդարմանս քոյս արտաքուստարել՝ և կերպաւորել, բայց ոչ կամիս ընդունիլ զպատճառանս այլոց։ Ազգինաւորագոյն լինել, թէ ամբաստանէիր զանձնն, և պատճառանէիր զարդարմանս եղբօրն։ Եթէ կամիցիս թէ այլք ներիցեն քեզ, ներեա և դու այլոց։ Տես թէ որքան հեռի իցես ՚ի սիրոյ ճշմարտէ, և ՚ի խոնարհութենէ. որ ոչ գիտէ երբէք ցասնուլ՝ կամ զայրանալ, եթէ ոչ ինքեան ևեթ։ Ո՞չ է մեծ ինչ, ընդ այս բարիս՝ և ընդ հեզս կենցաղավարիլ. ( զի այսմիկ բնականապէս ամենեքեան հաճին, և իւրաքանչիւրոք յօժարապէս կամի զխաղաղութիւն, և զհամաձայնօղս ինքեան սիրէ) բայց ընդ խստից՝ և ընդ մոլորեցելոց, կամ ընդ բրտից, և կամ ընդ հակառակաց մերոց խաղաղութեամբ կեալն՝ մեծ իմն շնորհէ, և գործ իմն յոյժ գովելի՝ և օգտակար։

3. Են ոմանք, որք են միշտ ՚ի խաղաղութեան, և ընդ այլս ևս ունին զխաղաղութիւն։ Եւ են, որք ոչ ինքեանք ունին զխաղաղութիւն, և ոչ թողուն զայլս կալ ՚ի

խաղաղութեան․ այլոց են ծանօթք, սակայն ինքեանց են միշտ ծանօթագոյնք։ Են եւ ոմանք, որք զինքեանս ունին 'ի խաղաղութե, և ջանան զայլս եւս առածել անդր։ Բայց յայսմիկ աշխարհի ողորմելում, զմերոյ խաղաղութիւնն մեր պարտիմք դնել ընխոնարհական համբերութեան, քան թէ ըն հակառակում։ Որ բարեւս գիտէ համբերել, ունի զմեծ խաղաղութիւն։ Սա է յաղթօղ ինքեան, և տէր աշխարհի, բարեկամ Քի, և ժառանգորդ երկնից։

---

## ԳԼՈՒԽ Դ։

## Յաղագս մաքրամտութեան, և պարզամտութեան։

1․ Երկու են թևք, որովք վերամբառնալ կարէ մարդ յերկրայնոց, այսինքն՝ պարզութիւն՝ և մաքրութիւն։ Պարզութիւնն գոլ պարտի ընդ դիտաւորութեան, և մաքրութիւնն 'ի յիղձս։ Պարզութիւնն նկատէ զԱծ, և մաքրութիւնն ըմբռնէ՝ և ճաշակէ։ Ոչինչ գործ բարի կարէ զքեզ արգելուլ, եթէ լիցես ազատ ներքսա-

պէս

այնս 'ի յղձից անհարգից։ Եթէ ոչ այլ ինչ, այլ միայն գործողութիւն, և զօրութիւն երբոյն կամացն՝ և խնդրելոյս, ներգործական առատութեամբ զմայլել կարես։ Եթէ ուղիղ էիր սրտիւ յայնժամ զնամ սահղծուած իւր զնոյնն ենոյն, և դիւրք սրբազանի վարդապետութեան համարեսիր։ Ո՛չ ինչ սահղծուած է այնքան խաւան, որ ոչ յարացուցանիցէ զբարութիւն Ած։

2. Եթէ էիր ներքնապէս բարի՝ և մաքուր, զամ ինչ թարց արգելման տեսանէիր՝ և խմանայիր։ Սիրտ մաքուր թափանցէ 'ի յերկինս՝ և 'ի յանդունդս։ Որպէս որ է 'ի ներքուստ, այնպէս դատէ յարտաքուստ։ Եթէ գտանիցի խնդութիւն ինչ յաշխարհի այսմիկ, վայելէ զնա այր, որ սուրբ է սրտիւ։ Իսկ եթէ գոյ ուրեք վիշտ և նեղութիւն, ճանաչէ զայն բարեպէս՝ այր անխիղճ։ Որպէս երկաթ արկեցեալ 'ի հուր; կորուսանէ զժանգահարութիւնն, և բոլորովին ջեռուցեալ լինի. այսպէս այր՝ որ դարձուցանէ զինքն ամենևին առ Ած, 'ի թմրու-

թե

թեանն մխիթարանաց, և ՚ի նոր մարդ-փոխարկիլ ։

3. Յորժամ ոք սկսանի զանգաղել, յայնժամ երկնչի ՚ի սակաւ յաշխատանաց, և յօժարութեամբ ընդունի զարտաքին մխիթարութիւն։ Բայց, յորժամ ոք սկսանի կատարելապէս յաղթահարել զինքն, և քաջապէս շրջել ՚ի շաւիղս Տն, յայնժամ առ ոչինչ վարկանի զայնոսիկ, զորս յառաջագոյն գոլ ծանունս համարէր ։

---

Գլուխ Ա ։

Յաղագս ներքնական անձին իւրոյ ։

1. Ո՛ պարտանիմք հաստատ մեզ յոյժ, զի բաղձիցս հաւաքիմք ՚ի ներքսս՝ և ՚ի յիմացս զութեան ։ Զգայուն իմն ըստ ունիմք ՚ի մեզ, և զայն ևս բաւանեկ անձամբ մերով կարուսանեմք ։ Բարեխօս և՛ սակս ներքնոյսոյն մերոյ կարութեան ոչ զգուշանամք ։ Եւ բաղձիցս զչար իմն ասեմք, և զչարագործս պատճառեմք ։ Երբեմն շարժիմք յախտից մերոց, և կարծեմք թէ իցէ ՚ի բարւոյ նախանձ ։ Սակս սակաւուց այս

հաստատեց յանդիմանեմք զայլս, իսկ զմերովք մեծամեծօք սխալա-նօք զանցանեմք։ Յայտ վասն զակկի զգամք՝ և կշռեմք, թէ զինչ կրեմք յայլոց. բայց թէ որ-քան այլք կրիցեն 'ի մէնջ, ոչ մի-տածեմք։ Վասն որոյ՝ եթէ ոք բարեպէս կշռէր զայն՝ զոր ինքն տանէր, ոչ այնքան ծանրապէս դատէր զայլս։

2. Այր ներքին առաւել համա-րի զհոգս անձին, քան զհոգս ըն-կերս այլոց իրաց. և որ զգուշա-պէս նկատէ զինքն, դիւրապէս լռէ զայլոց իրաց։ Ոչ երբէք եղի-ցիս այր ներքին՝ և առաքինի, եթէ ոչ լռիցես զիրաց օտարաց, և 'ի քեզ առանձնաբար ակնարկի-ցես։ Եթէ 'ի քեզ՝ և յԱծ բոլո-րապէս փութասցես, փոքր ինչ՝ կա-րիցեն զքեզ շարժել իրքն զորս արտաքուստ ըմբռնես։ Ո՞ւր ես, մինչ՝ ոչ ես ընդ քեզ։ Եւ զի՞նչ օգուտ, մինչ զանցանելով զքեզն խորհիս զբնաւից իրաց։ Եթէ պարտիս ունել զխաղաղութիւն, և զմիաւորութիւն ճշմարիտ, ար-ժան է, զի զամենայն ինչ յետին տարադրեսցես, և զքեզ միայն ա-

ռամբ այսոց քոց ունիցիս:

3. Զարդիւնս բազումս ունի-ցիս, եթէ զքեզ ազատ 'ի բնաւից ժամանակականաց հոգոց պահի-ցես: Յոյժ նուաղիցիս, եթէ զինչ ցաղականս իբր ինչ վարկանիցես: Ոչինչ քեզ մեծ, ոչինչ բարձր, ոչինչ գիւրադգամ, և ոչինչ ըն-դունելի թուեսցի, եթէ ոչ սուրբ ԱԾ, կամ որ զնմանէ ածեալ է: Թէ գի-ւտցի քեզ մխիթարութիւն, յամե-նայն արարածոց, զամենայն ու-նայնութիւն վարկեսցես: Հոգի, որ սիրէ զԱԾ, արհամարհէ զամ-ինչ որ է արտաքոյ այս: ԱԾ միայն է յաւիտենական, և անչափ, լցու-ցիչ զամենայն, մխիթարութիւն անձին, և ճշմարիտ խնդութիւն սրտի:

---

Գլուխ Զ:

## ՅԱՂԱԳՍ ԽՆԴՈՒԹԵԱՆ ԲԱՐԻ ԽՂՃԻ ՄՏԱՑ:

1. Փառք առն բարւոյ, * է վկայութիւն բարի խղճմտանաց: Ունիցիր զբարի խիղճ մտաց, և ունիցիս միշտ զուարճութիւն 2. Կոր. 1. 12

թիւ: Բարի խիղճ մտաց առնէ
բազմաց իրաց, և յոյժ ուրախ լի-
նի 'ի մէջ ընդդիմութեանց: Չար
խիղճ մտաց միշտ է երկիւղալից' և
անհանդարտ: Բաց ցուցանէ յարա-
Յով. հանդիպեսն, ' եթէ սիրտ քո զքեզ
3. 21 ոչ բամբասիցէ: Մի կամիր խոյս
տալ, եթէ ոչ միտք զբարիս գոր-
ծես: Զորս ոչ երբեք ունին բա-
ղձմունքն խղճմտութեան, և ոչ զգան
Եսայ. զխաղաղութիւն նեղութեանն. ' քան
57. 21 զի ոչ գոյ խաղաղութիւն ամպարշ-
տաց, ասէ Տէր: Եւ եթէ ամե-
նեն. թէ ելցէ 'ի խաղաղութեան, և
ոչ եկեսցեն 'ի վերայ մեր չարիք.
և ով է որ մեղանչել կարիցէ մեզ,
մի հաւատասցես նոցին. վա՛յ զի յան-
կարծակի յառնէ բարկութիւն
ծոյ, և յոյս լինի փոխարինին նոցին նեղ-
գործութիւնքն, և խորհուրդք
նոցին կորիցեն:

Շ. Պարծիլն 'ի նեղութեան, ոչ է
ծանր առ ջերմեռանդս. քանզի
Գաղ. այսպէս պարծիլն, ' է պարծիլ 'ի
6. 14 խաչն Տն: Սուրբ են փառք' որք
'ի մարդկանէ ընծայնին, և ունայն
նին: Աշխարհային փառաց միշտ
ուղեկցի ապականութիւն: Պարծանք
բարեաց, են 'ի խղճմտանս նոցին,
և

և ոչ 'ի բերանս մարդկան։ Խնդրութիւն արդարոյ է յաստուածուստ, և ներ յաստուածում. և ուրախութին նոցին, է վն Ճշմարտութեան։ Որ որ ցանկայ Ճշմարտոյից, և յարամնայից փառաց, զժամանակաւորաց զփոյթ ոչ առնէ։ Իսկ որ զժամանակաւորս խնդրէ փառս, կամ 'ի սրտէ զնոսա ոչ հանէ, ցուցանէ թէ զերկնայինս ատեալինչ սիրէ։ Որ որ զգալութեանց, և զպարապամանց զփոյթ ոչ առնէ, ունի նա 'ի սրտի խորհուրդ զմեծ յանդորրութիւն։

Է. Գովութիւն լինի որ գոհանան՝ և խաղաղ, եթէ խղճմտանք նորին իցեն մաքուրք։ Ոչ լինիս սրբագոյն, եթէ գովեսցիս. և ոչ խոտալի, եթէ պարսաւեսցիս։ Զի ես դու, զոր ինչ ես. և ոչ կարես ասել մեծագոյն քան զայն, զոր Աճ զքեզ վկայէ։ Եթէ նկատեսցես ներքուստ, թէ զինչ իցես դու 'ի քեզ. ոչ հոգասցես՝ թէ զինչ խօսին զքէն մարդիկ։ * Մարդ նկա- 1. Թ. Ժ̃Զ
տէ յերեսս, բայց Աճ 'ի սիրտս։ 16. 7
Մարդ համարի զգործս, բայց Աճ նայի 'ի դիտաւորութիւն։ Միշտ զբարիս գործելն, և զդոյն ինչ զինքե-

նէ

նէ կարծելն, է անձին խոնարհի դատողութիւն: Ո՛չ կամիլն սփոփիլ յիմիքէ ստեղծուածոյ, է նշան մեծի մաքրութեան, և ներքնոյն համարձակութեան:

4. Որ զո՛չինչ վկայութիւն արտաքին վա՛ն իւրեան խնդրէ, նշան է՝ թէ բոլորովին զինքն այ է յանձն
Բ. Կոր. նեալ: *Քանզի՝ ոչ որ զանձն իւր
10. 18 ծանուցանէ, նա է հաստատեալ,
այլ զոր Տր ընտրէ. ասէ երանելին Պօղոս: Շրջիլն ընդ այ ներքսապէս, և զգածմամբ իւիք ոչ պարանդիլն արտաքուստ, է կացութիւն ներքնոյն մարդոյն:

---

## Գլուխ: Է

### Յաղագս սիրոյն Յիսուսի 'ի վեր քան զամենայն:

1. Երանի՝ որ իմանայ թէ զի՞նչ իցէ սիրելն զՅիսուս, և խոտել զանձն վասն ն͞ի: Պարտ է թողուլ զսիրելին վասն սիրելւոյն, քանզի կամի Յ͞ս միայն սիրիլ 'ի վեր քան զամ: Սէր ըստեղծուածոյ սուտ է՝ և անհաստատուն. իսկ սէրն Յ͞ի հաւատարիմ է՝ և յարատև: Որ առյենու 'ի ստեղծուածս

ածս, գլորեսցի ընդ առաջականաց-
ոյ վարքի զյիսուսին՝ հաստատես-
ցի 'ի յաւիտեան։ Օ՛նա սիրեմ,
և կալ քեզ բարեկամ․ որ 'ի հե-
ռաւորն ամենեցուն ոչ թողու
զքեզ, և ոչ թողլ տայ, զի կորնչի-
ցիս 'ի վախճանի։ Պարտ է քեզ
յամենեցունց երբեմն բաժանիլ,
եթէ կամիցիս, և եթէ ոչ կամի-
ցիս։

2․ Կա՛լ զքեզ մերձ յն, կեալ
իբր զմեռեալ․ և հաւատարմու-
թեան նորին առ յանձնեա՛ զքեզ,
որ 'ի նուաղիլն ամենեցուն, կարէ
քեզ միայնակ օգնել։ Ըղձալւոյն
քոյ այսպիսիք են բարք, որ ոչ
համի թէ ձգիցես առ այլ ինչ
զսէր քո, այլ կամի ինքն միայն ու-
նել զսիրտ քո, և ըստ արքայ 'ի գա-
հի խուռմ սեփականի բազմիլ 'ի
նմին։ Եթէ կարեիր զքեզ գա-
տարկել բարեպէս յամէ առեղծու-
ածոյ, Յիսուս յն յօժարապէս ընդ
քեզ բնակէր։ Գիրե թէ զբնաւ
կորուսեցեալ գտանիցես, զոր ինչ
արարոյ ՚՚ի 'ի մարդիկս եդեալ
ես 'ի պահեստ։ Մի յուսայցես,
և մի յենուցուս 'ի վերայ եղեգան
հողմակոծի․ * զի ամ մարմին խոտ Ե

է

40. 6 է, և համայն ներքին փառք երբև
զծաղիկ խոտոյ անկանին։

3. Փութով խաբեսցիս, եթէ նկատեսցես միայն ՚ի յարտաքին երեւոյթ մարդկան։ Բանզի՝ եթէ խնդրես ՚ի յայլս զքոյդ մխիթարութիւն, և զշահ, զգայցես բազմիցս զտուժանս։ Եթէ խնդրիցես նմանուն զՅս, գտցես արդարև զՅս. իսկ եթէ խնդրիցես զքեզ, գտցես և զքեզ, բայց ՚ի կորուստ քո։ Զի առաւել վնասեցէ այր ինքեան, որ ոչ խնդրէ զՅս, քան թէ բոլոր աշխարհ, և ընաւիքն հակառակք։

---

Գլուխ Ը։

ՅԱՂԱԳՍ ԸՆՏԵԼՈՒԹԵԱՆ ՄՏԵՐՄՈՒԹԵԱՆ ՅԻՍՈՒՍԻ։

1. Մինչ մերձ է Յս, ամենայն ինչ բարի է, և ոչ ինչ դժուարին թուի. իսկ յորժամ ոչ է մերձ Յս, ամ՚ ինչ խիստ է։ Մինչ Յս. ՚ի ներքուստ ոչ խօսի, մխիթարութիւնն է անարգ. իսկ եթէ Յս զբան իմն եթէ խօսեսցի, մեծ իմն մխիթարութիւն իմանի. Ո՛չ ապաքէն Մարիամ մագ-

դա

դառնացելոցն յարտասուս փաղփաղանակի
'ի տեղւոջէն, յորում լայր, մինչ
Մարթայ նմա ասաց թէ՝ Վարդապետ Յովհ.
եկեալ է, և կոչէ զքեզ: 11. 28
Երջանիկ է ժամն, յորում Յս ար-
կոչէ զքեզ յարտասուաց 'ի խնդու-
թիւն հոգեկան: Վայ թէ չորացեալ
ցամաքիս, և կարծրանաս որ թարց
Յի, և որքան յիմարի և ունայ-
նանայ որ, մինչ ըղձայ զքր ինչ
բաց 'ի յիսուսէ: Ոչ ապաքէն
առաւել է այս տուժան, քան թէ
կորուսանիցես որ զբոլոր աշխարհ:

Է. Զինչ կարէ քեզ շնորհել
աշխարհ թարց Յի: Գոլն թարց
Յի, դժոխս է դժնդակ. և գոլն
ընդ Յի, արքայութիւն է քաղցր:
Եթէ իցէ ընդ քեզ Յս, ոչ որ
թշնամի կարէ քեզ մեղանչել. Որ
գտանէ զՅս, գտանէ զգանձ բա-
րի, մանաւանդ զբարի գերքան
զբարիս. և որ կորուսանէ զյիսուս,
յոյժ առաւել կորուսանէ, և զեր-
քան զբոլոր աշխարհ: Աղքա-
տագոյն է նա, որ կեայ թարց
Յի. և փարթամագոյնն է նա որ
բարւոք է ընդ յիսուսի:

Ը. Մեծ արհեստ է, զխօսելն ընդ
Յի զկենցաղավարիլն, և զխօսելն

ու

ունիլ զՏր, մեծ խաղաղութիւն է: Լեր խոնարհ՝ և խաղաղարար, և եղիցի ընդ քեզ Յս: Լեր ջերմեռանդ՝ և յանդորր, և բնակեսցէ ընդ քեզ Յս: Եթէ կամիցիս միանգամ առ արտաքինս փութով փախուցանես զՏր, և զշնորհս նորին կորուսանես: Եւ եթէ զնա փախուցանիցես, և կորուսանիցես, առ ո՞ դիմեսցես, և զո՞ խնդրեսցես քեզ սիրելի: Թարց սիրելւոյ, ոչ կարես կեալ բարեպէս, և եթէ Յս ոչ եղիցի քեզ գեր քան զբնաւս սիրելի, եղիցիս յոյժ տրտում, և անօգնական: Ուրեմն զյիմարութիւն գործես, եթէ 'ի յայլ ինչ յուսայցես, կամ այլով իւիք խնդայցես: Ընտրելի է մանաւանդ զբոլոր աշխարհս ունիլ ընդդէմ, քան զՏր զայրացուցանել: Արդ ուրեմն առաւել քան զբնաւս տռփալիս, եղիցի քեզ միայն սեփական սիրելի Յս:

4. Սիրեսցին այլք բնաւք յաղագս Յի, իսկ Յս միայն վասն ինքեան: Միայն Յս Քս, է եղականացես սիրելի. և նա միայն գտանի բարի, և հաւատարիմ 'ի մէջ սիրելեաց: Վասն նորա՝ և նո-

վաս

վաւ, թէ բարեկամք՝ և թէ թշնամիք լիցին քեզ սիրելիք. և յաղագս նոցին բնաւից աղօթել պարտիս զի, զի ամենեքեան լիցին արժանիք ծանուցել զնա, և սիրել։ Մի՛ ցանկասցես երբեք առանձնապէս սիրել՝ կամ գովիլ, զի այս է միայնոյ Այ, որ զնման ինքեան ոչ ունի։ Մի՛ կամիցիս թէ ոք 'ի սրտի քո զբաղեսցի, և մի՛ և դու զբաղեսցիս այլումնով սիրով. այլ միայն Յս լիցի ընդ քեզ, և նմա նոյնում ամենայն բարւոյ։

5. Լեր ներքսապէս մաքուր՝ և ազատ, թարց ումեք ստեղծուածոյ ներշող կապանաց։ Եթէ կամիս ազատ լինել և տեսանել թէ որպէս քաղցր է Տր, պարտ է քեզ զերծ և ազատ սիրտ առ ած կրել։ Եւ իրաւի ոչ մարթեսցես առ այս ժամանել, եթէ ոչ շնորհօք նորին նախապատրաստեսցիս՝ և ներքսագայցիս. զի յամենեցունց զատուցեալ և արտաքսեալ, միայնդ ընդ միայնումն միաւորեսցիս։ Վասն զի մինչ շնորհն Տեառն գայ առ մարդն, լինի կարող առ ամ ինչ. և մինչ հեռանայ 'ի նմանէ, լինի աղքատ՝ և անզօր, որպէս թէ

թո

Թողեցեալք լիցին 'ի սպառուծս :
Յայնպիսիս ոչ պարտի վհատիլ ոք՝
և յուսահատիլ, այլ խնդութեամբ
կալ ընդ հաճութեան Տեառն. և
զամենայն պատահմունս կրել 'ի գո
վութիւն Յի Քի. քանզի զկնի
ձմեռան հետևի ամառն. և զկնի
գիշերոյն լինի վերստին տիւ. և
զկնի ամպոց, լինի մեծ պայծառութի:

---

## Գլուխ Թ.

### Յաղագս նուազման բնաւից սփոփ-ման :

1. ՈՉ է ծանր ինչ խոտել
զսփոփութիւնն մարդկայինս,
մինչ ունի ոք զԱծայինն: Մեծ է
և յոյժ մեծ, ոչ ունելն զմարդկայ
ին՝ և զԱստուածայինն մխիթա
րութիւն. և կամ փառացն Այ տա
նելն աքսորումն սրտի. և ոչ խնդր
րելն զիւրսն 'ի՛ իւր յումեք. և ոչ նկա
տելն 'ի յարդիւնս յատուկս:
Վա՞յ թէ ոյր մեծ է զոլն զուարթ՝
և ջերմեռանդ 'ի գալն շնորհաց,
զի բաղձալի է այս ժամ՝ բնաւից ան
ձանց: Յոյժ դիւրաւորս ձիաւո
րի. զոր շնորհն Այ առաքէ տանի:
Եւ ոչ էն զարմանք՝ թէ ոչ զգայ
ցէ

ցէ զբեռն ինչ այնպիսին, որ տա
րեալ լինի յամենակարողէ. և ամ ի
՚ի վեհէ յառաջնորդէ:

2. Յօժարութեամբ կամիմք ու
նել զիր ինչ մի մերոյ միաբանու
թեան, և զժուարաւ մերկանալ
մարդ ՚ի յինքենէ: Յաղթեաց
սուրբն Լաւրենտիոս հանդերձ իւ
րով քաջութեամբ. զի զոր ինչ՝ որ
հրճուէր տեսանելով ընկենցա
զուամ այսմիկ, արհամարհեաց. և
զբարձումն ՚ի յինքենէ մեծի քա
հանային այ Սիքստոսի՝ զոր յոյժ սի
րէր, մի սիրոյն Քրիստոսի, համբե
րար կրեաց: Արդ եմն սիրով ըս
տեղծողին, զսէր մարդկային յաղ
թահարեաց. և առաւել քան ըզ
մարդկային մխիթարութիւն, զԱծոյին
բարեհաճութիւն ընտրեաց:
Ուսիր այսպէս՝ և դու թողուլ
զբոյս հարկաւորս՝ և զզրկանելիս
բարեկամս, մի սիրոյն այ: Եւ մի
զժուարին թուեսցի քեզ թողու
նել ՚ի բարեկամաց, գիտելով զայն,
թէ պարտ է մեզ ամենեցուն բա
ժանիլ երբեմն ՚ի միմեանց:

3. Բազմիցս՝ երկարապէս՝ պար
տի ոք ընդ ինքեան պատերազմիլ,
նախ քան թէ գիտիցէ զինքն բոլո
րո

բոլորին յաղթահարել, և զերծս
բնաւս առ ած ուղղել։ Յորժամ
որ ապաւինի 'ի յինքն, զխորա-
տաւանհի 'ի ափոփոխման մարդկոյ
ինս։ Իսկ Ճշմարիտս սիրողն քո,
և հոգունակ հեռանայն առաքինու-
թեանց, ոչ ձգեսի 'ի մխիթարութիւն,
և ոչ խնդրէ զգայականս քաղց-
րութիւն. այլ խնդրէ մանաւանդ
զներկիրթմանս ծանունս, և զաշ-
խատանս խիստ վա Քո կրել։

4. Մինչ չնորհի քեզ յատատ-
ծուատ հոգեկան մխիթարութիւն
ինչ՝ ընկալ զնա մատուցմամբ զո-
հութեանց. բայց վարկեա զնա
ձիր Այ., և ոչ զառատ քոյոց ար
դեանց։ Մի փքանար, մի առա-
ւել քան զչափն խնդար, և մի ունայ
նարար մեծարանելր. այլ մանաւ-
անդ լեր խոնարհագոյն ձրին այ-
նու, զգուշագոյն և երկիւղածա-
գոյն յաւս քոյս բնաւս. զի անցա-
նէ ժամն այն, և հեռանի փորձու-
թին։ Մինչ բառնի 'ի քէն մխիթա-
րութիւնն, մի խակոյն յուսահատիր,
այլ խոնարհութ. և համբերութ.
ապասեա երկնային այցելութե.
քանզի կարող է ած դառնաւել-
գոյն մխիթարութիւն քեզ մերս

չնոր

չնորհել: Ո՛չ է այս նոր ինչ, և ոչ
այլանդակ ինչ ձանձրացուցող զձանձա
տարժան էր․ վասն զի մեծամեծաց
և սրբոց, և հնոյ մարգարէից գի-
տեցաւ բազմիցս այսպիսի այլայլու-
թեան եղանակ:

5․ Ոստանի՛ նմն, մինչ նեղեալ էր
չնորհն ասէր․ * Ես ասացի 'ի բա- Սիր·
րեկենդանութեան իմում, թէ ոչ 29· 7
սասանեցայց 'ի յաւիտեան: Եւ
մինչ չնորհն էր 'ի բացեայ, թէ
զինչ կրէ յինքեան զգացեալ, ասա
գէ ասելով․ * Դարձուցեր զե- 29· 8
րեսս քո յինէն, և ես եղէ խռովե-
ցեալ: Բայց ամենայն՝ նայսահիկ ոչ
երբէք յուսահատի, այլ արիաբար
զՏէր աղերսէ ասելով․ * Առ քեզ 29· 9
Տէր կարդացից, և առ Աստուած իմ աղա-
ղակեցից: 'Ի վախճանի՝ զպտուղս
աղօթից իւրոց առնելի, և զինքն
ընկալեալ գոլ վկայէ ասելով:
* Լուաւ Տէր, և ողորմեցաւ․ և 29·11
Տէր եղև ինձ օգնական: Բայց՝ Դո
րում արդեօք: * Դարձուցեր՝ ա- 29·12
սէ, Տէր զսուգ իմ 'ի խնդութիւն,
հերձեր յինէն զքուրձ, և շուրջ պա-
տեցեր զիս ուրախութեամբ: Արդ՝
եթէ այսպէս գործեցաւ սրբոց մե-
ծաց, ոչ պարտիմք յուսահատիլ
մեք

մեք տկարքս, և աղքատքս, թէ
իցեմք երբեմն ընդ մխիթարու-
թեան, և երբեմն ընդ փորձութե. զի
Հոգին մերձենայ, և հեռանայ ի
բարեհաճութեան կամաց իւրոց:
Յոբ Ուստի երանելին Յոբ ասէ. ' այց
7. 18 առնես 'ի նա յառաւօտու, և ի
կայն փորձես զնա:

6. Յո՞ւրեմն յուսալ կարեմ, կամ յո՞ր արդեօք ապաւինել, եթէ ոչ միայն 'ի մեծ ողորմութիւնն քո, և միայն 'ի յոյսն շնորհին երկնային: Քանզի՝ թէև ունիցիմ զարս, կամ զեղբարս սառքինիս, կամ զբարեկամս հաւատարիմս, կամ զգիրս սրբազանս, կամ զընձեռունս գեղեցիկս, կամ զզանազան զերգս քաղցունս. սակայն ամենեքեան այսոքիկ տկարքին օգնեն, և զոյն ինչ հանգիստ, եթէ իցեմ զրկեցեալ 'ի շնորհաց, և մնացեալ տակաւին ներքոյ անփոփոխում աղքատութեան:
Յայնժամ ոչ է այլ ինչ դեղ լաւագոյն, քան զհամբերութիւն, և զխոտումն անձին ընդ հաճութեան Աստուծոյ:

7. Ոչ գոյ զոր երբեք այնքան առաւելին, և ջերմեռանդ, որ ոչ

լինէր կրկնակ երբեմն զհեռաւորու-
թիւնն, եւ կամ ոչ լինէր զգացեալ
զնուազումն ջերմեռանդութեանց։
Ո՛րք 'ի սրբոց այնքան բարձրա-
ցեալ յափշտակեցան՝ եւ վեհացան,
որ 'ի յաջողման՝ կամ 'ի վախճանի
ոչ փորձեցան։ Քանզի՝ որ ոչ է
կրեալ զփորձութիւն ինչ վ̃ն ա̃յ.
նա ոչ է արժանի հանդիսականմանն
ա̃յ։ Զի փորձութիւն նախընթաց,
է նշան հետեւեցելոյ մխիթարու-
թեան։ Վասն զի՝ փորձութեամբք
զննելոցն, երկնային խոստանի
մխիթարութիւն։ * Որ յաղթէ, Յայտ. 2. 17
տաց՝ տալ նմա ուտել 'ի փայտէն
կենաց։
8. Տրի ուրեմն Ա̃ծոյն մխի-
թարութիւն մարդոյ, զի լինի հզօրա-
գոյն 'ի կրելն զպատերազմունս։
Հետեւի եւս փորձութիւն, զի մի՝
սակս բարեացն, հպարտանայցէ։
Ո՛չ նենգէ սատանայն, եւ ոչ մարմինն
դեռեւս է մեռեալ. վասն որոյ՝
մի դադարիր 'ի պատրաստել
ըստ զքեզ 'ի պատերազմ.
զի՝ յաջմէ, եւ յահեկէ
թշնամիք ոչ եր
բեք դադա
րին։

## Գլուխ Ժ։

### Յաղագս երախտագիտութեան, որ վասն շնորհացն Աստուծոյ։

1. Ընդէ՞ր խնդրես զհանգստութիւն, որովհետեւ ծնեալ ես 'ի յաշխատութիւն։ Պատրաստեա՛ զքեզ մանաւանդ 'ի համբերութիւն, քան թէ 'ի մխիթարութիւն. և 'ի բառնալ զխաչն, առաւել քան թէ գտանել զխնդութիւն։ Քանզի՝ ո՞վ ոք յաշխարհայնոց յօժարապէս ոչ ընդունի զմխիթարութիւն՝ և զխնդութիւն հոգեկան, եթէ միշտ գտանել զնա մարթիցի։ Զի մխիթարութիւնք հոգեկանք գերազանցեն զհեշտութիւնս աշխարհի բնաւ, և զփափկութիւնս մարմնոյ։ Վասն զի՝ համայնք հեշտութիւնք աշխարհի, կամ ունայնք են, կամ աղտեղիք։ Այլ հոգեկանք զուարճութիւնք, են միայն նոքա վայելուչք՝ և համեստք, ծնեալք յառաքինութեանց, և յաստուածոյ 'ի միտս մաքուրս ներշնչեալք։ Բայց այս քիք Աստուածայինք մխիթարութիւնք ոչ ոք միշտ ըստ բաղձից իւ-

րոյ

րոց զմտօք կարէ, զի ժամանակ փորձութեան ոչ այնքան լուէ։

2. Յայժ մարմնոյն ընդ վերնոյ նոյ այցելութեան պատրաստականն պատուութիւն հոգւոյն, և առաւել նութիւն անձին։ Ամ բարուք անձն, մինչ տայ զշնորհս մխիթարութեան, խոկ մարդիկ չարապէս վարին, մինչ զբնութն մի ընդ շնորհակալութեան ոչ առընձեռնէն։ Ամ որոյ՝ հեղանիլ 'ի մեզ ոչ կարեն ձիրք շնորհաց, քանզի՝ ապերախտանօք առաջի հեղինակին. և զբարին ոչ առհեղումք 'ի ծագն աղբիւրականն, Զի այնմիկ պատշաճի շնորհն, որ արժանապէս շնորհակալ լինի, և բառնի 'ի փքացելոյն, այն՝ որ տրիլ սովոր է առն խոնարհի։

3. Ոչ խնդրեմ՝ ես զայնպիսի մխիթարութիւն, որ բերէ ինձ զխղճմտանս. և ոչ ընձամ՝ այնպիւոյ հանմանկականն, որ ածէ զիս 'ի մեծապարծութիւն։ Քանզի՝ ոչ ամ բարձրութիւն, է սրբութիւն. և ոչ ամ քաղցրութիւն, բարի. և ոչ ամ խիղճ, է մաքուր, և ոչ ամ ցանկութիւն, հաճելի Աստուծոյ։ Յօժարաբար ընդունիմ զայն

զայնպիսի շնորհ, որով կարիցեմ
միշտ խոնարհիլ, և երկիւղած լի-
նիլ, և առ ՚ի խուսել զնա պատ-
րաստ գտանիլ: Հմուան ասէ Տր
լոյն շնորհաց, և ներկրթեցեալն
՚ի պատուիրանս պատուոյ ամենիմաստն,
ոչ իշխէ զբարի ինչ ինքեան առն-
ձեռնել, այլ մանաւանդ ապաքէն՝ և
մերկ տալ զինքն խոստովանի:

Ղուկ. * Տուր զառատութիւն ՍԲ. և կալ
17. 18 զգոյն ՚ի քեզ, այս է՝ առընձեռնելն
նոյ զշնորհս փոխանակ շնորհաց.
խակ քեզ մնայնում զշահուցանս, և
զարժանի պատիժս յաղագս յան-
ցանաց, ընդ տալ վարկեա:

Ղուկ. 4. * Կալ զքեզ միշտ ընտեղւոջ
14. 10 խոնարհութեամբ, և շնորհեսցի քեզ
տեղի բարձրագոյն. քանզի թագ
սորանայն, ոչ կայանայ վերբինն:
Սուրբք՝ որք վեհագոյնք են առա-
քի նոյ, են նուաստագոյնք ՚ի յիւ-
քեանս. և որքան անդ փառաւո-
րագոյնք, այնքան աստ խոնարհա-
գոյնք: Լուսեալք Ճշմարտութբ՝
և փառօք երկնայնոց, սնոտեաց
փառաց ոչ երբէք ցանկան: Հիմնե-
ցեալք յԱստուած՝ և հաստահաս-
տատեցեալք ՚ի նմին, բնաւ ոչ կա-
րեն փքանալ: Եւ որք զբարի
ինչ

ինչ ընդունին առ ԱՅ վերաբե-
րեն, զփառս ՚ի միմեանց ոչ խնդրե- Յովհ
րեն. այլ զփառս՝ որք միայն յաս- 5. 44
տուածոյ են, կամին և ցանկան,
զի ԱՅ ՚ի յինքեանս, և ՚ի բնաւս
սուրբս գովեսցի, և այսպէս յար
՚ի յայս փութան:

5. Լե՛ր ուրեմն շնորհակալ ընդ
փոքուն, և արժանի լինիցիս ըն-
դունել զմեծագոյնն: Փոքրա-
գոյն ձիրն եղիցի քեզ իբր զմե-
ծագոյն. և առաւել արհամարհե-
լին, իբր զառանձնաւոր ինչ շնորհ:
Եթէ արժանաւորութիւն տուո-
ղին նկատեսցի, ոչ ինչ ձիր է՛ նուաստ՝
և կամ խոտելի: Զի ոչ է փոքր
ինչ՝ որ ՚ի բարձրելոյն Այ ընձեռի.
Թէև զպատիժս՝ և զհարուածս
տացէ, հաճելի թուիլ պարտի,
զի՝ միշտ վասն կեցութեան մե-
րոյ առնէ, զինչ թոյլ տայ, զի իր
ինչ մեզ պատահիցի: Որ ըղձայ
պահել զշնորհն Այ, լիցի երախտա-
գէտ շնորհացն Այ ինքեան ընծե-
ռելոց, և համբերող վասն ՚ի
բաց բարձելոյն: Աղօթեսցէ՝ զի
վերստին տացի. ՚Զգոյշ լի- 2. Յոհ
ցի՝ և խոնարհ, զի մի կորուսա- 1. 8
նիցէ զպարգևեալն:

## Գլուխ ԺԱ:

## Յաղագս սակաւութեան սիրողաց Խաչին Յիսուսի:

1. Ունի՛ թերեւս Յն զյո գունս սիրողս արքայութեան իւրոյ երկնայնոյ, բայց զսակաւս բարձողս խաչին իւրոյ: Ունի զբազումս ցանկացողս մխիթարութեան, բայց զսակաւս կըրողս նեղութեան. գտանէ զյոգունս սեղանակիցս, բայց զսակաւ պահօղս: Ամենեքեան բաձան ընդ նմին խնդակցել. բայց սակաւք կամին վն նորա կրել զդըժուարութիւն ինչ: Բազումք հետեւին զՅն մինչեւ 'ի բեկումն հացին. բայց սակաւք մինչեւ 'ի յըմպումն բաժակին չարչարանաց: Յոլովք զհրաշս նորա պատուեն, սակաւք նախատանաց խաչին հետեւին: Բազումք զՅն սիրեն, մինչ դեռ ընդդիմութիւն ինչ ոչ դիպի նոցին: Բազումք գովեն ըզնա, եւ բարեբանեն, մինչ դեռ զփափումն ինչ 'ի նմանէ ընդունին: Բայց թէ Յն զինքն թաքուցանիցէ, եւ դոյն ինչ զնոցունց ան փոյթ առնիցէ. կամ՝ անկանին 'ի

տըր

տրտմութեամբ, և կամ 'ի վհատու-
թիւնս մեծամեծս:

2. Իսկ՛ որք զայս վասն Յի, և ոչ
վասն իւրեանց անձնականաց մխի-
թարութեանց սիրեն, զնա յամե-
նայնում զգուշութեամբ, և նե-
ղութեամբ իբր ընդ մխիթա-
րութեան մեծի բարերարեն: Թէպէտ
ոչ երբէք տայցէ մխիթարու-
թեան ինչ նոցին, սակայն զնա
միշտ գովեն, և զնմանէ շնորհս
կալ մտաց:

3. Ո՞րչափ թէ որպէս կարող է
մարդոյ սէրն Յի, մինչ ոչ է խառ-
նեցեալ օգտութեամբ մարմնականաւ,
կամ սիրով անձնականաւ: Ո՛չ ապա-
քէն վարձկանք են առաջինեալք
ամենեքեան այնոքիկ, որք միշտ
խնդրեն զմխիթարութիւն:
Ո՛չ ապաքէն սիրողք իւրեանց մա-
նաւանդ երեւին այնոքիկ՝ քան թէ
Քի, որք խորհին միշտ զօգտութե-
նէ, և զշահից իւրեանց: Ո՞ւր գտ-
անիցի այնպիսի ոք, որ կամիցի
ձրի ծառայել Այ:

4. Հազիւ երբէք գտանի ոք
այնպիսի հոգևոր, որ իցէ մերկա-
ցեալ յամենեցունց իրաց: Քան
զի զճշմարիտ աղքատն հոգւով,
և

և յանմէ ստեղծուածոյ զմերկա
ցեալն, ո՛ գտանիցէ, զի՝ 'ի հեռաս
տանէ՝ և 'ի վերջնոց սահմանաց է
գին նր: Եթէ տայցէ ոք զգոյս
իւրս ընաւս վասն նորա, դեռևս
ոչինչ է: Եւ թէ արասցէ զապաշ
խարութիւն մեծ, դեռևս դոյն
ինչ է: Եւ եթէ ունիցի զամ գի
տութիւն, դեռևս երկայր է:
Եւ թէ ունիցի զառաքինութիւ
մեծամեծս, և զջերմեռանդու
թիւս յոյժ բորբոքեցեալս, դեռ
ևս բազում ինչ ինքեան պակաս
է. այսինքն՝ մի ինչ, որ է գերքան
զամենայն ինքեան հարկաւոր:
Զինչ արդեօք: Զի՝ թողով
զընաւս, թողցէ և զինքն, և յին
քենէ բոլորովին մերկասցի, զո՛չ
ինչ առանձնական սէր արգել ցու
յինքեան: Եւ մինչ առնէ զամե
նայն, զոր առնելի է, զինքն իբր
զոչինչ արարեալ խոստովանիցի:
5. Մի՛ զմեծ ինչ վարկանիցէ
զայն, որ մեծ ինչ համարիլ կարէ.
բայց ճշմարտապէս զինքն ծառայ
անպիտան խոստովանիցի, որպէս
Ղուկ. Ճշմարտութիւնն ասէ. * Որինչ
17.10 առնէք զընաւս՝ որք հեզ են պա
տուիրեցեալք, ասացէք թէ՝ ծա
ռայք

ռայք անպիտան եմք: Յայնժամ կարէ ճշմարիտ աղքատ, և մերկ հոգւով, և մարթի ասել ընդ մարգարէին. Զի միայնոր, և աղքատ եմ ես: Բայց սակայն ոչ որ փարթամագոյն քան զնա, ոչ որ հզօրագոյն, ոչ որ ազատագոյն, զի զինքն, և զամենայն ինչ թողուլ, և 'ի ստորինս զետեղել կարէ: Սաղմ. 24. 16

---

Գլուխ ԺԲ:

## Յաղագս արքունոյ ճանապարհի սրբոյ Խաչին:

1. Խիստ թուի բազմաց բանս այս. Ուրացիր զանձն քո. բարձ զխաչ քո, և հետևեա ինձ: Բայց առաւել խիստ առաջին եղիցի, լսել զվերջինն զայն բարբառ. 'Ի բաց կացէք յինէն անիծեալք 'ի հուրն յաւիտենականն: Քանզի որք այժմ յօժարաբար լսեն, և հետևին բանի խաչին, յայնժամ ոչ երկիցեն 'ի լրոյ յաւիտենականի դատաստանաւորութեան: Այս նշան խաչի եղիցի 'ի յերկինս, մինչ եկեսցէ Տէր 'ի դատել: Յայնժամ համայնք

Մատթ. 16. 24

Մատթ. 25. 41

ծառայք խաչին, որք խաչելելոյն զինքեանս համակերպեցին 'ի կեանս իւրեանց, մատիցեն 'ի դատաստան Քրիստոսի մեծաւ համարձակութեամբ:

2. Զմի՞ ուրեմն երկնչիս բառնալ զխաչն Տն, որով կարասցես մտանել յարքայութիւն: Ի խաչին է փրկութիւն, 'ի խաչին կեանք, 'ի խաչին պաշտպանութիւն 'ի թշնամեաց. 'ի խաչին ներհեղումն վերնոյն քաղցրութեան, 'ի խաչին կարողութիւն մտաց, 'ի խաչին խնդութիւն հոգւոյն. 'ի խաչին լրումն առաքինութեան, 'ի խաչին կատարելութիւն սրբութեան: Ոչ գոյ փրկութիւն հոգւոյ, և ոչ յոյս յաւիտենականաց կենաց, եթէ ոչ ընդ խաչին ան: Բարձ ուրեմն զխաչն քո, և հետևեա Յի, և երթիցես 'ի կեանս յաւիտենականս: Նա՛ բարձեալ զխաչ իւր նախընթացաւ, և մեռաւ վասն քո 'ի խաչին, որպէս զի և դու բարձցես զխաչն քո, և բաղձայցես մեռանել
Հռոմ 'ի խաչին: * Վասն զի՛ եթէ համա
6. 8 մեռանիցիս, ընդ նմին և համայառնիցես: Եւ եթէ լինիցիս չարչարակից, եղիցիս և փառակից:

Ահա

3. Ահաւասիկ բոլորն կայանայ 'ի խաչին, եւ բոլորն պարունակի ի մահուանն. եւ ոչ գոյ այլ ճանապարհ 'ի կեանս, եւ 'ի ճշմարիտ խաղաղութիւնն յանխռովական, բայց 'ի շաւիղ սրբոյ խաչին, եւ 'ի շաւիղ հանապազորդականի մահացուցման: Շրջեաց ուր եւ կամիս, խնդրեա՛ զոր ինչ եւ հաճիս. եւ ոչ գտանիցես զվեհագոյն ինչ ճանապարհ 'ի վեր, եւ ոչ զապահովագոյն ինչ շաւիղ 'ի վայր, բայց 'ի շաւիղ սրբոյ խաչին: Տրամադրեա՛, եւ կարգադրեա՛ զամ ինչ ըստ հաճոյից քոց, եւ տեսութեանց. եւ ոչ զայլ ինչ գտցես, եթէ ոչ զայն, թէ պարտ է միշտ զեր ինչ կրել: թէ կամաւ, թէ ակամայ. եւ այսպէս միշտ զխաչն գտցես: Քանզի կամ ըն մարմնաւոր ցաւ ինչ զգաս. եւ կամ ըն հոգւոյն զնեղիչ ինչ կրես:

4. Երբեմն թողցիս յԱյ, երբեմն 'ի մերձաւորաց վշտացիս, եւ որ առաւել քան զայն է, բազմիցս ընդ քեզ լինելով ծանրանաս. եւ ոչ խափ ապաքինեալք, կամ մխիթարանօք ապաւինել, կամ թեթեւանալ մարթես. այլ քան հաճեսցի Ած

համ

համբերել պարտիս։ Քանզի կամի ած, զի ուսանիցիս թարց մխիթարութեան զվիշտս կրել, և նմին բոլորովին հպատակիցիս, և լինիցիս խոնարհագոյն նեղութեամբն այնու։ Ո՛չ որ ՚ի սրտէ այնչափ զգայ զչարչարանս Քի, եթէ ոչ այն որ սովորէ զայսպիսիս կրել փորձութիւնս, ուրեմն խաչն միշտ պատրաստ է, և յամենայն ուրեք քեզ սպասէ։ Ո՛չ կարասցես զերծանիլ ՚ի նմանէ, ուր և ընթանայցես, զի յոր և գնասցես, զքեզ ընդ քեզ տարցես, և միշտ զքեզ գտցես։ Դարձի՛ր զքեզ ՚ի վեր, դարձի՛ր զքեզ ՚ի վայր. դարձի՛ր ընքեզ յարտաքս, դարձի՛ր զքեզ ՚ի ներքս. և յայսմիկ ամենեսեան գտցես զխաչն։ Եւ ՚ի հարկէ պարտիս ունել յամենայնում ուրեք զհամբերութիւն, եթէ կամիցիս ունել զներքին խաղաղութիւն, և արժանաւորիլ զյաւիտենական պսակ։

5. Եթէ յօժարութեամբ բարձցես զխաչ քո, բարձցէ և նա զքեզ, և ածցէ առ վախճանն ցանկալի, ո՛ւր եզրն է համբերութե, թէև աստ ոչ լիցի։ Եթէ կամիս ակա-

մայ

մոյ բառնալ, բեռն քեզ առնես,
և զքեզ առաւել ծանրացուցանես.
բայց առակոյն ապրատ է՝ զի անկիցես
ւթէ՝ ՚ի բաց ձգես զմի խաչն, զայլ
ևն թարց կարծեաց գտանիցես,
և թերևս զծանրագոյնն:

6. Համարիս զերծանիլ յայն
մանէ, յորմէ ոչ որ մահկանացու
աց զերծաւ: Ո՛վոք ՚ի սրբոց յայս
խարհի այսմիկ եղև թարց խաչի,
և վշտակրութե: Ոչ և ոչ Տէրն
մեր Յս Քս զժամ մի առանց
ցաւոյ չարչարանաց եկաց, որքան
ապրեցաւ: Վասն այնորիկ՝ ասաց
՚ պարտ էր չարչարիլն քի, և յառ Ղուկ.
նելն ՚ի մեռելոց, և այսպէս մտա 24. 46
նել ՚ի փառս իւր: Եւ զի արդ
դու զայլ իմն շաւիղ խնդրես,
թողլով զարքունի այս ճանապարհ,
որ է ճանապարհ սրբոյ խաչին:

7. Բոլոր կեանն քի, խաչ էր և
մարտիրոսութի. և դու խնդրես
քեզ զհանգստութիւն, և զխնդու
թիւն: Մոլորիս, մոլորիս, թէ
զայլ ինչ խնդրես, բայց ՚ի կրելոյ
զվշտագնութիւնս. քանզի բոլոր
այս կեանս մահկանացու, լի է
թշուառութ̃, և շրջապատեցեալ
խաչիւք: Եւ որքան ոք վերամբարձու
նա

Նոյնպէս մեռք յառաջէ, այնքան զծանրագոյնս խաչս բարձիցս զը տանէ, զի պատիժ պարտեացն նորին՝ տուեալ առնի 'ի սիրոյ:

8. Բայց սակայն այնպիսին՝ որ բազմապատկաբար վշտացնի, ոչ է թարց թեթեւութեան խիթք տխո փոխանմի. զի զգայ տուեալ զաձուինն պտղոյ խաչոյ 'ի համբերելմանէ խաչին իւրոյ: Քանզի՝ մինչ կամաւ զինքն նմին ստորադրէ, ըզբնաւ բեռն վշտակնութեան իւրոյ փոխարկէ 'ի յոյս Աստուծոյ մխիթարութեան: Եւ որքան տառապել մարմինն վշտակրութե՛ք մաշի, այնքան հոգին տուեալ ներքնոյ նով շնորհիւ կազդուրանայ: Եւ երբեմն այնքան համազօրանայ կրկնատանջութեանց՝ եւ ընդդիմագրութեանց, մինչ սիրոյ համակերպութեան խաչին Քի, զի ոչ կամի գոլ թարց ցաւոյ՝ եւ վշտակրութեան. մինչ զի՝ այնքան ընդունելի գոլ հաստատ զինքն ոչ, որքան զբաղումս, եւ զծանունս վասն նո կրել կարէ: Այս ոչ է մարդկային կարողութիւն, այլ շնորհն Քի, որ այնքան կարէ՝ եւ ներգործէ ըն մարմնով բեկանելուած. մինչ զի՝

եւը

ջերմեռանդութիւն հոգւոյն փայլի և սիրէ զայն, յորմէ ընտանականաբար զարշէր, և փախչի:

9. Ոչ է մարդկային ինչ զխաչն բառնալ, զխաչն սիրել, զմարմինն ճնշել, և 'ի ծառայութիւն նկըածել. 'ի պատուոյ փախչել, զնախատինս յօժարութեամբ յանձնառունալ, զանձն խոնարհել, և ընդ այլ համարձիլ. զընդդիմամարտութիւնս ընդ տառապանաց կրել, և ազատութեան խնդրել 'ի կենցաղումս այս միք ոչ ցանկալ: Եթէ 'ի քեզ նայիս, ոչ ինչ յայսցանէ քեզ կարես: Բայց թէ յԱծ յուսաս, որ քեզ զօրութիւն յերկնից, և աշխարհն իշխանութեանն քում աշխարհ, և մարմին: Այլ և ոչ երկնչիցես 'ի թշնամւոյն աստանօրէ, եթէ զինս զինուորեսցես հաւատով, և խաչն Քրիստոսի կնքեսցես:

10. Դիր ուրեմն զքեզ՝ իբրև զբարի, և հաւատարիմ ծառայ Քրիստոսի, առ 'ի բառնալ արիաբար ըզխաչն Տեառն, սիրով խաչեցելոյն վասն քո: Պատրաստեա զքեզ առ 'ի կրել զբազում ընդդիմութիւնս, և զզանազան անյարմարութիւնս յայսմիկ թշուառական

նում

նում՝ կենցաղում. քանզի այսպէս ընդ քեզ լինելոց է, ուր և եղիցիս. և այսպէս իրաւի գտանիցես զնա, ուր և թագչիցիս: Պա՛րտ է այսպէս գոլ, և ո՛չ գոյ այլ իմն ճար զերծանելոյ 'ի նեղութենէ չարեաց՝ և ցաւոց, եթէ ո՛չ այն, զի համբերիցես: Զբաժակ Տ՛ն սիրով ըմպեա՛, եթէ կամիս գոլ բարեկամ, և մասնակից նմին: Զմխիթարութիւնս քոյս յա՛ծ յանձնեա՛, և նա հոգասցէ այնպէս, որպէս ինքեան հաճոյ թուեսցի: Իսկ դու դի՛ր զքեզ առ 'ի կրել զփորձութիւնս, և համարեաց զնո՛ մեծագոյնս մխիթարութիւնս.
Հռոմ. քանզի * Ո՛չ են համարժանիք չարչարանք այսօրիկ ժամանակի, առ
Ը. 18 'ի յարդիւնաւորումն հանդերձելոցն փառաց, թէև՝ կարէիր միայնակ կրել զամենայն բնաւս:

11. Յորժամ առ այն հասանիցես, զի նեղութիւնք քաղցունք քեզ թուիցին, և վարկիցին գոլ վասն Քնի, յայնժամ համարեա՛ գոլ զքեզ բարւոք ընդ քեզ, քան զի զարքայութիւնն 'ի յերկրի գըտեր: Եւ որքան համբերութիւն ծանր քեզ թուի, և զփախուստ

խընդ

խնդրես, այնքան վշտագնեալս․
և հեռանայցէ քեզ յամենայն ուրեք
փափկութիւն 'ի նեղութեանց ։

12․ Եթէ առ որ պարտիս,
պատրաստեսցես զքեզ, այսինքն 'ի
համբերութիւն և 'ի մահ, եղիցի
քեզ խաղաղ բարի, և գտցես զխա
ղաղութիւն ։ Թէ և յափշտակի
ցես ընդ Պօղոսի մինչև 'յերրորդ
երկինսն, ոչ եղիցիս ապահով 'ի
կրից տառապանաց ։ ( տես Յն )
Ես ցուցից նմա, թէ որչափ Գործ․
պարտ է նմա համբերել վն անու 9․ 06
ան իմոյ ։ Ուրեմն մնայ քեզ կրել զն
ղութիւնս, եթէ սիրել զՅս՛
և յար նմին ծառայել կամիս ։

13․ Երանի թէ էիր արժանի
կրել ինչ վն անուանն Քի․
զի մեծամեծ փառք քեզ պատրաս
տէին, վասն թէ որչափ խնդու
թիւն լինէր սրբոցն այց, և որչափ
օգուտ մերձաւորաց քոց ։ Եւ թէ
այժմ ամենեքեան պատուեն զհա
մբերութիւն, բայց սակաւք
են որք համբերեն ։ Իրաւի պարտ
է քեզ սակաւ ինչ անձել վն Քրիս
տոսի, որովհետև բազումք զծա
նունս կրեն վն աշխարհի ։

14․ Իմա զայս հաստատապէս․
գի

զի պարտ է քեզ կեալ՝ գոլով իբր զմեռեալ։ Եւ որպէս ոչ տանել մեռանի 'ի յմեղս, այնպէս տանել ախտանի կենդանանալ 'ի Ք(րիստո)ս։ Ո՛չ որ է ընդունակ գերի նոյնոս ընդունելոյ, եթէ ոչ զինքն ունիցի 'ի կերել զփորձութիւն ինչ վասն Քրիստոսի։ Ո՛չ ինչ ընդունելի էր, ոչ ինչ տանել օգտակեք նոյնպէս աշխարհի, եթէ ոչ յօժար համբերութիւն մի Քի։ Եթէ ընտրելի էր քեզ տանջակայն, պարտ էր քեզ մանաւանդ ընտրել զկիրս պատերազմաց մի Քի, քան զհրաման մխիթարութեանց. զի լինէիր ձի նմանագոյն, եւ ամենեցունց սրբոց տաեալ համակերպացեալ։ Քանզի մեր արդիւնք ոչ կայանան 'ի քաղցրութիւնս բազումս, եւ 'ի մխիթարութիւնս. այլ մանաւանդ 'ի ծանրութիւն մեծամեծս, եւ 'ի կրմունս փորձութեանց։

15. Եթէ էր այլ ինչ բարեգոյն, եւ օգտակարագոյն կեցութեան մարդկան, քան թէ չկրելն. արդարեւ բանիւ՝ համ օրինակաւ ցուցեալ էր մեզ Քս։ Քանզի՝ եւ զաշակերտս, որք հետեւէին նմա

եւ,

և զայնոսիկ՝ որք ցանկային հետև-
իլ նմին, յայտնապէս յորդորէ
բառնալ զխաչ իւր, և ասէ.
Եթէ ոք կամի գալ զկնի իմ, ու- Ղուկաս
րասցի զանձն իւր, և բարձցէ 9 . 23
զխաչ իւր, և եկեսցէ զկնի իմ:
Ուրեմն համբերութեամբ, և զբե-
նեալք զայս նամ, գիտեմք զայս
վախճանական արարքականութեամբ:
Քանզի բազմօք նեղութեամբ պարտ Գործք
է մեզ մտանել յարքայութիւնն 14 . 21
Աստուծոյ:

ՎԵՐՋ:

Բան սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն:

Գլուխ հա:

Ի քանզի երջանկիկքն, և փա-
ռաւորեալքն սրբոյն պարք.
յորոց անմահք գոյին իբր զթեփն.
և յանձնառողական հաստատեցան:
Փորձոս առատանեցան՝ և մեծա-
գոյն փառամամբ նշուլից Հոգւոյն
մարգարէութեան լուսաւորեցան: Յորոց
միմն զգանգունածոյն յայտնէ՝ զնա
սուրբ պատմական զծն տկարութի. իսկ
միւսն զգերազանցն՝ քան զընթա-
թեանն օրէնս՝ վարս, և առաքի-
նու-

նութիւն հրեշտակական։ Եւ որք՝
նորա՝ որչնեալքն են յաւէտ իշխան
երկնից Հօրն Քրի. բնութեալքն.
ամենեալքն. խնկեալքն. և բարե-
բանեալքն. երբեմն զանգաղ Քրի
պաշտեցեալք, և երբեմն զօթեւանս
Հոգւոյն սրբոյ յարդարեալք։
Յորս չիք ինչ նմանութիւն՝ և կամ
գիւտք խաւարի. այլ ամենայն ան-
կեղծութիւն, և լուսաւոր արդա-
րութիւն. և որպէս մայրն է զմարդն
ոչ՝ ոչ նմանեցուցանել։ Երկնից
պարզք, և անապականելիք։ Կրօնք
քաղցունք՝ և անխափանելիք։
Կեանք զուարճ՝ և անբաւականե-
լիք։ Պաշտօն առ նմ՝ կարճ, և
անփոփոխելի։ Ընթացք արխա-
կունք՝ և անկասելիք։ Ճշմարտու-
թիւն մտաւորք՝ և անցնելի։
Գիտութիւն զօրեղ՝ և անհեր-
քելի։ Տեսութիւն պայծառ՝
և անպակասելի։ Խաղաղութիւն
վերնական՝ և անկոխելի։ Պատկեր
մաքուր՝ և անաղարտելի։ Զորոց
կերպարանս, և զվայելչական անա-
մէն տպաւորել՝ ոչ իսկ վարդապե-
տեաց։ Եւ նորա հանճարութիւն ՚ի
մէջ խառնութեան Արարչա-
կան լուսաւորեաց։

Թ. Օ

# ԹՕՄԱՅԻ ԿԵՄՓԱՑԻՈՅ

Յաղագս

# ՀԱՄԱՀԵՏԵՒՄԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ։

## ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ։

Յաղագս ներքնային մխիթարութեան։

### Գլուխ Ա։

Յաղագս ներքնային խօսակցութեանն Քի, ընդ հոգւոյ հաւատարիմ։

Լ* ՈՒԱՅՑ, Սաղմ. 84. 9
ԶԻՆՉ ԽՕՍԻ
յիս ՏՐ Աստուած։

Երանի անձին որ ունկնդիր լինի Տեառն 'ի յինքեան խօսողի, և 'ի բերանոյ նր, ընդունի զբան մխիթարութեան։ Երանի լսելեաց, որք զերակայսն ածայնոց շշնջմանց

ներ

ներքնագոյնն, և զաշխարհայնոց
զփոյթ ոչ առնեն: Արդարև է
բանի աղանդոց, որք ոչ ձայնի օր
տարբերոտ հեշտի, այլ ՚ի ներքուստ
դժնդակութիւնն ուսուցանողի
հալածանքին: Երանի այնոց, որք
առ արտաքինս են խռովեալք,
բայց առ ներքինս զգաստացեալք:
Երանի այնոցիկ՝ որք թափանցեն
՚ի ներքնագոյնս, և ՚ի յմիմեանց զխոր
հուրդս երկնայինս առնուլ՝ և ա
ռնուլ հանապազորդ ամենայն ներ
կրթութեան զմիտս ջանան պատ
րաստել: Երանի այնոցիկ՝ որք պա
րապին ՚ի պաշտօն Տեառն, և ՚ի
բառնալից արգելմանց կենցաղոյս ազ
ատին զմիտս ՚ի բաց քարշեն:
Մտադիր լեր առ այս ով անձն իմ,
և փակեա զդրունս քո ըզ
մտաց, զի կարիցես լսել, զինչ
խօսի ՚ի քեզ Տր ԱԾ քո:

2. Զայս ասէ ցանկալին քո.
Սաղմ. * փրկութիւն քո ես եմ, խաղա
34. 3 ղութիւն քո՝ և կեանք քո: Պահեա
զքեզ առ իս՝ և գտցես զհանգստ-
թող զբնաւս անցաւորս, խնդ
րեա զմշտնջենաւորս: Զինչ են
համայնք այսորիկ ժամանակաւ
որք, ոչ ապականն խաբէութիւնք:
և

Իւ զի՞նչ օգուտք են քեզ համայնք
սաղմոսականք, եթէ 'ի սաղմո
զին քումմէ զրկիցիս: Հրամա
յեալ ուրեմն 'ի բնութենէ, սաղմո
զին քումմ լեր հանձոյ՝ և հաստատ
լեր, զի կարիցես վայելել զմշտնջենա
ւորն երջանկութիւն:

## Գլուխ Բ:

### Թէ ճշմարտութիւնն խօսի 'ի ներքս առանց շչման բառից:

1. *Խօսեաց՝ Տէր, զի լուի 1. Թագ.
ցէ ծառայ քո: 3. 1
*Ծառայ քո եմ, իմաստուն արա Սաղմ.
զիս, և ծանիցայց զվկայութիւնս 118.
քո: Խոնարհեցո զսիրտ իմ 'ի 125:
բանս բերանոյ. իջցէ իբրև զցօղ 118.36
պատգամք քո: Ասէին երբեմն որ
դիքն Իսրայելի ցՄովսէս. *Խօ Ելից
սեաց դու ը̄ մեզ, և լուիցուք. և 20.19
մի խօսեսցի ընդ մեզ Տէր, մի գուցէ
մեռանիցիմք: Ոչ՝ այսպէս Տէր,
ոչ՝ այսպէս աղօթեմ ես. այլ մա
նաւանդ ընդ Սամուելի մարգարէ
ին խոնարհաբար, և բաղձանօք
ասեմ՝ աղերսանօք. *Խօսեաց Տէր, 1. Թագ.
զի լուիցէ ծառայ քո: Մի խօսեսցի 3. 10
ընդ

ընդ խամխլեա, կամ այլոք 'ի մեր դարեկից. այլ դու միայն խօսեաց Տէր իմ, և Աստուած իմ. որ ես ներկրթիչ և լուսաւորիչ ամենեցուն մարգարէից: Քանզի դու միայն թարց նոցին կարող ես զիս իմաստնացուցանել. իսկ նոքա թարց քեզ զոչինչ օգուտ առնել կարեն:

Բ. Զբանս թերևս հնչել կարեն, բայց զհոգին ոչ համարձակերեն: Գեղեցկապէս ասեն. բայց թէ դու լռիցես, զսիրտ ոչ ջերմացուցանեն: Զգիրս մեզ աւանդեն, բայց դու զգիտաւորութիւն բացայայտես: Զխորհուրդս առաջարկեն, բայց դու բանաս զիմացուածս կնքելոց: Զպատուիրանս մեզ հրամայեն, բայց դու զինքն նպաստ տաս 'ի կատարել: Զճանապարհս ցուցանեն, բայց դու կազդուրես զգնացս: Նոքա արտաքուստ միայն գործեն, իսկ դու զսիրտս ներկրթես և լուսաւորես: Նոքա արտաքուստ առոգեն, իսկ դու զպարարտութիւն շնորհես: Նոքա հնչեն բանիւք, բայց դու լսելեաց զիմացուածս շնորհես:

3. Ապա ուրեմն մի խաբեսցի ընդ-
ունայն միտս, բայց դու՝ Տր իմ, և
ԱԾ իմ, որ ես Ճշմարտութիւն յաւի-
տենական, մի դուցէ մեռանիցիմ,
և անպտուղ լինիցիմ, եթէ եղէց
միայն արտաքուստ զգաստացեալ,
և ոչ 'ի ներքուստ բորբոքեցեալ.
մի լիցի ինձ 'ի դատապարտութի,
բանն լսեալ և ոչ արարեալ. Ճա-
նաչեցեալ և ոչ սիրեցեալ. հաւա-
տացեալ և ոչ պահեցեալ: Խօ-
սեաց ուրեմն տր, զի լսիցէ ծա-
ռայ քո. *Զի զբանս կենաց յա- Յովհ 6. 69
ւիտենականաց ունիս: Խօսեաց ը
իս 'ի յիսուսակերպ մխիթարու-
թի անձին իմոյ, և առ 'ի զղջումն
բոլորից կենաց իմոց. եւս և 'ի գո-
վութիւն՝ և 'ի փառս քոյ, և 'ի
յաւիտեան մշտնջենաւորս:

---

Գլուխ Է:

ԹԷ ՔԱՆԻ ՀԱՃՈՅԻՆԻ ԽՕՍԱՐԿՈՒԹԻ
ԸՆԴ ՃՇՄԱՐՏԻՆ. ԵՒ ԹԷ ՔԱՂՑՐ ԼԻՆԻ
ՆՈՐԱ ԽՕՍԵԼՆ:

1. Ուր որդեակ բանից ի-
մոց, բանից քաղցրագոյ-
նեղեց, որք զամ գիտութիւն փիլի-
սոփայից և իմաստնոց աշխարհի

Յովհ. աշխարհի գերազանցեն։ Իմ՛ բանք
6. 64 հոգի, և կեանք են, և ոչ մարդ-
կային զգայութեամբ կշռելիք։
Ո՛չ են 'ի յունայն ինչ հաճութի
առաջարկելիք, այլ՝ ներքնութեամբ
լսելիք, և ամենայնիւ խոնարհու-
թեամբ, խակ՝ և մեծաւ ըղձիւ վերըն-
դունելիք։

Սաղմ. 2. Եւ ասացի. Երանի մար-
93. 12 դոյ, զոր խրատես դու՛ Տէր, և յօ-
րինաց քոց ուսուցանես նմա. զի
ցածուցանիցես նմա յաւուրց չա-
րաց, և մի տապականիցի 'ի յերկրի։

3. Ես՛ ասէ որ, ուսուցի զմար-
գարէս յսկզբանէ, և մինչև ցը՝
այժմ ոչ լռեմ 'ի խօսելոյ ընդ ամե-
նեսեան. բայց՝ բազումք խլանան՝
և խստանան առ 'ի յոչ լսել ձայնի
իմ։ Բազումք յօժարագոյնս
լսեն աշխարհի, քան թէ՛ ինձ. զի-
բազմագոյնս հեշտին մարմնոյ
ցանկութեանն, քան թէ՛ բարեհա-
ճութեանն իմ։ Խոստանայ աշ-
խարհ զժամանակաւորս՝ և զա-
կաւս, և ըղձիւ մեծաւ ծառայի
նմա. խոստանամ ես զվեհագոյնս,
և զմշտընջենաւորս, և թըմբրին
սիրտք մահկանացուաց։ Ո՛վ այն-
քանիւ հաղաքարձութե՜ յամեա՛

ծա

ծառայէ ինձ՝ և հնազանդի, որքան նմա՝ ծառայէ աշխարհի, և անբանից նորին: Ամաչեա՛ ասէ՝ Սիդոն, անձնելոց: Եւ թէ զպատճառն խնդրեսցես, լուր թէ զի է: Յաղագս նուիրի դանկոյ՝ երկար ճանապարհ ընթանան. իսկ յաղագս յաւիտենական կենաց՝ հազիւ 'ի բազմաց յերկրէ քայլ ոտից բառնի: Գոյն ինչ գին պահանջին. վա՛սն միոյ նոմիսի երբեմն մախիզանեն զի ճի. և սակս ունայնին իրի, և փոքեր խոստմանն, զօրին՝ և զգիշեր աշ 'ի ջանալ անխղճեալ գնին:

4. Բայց՝ ո՜հ ամօթոյ. յաւիտենից 'ի սակաւուց աշխատանաց՝ որք են 'ի չնորհս բարւոյն անփոփոխելւոյ, և 'ի չնորհս վարձուն անվախճանելւոյ, 'ի չնորհս ծայրագունի պատուոյն, և 'ի չնորհս փառաց անեզերելեաց: Յամօթ լեր ուրեմն, ծառայ ալղէլեդ, և վէհանակ, զի սորքա 'ի չարս, պատրաստ տապուանելքք են 'ի կորուստ, քան թէ դու 'ի կենաց: Սորա ասաել խնդան 'ի յունայնութեն, քան թէ դու 'ի ճշմարտութեն: Եւ թէ ըևս 'ի յուսոյն խաբեալն երբեմն զատարկանան, բայց խոստումն

իմ

իմ զիջոյ պատրէ, և ոչ զայրացու
նեցեալս ՚ի յիս արձակէ ունայնս:
Ընտրեցէք, զոր խոստացայ. լուամ,
Յովհ. զոր առայի. բայց ամենայն ՚ եթէ
15. 10 ոք յարամնայցէ ՚ի սէրն իմ հաստա
տարիմ մինչև ՚ի վախճան: Նաև
վարձատրիչ ամենից բարեաց, և
հզօր հանձեցող ամենից առաքինեաց:
5. Գրեա զիմ ՚ բանս ՚ի սրտի
2. Կոր. քում, և առձեռնեա զննեա ուշի
3. 3 մարբար. զի ՚ի ժամանակի փորձու
թեան լիցին յոյժ օգտակարք:
Զոր ոչ իմանաս այժմ մինչ ըն
թեռնուս, իմասցես յաւուր այցե
լութեան: Երկպատկաբար՝ սո
վոր եմ յայցելանել խնդ ընտրեալ
լոց, այսինքն՝ փորձութեամբ, և մխի
թարութեամբ: Եւ զերկուս ընթերցու
ածս յանդիման առաջի ընթեռնում
նոցին. մինչ՝ յանդիմանելով ըզ
վատթարութիւն նոցին. և մխի
թարել յորդորելով զնոսա յառաջի
Յովհ. նութեան յառաջեմ: ՚ Որ ունի
12. 48 զիմ բանս՝ և խոտէ զնոսա, արդէն
ունի դատաւոր, որ դատիցէ
զնա յաւուրն վերջին:

Աղօթք՝ վասն հայցելոյ ՚ի Տեառնէ
շնորհս աստուածպաշտութեան:

6. Տէր իմ, և Այ իմ, դու ես
ամէ

ամենայն բարի իմ: Եւ ով եմ ես՝
զի կարիցեմ խօսիլ ընդ քեզ:
Ես եմ ծառայ քո նուաստագու-
նեղ՝ և որդնուկ իմն 'ի բաց ընկե-
ցեալ. առաւել աղքատագու-
նեղ, քանզի ծանուցեալ եմ, և
խոխոցեալ առել: Բայց յիշեա՛ տէր
իմ, զի ոչինչ եմ ես, ոչինչ ունիմ,
և ոչինչ արժեմ: Դու միայն բա-
րի, միայն արդար, և միայն սուրբ.
դու միայն ամենակարող, ամենա-
տիր, և ամենալիր. թողես միայն
մեղաւոր ունայն թողեցեալ: Յի-
շեա՛ զողորմութիւնս քո, և լից
զսիրտ իմ քով շնորհիւ, որ ոչ
կամիս՝ թէ քոյք անգործանածք
լինին թափուրք:

7. Զի արդ կարեմ ես տանել
զանձինս թշուառականի կենցա-
ղումս, եթէ ոչ՝ քոյդ ողորմութի
և շնորհք կարողացուցանիցէ զիս:
՚Մի դարձուցաներ զերեսս քո յի- Սաղ.
նէն. մի զայցելութիւն քո 'ի բաց 101. 1
առներ. և մի զմխիթարութիւն քո
'ի բացբարձեր յինէն, զի մի լիցի
անձն իմ, իբրև զերկիր ծարաւա-
ւոտ: ՚Ուսո՛ տէր ինձ առնել Սաղ.
զկամս քո. ուսո ինձ, վարիլ առ 142. 10
ժամանակս՝ և խոնարհութեամբ առա

քի աղաչեմ քոյ. զի՛ դու ես խնամածու
թիւն իմ, որ խոկումն Հանդերձեա
լիս, և ծանեար յառաջ՝ քան զի
նիցէ աշխարհի, և յառաջ՝ քանթէ
ծնիցեալ էի յաշխարհի:

---

Գլուխ Դ.

Թէ պարտ է ճշմարտութեամբ, և խոնարհու-
թեամբ առաջի Այ կենցաղավարիլ:

1. Որդեակ՝ շրջեաց առաջի
իմ ճշմարտութեամբ, և
պարզութեամբ սրտի քոյ միշտ խնդ-
րեա զիս: Որ շրջի առաջի իմ
ճշմարտութեամբ, պահպանի 'ի դի
պուածոց չարաց, և ազատէ զնա
ճշմարտութիւնն 'ի պատրողաց,
և 'ի բամբասողաց անիրաւաց:
Յոհան. ը. 36 Եթէ ճշմարտութիւնն ազատես-
ցէ զքեզ, եղիցիս արդարև՝ ազատ,
և ոչ ունիցիս զփոյթ զբանից ու-
րանց մարդկաց:

2. Տէ՛ր իմ, ճշմարիտ է: Որ
հրամայես, այդպէս՝ խնդրեմ, զի
ճշմարտութիւն քո եղիցի ընդ իս,
և ուսուսցէ զիս. նոյն զիս պահպա-
նեսցէ, և մինչև 'ի փրկականն վախ-
ճան պահեսցէ: Նոյն զիս ազատես-
ցէ 'ի բնաւից նեղութեանց չա-
րաց

բայց, և յանհաւատարդեաց յանհաւատութենէ նոցա. և շրջեցին զի զերդ մեծաւ ազատութեամբ սրտի:

3. Եւ ուսուցից զքեզ (ասէ ճշմարտութիւնն) զուարթս, և զնա ձեռին ատամին իմ: Խորհեսցուք զուզմեզ բայց մեծաւ աղաչաւանօք, և ախտութեան. և մի երբեք վարկցես զքեզ զերդ զող ինչ՝ սակս բարեաց բարեգործութեանց: Առաջապէս զու մեղաւորս ես, և ախտասիրս բազում մեծ զգածեցելոց, և պարապասնդէ զենոյ: Ի՞նչ ունիս յերկին ի՛ յունայնութենէ. խակոյն տաժես, խակոյն շփոթիս, խակոյն լուծանիս: Ո՞չ ունիս թէ ինչ գիտես, որով կարիցես պարծել, բայց՝ ունիս զբազումս, որով պարտ է քեզ անարգել զքեզ. զի տկարագոյն ես քան զամենեսեան. ապա զոր համարիս զմեծութիւն:

4. Սակայն ոչ ինչ թուեսցի քեզ մեծ, ոչ յաւիտեան զոր գործես: Ոչ ինչ անհաշտ, ոչ ինչ ազնիւ, ոչ ինչ զարմանալի, ոչ ինչ արժանաւոր, ոչ ինչ վեհագոյն, ոչ ինչ խնդրելի գովելի, կամ զանի, եթէ ոչ այն՝ որ է յաւիտենական: Ի վեր քան զամ հաճոյ

տացի քեզ յաւիտենական շնոր-
հութիւնն, և անհամեմատելի քեզ
յոր քոյդ մեծագունեաց նախապա-
տիւն: Զի՞նչ են իր այնպիսի խոստ-
ցեա, և յոյժ խնկելի իրէ այնպիսի եր
կնչելիս, և փափաքելիս, որպէս 'ի
վաստակաւորութեան' և 'ի մեղաց քոց.
որք տուեալ արժանիք սպասին
թուին քեզ. քան զի բարւոքագոյն
տուժանս իցեն: Եւ ամենք, որք
ոչ շրջին սրբութեան ասացի իմ,
այլ հեռացաւորեն, և հնազանդ
թեանն ի իր առաջնորդելոյ,
զկարեւոր իմ զխնել կամին, և
զբարձրանալ ոչ խնդրեալ, իսկ ըս
փրկութեան խոհեմաց բանականա-
նեան. Աստուածոյ սախ հաւատու-
թե, և հեռացաւորէ խոհեմաց,
առնին բարելից 'ի մեծամեծ փառ
ձութիւնս, և 'ի մեղս, մինչ ընդ-
նոսին ընդդիմանալովն:

5. Եւ մեք 'ի զատուածեան ոչ,
անհամեմատ 'ի բարեկաւթեան ամե
նակարողին: Եւ միշտ ընդ զգրծս
բարձրագունից, այլ որոնեմ
զբոյս անցեալութեան, և տեր,
թէ՛ որքան մեզար, և զորքանսիք
բարեաց բանականեցեր: Ո՛վ գի
զկծս խոհեմաց միայն եղելեն 'ի
գիրս

գիրս, ոմանց 'ի պատկերս, և ոմանց
'ի նշանս, և 'ի ձևս տրամադիրս:
Ոմանց ոչ ինչ * զիս 'ի շրթունս Եսայ.
այլ՝ սակաւ ինչ սրտիւ: Ոմանց 29 · 13
լուսաւորեցելով միտք, և մաքրե- Մատթ.
ցեալ ըղձիւ 'ի մշտնջենաւորս յար 7 · 6
ձայնին, զերկրայնոց ծանրանալս
լսեն, և կարեւոց բնութեան վշտաց
գնաբար ծառայեն. և այսոքիկ
են, որք զգան, թէ՝ զինչ * Հո Տիտ.
գին Ճշմարտութեան խօսի 'ի նո 2 · 17
սա: Զի ուսուցանէ նոցա՝ խո
տել զերկրայինս, և սիրել զերկ
նայինս. մոռանալ զաշխարհ, և
ցանկալ երկնից զօրն՝ և զգիշեր:

---

## Գլուխ Ե:

### Յաղագս սքանչելի ներգործութեան սիրոյն Աստուածայնոյ:

1 · Օրհնեմ զքեզ՝ Հայր
երկնաւոր, Հայր Տեառն
իմոյ Յիսուսի Քրիստոսի, որ արժանի արա
րեր յիշել զնուաստացեալս: Ով
Հայր ողորմութեանց, և Աստուած
ամենայն մխիթարութեան, գոհա
նամ զքեն, որ զանարժանս համայ
նի մխիթարութեան, երբեմն սփո
փես քոյով մխիթարութեամբ: Բարե

բանեամ զքեզ միշտ, և փառաւո
րեամ ընդ Սրբոց քոց միանգամ, և
ընդ սրբոց Հրեշտակաց միաբանեալ,
'ի յաւիտեանս յաւիտենից։ Աղա
ւաղ Տէր իմ, և Աստուած իմ սիրող իմ
սրբազան, յորժամ դու գայցես 'ի սիրտ
իմ, ցնծասցեն բնաւ ներքնագոյնք
իմք։ Դու ես փառք իմ, և ցն
ծութիւն սրտի իմոյ։ Դու ես
Սաղմ. յոյս իմ՝ և * ապաւէն իմ, յա
58. 17 ւուր նեղութեան իմոյ։
2. Բայց՝ քանզի դեռևս թոյլ
եմ 'ի սէր քո, և անկատար յառա
քինութեան. վասն այսորիկ՝ հար
կաւոր է ինձ, զի քև հաստատորա
նայցեմ, և մխիթարեցայց։ Արդ՝
այցելեա ինձ յաճախ, և ներհմտացո
զիս սրբազանիւք կրթութեամբք։
Ազատեա զիս 'ի յախտից չարաց,
և առողջացո զսիրտ իմ յամենից ա
պականութեանց զգածմանց, զի ներքս
առողջացեալ, և բարե
ւքն մաքրեցեալ, լինիցիմ յարմար
առ 'ի սիրել զքեզ, կարող առ 'ի
համբերել, և հաստատուն առ 'ի
տևել։
3. Մեծ իմն է սէրն, և բարի է
յոյժ, որ միայն թեթևացուցանէ
զամ ծանրութիւն, և կրէ հաւասա

րա

բառնայ զամ անհաւասար: Քանզի
տանի զբեռն թարց բեռան, և
զամ դառնութիւն քաղցր՝ և ա-
նոյշ առնէ: Ազնիւ է սէրն Յի-
սուսի, յորդորէ առ 'ի գործել զմե-
ծամեծս, և զարթուցանէ միշտ 'ի
ցանկութիւն խոյս կատարելագու-
նից: Սէրն միշտ կամի 'ի վեր ձգե-
ալ, և խոյս ստորնայնոց ոչ արգե-
լանել: Սէրն կամի գալ միշտ
ազատ, և օտար յամէնից ըղձից
աշխարհականաց, զի մի գուցէ ար-
գելանիցի ներքնայնոյն նորին հայ-
եցուած. մի հեշտութիւն ինչ ժա-
մանակականաւ կրիցէ զգծուա-
թութիւն՝ կամ, անհաճոյութեամբ
ստորանկանիցի: Ոչ ինչ է քաղց Երգ
րագոյն քան զսէրն, ոչ ինչ հզօրա- 7·6
գոյն, ոչ ինչ բարձրագոյն, ոչ ինչ
լայնագոյն, ոչ ինչ գեղեցկագոյն,
ոչ ինչ լիագոյն, և ոչ բարեգոյն
ինչ 'ի յերկինս, և 'ի յերկրի. զի 1·Յով
սէրն յԱյ է ծնեալ, և ոչ կարէ 4·7
հանգչել, եթէ ոչ յԱստուած,
վեր քան 'ի բնաւ արարածսն:
4· Որ սիրէ՝ սլանայ, ընթանայ,
և խնդայ. ազատ գոյ, և ոչ ըմբռ-
նի: Տայ զամ վն ամենեցուն, և
ունի զամ յամենայնում. քանզի 'ի
մի

մխում ծայրագունում, գեր քան 'ի բնաւս՝ հանգչի, յորմէ ա̃մ բարի զեղանի, և յռ̃ջածի: Ո՛չ հայի 'ի ձիրսն, այլ՝ 'ի ձրօղն գեր քան 'ի բնաւս բարիս: Սէրն ոչ գիտէ բազմիցս զեղանակ, այլ՝ 'ի վեր քան զա̃մ եղանակ բորբոքի: Սէրն ոչ զգայ զբեռն, ոչ թուէ զաշխատանս. ջանայ առաւել՝ քան զկարն. զփոյթ ոչ առնէ զանկարելեաց, զի զա̃մ ինչ կարելի՝ և պատշաճ ինքեան վարկանի: Կարօղ է ուրեմն առ ա̃մ, և զբազում ինչ լնու, և ներգործութե հպատակ առնէ անդ, ուր պակասն 'ի սիրոյ նուաղի, և անկանի:

5. Սէրն զուարթուն կայ, և 'ի ննջելն ոչ ննջէ: Յաշխատելն ոչ վաստակի, նեղացուցեալ ոչ տագնապի, զարհուրեցուցեալ ոչ ահաբեկի, այլ՝ ոպ̃ հուր կենդանի, և ջահ վառեցեալ 'ի վեր ցոլանայ, և աներկեւան օրէն անդր անցանէ: Եթէ ոք սիրէ, գիտէ, թէ՝ զի՞նչ ձայնս այս հնչէ: Հնչումն մեծ է 'յականջս այ̃՝ խղճ անձին ջերմեռանդ, որ ասէ. Ա̃ծ իմ, սէր իմ. դու իմ ես բոլորովիմբ, և ես քո եմ ամենեւիմբ:

6 Ճոխացո՛ զիս սիրով, զի կարիցեմ սրտի ներքնագունով շրթամբք ճաշակել, և խմանալ, թէ՝ որպէս քաղցր իցէ սիրել, և ՚ի նմին մեղմել, և յարատևել: Ըմբռնեցայց ՚ի նմանէ, առելով կարևոյ ջերմեռանդութեան, և զմայլման: Երգեցից զերգս սիրոյ, հետևեցայց քեզ ձաշելւոյդ իմում ՚ի բարձունս, նուաղեսցի անձն իմ ՚ի գովութեան քում, հրճուելով ՚ի սիրոյ: Սիրեցից զքեզ առաւել քան զիս, և զիս ոչ երբեք, եթէ ոչ վա՛ քո. և զամենեսեան ՚ի քեզ, որք ճշմարտապէս սիրեն զքեզ, որպէս հրամայեն օրէնք սիրոյ, որք ՚ի քէն ճառագայթեն:

7 Սէր է արագ, զուտ, հաճոյ՝ վայելուչ՝ հանդարտ՝ համբերող՝ հաւատարիմ, հանճարեղ՝ երկայնամիտ՝ արի, և ոչ երբեք զանձնէ խնդրող. զի ուր զանձնէ խնդրէ, ՚ի սիրոյ անկանի: Սէրն է շրջահայեաց, խոնարհ՝ և ուղիղ. ոչ թոյլ՝ ոչ թեթև՝ ոչ ընդվայրաբար նկրտող ՚ի յիրս. զգաստ՝ ողջախոհ՝ հաստատ՝ խաղաղ և ընտրելք զգաստութեամբ պահպանեցեալ: Է՛ սէրն հլու՝ և հնազանդ-

եալ

առաջնորդայ, խրատել, և սրբ-
սատել յինքեանս. առաքինի՝ և հա-
ճոյ ոյ, աստուածող՝ և յուսացող
միշտ 'ի նա, եւ մինչ ահաձայն թուի
նա նմա. զի՝ թարց ցաւոյ ոչ կարէ
կալ ոք ընդ սիրելութեան:

8. Որ ոչ է պատրաստ կրել զա-
մենայն ինչ՝ և ոչ կայ ընդ հաճելու-
թեան խորոյ սիրեցելոյն, նա ոչ է
արժանի սիրոյ անուանիլ: Պարտ
է սիրողին՝ զամ խստութիւն, և
դառնութիւն՝ վն ըղձալւոյն խ-
րոյ՝ յօժարութեամբ յանձնառնուլ. և
ոչ՝ սակս ընդդիմակացից պատառ-
մանց, դառնալ 'ի նմանէ:

---

## Գլուխ Զ:

### ՅԱՂԱԳՍ ՓՈՐՁԱՌՈՒԹԵԱՆ ՃՇՄԱՐՏԻ ՍԻՐՈՂԻ:

1. Որդեակ՝ դեռևս ոչ ես կարող, և ոչ հանձնարու-նակ սիրող:

2. Զի արդ՝ Տէր իմ:

3. Զի՝ վն սակաւայ ընդդիմու-թեան 'ի սկսեցելոցդ նուաղես, և յոյժ անյագաբար՝ զմխիթարութիւն խնդրես: Քաջ սիրողն կայ 'ի

՚ի փորձութեան, և ոչ հաւանել խո րամանկաց համբերութեանց թշնամւոյն։ Որպէս մաքրութիւնս մեր համբերանաւ, այսպէս՝ և ոչ ընդմանդութիւնս անհամաձայն թուխմ՝ Նմա։

Դ. Սիրոյն հանճարութեանն, ոչ այնքան զպարգևս սիրեցելոյն, որքան զսէրս առաւելին նկատէ։ ՚ի յիշեն մտնաւանդ, քանզի՝ ՚ի նուէրն զխտէ. և ՚ի վայր սիրեցելոյն, զրնան խիչ շնորհելեցայն զնէ։ Սիրոյն աղնուական ոչ ՚ի նուէրն այլ ՚ի յիս, ՚ի վեր քան զամ՝ խոչ՝ հանդչի։ Ո՛չ է ուրեմն բոլորն ՚ի կորուստ, թէ երբեմն ոչ այնքան բարեպէս՝ որքան հաճիս. զնեմն, և կամ զորոց խոնդ՝ զգայցես։ Իղձն այն քաղցր, և անոյշ՝ զոր մերթ զգաս, է ներգործութիւն ներկայականի շնորհի, և գեռևս առհաւատչեայ գաւառին երկնային. որ վերայ ոչ այնքան յենուլ պարտիս, զի գայ, և գնայ։ Վեհագունի առաքինութեան, և մեծի արդիւնաւորութէ է՝ ընդդիմամարտելն ընդդէմ շարժմանց չարաց անձին, և խոտելն զշողոքորթութեանս սատանայի։

5. Մի

5. Մի՛ ուրեմն վրդովեցուցանիցեն զքեզ այլայլինք երեւակայութեանց, յաղագս որոյ ուրուք և իցեն նիւթոյ ներգործեցեալք։ Հաստատապէս պահեա՛ զառաջադրութիւնդ, և զդիտաւորութիւնդ ուղիղ առ Ած։ Ո՛չ երեւոյթ ինչ՝ որ երբեմն յանկարծակի արտաքս դնեալ յափշտակիս, և իսկոյն 'ի սովորութիւն անհամեստ քոյոյ սրտի անդրէն փոխիս։ Զի առաւել ակամայ կրես զայնպիսիս, քան թէ առնես․ և որքան անհաճոյք ելով զքեզ տագնապեն, այնքան զարդիւն ունիս, և ո՛չ զկորուստ։

6. Գիտեա՛ և՝ զի հնացեալ թշնամին ջանայ ամենեւիմբ արգելուլ զփղձ քո 'ի բարին, և 'ի բնաւից կրթութեց համեստից զքեզ ունայնել․ այսինքն՝ 'ի պաշտամանց սրբոց, 'ի յիշատակէ բարւոյ իմոց չարչարանաց 'ի յիշմանէ օգտակարէ անցելոց մեղաց, 'ի պահպանմանէ քոյոյ սրտի սեփականի՝ և յամուր յառաջադրութէ շահաւորելոյ առաքինութիւն։ Զխոկմունս չարս քեզ ներածողէ՝ զի ձանձրացուցանիցէ զքեզ՝ և ահաբեկիցէ․ յաղօթից՝ և յընթերցմանց սրբոց զքեզ

գրեաց զմեզ, և 'ի խաւարամածու-
թեանց խաւարչից, խակ և 'ի հա-
զորդութեանց (թէ գուցէ հնար)
դադարեցուցանիցէ: Մի հաւա-
տար նմա. և մի զփոյթ լինի ունի-
ցիս, թէ և՛ բազմիցս լարեալ իցէ
զենս զօրութեամբ խաւարութեան:
Քեզ ներհակաբար, մինչ զհամբա՛
և զաղաղութիւն ածել մտանել:
Ասա ցնա. երթ՛ ով այդ պիղծ.
պատկառեա՛ ով ամբարիշտ. սաս-
տիկ է զօրութիւն քո, որ զայս
պիտոյ 'ի լսելիս իմ ներբերես:
'Ի բացեայ լինէն՛ ով արդարատե-
շարագուանեց, ոչ ունիցիս մասն
ընդ իս. այլ՛ միայն Յիսուս իմ եղիցի
ընդ իս, որպէս հզօր պատերազմող,
և դու մնասցես ամօթոյ պարտիա-
ցեալ: Կամիմ մանաւանդ մեռա-
նել՛ և կրել զբնաւ պատիժս,
քան՛ համաձայնել քեզ: Լռեաց՛ և Մար 4. 39
պապանձեաց, ոչ ես եղէց քեզ
ունկնդիր՛ թէև զբազում հնա-
րիցես ինձ աստուածութեան. Տէր լոյս Սաղմ 26. 7
իմ, և կեցութիւն իմ՛ ես յումմէ եր-
կեայց: Թէ յարիցէ 'ի վերայ իմ
պատերազմ, ոչ երկիցէ սիրտ իմ:
Տէր է օգնական իմ, և փրկիչ իմ: Սաղմ 18. 15
7. Զինեամ իբրև զբարի զինու-
որ

որ, եթէ դուցէ երբեմն ասեն քոյ ոյ ըմբռնելութեան առհլցիս, կալ քեզ վերստին զօրութիւն հաստատութեան՝ քան զառաջինն՝ յուսալով յաստատութիւն շնորհա ին։ Եւ եւս զգուշ լեր ՚ի յանձնե անապարծութենէ, եւ ՚ի փրկութե նէ։ Բազումք են այսպիսիք ամէն ՚ի մեղսութեան, եւ անկանէին բազմիցս ՚ի կուրութիւն անդրժ շնե լեա։ Եղիցի քեզ ՚ի պատրաստու թիւն, եւ ՚ի խոնարհութիւն մշտնջե նաւոր՝ զանձնահեշտութիւն այն ամէնայ տուանեց, յիմարացեալ զանձն պարծողացն.

---

## Գլուխ։ Է

### Յաղագս ծածկելոյ շնորհացն ՚ի ներ քոյ պահպանութեամբ խոնարհութեան։

1. Որդեակ՝ օգտակարագոյն է քեզ, եւ ապահովագոյն, ծածկելն զշնորհն աստուածութէ, եւ ոչ վերամբառնալ այնու, եւ ոչ խօ սել զնմանէ բազմիցս զննանել, եւ ոչ մեծա մտել. այլ մանաւանդ՝ խոնարհել մեզ զանձինս քո՝ եւ երկրպագանել այնմիկ շնորհին. երկնչել։ Եւ մի յենուլ խորհրդեալ ՚ի զգածմանս

այս

ապաշխարել, որք գիտութ. կարեն մա
խարելի 'ի հակառակն։ Մինչ
կենաս 'ի շնորհս, խորհեսցիս թէ
ո՛րչափ տկարանաս, և աղքատ լինիս
թէ որոց շնորհաց։ Եւ ոչ է առաքին
հոգևորաց կենաց յառաջադիմու-
թիւն, մինչ ունիս զշնորհս մխիթա-
րութեան. այլ՝ մինչ խոնարհա-
բար, զանձնուրացութեամբ, և համբերու-
թեամբ տանիս զնոյն 'ի բաց բարձ-
մանցն. և այնպէս՝ մինչ զի յայն
ժամ, 'ի հոգւոյ աղօթից ոչ յուլա-
նայցես, և ոչ թողուցուս խնամա
րել զայլոց գործոց սովորականաց.
այլ՝ ըստ կարողն, և խնամով ա-
տարբար (որ 'ի քէզն է) առնիցես.
և ոչ յաղագս հոգատարութեան
և կամ տառապանաց մտաց զերծ
զ...ս զ...ն ամենևին անփոյթ
լինիցիս։

2. Քանզի բազումք են՝ որոց
մինչ ոչ բարեպէս անցանի, խակոյն
անհամբերութեամբ վհատին։
* Զի ոչ 'ի ձեռին մարդոյ է ճանա Եսայ
պարհ իւր, այլ՝ նա է տալ՝ և միսի 10. 23
թարելն, մինչ կամի՝ որչափ կամի,
և որում կամի, ըստ որում հաճոյ
թուի իւրեան՝ և ոչ աւելի։
Անմտք անզգոյշք գտեալ՝ առեալ
շնոր

շնորհաց առաքինութեանն՝ աւե-
րեցին զինքեանս. զի կամեցան առ-
նել առաւել քան զկարս իւրեանց,
ոչ ճանաչելով զչափ տկարու-
թեանն իւրեանց, այլ հետեւելով
մտաւորութեան բաղձին սրտի, քան դա-
տողութեան բանին: Եւ քանզի
զմեծամեծաց իրաց զբռնադատիլն,
և ոչ զայնչափն՝ որք հաճելիքն
էին Այ, սակս որոյ՝ զշնորհսն իւ-
րեանց փութով կորուսին: Եղեն
չքաւորք՝ և թողեցեալք՝ իբր չըն-
չինք, որք վարկանէին՝ դնել զբնա-
կութիւն իւրեանց յերկինս. զի խո-
նարհեցեալք՝ և աղքատացեալք՝
ուսանիցին ոչ զթռչիլն թեւօք սե-
փականօք, այլ զընդ հովանեաւ-
թեւոց իմոց յուսալն: Որք դեռեւս
են նորադարձք՝ և անփորձք 'ի շաւ-
իղս Տն, եթէ ոչ խորհրդով կա-
տարեցելոց ուղղեսցեն զինքեանս,
դիւրաւ պատրեսցին՝ և անկցին:
3. Եւ այնոցիկ՝ որք հաճին մա-
նաւանդ հետեւիլ ըմբռնութեան
իւրեանց, քան ըմբռնութե կրթե-
ցելոց՝ եթէ ոչ 'ի բաց կացցեն 'ի
գխտմանէ իւրեանց յամառ, վախ-
ճանն է կասկածելի: Իսկ՝ որք
յոյժ իւրեանց ոչ երեւին գիտունք՝
յանձն

յանձնառունն խոնարհարար զուգ
դելն յայլոց։ Լաւագոյն է զատ
կաւ ընդ գխոնէլն խոնարհութբ, և
գուզնուէլս յմիցոզութբ, քան
զմեծամեծ զանձս զխառութեանց՝
մտանաւ հաճութբ։ Բարւոք է
զգոյն ինչ ունելն, քան զբազումս՝
յորոց ծնանիլ մարթի վիպագումն։
Ոչ այնքան ուշխմարար գործէ,
որ մայ բովորովնմի զնկըն խնդու
թեան, մռամնալով զչքաւորու
թիւնն առաջին և զող ծախոհ եր
կիւղ ան՝ որով զդուշանայր, զի
մի զչարհն առձրեցեալ կորուսա
նիցէ։ Իւ ոչ բաւականորէն՝ ա
ռաքինարար վարի, որ ըն ժամմ
նախումս փորձութեան, և իւրա
քանչիւրոյ ծանրութե, յայժ յա
ռաջաատալեա գործէ, և նուաղա
գունիւ յասով զնին՝ քանթէ այն
տոյէ, խորհի՝ և զգայ։

4. Որ 'ի ժամու խաղաղութե
ճգրաապունեց գոլ կամի, ցանկ
'ի ժամու պատերազմի վհատագու
նեց՝ և երկիւղալից գաանիցի։
Իւթէ զխոնէիր մեջա խոնարհ՝ և
փորրոգի 'ի քեզ մնալ, և զբայր
բարս զեղեցկապէս կարդաւորել
և կառավարել, ոչ անկանէիր այն

քան

յան փութանակի 'ի վաստակս՝ և 'ի յանցանս։ Արդ եղիցի քեզ այս բարւոք խորհուրդ, մինչ ընդունիս զհոգի ընկերասիրութեան, խորհեաց՝ թէ զինչ էր քեզ հանդերձելոց, մինչ վերասցի 'ի քէն շնորհն։ Մինչ այս պատահեցի, խորհեաց՝ թէ վերացին կարելի է դառնալ 'ի լոյս, զոր քեզ 'ի զգուշութիւն, և ինձ 'ի փառս պէտանանակ ինչ 'ի բարգաւաճի։

5. Օգտակարագոյն է քեզ բաց միայն այնպիսի փորձութիւն, քան զունելն մէջս զանձնութիւն բառ քոց կամաց։ Բանալին՝ արդիւնք ոչ անդուստ են մարմին լիք, եթէ որ զբարութեան սեռութիւնն կամ զմխիթարութիւն ունելոյ. կամ թէ՝ հնազանդիցէ գրոց որբոց, և կամ՝ զեռեւզիցի ընդ մեծարատուած սատի ձանի. այլ թէ իցէ խոնարհմունք հնձնեցեալ, և նոյնով սիրով լռացեալ. եթէ զխասա նոյ արդ զարշեա՝ և կատարելապէս մէջ խնդրիցէ. զինչ ոչ ինչ վարկանիցի, և ձեռնարկեսցես խոստիցէ, այլև՝ յայլոց մանաւանդ քանի հեղ և նուաճիլ, քան թէ պատուիլ կամիցի։

Գ. Լուխ

## Գլուխ Ը.

Յաղագս [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] Աստուծոյ։

1. Խօսեցայց ընդ Տեառն Ծն. ԺԸ
իմում, մինչ լինիմ հող 18 . 27
եւ մոխիր։ Եթէ առաւել կարծե-
ցեալ զիս, այլ դու ընդդիմանայր
ասես ընդ իս. եւ անօրէնութիւնք իմ
[illegible] վկայութիւն [illegible]
ինձ, որում ոչ կարեմ ընդդիմա-
նալ։ Արդ թէ՝ խոստովանիցեմ զիս,
եւ անարժանացուցանիցեմ, եւ առ ոչ
ինչ զիս վարկանիցեմ, եւ ընդ փո-
շոյ համարեսցուցանիցեմ, ապ
եւ եմ խակ, եղիցի ինձ այցելու-
թեան քոյդ ձեռն՝ եւ մերձակայ սրտի
խնամ ըստ քո, եւ [illegible] զինչ [illegible] վար
կումն՝ թէ եւ գործովք, ընթացս
ունայնութեան [illegible] [illegible]
եւ կարիցէ ՚ի յաւիտեան։ Արդ
ցուցցես ինձ զիս, թէ՝ զինչ լինիմ,
թէ՝ զինչ եղէ, եւ յորմէ եղէ. քան
զի՝ ոչ ինչ եմ, եւ ոչ գիտացի։
Եթէ թողուցես զիս ՚ի յիս՝ ահա
ոչ ինչ եմ, եւ ընտանին [illegible]-
խոկ՝ եթէ [illegible] [illegible]
[illegible], [illegible] [illegible], եւ [illegible]
[illegible] [illegible] [illegible]։

Եւ

Իւ. զի զօրաւորք են, թէ՛ ուր փու-
թանակի բարձրանալոցիմ, և ուր
անխռովակի 'ի քէն խրատեցիմ, որ
միշտ անփոփոխութեան խնամ ծանրու-
թեամբ առաջնորդեալ իմ:

2. Զայս առնել ընդ իս սէր քո,
ըմբռնելով ինձ ձեռն նորաստ, և օգ-
նելով ինձ 'ի կարիս բազումս, ապա
հեռացեալ ինձ զիս 'ի վտանգից բազ-
մաց. և ( զի զճշմարիտն ասացեալ )
'ի յանթիւ չարաց ազատելով զիս:
Զիս թերևս չարաչար սիրելով,
կորուսի զանձն իմ. և զքեզ միայն
խնդրելով, և սրտապէս սիրե-
լով, զիս՝ և զքեզ միահաղոյն գտի,
այլև՝ խորհրդութեան սիրով քո
զանձն իմ ունայնացուցի: Զի
դու ամ քաղցր՝ իմ, առնես ընդ
իս 'ի վեր՝ քան զիմ բնաւ ար-
ժանիս, և 'ի վեր՝ քան զայն, զոր
համարձակիմ յուսալ, կամ հայ-
ցել:

3. Ոգեա դու բարերարեցելում
Աստուած իմ. զի թէպէտ ես ըն-
ծայից բարեաց եմ անարժան, սա-
կայն քոյդ ազնուութիւն, և անհուն
բարութիւն, ոչ երբէք դադարէ
զբարիս առնել և ապերախտից,
և հեռացելոց 'ի քէն դարձելոց:

Դարձո՛ զմեզ առ քեզ, զի կարի-ցեմք լինել քեզ հաճոյք, խո-նարհք, և առաքինիք․ քանզի դու ես փրկութիւն մեր, զօրութիւն, և կարողութիւն մեր :

---

Գլուխ Թ :

ԹԷ ԶԱՄ ԻՆՉ ՎԵՐԱԲԵՐԵԼԻ Է ԱՌ ԱՅ, ՈՐՊԷՍ ԱՌ ՎԵՐՋԻՆ ՎԱԽՃԱՆՆ :

1 · Որդեակ՝ եթէ ճշմարտապէս բաղձաս լինել երանելի, պարտիմ ես լինել քոյ ծայրագոյն՝ և վերջին վախճան : Այսու դիտաւորութեամբ խիղճ քո սրբել մարթի, որ բազմիցս դարձեալ առ քեզ, և առ ստեղծուածս հակեցուցանէ : Քանզի՝ եթէ նորում ինչ խնդրիցես զքեզ, վաղվաղակի նուաղեսցիս 'ի քեզ, և ցամաքեսցիս : Արդ առ իս զամենայն նախադասաբար՝ վերաբերեսցես, զի ես եմ, որ ետու զամն : Այսպէս վարկեա՛ զիւր իւրաքանչիւրս, որպէս թէ՝ 'ի վեհագունէն բարւոյ յեղեալ յառաջանցեալք․ և վասն այսորիկ առ իս, որպէս առ ակն իւրեանց, բնաւքն են վերածելիք :

2 · Յինէն փոքունք, և մեծամեծք

 մեծք

մեծք, աղքատք՝ և փարթամք, որ
պէս յաղբերէ կենդանւոյ, յուզեն
Յովհ * զջուր կենդանի. և որք կամին՝
4. 10 և յօժարութեամբ ինձ ծառայեն, ըզ
Յովհ շնորհս * փոխանակ շնորհաց առ
1. 16 նուն: Իսկ որ՝ բաց յինէն, զայլ
ինչ փառս խնդրէ, և կամ նայլում
ինչք առանձնականում բարւում
կամի հրճուիլ, ոչ յաստատեսցէ նմա
կակամում խնդութեամբ, և ոչ զուա
նէ 'ի սրտի խորում զընդարձակու
թիւն, այլ՝ յաճախ արգելանի, և
նեղասցի: Մի՛ ուրեք զբարի
ինչ քեզ առագրեսցես, և մի՛ այլում
ումեք զառաքինութիւն առավար
կանիցես. այլ՝ տուր զբնաւն ինձ,
թարց որում ոչ ինչ է մարդոյ:
Ես եմ՝ որ զբոլորն ետու, և կա
միմ զքեզ բոլորովին ունել, և մե
ծաւ յարապնդմամբ՝ զշնորհակա
լութիւն 'ի քէն պահանջեմ:
Այս է ճշմարտութիւն, որով 'ի բաց
մերժի փառաց ունայնութիւն:
Եւ եթէ մտանիցէ 'ի ներքս մեր
շնորհն երկնային, և սէրն ճշմա
րիտ, ոչ եղիցի անդ զշարութիւն՝
և նախանձութիւն, և ոչ առանձ
նական զգածումն ինչ պաշարէ
զնա: Քանզի՝ յաղթէ զամ ինչ
սէրն

սէրն Աստուծոյն, և առատացուցա-
նէ զբնութ շնորհացն կարողութիւն։
Եթէ իցես ուղղապէս խնդրեմ, 'ի
յիս միայն խնդրեսցես, և 'ի յիս մի-
այն յուսասցես. քանզի՝ չիք ոք Մարկ. 10. 18
բարի, եթէ ոչ միայն Աստուած, որ է
'ի վեր քան զամենայն գովելի, և
յամենայնում բարեբանելի։

---

Գլուխ Ժ։

ԹԷ ՔԱՂՑՐԱԳՈՅՆ ԱՐՀԱՄԱՐՀԵԼՆ, ԾԱՌԱՅ
Է ԾԱՌԱՅԵԼՆ ԱՍՏՈՒԾՈՅ։

1. Արդ՝ միւսանգամ խօսեցայց
Տէր, և ոչ լռեցից. ասա-
ցից յականջս Աստուծոյ իմոյ, Տեառն
իմոյ, և Թագաւորին իմոյ, որ է
'ի բարձունս։ 'Ո՛ քանի՛ բազում մեծ Սաղմ.
է բազմութիւն քաղցրութեան քո՛ 30. 20
Տէր. զոր պահեցեր երկիւղածաց
քոց։ Որքան աւելի սիրողաց
քոց, և որքան բոլորիւ սրտիւ
զքեզ պաշտողաց։ Իրաւի անճառ
ելի է քաղցրութիւն յայտնատեսու-
թեան քո, զոր շնորհես սիրողաց
քոց։ Յայսմիկ մանաւանդ ցուցա-
ցուցեր ինձ զքաղցրութիւն սի-
րոյ, զի մինչ ոչն էի, արարեր զիս.
և մինչ մոլորեալ էի՝ 'ի բացեայ է-
րով

լով ՚ի քէն, վերածեր զնա, զի ծառայեսցեմ քեզ, և պատուիրեսցես, զի սիրեսցեմ զքեզ։

2. Ո՛վ աղբիւր սիրոյ մշտնջենաւորի, զի՞նչ տացից զքեզ։ Որպէս կարացից մատուցանել զքեզ, որ զիս յիշման արժանի արարեր, և մինչ թափառեալ էի, և կորեայ։ Առաքեր ինձ զողորմութիւն, ՚ի վեր քան զբնաւ յոյս իմ, և ՚ի վեր քան զամենայն խնդիր իմ, յաւելեր ինձ զշնորհս, և զերանութիւնս։ Զինչ տաց արժանաւոր քեզ յաղագս այսպիսի շնորհի։ Քանզի ոչ ամենեցուն տուեալ է այս, զի հրաժարեսցեն յամենից՝ ունայնութեանց աշխարհիս, և զկեանս մենակեցական ընտրեսցեն։ Ո՛չ արդեօք մեծ իմն է, զի ծառայեսցեմ քեզ, որում ամենայն արարածք բնաւ պարտին ծառայել։ Ո՛չ թէ ինձ մեծ ինչ այն, զի ծառայեմ քեզ. այլ մանաւանդ մեծ ինչ, և զարմանալի ինձ ստանալ այն, զի զիս՝ զաղքատ արարեալ, և զանարժան հաճեցար ընդունել ՚ի ծառայութիւն քո, և միաւորել ծառայից քոց առ մեծարել։

3. Ամենայն ինչ քոյք են բնաւ՝

զոր

զօրս ունիմ, և որովք քեզ ծա
ռայեմ: Բայց աւելայն՝ անդրա
դարձապէս, դու մանաւանդ ինձ
ծառայես, քան թէ՝ ես քեզ:
Ահա երկինք՝ և երկիր, զորս 'ի
ծառայութիւն մարդկան ստեղ
ծեր, պատրաստ են, և առնեն յա
մենայնում աւուր, զոր ինչ նոցին
պատուիրեցեր: Եւ այս թերևս
դոյն ինչ է. զի՝ և զհրեշտակս 'ի
պաշտօն մարդկան կարգադրեցեր:
Եւ որ գերազանցն է քան զամ,
դու ինքդ արժանի վարկեցեր՝ մարդ
կան ծառայել, * և տալ զքեզ Մարկ
ինքն նոցին խոստացար: 10. 45
4. Զի՞նչ տաց փոխատուր քեզ
յաղագս այսոցիկ բիւրուց բա
րեաց: Երանի թէ՝ կարէի քեզ
ծառայել զամս աւուրս կենաց ի
մոց: Երանի թէ՝ և 'ի միում աւ
ուր բաւականանայի զարժանի
պաշտօն քեզ մատուցանել: Ճշմար
տապէս արժանի ես դու ամենայ
նի պաշտաման, ամենայնի պատ
ւոյ, և մշտնջենաւորի գովութե:
Իրաւի Տ՞ր իմ ես դու, և ես ըն
դրուկ ծառայ քո, որ բնաւին ի
մով կարողութեամբ պարտաւորե
ալ եմ քեզ ծառայել, և ոչ եր
բեք

բեր ձանձրանալ 'ի գոյութենէ քումմէ ։ Աղաչեմ հաճիմ, եւ այսպէս լռեմ․ եւ որ ինչ ինձ պակաս է, արժանի արա լցուցանել ։

5․ Մեծ է պատիւ, մեծ են փառք՝ քեզ ծառայելն, եւ զամ ինչ խոտել վն քո ։ Քանզի՝ զմեծամեծ շնորհս ընդունելոց են այնոքիկ, որք կամաւ զինքեանս ստորարկեցին քում սրբազանի պաշտաման ։ Զքաղցրութեան հոգւոյ քոյ սրբոյ գտցեն զմխիթարութի, որք վասն սիրոյ քոյ զամ վայելչութիւն մարմնականն 'ի բաց ընկեցին ։ Հասցեն մեծի ազատութեան մտաց, որք վն անուան քոյ յանձուկ ճանապարհ կամեցան մտանել, եւ խոտեն գանեցին զբնաւ հոգս աշխարհի ։

6․ Ո՜ գերին՝ եւ վայելուչ ծառայութիւն այդ, որով լինի ճշմարիտ ազատ՝ եւ սուրբ ։ Ո՜ սրբազան կացութիւն կրօնաւորականի պաշտաման, որ զմարդիկ առնէ հանդէս հրեշտակաց, հաճելիս այ, զարհուրելիս դիւաց, եւ ամենից հաւատացելոց գովաբանելիս ։ Ո՜ փափաքելի, եւ յարաբաղձալի ծառայութիւն այդ, որով վաստակի ծայրագոյն բարին, եւ ստացանի խնդու

թիւն

զութիւն թարց վախճանի մնացա-
կան:

---

Գլուխ ԺԱ:

ԹԷ ՔՆՆԵԼԻՔ ԵՆ ԻՂՁՔ ՍՐՏԻ, ԵՒ ՉԱՓԱՒՈՐԵԼԻՔ:

1. Որդեակ՝ պատուիրեմ դեռեւս զբազումս ուսանել, զորս չեւես բարւոք ուսեալ ես:

2. Որք են այնպիսիք. Տէր իմ:

3. Զի զիղձս քո կարգաւորեսցես բոլորովին ըստ հաճոյից իմոց. եւ մի լինիցիս ինքնասէր՝ այլ իմոց կամաց նախանձայոյզ: Իղձք զքեզ առատապէս վառեն. բայց զննեա, թէ իցեն արդեօք վասն պատուոյ իմոյ, կամ թէ իցես դրդեցեալ մանաւանդ սակս քոյ-ոյ զխոստութեան: Եթէ ես իցեմ առիթ. բարեացս գոհանաս՝ ի-ցես, ապա կարգաւորեցեալ. իսկ է թէ 'ի սեփականն քումմէ խնդրոյ՝ գուցէ ինչ գտանի, ահա այն է, որ զքեզ արգելու, եւ ծանրացու-ցանէ:

4. Զգոյշ լեր ուրեմն, զի մի այժմ 'նկատեցես 'ի քոյդ իղձ՝ նա խայլայեալ, եւ ոչ յինէն տեղեկա-ցեալ

ցեալ. մի՛ դուցէ զինի գըլխանալ ցես, կամ անհամբերութեամբ քեզ, որ յառաջնումն համայն թուիցի, որում եւ իւրև բարւոյ՝ նախանձ ձեւիր: Քանզի՝ ոչ ևամ իցէ, որ ան ցանել բարի, է վաղվաղակի հետե ւել. և ոչ ևամ հակառակ սխոս խա կոյն է փախչել: Ծանի է երբեմն զանձնահարութեան ինչ 'ի կերպարկա նել, եւ ընկրթութեան՝ և յեղձա բարիս. զի մի՛ յառաջամանել նեղու շանիցես 'ի ցրեղմանս մնալ քոց. և մի՛ այլոց սակս քոյոց անկարժու թեանց, զդայթագութեան ծնա նիցիս. և կամ սակս քոյոց ընդդէ մազդութեանց, խախյին ազդի ցիս, և համբերեցիցես:

5. Սակայն երբեմն պարտ է 'ի կերպարկանել զբռնադատութիւն, և արիաբար յոժարութեանն զդայա կանի ընդդիմանալ, և ոչ ու նել զփոյթ, թէ՝ զինչ կամիցի մար մինն, և զինչ ոչ. այլ մանաւանդ միայն զփոյթ ունել, զի ենթարկի ցի հոգւոյն, թէև ակամայ:

Եւ այնպէս նուաճիլ պարտի, մին չև պատրաստիցի առ ամենայն ինչ, և ուսանիցի սակաւուք բաւա կանանալ, և զպարզ հրճուիլ, և

ոչ զիր ինչ անպատուհաս թողուանջել:

## Գլուխ ԺԹ:

### Յաղագս նեղչերպատարման համբերութեան, և հաւատարիմ ընդունել ցաւ կատարելոյ:

1. ԶԻ՞Ր խօս, և ԱԾ խօս, յորժ հարկաւոր է ինձ համբերութիւն, որչ առաւանդեալ. զի բազումք են փորձութիւնք. որք ըն կենցաղումս այսմիկ պատահին: Զի անդ՝ ուր և կարգաւորեցեալ զխաղաղութիւն իմ, ոչ կարէ գալ թարց փորձութեան, և ցաւոց կեանք իմ:

2. Այս ասացեր է՝ որդեակ: Բայց կամիմ, զի դու զայնպիսի խաղաղութիւն խնդրեսցես, որ անմոռնեցէ ՚ի փորձութեանց, կամ ոչ զգայցէ պնդութեան. իսկ յայն ժամ եւս վարկեա՛, թէ գտեալ իցես զխաղաղութիւն, մինչ իցես խոնջեցեալ զանազանեալ վշտակրութեամբ, և փորձեցեալ բազմաընդդիմութեամբ: Եթէ ասիցես, թէ ոչ կարեմ անել զայս, զի այլոց առնիցես հրայն բանադրեալ: Ձեռինդ չարեաց փորձութիւնք է մեծա ընդունել: Սուտ զի կարի

ցես 'ի ստնդիմաց աղաղակելոյ մշտնջենաւորաց զերծանիլ. Քանզի սակս այդ դժարիս կենցաղս բերկրութեանս առնել: Մի թէ համարիցես, թէ մարդիկ աշխարհիս այսորիկ՝ կամ զգայուն ինչ, կամ զոչինչ կրիցեն. զայս ոչ երբեք գացես, թէև զաղմուկ կենաց խորհրիցես:

3. Բայց ասիցես, թէ՝ ունին նոքա զբաղում հրճուանս, և հեռի են ամենայնից խռովից հեշտութեանց, մի որոյ՝ գոյնին թուին նոցին վշտակրութիւնք:

4. Գիտասջիր թէ՝ այդպէս իցէ, զի ունին զոր ինչ կամին. բայց զի՞նչ կարծես, թէ՝ մեքան անէ լոյց են: Ահա՝ իբրև զծուխ այս կասկածին ծխայեալք ըն կենցաղումս, և ոչ եղիցի յիշատակ ինչ անցելոյն խնդութեանց: Անէ՝ մինչ կեան, ոչ առանց դառնութեան, լլման, և երկիւղի, հանգչին 'ի նոսին: Քանզի՝ 'ի նոյնոյ իրէ, յորմէ զհեշտութիւն ինքեանց ընդունին, 'ի նմանէ ևս՝ յաճախ ագէս զպատիժս ցաւոց կրեն: Եւ զի այս արգասաւորս լինին նոցին, զի մի՛ ոչք անկարգաւորս

զեղ-

զհեշտութիւնս խնդրեն, և հեռա-
նան նոցին, թարց վշտակմանց, և
դառնութե վճարիցն: Ո՜հ թէ՝
որպէս գիւղանցք են, որպէս
պատրիչք են, ոչ անկարգք են,
և որպէս զազիրք են այնոքիկ ամե-
նեքեան: Բայց՝ սակս չխնդրումն,
և կարութեան խորհանցն՝ ոչ խնա-
նան. այլ որպէս համր կենդանիք
սակս տապականելւոյ կենցաղոյս
սակաւուց հեշտութեանց, 'ի մահ
անձին զներքեանս մատնեն: Դու
սրբեալ որդեակ, ՝ մի գնայցես Եզեկ. 18 . 30
զկնի քոյոց ցանկութեանց, այլ 'ի
բացհերքեա զոուս 'ի կամաց քոց:
՝ Հրճուեաց 'ի ՏՐ, և նա տացէ Սաղմ. 36 . 4
քեզ զխնդրուածս սրտի քո:

5. Քանզի՝ եթէ կրաւի կամիս
հրճուել, և առատապէս յինէն լու
փոփիլ. աճա 'ի յանարգութեան
ամենից աշխարհականաց իրաց, և
'ի բացհերքման ըմբոսից ստորնոյ
նոցահեշտութեանց, կայացցի քեզ
օրհնութիւն, և առատապէս հատուս-
ցի քեզ մխիթարութիւն: Եւ որ-
քան զքեզ յամենից ամեղծակա
նաց մխիթարեաց 'ի բացքարշեսցես,
այնքան 'ի յիս զքաղցրագոյն, և
զհզօրագոյն մխիթարութիւնս

գտ

դացես։ Բայց 'ի սկզբան՝ ոչ եղիցիս թարց խնկը արտաքնութեան, և աշխատանաց պատերազմի, զի առ այս նախամտանեցես։ Ընդդիմանայցէ քեզ նեղանձնեցեալն աղօթութիւն. բայց 'ի բարեգունէ սովորութենէ յաղթահարեսցի։ Տրտնջեսցէ մարմինն, բայց՝ ջերմեռանդութիւն հոգւոյն սանձահարեսցի։ Գրգռեսցէ՝ և զառնայսգուցէ զքեզ օձն հնադոյն, բայց՝ աղօթիւք հալածեսցի. և մանաւանդ՝ աշխատանօք օգտակարիւք նմին մուտք մեծամեծք արգելցին։

---

## Գլուխ ԺԴ։

### Յաղագս հնազանդութեան հպատակի հեզի, ըստ օրինակի Յի Քի։

1. Որդեակ՝ որ զինքն արտաքսել ջանայ 'ի հնազանդութենէ, ինքն արտաքսէ զինքն 'ի շնորհաց. և որ խնդրէ ունել զիւր յատուկս, կորուսանէ զհասարակսն։ Որ ոչ յօժարութեամբ և հաճութեամբ հպատակի առաջնորդին, յայտ է թէ դեռևս մարմինն իւր կատարելապէս ինքեան ոչ հնազանդի, այլ՝ բազում անգամ

ապս

տրուցէ՝ և տրանջէ: Ուսիր ու-
րեմն փութով զքեզ առաջնորդին
սարսանելեալ, եթէ կամիս զմարմինն
քո նուաճել: Զի գիտես որ
տարփին թշնամին ի յաղթահարել,
եթէ ներքին մարդն ոչ կայ կոր-
ծանեալ: Ոչ գոյ վտանգաւորա-
գոյն, և չարագոյն անձինդ թշնա-
մի, քան զքեզ ինքն, մինչ ոչ հա-
զուգ բարեաց հանճարոյնիս:
Պարտիս ամենեւին բռնանալ
զծնունդին արհամարհանաւք քոյոյ
անձին, եթէ կամիս նախատօրա-
նոլ ընդդէմ մարմնոյ քոյ, և ա-
րեսն: Քանզի դեռեւս յոյժ ան-
կարգաւորես զքեզ սիրես, սակս
որոյ՝ և երկնչիս լինելես այլոց կա-
մաց զքեզ յանձնել:

2. Բայց զի՞նչ է մեծ, թէ զա-
որ ես մխիթարիր, և ոչ ինչ, վասն այլ
զքեզ մարդկան հաստատեսցես. ո-
րով հեշտանս ես անձնանկարօղ՝ և
բարձրագունեղս, որ զընտա ըն-
ակեղծի յաղթէ, զիս, վասն քոյ՝
մարդկան խոնարհեցար ասպարէ-
կի: Եղէ ամենեցուն խոնարհա-
գունեղ՝ և զձունուն, զի՝ զքոյդ
հպարտութիւն խոլով խոնարհութեամբս
յաղթահարեսցես: Ուսիր ուրեմն

բա

բարեխառնել զքեզ, ով մանկիր։
Ուսիր խոնարհեցուցանել զքեզ,
ով հող, և ածել, և ենթարկել
զքեզ 'ի ներքոյ ոտից ամենից։
Ուսիր նուաճել զկամս քո, և
ընդ ելից նուաստութեանց տալ
զքեզ ինքնին։

3. Վառեա զքեզ ընդդէմ ին
քեանդ, և մի ներեսցես փքացման
զօրանալ 'ի քեզ. այլ այնպէս նու
աստ, և փոքրոգի զքեզ ցուցեա,
զի ամենեքեան կարիցեն չոքել 'ի
վերայ քո, և որպէս զկաւ փողոցաց
կոխել զքեզ։ Զինչ ունիս ով
մարդ ունայն, առ 'ի մեծել։ Զինչ
կարես' ով զազրալից մեղաւոր,
ընդդէմ առնել զքեզ նախատողաց,
որ այնքանից վշտացուցեր զԱծ,
և բազմիցս արժանացար դժոխոց։
Բայց անխնայեաց 'ի քեզ ակն իմ,
զի պատուական է հոգի քո առաջի
աչաց իմոց. զի ծանիցես զսէր իմ,
և յարատեւեսցես' զինեն միշտ շնոր
հակալ 'ի վերայ բարերարու
թեանց իմոց. այլև տայցես յա
ճախ զքեզ ճշմարիտ հնազանդու
թեան' և խոնարհութեան, և տանի
ցես համբերութեամբ զարհամար
հանս քոյոյ անձին։

Գ. Լուխ

## Գլուխ ԺԴ:

### Յաղագս նկատման գաղտնադատաստանացն Աստուծոյ դատաստանաց, զի մի հպարտասցուք ընդ բարիս:

1. ՈԱհաբեկեցուցանես զիս՝
Տէր քոյով դատաստա-
նաւ, և ահիւ, և երկիւղիւ քով
դողացուցանես զամենայն ոսկերս իմ,
և սարսափեալ հոգի իմ յոյժ: Կամ զար-
հուրեալ եմ, և նկատեմ զի՝ և Յոբ
երկինք ոչ են սուրբ յանդիման քոյ 15· 15
ոչ երևեալ: Եթէ ՚ի հրեշտակս Յոբ
գտեր զանօրէնութիւն, և ոչ ան 14· 18
խնայեցեր, զի՞նչ եղիցի ինձ:
Թօթափեցան աստեղք յերկնից, Յայտն.
և ես փոշիս զի՞նչ վարկանեմ զիս: 8· 12
Որոց գործքն՝ գովելիք համարե-
ցին, անկան յատակսն, և որք ու-
տէին զհաց հրեշտակաց, տեսի՝ զի
հրճուէին եղջերօք խոզից:
Ո՛չ գոյ ուրեմն սրբութիւն ինչ,
եթէ զձեռն քո ՚ի բաց բարձես:
Ո՛չ ինչ իմաստութիւն օգ-
տէ, եթէ ՚ի կառավարելոյ դադա-
րեսցես: Ո՛չ ինչ արիութիւն օգնէ,
եթէ ՚ի պահպանելոյ լռեսցես:
Ո՛չ ինչ ողջախոհութիւն է անվը-
կեան, եթէ զայն ոչ նախախնամի-
ցես

ցես։ Ո՛չ ինչ անփոփոխ պահպա-
նութիւն շնորհաւորէ, եթէ ոչ իցէ
միշտ քոյդ արտաքին հովանութիւն։
Քանզի թողեալ մեր 'ի քէն՝ ստո-
րինք, խակ և կործանիք. զուգէլուն
քո զօրացեալ կանգնիմք, և զօրա-
նամք։ Զի անհաստատ եմք, բայց
քեւ հաստատեամք. ցրտանամք,
բայց քեւ ջերմանամք։

3. Ո՛ թէ՝ որպէս խոնարհաբար,
և արհամարհօրէն պարտ է ինձ
զինէն խորհիլ. և որպէս առ յոչ
ինչ վարկանել զբարիս, զոր թուի
ինձ ունել։ Ո՛ թէ որպէս հնա-
բար ընկղմիլ պարտիմ զնա քո
ոց խորոց դատաստանաց. ուր զնա
ոչ այլ ինչ գտանեմ, եթէ
ոչ՝ ոչ ինչ, և առ ոչ ինչ։ Ո՛ ծանր
անչափելի, ո՛ անդունդ անանց-
անցանելի. նորաւ զնա ոչ այլ ինչ
գտանեմ, եթէ ոչ ընդունիմ ոչ
ինչ։ Ո՛ւր է ապա ծածկեալ փա-
ռաց. ո՛ւր է յոյսն յուսացեալ յառա-
քինութեանց, ընկլաւ ընդ անա-
փառութիւն, 'ի խորութեան քո
ոց դատաստանաց, որք են 'ի վե-
րայ իմ։

4. Զի՞նչ է ամ մարմին առաջի
Եսայ 29. 16 երեսաց քոց՝ Տէր։ Միթէ պար-
ծի

ծիցի երբէք կաւն ընդդէմ ձեռակերտողին իւրոյ: Որպէս կանգնել կարէ ունայնաբանութեամբ, որոյ սիրտն ստուգապէս ենթարկեցեալ է նմա: Ոչ բոլոր աշխարհ կանգնել կարէ զայն, զոր Ճշմարտութիւնն ինքեան ստորանկէ, եւ ոչ 'ի բերանոյ բնաւից գովաբանողաց շարժի, որ զբոլոր յոյս իւր յԱստուածումն է հաստատեալ: Վասն զի՛ եւ որք խօսինն ահա ամենեքեան ոչինչ են. զի 'նուաղեսցին ընդ հնչմանն բանից. * իսկ՛ բան Տն մնասցէ յաւիտեան: Եսայ. 40. 8 1 Պետ. 1. 25

---

Գլուխ ԺԵ:

ԹԷ՛ ՈՐՊԷՍ ԽՕՍԵԼ Է, ԵՒ ԱՍԵԼ 'Ի ԻՐՍ ԲՆԱՒՍ ԲՂՁԱԼԻՍ:

1. Որդեակ՝ այսպէս ասիցես 'ի միտս քում: Տէր՝ եթէ քեզ հաճոյ իցէ, եղիցի այս այսպէս: Տէր՝ եթէ եղիցի այս 'ի պատիւ քո, եղիցի այս յանուն քո: Տէր՝ եթէ տեսցես ինձ պիտանի, եւ գտանիցես զայն գոլ ինձ օգտակար, յայնժամ տուր ինձ, զայս 'ի պատիւ քո 'ի կիրարկանել: Բայց եթէ գիտիցես զայն գոլ ինձ վնա

սա

տակաւ, և հոգւոյ խոյզ փրկութեան ոչ գոլ շահաւոր, բայց յինէն զայնպիսի իղձ։ Քանզի ոչ ամ իղձ է ՚ի Հոգւոյն սրբոյ, թէև թուիցի մարդկան բարի, և ուղիղ։ Դժուարին է խնդրել և ենթադրա ակեն, թէ իցէ հոգւոյ բարի, կամ թէ օտար, որ զգեղ ներդրեալ ՚ի ցանկութիւն այսորիկ, կամ այնո րիկ, և կամ թէ՝ արդեօք շարժի ցիս ՚ի ակնկալութեան բանին հոգւոյ։ Բազումք՝ որք յանդիման թուեա լին առաքինութիւն ՚ի հոգւոյ բա րւոյ, ՚ի վախճանի գտան ապարե ցեալք։

2. Ուրեմն մեզ երկիւղիւն ոչ, և խոնարհութեամբ որոյ արժան է ընթանալ, և խնդրել, զոր ինչ զան կալի անկանելի մտաց. և մանա ւանդ յաղագս կատարելութեան վերահրեանմիտ յանձնելի է ինձ բարւոյն, և ասե լի։ Տէ՛ր դու գիտես, թէ՛ ո՛րն բա րւոյն է. եղիցի այս, կամ այն, որպէս հաճոյ թուեսցի քեզ։ Տուր ինձ, զոր կամիս, որչափ՝ և կամիս, և յորժամ կամիս։ Արա ընդ իս որպ և գիտես, և որպ քեզ առաւել հաճոյ թուի, և որպիսութեամբ առա ախս քո առաւել յայտնի։ Դիր զիս

զնա՛ ուրեք կամիս, և հարազատա-
բեն վարելոյ ընդ իս ընթանաս։
Եմ 'ի ձեռին քում, պատրաստե-
լեալ զիս, և վերստին գործել շրջա-
նակօրէն։ Ահա ես ծառայ քո եմ,
պատրաստ առ ամենայն. և ոչ կա-
միմ զկեանս իմ, եթէ ոչ 'ի քեզ.
երանի թէ՝ արժանապէս, և կա-
տարելապէս։

Բան՝ վասն խափանելոյ չարաչար
ձանձրութեան Աղօթք։

3. Աստուած իմ՝ մի՛ բարե-
գործ վաղվաղ Տէր, զօգնութիւն քո
տո՛, զի եղեն ընդ իս, և ներգործեցին Ի Սաղմ.
յն իս, և մինչև 'ի վախճանն յարանիտեալ Գ. Ծ
ցէ ընդ իս։ Տէր իմ՝ միշտ ըն-
ձայ և կամիլ զայն որ քեզ առա-
ւել է ընդունելի, և բարեհաճելի։
Իմ կամ քում կամի միշտ հետևե-
ցի, և լիցի կամ քո իմն զկամ
իմ. և իմ կամ քում հետևեսցի կա-
մի, և ուղղապէս նմին համաձայնի
ցի։ Իցէ ես ինձ միաբանեալ կամիլ,
և ոչ կամիլ ընդ քեզ. և մի կարի
ցեմ կամիլ, և ոչ կամիլ, եթէ ոչ
զոր կամիցիս՝ կամ ոչ կամիցիս։
4. Տէր իմ մնասցիմ ընդ ըն-
նասս, որք են յաշխարհի. և վասն
քոյ

քոյ սիրել զարհամարհանս, և զոչ-
նչացեալն լինել կենցաղումս այսմիկ:
Տուր ինձ՝ ՚ի վեր քան զամ իղձս
՚ի քեզ հանգչել, և զսիրտ իմ ՚ի
քեզ խաղաղացուցանել: Դու ես
ճշմարիտ խաղաղութիւն սրտի, և
միայն հանգստութիւն. խակ արտ-
աքոյ քո, խիստ են ըն-
նաւք, և անհանգիստք: Այսմիկ,
և ՚ի նոյնում խաղաղութեան, այս
Սաղմ. Դ. 10 ինքն՝ ՚ի քեզ միայնում, ՚ միակա-
գունում, և մշտնջենաւորում բա-
րւոյ ննջեցից, և հանգեայց ամէն:

---

## Գլուխ ԺԶ:

### ԹԷ ՃՇՄԱՐԻՏ ՄԽԻԹԱՐՈՒԹԻՒՆՆ ԸՆԴ ՄԻ-ԱՅՆՈՅ ԱՍՏՈՒԾՈՅ Է ԽՆԴՐԵԼԻ:

1. Որ ինչ միանգամայն ցանկալ կարեմ, կամ խորհիլ ՚ի մխիթարութիւն իմ, ոչ աստ ակնկալեմ, այլ՝ յապայն: Եւ եթէ միայն ունէի զամ մխիթարութիւնս աշխարհի, և կարէի վայելել բնաւ-իւք նորին հրճուանօք, յայտ է ոչ կարէին լինել, զի ամենեքեան բա-զումս յարատեւել: Վասն որոյ՝ ոչ անձն իմ, ոչ առաւել՝ լիապէս կա-

րես

բեւ մխիթարիլ, և ոչ կատարելապէս սփոփիլ, եթէ ոչ ՚ի Աստուծոյ, որ է մխիթարիչ աղքատաց, և ընդունօղ խոնարհաց: Սպասեա փոքր ինչ, ով անձն իմ, և սպասեա խոստմանն Աստուծոյ, և ունիցիս առատութիւն ամենից բարութեանց ՚ի յերկինս: Եթէ յոյժ անկարգաբար խնդրիցես զներկայս զայսոսիկ, կորուսցես ըզմշտնջենաւորսն և զերկնայինս: Եղիցին ժամանակաւորքս այսորիկ մնասցեն ՚ի պէտս, իսկ մշտնջենաւորքն ՚ի ցանկութեան: Ոչ կարես յագիլ ժամանակաւոր ինչ բարւոք, զի ոչ ես ստեղծեալ առ ՚ի վայելումն նոցին:

2. Թէև ամենեքեան զերկրաւոր ստեղծական բարիս, ոչ մի այնպէս կարէիր լինել երջանիկ, և երանելի- այլ՝ ամ երանութիւն, և երջանկութիւն կայանայ յԱստուծում, որ է ստեղծօղ ամենայն բարեաց: Ոչ այն երանութիւն, որ թուի, և կամ գովի ՚ի յիմարաց՝ սիրողաց կենցաղոյս. այլ այնպիսին որում սպասեն բարիք հաւատարիմ Քրիստոսի, և մերթ նախաճաշակեն երբեմն հոգեւորք՝ և սուրբք

սրտ

սրտիւք, որոց կենցաղավարու-
թիւնն յերկինս է: Ուստի, և
փոքրոգի է ամ՟ մխիթարութի մարդ-
կային: Երանելի, և ճշմարիտ է
մխիթարութիւնն, որ 'ի ներքս 'ի
ճշմարտութենէ վերբերանի:
Այր աստուածային յամենուրեք ընդ-
իւրեան տանի զմխիթարիչն իւր
Յս՟, և ասէ ցնա․ օգնեա՛ ինձ՝ տր՟
Յիսուս, յամենայնում տեղւոջ՝
և ժամանակում: Այս եղիցի ինձ
'ի մխիթարութիւն, զի յօժարու-
թբ կամիցիմ զրկիլ 'ի բնաւից մխի-
թարութեանց մարդկայնոց:
Իսկ եթէ պակասեսցի 'ի յինէ քո-
մխիթարութիւնդ, եղիցի ինձ քո-
հաճութիւն, և արդար զննութիւն
'ի տեղի ախորժական ծայրագոյնեղելի:
Սաղմ․ Քանզի՝ ոչ 'ի յաւիտենան բարկա-
102․ 9 նա՛ տր՟, և ոչ 'ի յաւիտեան սպա-
հէս զոխս:

---

Գլուխ ԺԷ:

Թէ՛ զմ՟ հոգ ընկենլի է՛ յԱՅ․

1․ Որդեակ՝ թո՛ղ ինձ առ-
նել ընդ քեզ՝ զոր կամիմ:
գիտեմ ես, թէ՝ զինչ իցէ քեզ օգ-
տակ: Դու խորհիս իբրև մարդ-
գու

դու կարծես զերս բազումս, բայց
որում հաճոյէ քեզ խղճ մտացկայ
ին։

2. Տէ՛ր իմ, խրատեա զոր հրաման-
եա։ Աշակերտէ զիս հնազանդու-
թեան ՚ի վերայ իմ, քան զբնու-
նս, զորս ամենայն կարեմ ես յա
ռաջս իմ։ Բանզի՝ յոյժ անհաստա
տակս կամ ես, որ ոչ ընկենու-
զնեա նաւ ընդ ՚ի քեզ։ Տէ՛ր իմ,
միայն թէ՝ կամս իմ ուղղակէս, և
հաստատակէս ՚ի քեզ յարանայ
ցէ, արա ընդ իս՝ զոր ինչ քեզ
հաճոյ թուեսցի։ Վասն զի՝ զոր
ինչ առնիցես ինձ բարի է։
Եթէ կամիցիս, թէ՝ լինիմ ընդ խաւ-
արի, եղիցի անուն քո օրհնեալ
նեցեալ. և եթէ՝ հաճիս, թէ ի-
նիմ ընդ լուսով, լիցի դարձեալ
անուն քո օրհնաբանեցեալ։
Եթէ՝ արժանի համարիցես զիս
մխիթարել, եղիցի անուն քո բա
րեբանեցեալ. իսկ՝ եթէ համիցիս,
թէ՝ վշտացուցիցիմ, լիցի նմանապէս
անուն քո միշտ բարեբանեցեալ։

3. Որդեակ՝ եթէ կամիս ընդ
իս շրջիլ, պարտ է քեզ՝ զի այսպէս
կեայցես։ Ներ այնպես յօժար
առ՚ի համբերել, որպէս յօժար
ես

ես առ՚ի խնդալ: Ընկալ այնպիսի համեմատապէս զչարչարութիւն, և զաղքատութիւն, որպէս համեմատ-պէս ընդունիս զխնդութիւն, և զը-փարթամութիւն:

4. Տէ՛ր իմ, կամաւորապէս կրե-ցից վասն քո զոր ինչ և կամիցիս, թէ՝ գայցէ ՚ի վերայ իմ: Կամիմ զբարիսն, և զչարիսն, զքաղցրն՝ և զդառն, զխնդալիսն, և զտրտմա-լիսն, անտրտնջաբար ՚ի ձեռաց քոց առընդունիլ. և՝ մի բնաւ իրի խնդրել զերախտաւորութեան շնորհակալ լի-նիլ: Պահեա զիս յամենայն մեղաց, և ոչ երկեայց ՚ի մահուանէ, և ՚ի դժոխոց: Մինչդեռ զիս մի մեր-ժեսցես ՚ի յաւիտեան, և մի ջնջե-ցես զանուն իմ ՚ի գրոց կենաց. զոր ինչ միանգամ և գայցէ ՚ի վերայ իմ, ինձ ոչ վնասեսցէ:

---

Գլուխ ԺԶ:

ԹԷ՝ ՃՇՄԱՐԻՏ ՄԽԻԹԱՐՈՒԹԻՒՆՔ ԱՅՆՈՒՇԱՀԱՆԱՑԻՑ ԸՍՏ ՈՐՊԻՍՈՒԹԵԱՆ ՄԻՈՅ, ԼՐՈՒՄՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՆ ԽՆԴՐԵԼԻ:

1. Որդեակ, ինչ են յերկնից վասն քոյ կեցութեան. ընկալցիս զբոյս թշուառութեան ոչ

Յ Է ՚ի

՚ի հարկէ, այլ ՚ի սիրոյ քաղցրութե-
ղն՝ զի դու ուսանիցիս զհամբերու-
թիւն, և ժամանակաւորաց թշուա-
ռութեանց մի զայրացուցանել սանձի-
ցես: Քանզի ՚ի ժամու ծննդեան
իւրոյ մինչև յ՛ վախճանն իմ ՚ի խա-
չին, ոչ պակասեցաւ նմա կրել ու-
ցաւոյ: Խաչոյ ժամանակաւորաց
պակասութեանցն ընթերցի· բա-
զմնձումն յոլովս զինէն յանձնառ-
ուր լոցոյ· խռովութեանց, և
նախատանաց հեղգաւոր առարկոյ·
փոխանակ բարերարութեանցն զա-
պերախտութիւն ընկալայ· վասն
սքանչելեացն զհայհոյութիւնս· և
ուսման վարդապետութեանն զար-
համարհանս:

2. Տէր իմ, զի դու համբերող
եղեր ընդ կենօք քով, յայտնի մա-
նաւանդ ընդ զպատուիրան Հօր
քոյ· արժան է՛ զի ես տառապս, և
մեղաւորս բստ համեմատ քոց համ-
բերեցայց զիս զամենայն, և՛ մինչև
՚ի ծերս կամիցիս, զբեռն ապակա-
նացուն կենաց մի փրկութեան իմոյ
բառնայցեմ: Ես՝ զի թէև ծանրա-
գոյն զգացի նեղութեան կեանս, սա-
կայն՝ այժմ շնորհիւ քում յոյժ ար-
դիւնաւորէ, այլև քեզում օրինա

կաւ, և քոյոց սրբոց շաւղին, ունա լոյ ամենեւին բաղայն է։ Իսկ և յուէա միսիթարական է, քան 'ի նախնամն ընդ հնոյ օրինաւ եղև, մինչ դուռն երկնից փակեցեալ յարամնայր. և մինթայայն եւ ճանապարհ երևիւր առ յերկինս, մինչ այնքան սակաւք զարքայութիւնն երկնից հոգայլն խնդրել։ Այլև ոչ որք յայնժամ արդարքն էին, և կեցուցանելիք, յառաջ քան զքոյդ չարչարանն, և սրբազանն մահուան քոյ պատկանաւորութիւն' յարքայութիւն երկնից կարէին մտանել։

3. Ո՜հ թէ զորքան շնորհակալութիւնս քեզ պարտաւորիմ մատուցանել, զի զճանապարհն ուղիղ և զբարին արժանի վարկար ինձ, և բնաւից հաւատացելոց առ յաւիտենական արքայութիւն քո ցուցանել։ Քանզի կենցաղավարութիւն քո, ճանապարհ մեր է. և սրբազանիւ համբերութեամբ ընթանամք առ քեզ, որ ես պսակ մեր։ Եթէ դու ոչ առաջնորդեալ էիր, և ոչ ուսուցեալ էիր զմեզ, ով որ դեռ հոգայր հետեւել քեզ։ Վա՜յ թէ ոքանք 'ի բացեայ, և

յետ

յետ մահուն, եթէ ոչ ՚ի քոյս դե րախոյզս յարացոյցս նկատեսցին: Ահաւասիկ զեւեւս զանդրանիկն՝ ամենայն զքոյս նշանս, և զկար գաւորութիւնս. զի ոչ լինելոց էր, եթէ զայս քան լոյս առ՚ի հե տևիլ քեզ ոչ ունէաք:

---

Գլուխ ԺԹ:

Յաղագս փառաւորութեան անբաւա-
թեան, որ ընծայի մեզ հայրենի
բնութեան. փառացն:

1. ՈՒնչ է զոր խօսիս, որ-
գեան: Դրախտակայ
՚ի սրտանցեալս, նկատեալ զնին. և
որոց այլոց գեղեցկութեան: Սա Եփեսաց
կանոնն մինչև զարդուն յարատևէ 12. 4
ցեր: Դաշն ինչ է զոր կրկնող, ՚ի
բարեգործութեան այնոցիկ, որք
զայնպան մեծամեծս կրեալք են.
այնպան զորեղագոյնս փառակցեալք,
այնպան ծանրագոյնս վտանգեցեալք՝
և այնպան բազմագարագոյնս զննե
ցեալք, և վարձեցեալք: Պարտ
է ուրեմն քեզ՝ զծանրագոյնս այլոց
՚ի միտս քոյս վերարկելով, զի զքոյս
գինագոյնս տանջեսս նեղացոս
զանձինս: Արդ՝ եթէ քեզ նոս-
սա

տատապանեցաք զոր ոչ թուիցին,
զգուշէք՝ մի գուցէ և զայդ քոյդ-
անիցէ անհամբերութիւն։
Վասն որոյ՝ թէ մեծամեծք իցեն,
թէ փոքունք, հոգա՛ բնաւից համ-
բերալես ըմբերել։

2. Որքան բարեգունեալես 'ի
համբերութեան զբեղ արտմտութիւնս,
այնքան խնամատարութեան ըն-
ջեղ կառավարեցես, և տալ ար-
գիւնաւորեցես. մարդես են թէ
թեաղութեամբ, յօժարութիւն և
սակարութիւն, առ այս ոչ յուզարկես
պատրաստեցեալ ք։ Մի ուրեմն
սակցես. ոչ կարեմ զայսմանէ յա-
նէ այսպիսւոյ կեալ, կամ թէ՝ այս
պիտի յինէն ոչ են ըմբերելի.
զի ես ինձ զմեծ խին առածան, և
նախատակ զիս յայնպիսիս, զորս ոչ
երբեք ածեալ էմ 'ի միտ. ասկայն
յայնժամ ըմբռնաբար կերեցից. բա-
րոււմ՝ անեսից կերեցես զոր զայսպ
ակիք։ Յիմարէ այնպիսին մտածու-
թիւնն, որ զօրութիւն կերեցյ
ոչ յարադրէ, և ոչ զայն, յորմէ
պատկերի է. այլ մինեաւանդ զայն
ձեռ, և զմեզ խնդրեմ նեղդա-
բեցեալս միաբանէ։

3. Մեծ ծրամարտ կոզ, որ ոչ
կա

կամի կրել, եթէ ոչ՝ որքան բարեաց թուի ինքեան, և յորմէ հաճոյ թուի ինքեան։ Զի ճշմարիտ կրօղն ոչ նկատէ՝ թէ յորմէ մարդոյ. արդեօք յաստուծոյ է իրքն, կամ 'ի հակառակէ նմին, և կամ բարերարութեան. արդեօք յանձն առրոյ, և բարւոյ՝ և կամ 'ի խեղաթիւրէ, և յանօրէնութեան՝ արտասգործիցի։ Այլ անտարբերապար յանձն առեալ ամենայն, որչափ՝ և որքանիցս իր ինչ ընդդէմ ինքեան պատահիցի, զբոլորն իբր 'ի ձեռացն Այ, գոհաբանութեամբ ընդունի, և զնոյնն շահ իւր մեծ վարկանի. քանզի ոչ ինչ առաւել Աստուծոյ, որքան և իցէ փոքրագոյն, միայնթէ լինիցի վն սիրոյ նորին կրեցեալ, կարէ առանց արդիւնաւորութեան անցանելոյ։ –

4. Մեր ուրեմն պատրաստ 'ի պատերազմ, եթէ կամիցիս ունել զյաղթութիւն։ Առանց խաղի ոչ կարես ժամանել 'ի պսակն համբերութեան։ Եթէ համբերել ոչ կամիս, հրաժարես 'ի պսակենէ։ Այլ եթէ բաղձաս պսակիլ, մարտիր արիաբար, և տար համբերաբար։ Առանց աշխատութեան

ոչ

ոչ ոք կարէ զինել առ հանդիման, և առանց մարտի ոչ որ ժամանէ 'ի յաղթութիւն :

5. Եղիցի ինձ կարելի՝ Տէր իմ, 'ի ձեռն շնորհաց քոց, որ ինչ ան- հնարին ինձ անկարելի 'ի ձեռն բնութեան։ Դու գիտես, որ զոր ինչ կարեմ համբերել, և 'ի յանձինս ընդդիմութեանց՝ փութով ենթարկիմ։ Ամենայն փորձութիւն ինձ խրախուսանք կիրառութեան նե- ղութեան, որ վասն անուան քոյ սիրելի լիցի՝ և բաղձալի. վասն զի՝ տանել քոյ երկիլին, և չարչարելին, է առողջութիւն հոգւոյ իմոյ։

---

Գլուխ Ի։

Յաղագս խոստովանութեան սեփակա- նի տկարութեան, և կենցաղոյս այսո- րիկ թշուառութեանց :

1. Խոստովանեսցիմ ընդդէմ ինձ զանիրաւութիւն իմ. խոստովանիմ քեզ՝ Տէր, զտկա- րութիւն իմ։ Բազմիցս փոքր ինչ, զիս տապալեցուցանէ, և տխրեցուցանէ։ Յառաջադրեմ ինձ՝ զի հզօրապէս գործեցից. բայց՝ մինչ գայ սակաւ ինչ փորձութիւն, մեծ անձկու- թիւն

թիւն ինձ տիրէ: Երբեմն յայժ մտաւորք է լին, յորմէ յառաջանայ ծանր վարձաւորութիւն: Եւ մինչ համարիմ զիս կենդանի իւեք յանդորր, մինչ զուր ինչ գգամ, գտանեմ զիս տակաւին մերձ 'ի յայթ ահարկել 'ի փորձառութեան կայութենէ:

2. Տէր ողորմեա ինձ, * զխնդրում Սաղմ.
հութիւն իմ, և զբեկանելու 24. 18
թիւն իմ, որ յայտնի է քեզ. յամե
նեկս կարմնոյ: Եւ զօրացո * և Սաղմ.
փրկեա զիս 'ի տղմոյ, զի մի ընկղմ 68. 15
զեցայց, և մի յապաւանցեմ ըս տորանկեցելոյ միւսն խաւար: Այս է, որ ձաղէ զիս յաճախ պէս, և տոտաջի քոյ յամօթանէ զիս. քանզի եմ յոյժ սահանկանդ, և տկար առ 'ի ընդդիմանալ կրից վարձութեանց: Զի թէև ամենևին ոչ հաւանեցիմ նոցին. անկարին նեղութի է ինձ, և ծանրութիւն հալածումն նոցին, և ձանձրանամ կեալ միշտ պայքարս 'ի պատերազմի: Առաւել յայտնապէս երևի ինձ տկարութիւն իմ, զի առաւել դիւրապէս յանդնեն 'ի մեքայ իմ աղտականելիք երևակայութիւնք, քան թէ տարահերծին:

3. Երանի թէ յարանկանէիր

ծա

ծառայի քոյ զաշխատանս՝ և ըղ-
ցաւս, ո՛վ հզօրագունեղ տէր իմ
բայլը. և Նախանձայոյզ հոգւոց
հաւատացելոց, և օգնէիր նմա յա-
մենայնում, յո՛ և ընթանայր:
Կազդուրեա՛ զիս երկնայնով կարո-
ղութեամբ, զի մի՛ հին մարդն, զ̄ս
մարմինն, դեռևս հոգւոյն լինպէս
ո՛չ հպատակեցեալ, յանդգնիցի
տիրել. Ըղձեմ որում զկնի պխաոյ
եղիցի պատերազմիլ, որքան ապրես-
ցուք յայսմիկ կենում ողորմելա-
գունեղի: Վա՛յ թէ՝ որպիսի է
կեանս այս, նորում ո՛չ երբեք պա-
կասին նեղութիւնք՝ և թշուառու-
թիւնք, նորում լի է ամ ինչ որո-
գայթիւք, և թշնամեօք: Քանզի՝
'ի հեռանալ միոյ անձկութեան,
և փորձութեան, մերձենայ միւսն.
և մինչդեռ տակաւին անէ հարու-
ած առաջնոյն, այլք բազումք յան-
կարծակի 'ի վերայ յառնեն:

4. Եւ որպէս կարէ սիրել այս-
պիսի կեանն, որ ունի զայսքան
դառնութի, և է ստորանկեցեալ
այսքանից թշուառութեանց. և
խղճութեանց: Կամ որպէս կարէ
յորջորջիլ կեան, այն՝ որ ծնանի
զմահս, և զժանտս: Բայց սակայն

տանջելին 'ի բաղձանս սրտի, և յա
գունդ խնդրելն հրճուիլ 'ի նմա:
Յանդիմանէ յանձնապաշտս ախտից՝
երբեմն լինէ սուտ, և ընդունայն-
այլ. սակայն ոչ գիտնալէս թողա-
նի 'ի բաց. զի յայժ սիրելն ցանկու-
թիւնք մարմնոյ: Եւ զի՝ այլք
են, որք առաքելին 'ի սիրել զնա,
և այլք, որք 'ի քամահել: Առաջար
չեն 'ի սէր աշխարհի, ՚ ցանկու- 1 Յհ.
թիւն մարմնոյ, ցանկութիւն աչաց, 2. 16
և հպարտութիւն կենցաղոյս. բայց
պատիժք՝ և թշուառութիւնք, որք
արդարապէս հետևին նոցին, ծնա-
նին զատելութիւն աշխարհի, և
զձանձրութիւն:

5. Բայց՝ ոչ ցաւոյս, զի յաղթա
հարէ մախիցն զուարճութիւն
ըղ մնաս նուիրեցեալս աշխար
հի, ՚ և հաճոյսի զոլ 'ի ներքոյ Յբ.
սատտակոյ զղ[illegible]. զի ոչ ուէ 30. 7
ցին՝ և ոչ ճաշակեցին երբեք ըղ
քաղցրութիւնն այն, և զներքին
պաշտամանութիւն զորութեն: Իսկ որք
կատարելապէս քամահեն զաշ
խարհ, և կեալ յաւ ձեռ 'ի ներքոյ
սրբազանի քանսն խրատու. այնոց
ցնի զքաղցրութիւնն այն՝ ճշմար
տեղ հրաժարողաց խոստացեալ՝

ոչ անպխտանան. և թէ՛ որքան ծանրացեալս սխալիցի աշխարհ, և զանազանեալս խարկիցի, յայնժամ ոգես տեսանեն:

---

Գլուխ ԽԱ:

ՅԱՂԱԳՍ ԹԷ ՄԵԾԱՊԱՏՃԱՌՆ 'Ի ՎԵՐ ՔԱՆ ԶՄԵԶ ԲԱՐԻ, ԵՒ ԴԱՐՁԵԱԼ ՅԱՐԱ-ՀԱՆԳԷԼԻ Է:

1. Ի Վեր քան զամ՛, և յամենայնում միշտ յառաջանան գեալ՛ ով հոգի իմ, 'ի որ. բանիցի նա է համակարգ յաւիտենականն ամենից որոց: Տէր իմ, ով բազմապատուելդ, և սիրելադնեղ Յն, 'ի վեր քան զամ տեղ ծանօթս 'ի բեղ յառաջանալ ելք. 'ի վեր քան զամ կեցութի, և գեղեցկութիւն. 'ի վեր քան զամ փառս, և պատիւ. 'ի վեր քան զամ իշխանութի, և արժանաւորութիւն. 'ի վեր քան զամ գիտութիւն, և նրբութի. 'ի վեր քան զամս փառթանմութիւն՛ և արհեստս. 'ի վեր քան զամ խնդութիւն, և հրճւաթիւն. 'ի վեր քան զամ համբաւ, և գովութիւն. 'ի վեր քան զամ բաղցրութի, և մխիթարութի. 'ի

'ի վեր քան զամ՛ յոյս, և խոստումն. 'ի վեր քան զամ՛ արդիւն, և խղճ. 'ի վեր քան զամենայն պարգևս, և զձիրս, զորս կարես տալ՝ և ներշնչել: 'ի վեր քան զամ՛ ուրախութիւն, և զուարճութիւն, զոր կարէ ըմբռնել միտ՝ և զգալ: Այլև՝ 'ի վեր քան զհրեշտակս, և հրեշտակապետս, և 'ի վեր քան զամ՛ զօրս երկնից: 'ի վեր քան զամ՛ երևելիս՝ և աներևոյթս, և 'ի վեր քան զամ՛, որ ոչ ես դու ԱԾ իմ:

2. Քանզի դու՝ Տէր իմ, և ԱԾ իմ, 'ի վեր քան զբնաւս բարեգործեղ ես: դու միայն բարձրագունեղ: դու միայն հզօրագունեղ: դու միայն բաւականագունեղ՝ և լիագունեղ: դու միայն քաղցրագունեղ, և սփոփողագունեղ: դու միայն գեղեցկագունեղ, և սիրելագունեղ: դու միայն պատուականագունեղ, և փառաւորագունեղ 'ի վեր քան զամենն: Նորում՝ բընու բարեաց խնամոյն, և կատարելագէս գոն, և միշտ եղեն, և եղիցին: ուստի փոքրինչ է, և անբաւական, զոր ինչ բաց 'ի քէն չհորհես ինձ, կամ՝ զքեն բացայայտես, կամ՝ խոստանաս, մինչ որոյ՝ և

թարց

Թարց տեսանելոյ զքեզ լիապէս
ոչ շահիմ. որովհետեւ ոչ կարէ
սիրտ իմ ճշմարտապէս յարահանգ-
չիլ, եւ ոչ բոլորապէս գոհունակիլ,
Եթէ ոչ 'ի քեզ յարահանգչիցի, եւ
զընաւ պարգեւս, զընաւ իսկ ըս-
տեղծուածս գերազանցիցէ:

3. Ո՛վ սիրելագունեդ փեսայդ
իմ Յիսուս Քրիստոս, սիրող մաքրագու-
նեղ, տիրողդ հանրից ստեղծուա-
Սաղմ. ծոց: * Ո՛ տայր ինձ զթեւս ճշմար-
54. 7 տի ազատութեան՝ առ 'ի թռչել,
եւ դադարել 'ի քեզ: Ո՛թէ՝ երբ
տրեսցի ինձ, լիապէս պարապիլ
եւ տեսանել, թէ որպէս քաղցր ես,
Տէր իմ, եւ Աստուած իմ: Ե՛րբ՝ լիա-
պէս ժողովեցից զիս 'ի քեզ, զի
վասն սիրոյ քոյ՝ ոչ զգայցեմ զիս,
այլ զքեզ միայն, 'ի վեր քան զամ-
զգայութիւն, եւ զեղանակ՝ եղանա-
կաւ անծանօթիւ բազմաց: Իսկ
այժմ յաճախապէս հեծեմ, եւ զան-
երջանկութիւն իմ ընդ ցաւոյ տա-
նիմ: Քանզի չարիք բազումք նոյն
մին ձորոյ թշուառութեան հան-
դիպին, որք բազմիցս զիս խռովեն,
տխրեցուցանեն, եւ աղմկեն. բազ-
միցս արգելուն, տարաքարշեն, շա-
ղոքորթեն, եւ շփոթեն, զի մի զա-

զատ

զատ մատուցանն ունիցիմ առ քեզ, և մի՛ վայելչօք զմայլեցիմ փառ մամբք, մինչ ընդ հոգւոյ երանե լեաց։ Շարժեսցէ զքեզ հառա ջանն իմ, և որբութիւն իմ բազմա պատիկ ՚ի յերկրի։

4. Ո՛վ Տէր, Ճառագայթ փա ռին յաւիտենականի, արփիութիւն պայծառութեան հոգւոյ. առ քեզ է բե րան իմ թարց բարբառոյ, և լռու թիւն իմ խօսի ընդ քեզ։ Մինչե ցե՞րբ ՚, յամէ տէր իմ ՚ի գալ։ Եկեսցէ Ղուկ.
ցէ առ իս յաղագաւորիկ իւր, և ուրա 12. 45
խացուսցէ զիս։ ՝Զգեցեալ զձեռն Սաղմ.
իւր, և փրկեսցէ զիս զթշուառա 137. 7
յամէ նեղութենէ։ Ե՛կ, ե՛կ զի առանց քեզ՝ ոչ ինչ օր, կամ ժամ, է խնդութեան, քանզի դու ես խնդութիւն իմ և թագ քեզ՝ թա փուր է սեղանն իմ։ Ես զորպիսեալ, և կերպիւ իւիք բանտարգելեալ անմահական ծանեայք. մինչև լու սով ներկայութեան քոյ զիս սփո փիցես, և ազատութեան տայցես, զերծեալ քո խակ սիրականն ինձ ցուցանիցես։

5. Խնդրեսցեն այլք փոխանակ քեզ զոր ինչ և կամիցին. իսկ ինձ ոչ այլ ինչ հաճոյանայ, և ոչ հաճոյ

աս

տացի, եթէ ոչ դու Աձ իմ, յոյս իմ, և կեցութիւն յաւիտենական։ Ո՞չ լուեցից, և ոչ դադարեցայց ՚ի մաղթելոյ. մինչև շնորհ քո առ իս դարձցի առ իս, և խօսիցիս ընդ իս դու ՚ի ներքուստ։

6. Ահա՛ ասիկ մերձեմ։ Ահա ասիկ առ քեզ եմ, վասն զի ներկոչեցեր զիս։ Արտասուք քո, և ցանկութիւն հոգւոյ քո, խոնարհութիւն քո, և զղջումն սրտի քո մեղկեցին զիս, և ածին առ քեզ։

7. Եւ ասացի. Տէր իմ կոչեցի զքեզ՝ և ցանկացայ քեզ վայելել. պատրաստ եմ արհամարհել զամենայն ինչ վասն քո։ Վասն զի՝ դու նախ զարթուցեր զիս առ ՚ի խնդրել զքեզ։ Եղիցի անուն քո ուրեմն օրհնեցեալ, որ արարեր զայսպիսի բարութիւն ընդ ծառայի քում, ըստ բազմութեան քոյոյ գթութեան։ Զի՞նչ ունի ասել ծառայ քո առ ՚ի առաջ քեզ, եթէ ոչ՝ զի խոնարհեցուցանիցէ զինքն յոյժ առաջի քո, յիշելով միշտ զանօրէնութիւն իւր յատուկ, և զանարգութիւն։ Քանզի՝ ոչ ոք է նման քեզ ընդ ըննաւ զարմանալիս երկնի, և երկ

րի

րի։ * Զի գործք քոյք բարիք են Ծն. 1. 31
յոյժ։ * դատողութիւնք քոյք
ճշմարիտք, և * նախախնամութի՛ Սաղմ. 18. 10
քոյ կառավարէն համայնս։
փառք ողորմն, և գովութիւն Իմաստ. 14. 3
քեզ, ով խնամութիւն հօր․ գովի
ցէ զքեզ, և բարեբանեսցէ բերան
իմ, և հոգի իմ, նմանին ընդ հա
նուր անեղծանաց։

---

## Գլուխ ԻԵ։

### Յաղագս ջերման բաղձանաց ընդունելութեան Աստուծոյ։

1. Ո՛վ Տէր զսիրտ իմ՝ յօրէնս քո, և ուր ինձ շնչել ՚ի պատուիրանս քոյս։ Տուր ինձ իմանալ զկամս քո, և մեծապատկառանօք, և հոգւոյ նուաճեալ յարգ իմանամ, թէ քան սէրն, և թէ՛ քան ամենայն յիշատակել զգաստակերպութիւն քո․ զի աղաղակէս կարդիցեմ ազատ հեռանալ զշնորհակալութիւն մերձեցուցել քեզ։ Թէպէտ զխանձ, և խոստովանիմ, զի և ոչ մի փորձառութիւն զնոյն կինն, մարթ իմ զօրն շնորհակալութեանց գովութիւնս քեզ մատուցանել։ Փառաւորիլ եմ

նմ եւ քան զընտիր բարիս ինձ պարգեւեցեալս. եւ մինչ գոյոյց պատուհականութիւն նշմարեմ, նմա ըզի հոգի իմ 'ի մեծութենեդ:

2. Զամ ինչ, զոր ունիմք ընդ հոգւոյ, եւ ընդ մարմնում, եւ զոր ինչ արտաքսայես, եւ ներքսայես, ըստ բնականարար՝ կամ գերբնարար ըստ տացեալ ունիմք, քոյքեն բարերարութիւք, եւ զքեզ բարի՝ եւ գթած բարեբար գոլ հաշակեն, յորմէ զհանուր բարիս ընկալեալք եմք: Եւ թեպետ ամենք զրապուն, եւ այլք զաւական ընկալեալք են առ կայն քո է ամենայնն. եւ առանց քեզ՝ եւ ոչ փոքրագոյնն կարելի է ունիլ: Որ զմեծամեծս ընկալեալ է, ոչ կարէ պարծիլ յարգեան իւր, եւ ոչ գոռոզանալ 'ի վերայ այլոց, այլ եւ ոչ յառնել 'ի վերայ փոքրագունին. զի նա է մեծագոյն՝ եւ բարեգոյն, որ ինքեան զաւականագոյնն առագրէ, եւ 'ի շնորհակալութիւնս խոնարհագոյն է, եւ ջերմեռանդագոյն: Եւ որ յամենայն զինքն անարգագոյն համարէ, եւ անարժանագոյն գոլ դատէ, յարմարագոյն է առ 'ի ընդունիլ զմեծագոյնս:

3. Իսկ

3. Իսկ՝ որ զսակաւագոյնս ընկալեալ է, ոչ պարտի արտմիլ. և ոչ զայրանալ. այլև ոչ զչարանալ ընդդէմ այնմ, որ հարստագոյն է. այլ միայն զքեզ նշմարել, և զբարերարութիւն մանաւանդ գովել, որ այնքան առատապէս, այնքան ձրապէս, և այնքան ազատապէս առանց աշխատութեան, շնորհես զքոյս պարգևս: Բնութիւնքն են ՚ի քէն, ուստի յաճախեալ ես դու դա մելի: Դու գիտես, թէ զի՞նչ իւրաքանչիւր ումեք բերեալ լիցի շնորհել. և թէ՝ ընդէ՞ր այս սակաւ, և այն առաւել ունիցի. այս ամ ոչ միտ՝ այլ քեզ է գիտելի, առ որ իւրաքանչիւրոց սահմանեցեալ է արդիւնն:

4. Ուստի՝ տէր իմ, և ԱԾ իմ, ես զոչ ունիցին զբարուսն, մեծ իմն բարերարութիւն վարկանիմ, յորմէ արտաքսապէս, և ըստ մարդկան գովութիւն, և փառք երևին. մինչ զի նկատելով իւրաքանչիւր որ զաղքատութիւն իւր, և զանարգութիւն իւրոյ անձին, ոչ է թէ զծանրութիւն, կամ զպարծանութէ, և կամ զպանծացումն ՚ի միտածիցէ, այլ մանաւանդ զխոնարհութիւն և

զմեծ

զմեծ զուարթութիւն. քանզի՝ դու ես
իմ զաղքատս. և զխոնարհս, այլև
զխոստմունս սորայնիկ աշխարհին ընտ
րեցեր քեզ բարեկամս՝ և ընտա
նիս: Վկայք են ինքեանք իսկ
Սաղմ. քոյք առաքեալք, զորս * իշխանս
44. 17 'ի վերայ ամենայն երկրի հաստատեցեր:
Որք կենցաղավարութեան նորանիկ
աշխարհի թարց իմիք կեալ, զո
րով այնքան խոնարհք՝ և մխիթարք,
և առանց չարութեան՝ և նեղու
թէ, մինչ զի 'ի կերպն զանախատանս
Գործք * վա՛ս անուան քոյ խնդալին. և փա
5. 41 րելին ընդ մեծու զայնպիսիւք, զո
րոց խորշի աշխարհ:

5. Ո՛չինչ ուրեմն այնքան զսի
րողս քո, և զծառայսն քոյոց բա
րեպաշտութեանց առաքինութեանց
պարտի, որքան կամ՝քս 'ի նմա, և
բարեհաճութիւն յաւ՝ խոնարհականի
արդարութեան քոյ. զորմէ այնքան
աղօթս է գրեալք, և մխիթարել,
մինչ զի այնպէս յօժարաբար կամի
ցի զոլ փառօրութեանց, որպէս ոչ
բաժա լինել մեծամեծաց. և այն
պէս խաղաղաբար և գոհանալ
Ղուկ. * 'ի յետինս, որ ըն անարգ նախ_
14. 10 կնեալ. և այնպէս յօժարաբար
պարտի հաճիլ զու պատուելի,
և

և անարգելի, անանուն, և անհամար բառ, որպէս հասարակապէս մարդիկ համարին լինել պատուաւորագոյնք՝ և մեծագոյնք յաշխարհի։ Վա՛յ զի կամ քո, և ոչ իր պատուածոյ քոյ, զոր ինչ գերազանցել այլոյ. և առաւել մխիթարել զնա, և հաճոյական նմա, քան թէ՝ բազմաբարեբաստութիւնք նմա արեցուցեալք՝ և տուեալք։

---

Գլուխ ԻԳ։

## Յաղագս Չորից Ներբերողաց մեծ խաղաղութեան։

1. Որդեակ, այժմ ուսուցից քեզ զճանապարհս խաղաղութեան, և ճշմարիտ ազատութեան։

2. Արա՛ տէր, զոր հրամայես, քանզի հաճոյ է ինձ լսել զայդ։

3. Ջանա՛ որդեակ, առնել զմա
նաւանդ զկամս այլոց՝ քան զքոյդ։
Ընտրեա՛ միշտ ունել զսակաւն,
քան զբազումն։ Խնդրեա՛ միշտ Ղուկ.
զվերջնագոյն տեղին, և ամենե 14. 10
ցուն լեր հնազանդ։ Ըղձա՛ միշտ՝
և աղօթեա՛, զի կամք Տեառն ամ
բողջապէս ՚ի քեզ լիցին։ Ահա՛
այսպիսի մարդն հասանէ ՚ի վախ
ճան.

ձեան խոստովանութեան, և յանդորրութեան ։

4. Տէ՛ր իմ, այս բան քո համառօտ, զկատարելութիւն բարութեան պարունակէ յինքեան ։ Յաւելուն մարդ երբեք, բայց չէ է խոնարհման, և ձեռն է պարզ ։ Քանզի եթէ կայր եր համառօտաբանութեամբ յինքն պահել, ոչ էր պարտ՝ այնքան զխնդրել ծնանել ՚ի յիս ամբողջութեամբ ։ Զի՛ որդւոյ մանկութեան անխռովութեան զիս զգամ, և ծանուցանել, այնքան ներքս յայսմանէ վարդապետութիւն հեռացեալ զիս զանաշխ ։ Բայց դու, որ զիմ՛ իմ՛ կարես, և զնշդել զյառաջինն մեծ կամիս, յաւել իմ զամենայն շնորհ ։ զի կարկեցեալ լուսով զբանն քո ամ, և կատարել զփրկութիւն իմ ։

*Աղօթք ընդդէմ խորհրդոց չարաց ։*

Սաղմ. 70. 12
5. Տէ՛ր իմ՝ և Աստուած իմ, մի՛ հեռանար յինէն. Աստուած իմ յօգնել ինձ նայեաց. քանզի յարեան ՚ի վերայ իմ խորհուրդք զազրագոյնք, և երկիւղք մեծամեծք, որք վշտանկեն զհոգի իմ ։ Զխարդ կարասցես անցանել անվնաս, զի անդ ներքեւեցիս զնա ։

6. Եւ

6. * Ես առաջի երթայց առաջի Եսայի
քոյ, և զխաւարատեսս երկրի խոնար 45. 2
հեցուցից: Բացից զդրունս բան-
ալից, և զծածուկս խորհրդոց յայտ
նեցից քեզ:

7. Արդ, տէր իմ, որք և խոստովա-
նեն՝ * փախիցեն յերեսաց քոց հա- Սաղմ.
մայնք խռովութիւնք անզգամք: Այլ 67. 1
է միայն յոյս իմ, և մխիթարութիւն
իմ, ըն ընտա նեղութիւնս դիմել
առ քեզ, 'ի քեզ յուսալ, զքեզ 'ի
խորոց սրտի ներբողել, և համբե-
րութեամբ զմխիթարութիւն իմ
'ի քէն սպասել:

Աղօթք վասն պահպանութեան հոգւոյ:

8. Ամենատեսդ զիս՝ տէր բարե-
յու, պահպանութեամբ լու-
սոյն ներքինայնոյ. և երկուցեալ 'ի
անձնէն սրտի իմոյ զխաւարս հա-
մայնս: Հալածեսցես զչարամիտս
բազումս, և ընկեց 'ի բաց զբը-
նաւոր պատերազմունս: Սրտիս
զօրեղանալս մեծ իմ, և հակառակեաց
ընդդէմ զարմանալ չարաց, այս
ինքն՝ ընդդէմ տաճարեան ան-
սպառնալեաց. զի * լինիցի խաղաղու- Սաղմ.
թիւն 'ի զօրութեան քում, և առատու- 121. 7
թիւն գանձութեան քոյ վերահասնի-
ցէ

ցի ըն դաւիթս սուրբս, այսինքն՝
Մարկ. ՚ի խռովմունս մարդուքս ։ * Հրա
4. 39 մայեա՛ հողմոց, և մրրկաց․ սաստեա
ալեացն, դադարեցո՛ց․ և հեռացոյ,
մի հնչեսցեն․ և եղիցի հանդարտու
թիւն մեծ ։
Սաղմ. 9. * Առաքեա՛ զլոյս քո, և զճշ
42. 3 մարտութիւն քո, զի ծագեսցեն
՚ի վերայ երկրի․ քանզի երկիր
եմ՛ ես ոչնչոյն, և թափուր, մինչ
լուսաւորեսցես զիս ։ Առաքեսցես
զշնորհս քո ՚ի վերուստ․ և զեղ ՚ի
սիրտ իմ զցօղ երկնային․ անեղեւ
զձուքս ջերմեռանդութեան, որ ՚ի
ռոգել զերեսս երկրի, որ ՚ի յա-
ռաջածել զպտուղս բարիս, և զբա
րեգործս ։ Վերացո՛ զմիտս ծան
րացեալս ՚ի բազմութենէ մեղաց,
և առ երկնայինս զբոլոր խոհս իմ
ուղղեա՛․ զի ճաշակեսցէ զքաղց
րութիւն վերնոյ երջանկութեան,
զատեսցի ՚ի խորհելոյ զաշխարհայինս ։
10. Յափշտակեա՛ զիս, և զեր
ծո՛ ՚ի ընտանեաց արարածոցս ան-
ունելեաց սիրաւորութեան․ քանզի ոչ
ինչ արարածական զբաղմանս իմ
ըմբռնէ հանդուրժանել, և լցու
ցանել կարէ ։ Առաւելեա՛ զիս
ընդ քեզ անբաժանելեաւ սիրով
կա

կատարեալ․ քանզի՝ դու միայն բաւ-
ական ես բաւ մխիթարելոյ, և առանց
քեզ անօգուտ են հանուրքն։

---

## Գլուխ ԻԴ։

### Յաղագս խորհելոյ հետաքննութեան Ներ խառնման կենաց այլոց

1․ Որդեակ՝ մի՛ լինիր հետա
քրքիր, և մի՛ սիրեր ըզ-
բաղմունս դատարկս։ Զի՞նչ Յովհ․
փոյթ է քեզ զայսմանէ, կամ զայն 21․22
մանէ, դու միայն հետևեաց ինձ։
Քանզի՝ զի՞նչ փոյթ է քեզ՝ թէ
որ այսպէս իցէ, կամ այնպէս․ և
թէ՝ որ խօսիցի, կամ առնիցէ, այս
պէս՝ կամ այնպէս։ Ո՛չ է քեզ
հարկ, զի վ՜ս այլոց պատասխանի
ցես, այլ հարկ է քեզ՝ զի վ՜ս քո
զննարս տացես։ Ընդէ՞ր ուրեմն
պատապիս։ Ահաւասիկ՝ ես զըս
նոսա ճանաչեմ, և զհամօրեսն, որք
լինին 'ի ներքոյ արեգական՝ տեսա
նեմ․ և գիտեմ, թէ՝ զի՞նչ իւրա
քանչիւրք իցէ, զի՞նչ խորհիցի,
զի՞նչ կամիցի, և առ ո՞ր վախճան
գնացք ուղղութեան նորին ձգեսցի։
Ինձ ուրեմն յանձնելի են հա
նուրքն

նուէրն, խնկ զոր մատուցեալ զքեզ
րն բարւոյ խաղաղութեան, և թող
տուր չարժամին չարեաց՝ որպէս
և կամիցի: Եկեսցէ ՚ի վերայ նր՝
զոր ինչ և տանիցէ, և առնիցէ.
փառք խորհէ զնա ոչ կարէ:

2. Մի՛ եղիցի քեզ փոյթ զշքոյ
անուանն մեծի, մի զբնաւութեան
նե բազմաց, և մի զառանձին սի
րելութենէ մարդկան: Քանզի
այսպիսիք ծնանին ցնդմունք, և
մթութիւնք մեծամեծք ՚ի սրտի:
Յօժարապէս խօսէի ընդ քեզ
զբանս իմ, և յայտնէի քեզ ըզ
Ղուկ. գաղտնիս, եթէ խնամ՝ գալս
12. 36 անձին զգուշապէս սպասէիր, և
ինձ զդուռն սրտի քոյոյ բանայիր:
Լեր նախապատրաստ, և հսկեա յա
ղօթս, խոնարհեցո խնկ զքեզ նա
մենայնում:

---

Գլուխ ԻԵ:

Վասն որոց աստէ հաստատուն խաղաղու-
թեան, և ճշմարիտ յառաջադիմու-
թեան կայանայ:

Յովհ. 1. ՈՐդեակ՝ ես խօսեցայ.
14. 27 Զխաղաղութիւն թո
ղում ձեզ, զխաղաղութիւն իմ

տամ ձեզ. ոչ որպէս աշխարհս տայ, տամ ես ձեզ։ Ամ որ ցանկայ խաղաղութեան. բայց ոչ ամ որ հոգայ զայն որ պատշաճին առ ճշմարիտ խաղաղութիւն։ Խաղաղութիւն իմ է ընդ խոնարհս, և ընդ հեզս սրտիւ։ Խաղաղութիւն քո եղիցի ի համբերութիւնս բազումս։ Եթէ լուիցես ինձ, և հետևիցիս ձայնի իմում, կարասցես զբազում խաղաղութեան վայելել։

2. Զինչ արարից ուրեմն։

3. Յամենայնում զգուշ լեր ի քեզ, թէ զինչ առնիցես, կամ զինչ ասիցես. և զբոլոր զխորհուրդ քո ուղղեա առ այն, զի ինձ միայնում հաճոյանայցես, և բաց ի նմանէ զոչ այլ ինչ խնդրեսցես, կամ խնդրիցես։ Այլ և զառնացուածս, կամ զասս այլոց մի անզգուշաբար դատիցես. և ի յիրս ոչ յանձնեալս քեզ մի պատառիր զիս. և այսպէս մարթ եղիցի քեզ, զի սակաւ ինչ կամ նուազապէս խռովեսցիս։ Քանզի ոչ զգալ երբէք զխռովութիւն ինչ, և ոչ կրել զնեղութիւն ինչ սրտի կամ մարմնոյ, ոչ է ներկայի կենցաղոյս, այլ կացութեան յաւիտենականի

յանդորրութն։ Մի՛ ուրեմն վարկանիցես՝ թէ գտեալ իցես զճշմարիտ խաղաղութիւն, եթէ ոչ ըղձայցես զծանրութիւն ինչ. և մի՛ յայնժամ համարիցես զբոլորն գոլ բարի, մինչ զոչ ինձ կրես զընդդիմութիւն. մի՛ վարկանիցես զայն ինչ գոլ կատարեալ, եթէ բնաւքն լինիցին ըստ քոյոց ըղձից։ Եւ մի՛ յայնժամ կարծիցես գոլ զքեզ մեծ ոմն, կամ սիրելի Այ, եթէ ըն մեծի իցես ջերմեռանդութեան, և քաղցրութեան. քանզի յայսպիսիս ոչ ճանաչի ճշմարիտ սիրողն առաքինութեան. և ոչ կայանայ յայսպիսիս՝ շահաւէտութիւն, և յառաջադիմութն մարդոյ։

4. Յորո՞ւմ ուրեմն Տր։

5. 'Ի յանձնելն զքեզ 'ի բոլորէ սրտէ քումմէ կամացն Աստուծոյ, ոչ խնդրելով զքոյն, ոչ ըն փոքունս, և ոչ ըն մեծամեծս, ոչ 'ի ժամանակի, և ոչ 'ի յաւիտենականութեան. մինչզի միով՝ և հանգիտիւ դիմաւ 'ի շնորհակալութիւ յարամնայցես, 'ի մէջ աջողութեանց՝ և անաջողութեանց, զամենայն ինչ թաթիւ հաւասարիւ կշռե

կշռելով։ Եւ եթէ լինիցիս այն քան հզօր, և երկայնամիտ յուսով, մինչզի 'ի նուաճագին ներքնոյ նոյ մխիթարութեան, առ 'ի ըմբերել ևս կարծրագունիցն՝ զսիրտ քո պատրաստիցես, և ոչ արդարացուցանիցես զքեզ, որ թէ զայսպիսիս, և զայսքանս ոչ էր ըմբռնն քեզ կրել. այլ զիս նմանեայն առբանադրութիւնս արդարացուցանիցես, և զանուն իմ առ գովիցես. յանժամ ըն Աչմերին, և յուղիղ Համապարծոյ խաղաղութեն շրջեսցիս, և եղիցի քեզ յոյս անտարակուսելի, թէ վերստին Հրճուանոց զերես իմ տեսանելոց իցես։ Իսկ եթէ առ կատարեալ քամահումն քոյոյ անձին ժամանիցես. գիտեա՛ զի յանժամ առաստութեամբ խաղաղութեան զմայլեսցիս, ըստ կարողութե քոյոյ պանդխտութեան։

Գ. Լուծ

## Գլուխ ԻԶ:

### Յաղագս գերազանցութեան ազատական մտաց, զոր մանաւանդ աղօթքն խո- նարհական, քան թէ ընթերցուած արդիւնաւորէ:

1. Տէր իմ, այս է գործ առն կատարելոյ, ոչ երբէք ՚ի դիտմանէ երկնայնոց թուլացուցանել զմիտս. և ՚ի մէջ բազմաց հոգոց կենցաղավարել իբր ան- հոգ, ոչ ըստ ապիրատութեան ընդ- արմացելոյ, այլ մանաւանդ առանձնաշնորհ- նութեամբ իւիք ազատականն մը- տաց, ոչ իմիք արարածոյ ապա- կարգիւ զգածմամբ սերտելով:

2. Աղերսեմ ՚ի քէն, ո՛վ ամենա- բարեգութ Տէր իմ, նախախնամեա՛ զիս ՚ի հոգոց այսորիկ կենցաղոյս, զի մի յաւէտ պատատեցայց. ՚ի բազ- մաց կարեաց մարմնոյ, զի մի ՚ի փափկութեանց յափշտակեցայց. և ՚ի բնաւից ընդդիմակացից հոգւոյն, զի մի ՚ի ձանձրութեանց ընկե- ցեալ տապալեցայց: Ո՛չ ասեմ յի- րաց այնցանէ, զորս[ ] փափաքէ բոլո- րով ըղձիւ աշխարհական ունայնու- թիւնն. այլ ՚ի թշուառութեանց, որք զհոգի ծառայի քո

հա

հաստատելոյ անձին մաքրականագու-
թեանն՝ զառաջնականսն ծանրա-
ցուցանէն, և յանդգնեցուցանէն. զի
մի՛ ՚ի յաղթութիւն հոգւոյն, որ
քանզի և ընդ նմին իցէ, մասնակից կա-
րողանայցէ։

3. ՈՎ ԱՃ իմ, քաղցրութիւն
անձնական լի, փափագելի ինձ ՚ի
գանձութիւն, զհնտոր մխիթա-
րութիւն մարմնոյ, որ ՚ի սիրոյն մեղ-
անչնականաց զիս ՚ի բաղձանքէ.
և նեղասնորէ նեղեալս իմեր բա-
րւոյ ընթերցականաց, առ իմաստ չարա-
ալես համրայց։ Ո՜վ յաղթահարեսցէ
զիս, ԱՃ իմ, մի յաղթահարեսցէ զիս
մարմինն, և աշխարհ. մի պատրեսցէ
զիս աշխարհ, և առ զփառք նորա.
մի սասանեցուցէ զիս ատամանց, և
խորամանկութիւն նորին։ Տուր
ինձ զօրութիւն ընդդիմանալ նո-
ցա. համբերութիւն անձնեաց, և
զհաստատութիւն յարատևելոյ։
Տուր ինձ փոխանակ հեշտաց
աշխարհի անուշութիւն, զծածու
քաղցրագործութեան քոյոյ հոգւոյդ, և
փոխանակ մարմնականին սիրոյ,
ներշնչեա ՚ի յիս զսէր քոյոյ անուանն։

4. Ահաւասիկ կերակուր, ըմպե-
լի, հանդերձ. և այլ կիրարկանե-
լիք

լեք, որք պատշաճին 'ի պահպանութեն մարմնոյն, են 'ի ծանրութիւն հոգւոյն ջերմեռանդի։ Շնորհեա՛ զայսպիսիս գարմանս բարեխառնապէս 'ի կիրարկանել, և ոչ 'ի նոսին՝ կարօտութ՟ սաստ կապուանիւ պատապիլ։ 'Ի բացձըղգել զնա՛մ ինչ՝ անպատեհ իմն է, քանզի բնութեն պահպանիլ պարտի․ իսկ բաղձալն աւելորդաց իրաց, և այնոցիկ, որք առաւել բերկրեցուցանեն, յօրինաց սրբոց արգելանի․ քանզի՝ այլապէս մարմինն ընդդէմ հոգւոյն անզգամի։ Աղաչեմ ('ի մէջ սոցա) ձեռն քո զիս ուղղեսցէ, և ուսուցանիցէ, զի մի եր ինչ աւելորդագոյն լինիցի։

---

## Գլուխ ԻԷ։

### Թէ սէրն առանձնական յամեցուցանէ յոյժ 'ի ծայրագունէ բարւոյ։

1. Որդեակ՝ պարտիս զքեզ բոլորովիմբ տալ փոխանակ բոլորին, և 'ի քեզ ինքեան ոչ ինչ գոլ։ Գիտեա՛՝ զի սէր քոյոյ անձին առաւել վնասէ քեզ, քան թէ՝ այլ իր ինչ աշխարհի։ Ըստ սիրոյ՝ և ըստ ըղձին, զոր 'ի կիրառ

կա

կամես խորհրդածել իր առաւել՝ կամ նուազ՝ քեզ առնենու։ Եթէ եղիցի սէր քո զուտ, և պարզ՝ և բարւոք կարգաւորեցեալ, եղիցիս ծառայ դերութեան իրաց։ Մի կամիր ցանկալ այնմ, զոր ոչ է պատեհ քեզ ունել. մի ունիցիս զայն, որ կարէ արգելուլ զքեզ, և զրկել յազատութենէ ներքնոյնոյ։ Զարմանք են, որ ոչ 'ի բոլոր յատակէ սրտի քոյ զքեզ ինձ յանձնես հանդերձ բնաւիւք, որոց ցանկալ կարես, կամ ունել։

2. Ընդէ՞ր մաշիս ունայնիւ տրտմութեամբ։ Ընդէ՞ր աշխատիս հոգովք անօգուտիւք։ Կաց ըստ բարեհաճութեան իմում, և ոչ կրեսցես երբէք պատուհաս։ Եթէ խնդրիցես զայս կամ զայն, և կամիցիս գոլ աստ, կամ անդ, վասն քոյոյ անդորրութեան, և առ 'ի գտանել մանաւանդագոյն զբօսնուանական հանգստութիւն. ոչ երբէք հանգչիցիս, և ոչ ազատեսցիս 'ի զբաղմանէ. քանզի՝ նմանեալ գտանիցի ինն պակասութիւն, և յամենայնում տեղւոջ եղիցի ոք. որ ընդդիմանայցէ։

3. Օգնէ ուրեմն ոչ իւրաքան-

չիւր

չեւր ինչ առատացեալ, կամ՛ բաղձա պատուիրեցեալ արտաքսաւոր, այլ մանաւանդ ջանացեալ՝ և արժաւորի հասանեցեալ ՚ի սրտէ։ Զոր ուսմունն դժուարէ արծաթոյ, և զխաւրթանութեանց, այլև զխոր մտնէ պատուոյ, և զորձէ ուսոյնի զանուժն խնամացեալ, որք մեանզամնդոյն անդամոյն ընդ աշխարհին։ Պտոյնինչ նաստատ զալ կարէ աւզին, եթէ նուաղելէ խոյս ձերբեռանդութեանն. և ոչ է յարանմանաց խաղաղութիւնն արտաղատաստ ներխնդրեցեալ, եթէ՛ թագաւոր իցէ ՚ի շնմարտէ հմմանէ կայութիւն սրտի, այսինքն՝ եթէ ոչ իցեն հաստատեցեալ ՚ի յիւր մտախել զքեզ կարեւս, այլ ոչ բարեդոյն յուզանելը։ Զի ՚ի ծածկին՝ և յաւնոնինին առթին, զանձիցես՝ յորմէ փախեւսր, և մանաւանդ զառաւել բարդոյնն։

ԱՂՕԹՔ ՀԱՆ ՄԱՔՐՈՒԹԵ ՍՐՏԻ, ՆԵՐՔԻ ՆԱԽԻՆԱՅ ԲՆԱԿՈՒԹԵԱՆ։

Կ. Հաստատեա զիս՝ ԱԾ իմ, ըստ Հեւ Հոգւոյն սրբոյ։

Տէր իմ զզօրութիւն բարձրաւբռութեան բառ նեբքին մարդոյն, և

և զմիտս իմ զարդարեսցէ 'ի բնութեանց մտաւորաց զգայականաց՝ և անձնաւորութեց · և մի՛ թողցէ 'ի զանազանից ըղձից խորհրդածութեանց իմոց, թէ խաւարին՝ և թէ մեծագոյնի · այլ ըն ծնաւն նմանեսցէ իւրում զանազանաց, և զիս յանձնեսցէ ընդ նորին գալ անցանելոյ · քանզի՛ ոչ ինչ յաւիտենից 'ի ներքոյ արեգականն, որ ՚ամ ինչ ունայնութիւն է, Ժող.
և տառապանք հոգւոյ։ Ո՜հ թէ որ 12. 8
պէս խոհականն է այն, որ զայսպիսիս յարմարեսցէ ։

5 · Տէր իմ ամէն, զխնամութիւն երկնայինն, զի ուսանիցիմ զերկրաւոր զմեծ ինչ խնդրել՝ և զտանել, զերկրաւոր զմեծ ինչ խնամել՝ և սիրել, և զայլս՝ բառ կարգ զաղքատթէ ըստ խոնարհութեան, բառ տրամ էն, խնամել։ Տէր իմ իմաստութեամբ խորհրդոյ յանձնէ շնորհաբերութեամբ, և ընկերութեան ատանել ընդ խնամողութեան · քանզի այս է մեծ խնամութիւն, ոչ շարժելն յամէն հողմոց բանից, և ոչ ընկենլն ունելովիւ շարադրեա հաստատութեան բնութի · ( յաւիտենականի ) զի այս պէս տեսանելով զհանդարտ, ձեռ կէռծ առաջնորդեալ ։

## Գլուխ ԻԸ:

### Ընդդէմ լեզուաց բամբասողաց:

1. ՈՐդեակ՝ մի՛ զայրանայցես, եթէ ոմանք զքէն զգայցեն չարապէս. և ասիցեն, զոր ոչ լուիցես յօժարաբար: Դու զչարագոյնս զգալ պարտիս զքէն, և զոչ ոք հաւատալ քան զքեզ տկարագոյն: Եթէ շրջիցիս ներքնապէս, մի այնքան կշռիցես զբանս թռուցեալս: Ոչ է դոյզն ինչ
Ամոս * իմաստութիւն, լռելն 'ի ժամանա-
5·13 կի չարի, և 'ի ներքուստ դառնալն
առ իս. և ոչ մարդկային աղմկիլն
դատողութեամբ:

2. Մի՛ լինիցի խաղաղութիւն քո 'ի բերանս մարդկան. քանզի՝ թէ բարեպէս, և թէ չարապէս մեկնիցեն զքեզ, ոչ վասն այնորիկ եղիցիս այլ ինչ մարդ: Ո՞ւր է ճշմարիտ խաղաղութիւն, և ճշմարիտ փառք: Ո՞չ ապաքէն 'ի յիս: Ուստի որ ոչ բաղձայ հաճոյանալ մարդկան, և որ ոչ երկնչի յանհաճոյանալոյ, մեծաւ զմայլեսցի խաղաղութեամբ: 'Ի սիրոյ անկարգէ, և յերկիւղէ ունայնոյ՝ ծնանի ամենայն անհանդարտութիւն սրտի, և տարածումն զգայութեանց:

Գ. Բ

## Գլուխ ԻԹ.

### Որդիաբար 'ի մէջ վշտագնութեան խորհուրդ աղօթէ առ Աստուած, և բարեբանէ։

1. Եղիցի * անուն քո՛ Տէր, Սաղմ.
բարեբանեցեալ 'ի յաւ- 71. 17.
իտեան, որ թոյլ ետուր այսմիկ
փորձութե, և վշտագնութեան
գալ 'ի վերայ իմ։ Ո՛չ է ինձ մարթ
փախչել յայսմանէ, այլ հարկ է, զի
դիմեցից առ քեզ. որպէս զի օգնեսցես
ինձ, և 'ի բարիս զնոյնս դարձու-
ցանիցես. Տէ՛ր իմ, նարդեանս եմ
'ի վշտագնութեան, և ոչ է բարւ
հանգոյցից խղճիս, այլ յոյժ տագնա-
պիմ 'ի ներքոյս յախտէ։ Զի՞նչ
ասացից այժմ՝ ով Հայր իմ սի-
րելի։ Ըմբռնեցայ 'ի մէջ նեղու-
թեանց։ * Կեցո՛ զիս 'ի ժամու Յովհ.
յայսմիկ։ Եւ վա՛ այտրեն ժամու 12. 27.
եկից 'ի ժամու այս, զի դու փա-
ռաւորեսցիս, մինչ յաւէտ խոնարհ
եղեցիմ, և 'ի ձեռն քո ազատեցիմ։
* Հաճեսցի՛ ուրեմն Տէ՛ր զերծու- Սաղմ.
ցանել զիս. քանզի ես աղքատ դա- 39. 14.
րեմ՝ զինչ կարեմ առնել, և յո՛ կա-
րեմ ընթանալ առանց քեզ։
Տո՛ւր ինձ՝ տէ՛ր իմ, ևս յայսմ նուագ

գի

դի զհամբերութիւն։ Օգնեա՛ լինել ած իմ, զի՝ ողորմեսցիս ծանրանակցաց ցեմ, ոչ երկեւոյց։

Ը. Եւ այժմ, 'ի մէջ այսոցիկ, զի՞նչ ասասցեմ։ Տէր իմ, եղիցի կամք քո։ Բարերարեա արդիւնաւորեցուցես վշտանեկին և ծանրանող։ Վասն է ուրեմն, զի ասասցեմ. և երանելի թէ համբերութիւն, մին չև անցանիցէ մերձենն այս, և բարեդըյն լինիցի։ Բայց հայրն է ամենակարող ձեռն քո, առ 'ի բառնալ յինէն եւ զայս փորձութիւն, և առմեղանել զհետոյ նորին, զի մի բընաւին առաքանեկիցիմ. բայց որում 'ի նախնումն բամբիչս արարեր ԺԵ լա, ԱՏ իմ՝ և զթութիւն իմ։ Եւողորմն է լինել այս գժուարողոյն,
Սաղմ. 76. 11 այլագան է աջոյ զիւրաւոյն՝ այս նորոգումն աջոյն Բարձրելոյ։

---

Գլուխ ԺԸ։

Յաղագս խորհրդոց պտղոյն ԱՃայ ի. եւ յաղագս վերադարձման ձեռին։

1. Ողջունէ ես եմ՝ որ քանքա լերող յանուր նեղութեամ։ Եւ է առ իս, մինչ ոչ բարելոյս աչքայցի քեզ։ Այս է՝ որ մա

մանաւանդ առաւելս արգելու զմիտ
թարութիւնն երկնայինն, զի յամ
բառնաս զարգասաւորութիւնս զքեզ առ
աղօթս։ Քանզի՝ յառաջ քան զթէ
զլուսաւորես ազնուացուցես զնա, խոն
հես՝ ներ ամբարտաւանս զմտաւորութեան
նի, և ստանաս զքեզ իբրեւ սպասաւ
որ, վասն որոյ՝ ընտրեալն աղխա
նաց օգնեն, մինչեւ խնդրանօքս·
զի ես եմ՝ որ փրկեմ զյուսա Սղ.
ցեալս 'ի յիս· և ոչ է արտաքոյ 16. 7
իմ հզօրագոյն օգնութիւն, ոչ օգ
տակար խորհուրդ, և ոչ դեղ հաս
տատուն։ Բայց այժմ՝ առեալ
յել հոգւով զկնի մրրկին, զօրա
ցիր 'ի մէջ լուսոյ ողորմութեանց
իմոց· զի մերձ եմ (ասէ Տէր) առ
'ի կազդուրել զբնաւս, ոչ միայն
ամբողջապէս, այլեւ առատապէս
և կատարելապէս։

2. Միթէ իցէ ինձ իր ինչ դժ Երե.
ուարին, կամ թէ՝ նման իցեմ 32. 17
ես ասողի, և ոչ առնողի։ Ո՞ւր է
հաւատ քո։ Կաց հաստատապէս՝
և յարատեւապէս։ Լե՛ր երկայնա
միտ, և այր զօրութեան. եկեսցէ
քեզ մխիթարութիւն 'ի ժամանա
կի իւրում։ Սպասեա՛ ինձ, սպա
սեա՛. ես եկից՝ և հոգացից զքեզ։

փոր

փորձութիւն է՝ որ զքեզ վշտանկէ·
և անտանի երկիւղ, որ զքեզ ահաբե-
կէ: Զի՞նչ օգուտ է զբազումն
զիրաց հանդերձելոց ներդիպա-
2 Կոր՟ն կանաց, եթէ ոչ * զտրտմութիւն
2. 3 'ի վերայ տրտմութեան ունիցիս:
Մատթ * Շատ է աւուրն չար իւր: 'Ի
6. 34 զուր է, և անօգուտ ինչ վ՟ն ապառ-
նեաց աղմկել՝ կամ խայտալ, որք
գուցէ՝ թէ ոչ երբէք աջողիցին:
3. Այլ մարդկային ինչ է
այդպիսիք խաբկանօք կատակիլ·
և է նշան փոքրահոգութեան՝ այդ-
քան թեթևաբար քարշիլ 'ի հա-
մոզմանց թշնամւոյն: Քանզի ոչ է
նմա փոյթ, թէ արդեօք հաւաս-
տիւք՝ կամ խաբէութեամբք ծի-
ծաղիցի զքև, և պատրիցէ· որ
դեօք սիրով ներկայից, կամ երկիւ-
ղիւ ապառնեաց տապալեսցէ զքեզ:
Յով՟հ * Մի՛ խռովեսցի սիրտ քո,
14. 27 և մի՛ զանգիտեսցէ: Հաւատա՛ յիս,
և յուսա՛ յողորմութիւն իմ: Մինչ
վարկանիս զքեզ հեռացեալ յի-
նէն, մերձ եմ ես բազմիցս: Մինչ
համարիս, թէ կորուսեալ իցէ
զբոլորն, յայնժամ մերձ է շահաւէ-
տութիւն մեծ արդիւնաւորման:
Ո՛չ է կորուսեալ բոլորն, մինչ հան

դի

գիտցի ինչ ներհակութիւն: Ո՛չ
պարտիս դառնալ ըստ ներկային
զգայմանն, և ոչ ներյենուլ, և ըն-
դունիլ զծանրութիւն իմն՝ յիւրա-
քանչիւրմէ ուստեքէ առեկեալ,
երբ թէ 'ի բայբարձեալ իցէ բոլոր
յոյս արտաքերծման:

4. Մի կարծիցես զքեզ ընդու-
նի 'ի բազթողեցեալ, թէև զժա-
մանակ ինչ առաքիցեմ առ քեզ
զվշտագնութիւն, և կամ 'ի բայ-
բառնայցեմ զցանկալին մխիթա-
րութի. զի այսպէս՝ պարտ է ձե-
ակել առ արքայութիւնն երկնից:
Եւ այս թարց երկբայութե յառ-
էա վայելուչ է քեզ, և այլոց իմոց
ծառայից, զի զարթուցանիցէք
յընդդիմադարձութեանց, քան
թէ՝ զամ ինչ ըստ համձոյից ձերոց
ունիցիք: Ես ծանեայ զխորհուր-
դըս դաղանիս, որ յոյժ հարկաւոր
է մի կեցութեան քոյ, զի երբեմն
թողանիցիս առանց քաղցրութե.
մի գուցէ վերանայցես յաջողմանս
բարիս, և քեզ իւքեան հաճոյա-
նալ կամիցիս յայնմիկ որ ոչդ ես:
Զոր առեալ եմ, կարեմ 'ի բաց
բառնալ. և վերստին շնորհել,
մինչ հաճոյ թուիցի ինձ:

5. Մինչ

5. Միթէ ասացեալ, խմէ. և մինչ
՚ի բազբասանսն, ոչ գտցէ բաւա-
Յակոբ նան. զի խմէ ամ առ բարի. և
1. 17 ամ սրբոյն կատարելոյ: Եթէ
յղեցեալ առ քեզ զծանրութիւն ինչ,
կամ զընդդիմամարտութիւն, մի
խռովիցիս, և մի բեկանիցի սիրտ
քո. զի ես փութով զնոյն փարա-
տել կարեմ, և փոխարկել զամե-
նայն ծանրութիւն ՚ի խնդութիւն:
Բայց ամենայն արդար եմ, և յամ-
գովաբանելի, մինչ այպաղես առ-
նեմ ընդ քեզ:

6. Եթէ ողջամտես խմանայցես,
և ճշմարտութեան նայիցես, ոչ
պարտիս երբէք այսպէս ընդդիմա-
գործութեանց աղագաւ վհատա-
կես տրտմել, այլ յաւէտ խնդալ,
և գոհանալ. մանաւանդ զայն
Յոբ քեզ մեծագոյն վարկանել խնդու-
6. 10 թիւն, որ ՚ի վշտանելեան զքեզ
Յովհ. ցաւօք՝ ոչ անխնայեցեմ քեզ: Որ-
15. 9 պէս սիրեաց զիս Հայր, և ես սիրեմ
զձեզ, ասացի սիրելեաց իմոց աշա-
կերտաց. զորս խրատու ոչ առաքե-
ցի առ խնդութիւնս ժամանակաւորս,
այլ առ մեծամեծ մենամարտութիւ-
նս. ոչ առ պատիւս, այլ առ քամահ-
հանս. ոչ առ դատարկութիւնս,
այլ

այլ առ աչխատանս․ ոչ առ հան
գստութիւն, այլ ՚ի յամենայն պատգամե
րութիւն ընծայմիերութիւն: Յիշեա՛
որդեակ, զայսմանիկ բանս:

---

Գլուխ ԼԶ:

Յաղագս ընդունայնական բնաւից մարդ
կանց, դի դատողացն խորհուրդ
գտանել:

1. Որդի՛ իմ՝ հաստատեա՛ զսիրտ քո անդրդուելի ընդ
ելս մեծարութեան չեր
կի, եթէ արժան իցէ քեզ առ այն
ժամանակ, որ՝ ոչինչ յառաջադէմու
թեան կարասցես զմա արդարև լ:
Յանցի՛ զի՛ արդեան ժամանակ արդե
լունքն իրէ քեզ, ոչ կարեմ առ
ատարկ առ քեզ սրտանլ: Բայց
ձայն ընդունելութեան առ քեզ ար
լսմանլ այն՝ որ ասէր․ Ո՛ապէ քեզ
զիմա՛ թէրբն զաղանդակ, և թը
ութեայց, և յարատեւանեայց: Սաղ. 54. 7
Զի՛ ոչ է յանդարդութեան քան զանն
մարդոյ: Եւ զի՛ ոչ աղատեաղյն
քան զայն, որ ոչ բարձեալ խնդր ՚ի
վերայ երկրի: Պատճ է ուրեմն
գերապանցել զամենայն ըն
դէմս, և լրել զանձն իւր կատա
րելապէս՝ և յարմարութեան մատոյ
ցոյց:

կալ, և տեսանել զերկն՝ զկերպարանս համայնից զոչ ինչ նմանութիւն ունիլ ընդ առեղծուածոց: Եւ թէ որ ոչ իցէ 'ի բնութեանց առեղծուածոց քաջ զերծեցեալ, ոչ կարէ առ Հասկանալս նկատել առ ծածկեալս: Եւ մի այնորիկ առկայք գտանին մերձակայութեք, զի առկայք են, որք զխառն զինքեանս 'ի կերպարանաց, և յառեղծականաց ըստ այլս ուրոյն կացուցանել:

2. Ըստ այս խնդրի մեծ խնճորս, որ առնմանացուցէ զմիտ, և 'ի մերայս ինքեան յաղթահարեսցէ: Եւ եթէ որ ոչ իցէ մերձեցեալ մտօք, և սպառեցեալ 'ի բնուից առեղծուածոց, մտաւորեցեալ խոկ ընդ այն, զոր ինչ և գիտիցէ, զոր ինչ և ունիցի, ոչ է համարելի մեծ խնի: Զժամանակս բազումս նասա եղիցի, և յորսայսեցեալ կայցէ այն, որ համարի զօղ զայլ ինչ մեծագոյն, քան զմի միայն՝ զան յափ, և զյառաջադրեալ բարին: Եւ որ ինչ ոչ է ԱԾ, է ոչ ինչ, և առ ոչ ինչ համարելի է: Մեծ է զանազանութիւն 'ի մէջ իմաստութեան առ ըստանորեցելոյ, և ընդ մեռանդի, և 'ի մէջ գիտութեան եկե

եկեղեցականին գրոց աշակերտի, և ուսումնասիրի ։ Պատշաճական գոյն է վարդապետութիւնն որ 'ի վերուստ յածայնոյ ներհեղմանէ ալեղայ, քան զայն, որ մարդկայ նով ուշիմութեամբ աշխատապէս ուսուցանի ։

3. Գտանին բազումք, որք բաղձան վերանկատման, բայց զայնս՝ որք ախտացեալն առ այն, ոչ փութան 'ի կիրարկանել ։ Եւ դոյ արդեւլումն մեծ, զի 'ի նշանս՝ և յիրս զգալիս զկայ առ նումք, և զկատարելոյ մնհացուց մանէ ախտից ասկաւնինչ հոգամք ։ Ո՛չ գիտեմ, թէ զի՛նչ իցէ՝ կամ յորդիւն հոգւոյ առանձնորդեցինք, և թէ առ ինչ գիտիցեմք մեզ, որք հոգևորք գոլ ասացեալք. զի զայնս աշխատանս, և զառատադոյն հոգաբարձութիւն ամեն անդասուցանց՝ և խոստեցաց 'ի կիրարկանելմք, և զներքնայնոց մերոց հոգւոյ երրեք լինայետ ժողովեցելով զգայութեան ներփնորհինք ։

4. Ո՛հ ցաւոյս. վաղվաղակի ըղ կնի փոքու վերամտողմոն որ տայքս պայթուցանինք. և զառա մեր ներքնաւ արտաքիննութեան ընաւ

ոչ

ոչ կշռեսցէ։ Թէ ուր արդեօք ձը
գիցին մերքն զգամանակս, ոչ ան
ղեկանամք. և թէ որպիսի տեղւոյ
լիցին, ոչ երբեք այրամք։ Քանզի
Յայտ. ՚Նոյն մեզ զի առաջնորդեսցէ զնոսա
7. 17 արար ի կեր, և վասն այսորիկ հե
տեւիւր հեղեղն ջուրց մեծ։ Իւ
րաքանչիւր խղճն մեր ներքին առա
կանեցեալ, հայրն է, զի և ներքոյ
ծածկութեան հեռանեցելոյ, որ է նշան
չարաչարութեան ներքինոյ կարա
գութեան, ապաշխարեսցի։ ՚Ի սրտէ
մերոյ յառաջեալ ի պատուէ բարկ
կենաց։

5. Որպէս որ արարեալ իցէ, խնդրի. բայց թէ որպէսն առա
ջինութիւն անցից ոչ այլպէս հա
մառօտացեալ ասէ։ Իսկ թէ որ
լինի զօրեղ, փառաւոր, գեղեցիկ,
ուժով, կամ բարի գործ, բարի եր
գել, բարի գործունէոյ, հետա
ւոր. բայց թէ՝ որպէս առաւել իցէ
հոգւով, որպէս համբերող՝ և հեզ,
որպէս առաքինի՝ և ներքսագոյն
տակ, ՚ի բարձրոյ լոյս։ Բնութիւն
առ սրբութիւն մարդոյն վերանալ
ոչ, խոկ շնորհն առ ներքինս զինքն
գործունէութեան։ Նա յանձանձայլս
պատուէր, խոկ առ յայտ յԱԾ՝ զի
մի խոտեսցի։ Գ. լուի

## Գլուխ. ԼԹ։

### Յաղագս ՚ի բաժանարարութեան անձին նո՛րա ՚ի բնաւից պարապմանց։

1. Որդեակ՝ ոչ կարես ստանալ զկատարեալ ազատութիւն, եթէ ոչ բոլորովին ուրանայցես զքեզ։ Զի կապանաւորեցեալք են բնաւք նշմանձանք, և անձնասէրք, ագահք, հետաքրքիրք, վարարանդեք, խնդրողք միշտ փափկութեան՝ և ոչ այնր, որ ինչ Յիսուսի Քրիստոսի է. որք թէև բազմիցս զիր ինչ կեղծիցեն, և շարադրիցեն, սակայն ոչ կայցէ հաստատուն։ Քանզի կորիցէ բնաւն, որ ոչ յԱյ ծնաւն։ Ունի կալ բեղ զայս համառօտ, և զկատարեալ բանս. թող զամն, և գտցես զհանգիստն. լքեա զցանկութիւն, և գտցես զհանդարտութիւն։ Զայս միտք քով առ ձեռն. և մինչ լցուցանիցես, զբնաւն խնացես։

2. Տէր իմ, այդ ոչ է գործ միոյ աւուր, և ոչ կատակ մանկանց. քանզի՝ նոյնպէս համառօտութեան ներբովանդակի ամենայն կատա

րե

քեւլութիւն կրօնաւորաց ։

3. Որդեակ՝ ոչ պարտիս ընդոստնուլ, և ոչ վհատիլ, լսելով զճաղս հասարակաց, այլ յաւէտ առվեհագոյնս առաձգիլ, և տակատակաւ ըստ ըղձից քոց առ այնոսիկ փութալ։ Վա՜յ թէ քեզ լեալ էր այս, և առ այս էիր ժամանեալ, զի ոչ գոյիր անձնասէր, այլ ըստ նշմարման իմում զատուցեալ՝ կենցաղավարէիր, և ըստ ակնարկութեան Հօր իմոյ, զոր քեզ յառաջադրեցի։ յայնժամ ինձ յոյժ հաճոյ նայիր, և բոլոր կեանն քո ըստ խընդութեան, և ըստ խաղաղութեան անցանէր ։ Դեռևս զբազում ինչ ունիս առ ի բացթողուլ։ զորս եթէ ոչ ամբողջապէս ինձ յանձնիցես, ոչ ստանայցես՝ որում բաղ
Յայտն. ձաս ։ * Համոզեմ քեզ գնել յինէն
3. 18 զոսկի հրացեալ, զի ճոխանայցես, այսինքն, զերկնային իմաստութի, որ զբնաւ ստորնայինս առ ոտս արկանէ։ Յետադրեա՛ զերկրային իմաստութի, և զբնաւ մարդկային, և զանձնական հաճոյութիւնս։

4. Ասացի՝ կարևոր գոլ քեզ գնել զիրս խոտանս, փոխանակ

աղ

ամուէից, և գերազանցից, 'ի յերա
մարդկայինս: Քանզի՝ յոյժ քանա
հեցելոյ, և նուաստ, մտաւացմանս
իսկ աւանդեցելոյ տեսանի, ճշմա
րիտ իմաստութիւնն երկնային:
Ո՛չ է իմաստուն, որ զվեհագոյնս
խորհի զինքենէ, և ոչ է արժանի
մեծապարգութեն՝ որ զնոյն իմաս
տութիւնն խնդրէ 'ի յերկրէ:
Բազումք են՝ որք զնոյնն բերա
նովլ քարոզեն, բայց վարուք հե
ռաւէս տարաձայնին: Իսկ նինքն
իմաստութիւնն է * մեծագին իմն Մատթ
մարգարիտ թաքուցեալ 'ի բազմաց: 13. 46

---

Գլուխ ԼԳ:

Յաղագս անհաստատութեան սրտի, և
դիտաւորութեան վախճանականի ունե
լոյ առ ԱԾ:

1. Որդեակ՝ մի հաւատայցես
քում ներգործութեան
ներկայականի, զի վաղվաղակի փո
խարկիլ կարէ 'ի յայլ: Որքան և
ապրեսցիս, թէև ակամայ, ենթա
կայ ես փոփոխութեանց. մինչ զի՝
երբեմն ուրախ, և երբեմն տըր
տում. երբեմն խաղաղ, և երբեմն
վրդովեցեալ. մերթ՝ առաքինի,
մերթ

մերթ՝ վատթար. մերթ՝ ուսումնա-
սէր, մերթ՝ ապշեցեալ. մերթ՝
ծանր, և մերթ՝ թեթև գտանի
ցիս։ Բայց հաստատուն մնայ 'ի
մերում այսպիսիս խնամատածն, և բա-
րեպաշտ հաւան հոգւով, ոչ գիտե-
լով թէ՝ զի՞նչ դժուարեսցէ, յինքեան
կամ թէ՝ յորմէ կողմանէ ընծայէ
հոգին անհաստատութեն. այլ թէ՝
բոլոր գիտութիւն նորին մի-
այն առ պարտաւորն, և առ բնա-
կին ժամանակին վախճան։ Քանզի
այսպէս կարասցէ որ մնասցես, և
նոյնպէս անդրդուելի իսկ յարա-
մնալ զոտիս ակնածս գիտու-
թեան. 'ի մէջ այսպիսեաց զանազա-
նից գիտութեանց առանց լքանելոյ
անձնւով զնոյն առ իս ուղղեցելոյ։
2. Բայց՝ որպէս զատուցեալն է անձն
գիտութեան, այնպէս անդր
դառնալես ընթանալ 'ի մէջ այլ ճանաչ-
քից։ Սակայն ըն բազումս մրթա-
նայ և ասանց զյամն գիտակնութեան,
առ գիտելով խաչին յիշս զոճօր
ձայնս հանդերձեցելոյ։ Քանզի
հոգւու գտանի որ բոլորովին ա-
զատ, առնն ընծի առանձնականի
աշխատութեանն։ Այսպէս հրեշտա-
կերպեանն ելանէր էին 'ի բերանն

ոյ՝ առամարթայ, և մարխամ. ոչ
միայն վա Յն, այլ և՝ զղաղար Յայտ.
տեսանիցեն։ Մարթելի է ուրեմն 12. 9
ակն գիտաւորութեան, զի լցէ
պարզ՝ և ուղիղ, և բացյայլոց ըը
նաւից զանազանից միջնորդաց,
ու.խս ուղղելի։

---

## Գլուխ ԼԷ։

Թէ որպէս պէտք է ճանաչել զօրու
’ի վերայ պահ իւր, ևնանննան։

1. Ո՛ Հանապազ Ած իմ, և
ամենայն իմոց։ Զինչ
առաւել կամիմ, և զի՛նչ երջանի
կագոյն բաղձալ կարեմ։ Ո՛ համեղ՝
և քաղցր բանդ. բայց սիրողի ըղ
բան՝ այլ ոչ զաշխարհ, և ոչ զայնս,
որք յաշխարհի են։ Ած իմ, և
ամ իմոց։ Իմացողին բաւականա
ցէս ասացեալք. և վայելուչ է սի
րողին՝ առէջ կրկնել զնոյն։
Յու իրամէն՝ մինչ ներկայ ես դու,
վայելուչ է ամ իմոց. բայց մինչ ’ի
բացեայ ես, զզուելիք են համայնք։
Դու տաս սրտի զհանդարտու
թիւն, և զխաղաղութիւն մեծ,
զխնդութին խոկ բերկրողական։
Դու առնես՝ զի զգայցեմք բա

բուրք զհամայնից, և գոլարմնիցեմք զքեզ լսոս ամի: Ո՛չ ինչ է՛ որ կարիցէ զժամանակ ինչ թարց քեզ համբերանալ. բայց թէ՛ պիտոյանայցէ, զի իր ինչ իցէ ախորժելի, և բարեհամ, պարտ է՛ զի քոյդ շնորհ առդուցէ, և համեմա քոյդ իմաստութեան համեմիցի:

2. Որ զքեզ ճանաչէ, զի՞նչ է, զոր ոչ ճանաչիցէ ուղղապէս: Եւ որ զքեզ ոչ ճանաչէ, զի՞նչ է որ նմա վայելուչ զոլ կարիցէ: Բայց նանայլն յիմաստութեան քում իմաստունք այսորիկ աշխարհի, և որք լսոս մարմնոյ իմանան. քանզի անդ ունայնութիւն բազում, իսկ աստ մահ գտանի: Բայց՝ որք քամահամաք կենցաղականաց, և մահացուցմամբ մարմնոյ՝ հետևին քեզ, իրաւի իմաստունք զոլ ճանաչին. զի յունայնութեան առ ճշմարտութիւնն, 'ի մարմնականութենէ առ հոգեկանութիւն անդրաբերին: Այսոքիկ են, որք ճաշակեն զքեզ, և որ ինչ բարւոյ 'ի լաստեղծուածս գտանի, զբոլորն մեբարերեն 'ի զովութիւն կերպազին ցնոյնս: Անման է ամենայն, և յայժ անմնման համեղութեան արեղ

ծո

ծողին, և ստեղծականաց. յաւի-
տենականութեանն, և ժամանա-
կականի. լուսոյն անստեղծի, և լու-
սոյն լուսաւորեցելոյ:

3. Ո՛վ լոյս մշտնջենաւոր, գե-
րազանցող բնաւից ստեղծականաց
լուսոց. * Փայլեա՛ զփայլատակումն Սաղմ.
քոյ ՚ի վերուստ, զթափանցօղս 143. 6
ընդ բնաւ խորս սրտի իմոյ: Սուր-
բեա՛, ուրախացո՛, պայծառացո՛, և
կենդանացո՛ զհոգի իմ, հանդերձ
զօրութեամբ նորին, առ ՚ի ներյե-
նուլ քեզ ՚ի հրճուականս ափշու-
թիւնս: Ո՞հ թէ յորժամ՞ եկեսցէ
ժամն այս երանելի, և անձկալի,
զի քոյով յագեցուցանիցես զիս
ներկայութեամբ, և լինիցիս ինձ ամ՛ յա-
մենայնում: Մինչ առ կատարին այս
ոչ է տրեցեալ, խնդութիւն իմ ոչ
է լրացեալ: Ո՛հ ցաւոյս, զի դեռ
ևս հին մարդն կենդանի է ներ յիս,
ոչ է բոլորին խաչեցեալ, ոչ ես կա-
տարելապէս մեռեալ: * Դեռ ևս Գաղ.
ցանկայ ուժգնապէս ընդդէմ հո- 5. 17
գւոյս, շարժելով պատերազմ ան-
դատական, և ոչ է անդորրութիւն
յիշխանութեն հոգւոյ իմում:

4. Բայց * դու որ տիրես զօրու- Սաղմ.
թեն ծովու, և զշարժումն ալեաց 88. 10
նո

նորա ցածուցանես, Արի, և օգ-
Սաղմ. նեա ինձ: * Ցրուեա զհեթանոսս՝
67. 31 որք կամին զպատերազմ, և խորտա-
կեա զնոսա զօրութեամբ քով: Ցոյց
ինձ, մաղթեմ 'ի քեն՝ զմեծամեծս
քո, և փառաւորեսցի աջ քո. զի
ոչ է ինձ այլ ինչ յոյս, և ոչ տեղի
ապաւինի, բայց 'ի քեն՝ Տէր իմ,
և Աստուած իմ:

---

## Գլուխ ԼԵ:

### ԹԷ ՈՉ ԻՑԷ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ 'Ի ՓՈՐՁՈՒ-ԹԵԱՆՑ 'Ի ԿԵՆՑԱՂՈՒՄ ԱՅՍՄԻԿ:

1. Որդեակ՝ ոչ երբեք գոցես
զապահովութիւն՝ նոյն
միկ կենցաղումս. այլ՝ որքան ապ-
րեսցիս, զզէնս հոգեւորս ունիլ
պարտիս: Շրջիս 'ի մէջ թշնա-
մեաց, որք յաջմէ և յահեկէ մար-
տնչին ընդ քեզ: Արդ՝ եթէ ոչ
'ի կիրարկանիցես յամենայն կող-
Եփես. մանց * զվահանն համբերութեան,
6. 16 ոչ մնասցես ընդ երկար ժամանակ
թարց խոցի վիրի: Այլև, եթէ
ոչ դնիցես զսիրտ քո սեւեռապէս
'ի յիս, զկամս հաճոյութեան կրելոյ
զամենայն յաղագս իմ, ոչ կարաս-
ցես ընդդիմել խորշակի այսմիկ, և
ոչ

ոչ ժամանել 'ի պտուղս երանելեաց
նոցին: Պարտ է ուրեմն քեզ անձա
նել բաժանեալս ընդ ամ ինչ, և հզօ
րիւ ձեռամբ զինել հակառակ ընդ-
դիմամարտից: *Քանզի՝ * յաղթօ Տեսլ.
ղին շնորհի մանանայ, և թմբրեցե 2. 17
լոյն թողանի թշուառութիւն մեծ:

2. Եթէ խնդրես հանգստենիկ կեն
ցաղում զհանգստութիւն, զի արդ
ժամանեսցես յայնժամ առ մշտըն
ջենաւորն յարահանգստութիւն:
Մի խնդրեր զքեզ առ առաւել
հանգստութիւն, բայց առ առաւ
ել համբերութիւն: Խնդրեա
զճշմարիտ խաղաղութիւն, ոչ 'ի
երկրի, այլ 'ի յերկինս. ոչ 'ի մար
դիկ, կամ 'յայլ արարածս, այլ
ի միայնում յԱստուածում: Վասն սի
րոյն քո յօժարիս զքեզ ընծայել յօ
ժարապէս ենթարկանել. այսինքն
աշխատանաց, և ցաւոց. * փորձու 2, Կոր.
թեանց, և վշտակրութեանց. նեղու 8. 12
թեանց, և կարօտութեանց. հիւան
դութեանց, և զրպարտութեանց.
ընդդիմախօսութեանց, և յանդի
մանութեանց. խոնարհութեանց,
և պատկառութեանց. նախատանաց,
և բամբասանաց: Այսոքիկ օգնեն
առ առաքինութիւն. այսոքիկ
զզե

զդեռավարժս փորձեն ծառայս
Քո. այսօրէկ յօրինեն զերկնային
պսակն: Ես հատուցից զվարձս
յաւխտենականս փոխանակ կար
ճառօտի աշխատութեան, և զանզրաւ
փառս, փոխանակ անցաւորաց
պատկառանաց:

3. Կարծես դու, թէ ունիցիս
միշտ ըստ քոյոյ հաճոյութեան զմխի
թարութիւնս հոգեկանս: Ծա
ռայքն իմ ոչ գտին միշտ զայսպի
սիսս, այլ զբազում ծանրութիւնս,
և զզանազան փորձութիւնս, զմեծա
մեծս իսկ անմխիթարութիւնս:
Բայց համբերութեամբ ենթակրեցին
զինքեանս նամենայնում, և առաւ
ել յուսացան յԱծ, քանթէ յին
Հռոմ քեանս. գիտելով, զի * ոչ են համ
Ը. 18 արժանիք չարչարանք այսորիկ ժա
մանակի, առ՚ի յարդիւնաւորու
թեան հանդերձելոցն փառաց: Կա
միս փութանակի ունել զայն, զոր
բազումք զկնի բազմաց արտասու
աց, և մեծամեծաց աշխատանաց
Սաղմ հազիւ առառացան: * Համբերեա Տն,
26. 14 քաջալերեա՛ց, և զօրասցի. մի յու
սահատիր, և մի լքանիր. այլ զհո
գի, և զմարմին քո պատրաստեա յա
ռամենայնս վն փառացն Այ: Ես
հա

հաստատեցից քեզ լիապէս. եղէց ընդ
քեզ ընդ համայն նեղութիւնս:

## Գլուխ ԼԶ.

### Ընդդէմ ունայնից դատողութեանց մարդկան:

1. Որդեակ՝ ընկեա՛ զմիտս
քո հաստատապէս ՚ի յիս,
և ՚ի մարդկային դատողութենէ
մի՛ զանգիտեսցես, ուր՝ խիղճ մտաց
քոց վկայէ քեզ զբարեպաշտու-
թիւն, և զանմեղութիւն: Բա-
րւոք է՝ և երանութեան բան այսմ
կրելով համբերել, և այս ոչ եղիցի
ծանր այնմիկ, որ խոնարհն է սրտ-
իւ, և ոչ այնմ, որ մանաւանդ-
եալ, քանզի ինքեան յուսայ: Բա-
զումք զբազում ինչ խօսին, ուս-
տի դոյն ինչ նոցին հաւատալ
արժան է: Այլ և բնաւից բաւա-
կան գոլն ոչ է կարելի: Եւ թէ
պէտ մեծն Պօղոս ջանայր ամենե-
ցուն * հաճոյանալ ՚ի տէր, և զա- 1 Կոր.
մ ընդ ամենեսեան, սակայն և նա 9. 21
փոքրագոյն ինչ վարկաւ. * թէ 1 Կոր.
դատիւր յօրէ մարդկային: 4. 3

2. Աշխատեցաւ բաւականա-
պէս սակս այլոց շինութեան, և
կե

կեցութեն, որքան էր յինքեան, և
որքան կարէր. բայց ոչ կարաց առ
գելուլ, զի մի յայլոց երբեմն գա
տիւր, և կամ արհամարհիւր։
Ուստի յանձնեաց յամ զրոյցն,
որ ճանաչէակլ էր զրոյցն. և համ
բերութի, խոնարհութի իսկ, ի
դէմ բերանոց զանգգամութեան
խօսողաց, և կամ ընդդէմ զունայ
նութեան, և զխարդախութեան
խորհողաց, ընդդէմ իսկ այնոցիկ,
որք ըստ հաճութեան իւրեանց
ամ ուրեք տրտնջէին, զինքն
ջատագովէին։ Սակայն եա էր
բեռն եւ զպատասխանի, զի մի
տկարաց լաւթեանմն իւրով,
ծնանէր գայթակղութիւն։

Եսայ. 3. Ով դու, հիմ երկնչիս 'ի
41. 10 մարդոյ մահկանացուէ։ Այսօր է,
և 'ի վաղիւն ոչ երևի։ Երկիր դու
յայ, և 'ի մարդկայնոց զարհուրա
նաց մի ահաբեկիր։ Զի՞նչ կարէ
որ առնել քեզ բանիւք, կամ
զրպարտութիւք։ Ինքեան մանաւ
անդ, քանթէ քեզ վնասէ. ով որ
և իցէ նա, ոչ կարասցէ զերծանիլ
'ի դատաստանէն այ։ Կալ դու
միշտ առաջի աչաց քոց զած, և մի
կամիր խստանալ բանիւք վիճաբա
նաց

նօք։ Իսկ՝ եթէ տեսանիցես զքեզ ներհակայարեալ ընկճեցեալ, և վրդովեցեալ յայնս, նորա ոչ արդիւնաւորէիր. մի զայրանայցես, և մի անհամբերութիւն քում՝ նուաղեցուցանիցես զպսակն քո. այլ մանաւանդ ակնարկեա՛ յիս ՚ի յերկինս, որ կարող եմ զերծուցանել զքեզ ՚ի բընաւից խռովութեանց, և զրպարտութեանց. և հատուցանել իւրաքանչիւրում՝ ումեք ըստ գործոց նորա։

---

Գլուխ ԼԷ։

Յաղագս սուրբ, և ամբողջին յանձնառութեան անձին առ ԱՍՏՈՒԱԾ, վասն ընդունելոյ զազատութիւն սրտի։

1. Որդեակ՝ թող զքեզ, և գտանիցես զիս։ Կա՛ց առանց ընտրութեան, և թարց բնաւից յատկութեանց, և շահեսցիս միշտ։ Քանզի յաւելցի քեզ առաւելագոյն շնորհ, որում խոկեսցիս յանձնեալ զքեզ ոչ՝ մի երկրորդեսցես զառաջինն։

2. Տէր իմ, ո՞րքանիցս յանձնեցից զիս քեզ, և ո՞րս թողից զիս։

3. Միշտ, և յամենայնում ժա-

ժամու. որքան ըն փոքունս, այն-
քան ըն մեծամեծս: Ոչինչ առ-
նում 'ի բաց, այլ ըն բնաւս զքեզ
մերկացել զատանել կամիմ: Այլա
թէ ոչ, որպէս կարասցես զալ իմ,
և ես քո. զի եթէ 'ի բնաւից ա-
ռանձնականաց քոյոց համաձայնեալ
'ի ներքուստ, և յարատեւութ ոչ մեր
կանայցես: Որքան վաղվաղակի
զայս առնիցես, այնքան բարեզօ-
նակես ունիցիս զքեզ. և որքան
ընդակես՝ և պարզադակես, այնքան
ինձ հաճոյասցիս, և առաւել շա
հեսցիս:

4. Ոմանք զինքեանս յանձնեն
առ ԱԾ, բայց հանդերձ ինչ
բացառութեամբ. զի ոչ ընդակես յա-
ռանյ յած, մի որոյ զինքեանս ին
քեանց նախատեսանելոյ բաւա
կանս կարծեն: Իսկ ոմանք՝ թէ
այլ 'ի սկզբան բոլորովիմբ զին-
քեանս մերընծայեն ոչ, սակայն՝
յետոյ բաղխեցեալք 'ի փորձու-
թեց, դառնան վերստին առ առա
քինան. մի որոյ՝ հազիւ երբեք յա
ռաջանան 'ի զօրութիւնս: Այս
պիսիք զճշմարիտ սրտի մաքրոյ
ազատութիւնն, և վայելչ ի ընտա
նեկցութեան իմոյ զշնորհն, ոչ եր
բեք

քեզ վերաշաշափելն. եւ թէ ոչ նախ ամբողջապէս յանձնեսցեն ինձ զքեզ բնաւին, եւ հնազանդութեամբ ամենայն վեր ընծայեսցեն, առանց որոյ ոչ կայ անդ, եւ ոչ կարասցի զմիաբանութեան կամ միաւորութեանն։

5. Բազմիցս ասացի քեզ, եւ այժմ միւսանգամ կրկնեմ։ Թող զքեզ, եւ յանձնեա զքեզ, եւ վայելեսցես մեծաւ խաղաղութեամբ ներքնայնով։ Տուր բոլոր զբոլորն, փոխանակ բոլորին. մի ինչ արտաքս պահանջիցես, եւ մի ինչ վերադարձիկ նիցես. կաց մաքրապէս, եւ թարց յողդողդութեան ՚ի յիս, եւ զիս ցես զիս։ Ունիցիս ազատ սրտիւ, եւ խաւարք ոչ պաշարեսցեն զքեզ։ Զսմին աշխատեսցիս առ այն, մաղթեա, եւ բաղձա, զի կարիցես մերկանալ ՚ի բնաւից յատկութեանց, եւ մերկապէս հետեւիլ Յիսուսի մերկի. մեռանիլ քեզ, եւ ինձ մշտնջենապէս կենդանանալ։ Յայնժամ նուաղեսցին բնաւ ցնորք ընդունայնք, վրդովմունք անիրաւք, եւ հոգք աւելորդականք։ Յայնժամ եւս հեռասցի ՚ի քէն երկիւղն անբարեխառն, եւ մեռցի ՚ի քեզ սէրն անկարգ։

Գլուխ

## Գլուխ ԼԸ:

### Յաղագս բարւոյ կառավարութե 'ի մէջս արտաքինս, և վերադիմման առ ԱԾ 'ի կասկածանս:

1. Որդեակ՝ առ այն ուշիմա
պէս ձգտիլ պարտիս, զի
յամենայնում տեղւոջ, և 'ներգոր
ծութե, կամ յարտաքսականում
պարապման, լիցես 'ներքսապէս ա
զատ, և 'ի քեզ ինքեան կարող. և
եղիցին բնաւքն 'ի ներքոյ քոյ, և
դու ոչ 'ի ներքոյ նոցին. որպէս զի
լիցես առից քոց տր, և ուղղիչ.
ոչ ծառայ, և ոչ գնուածոյ, այլ
յաւէտ ազատ, և ճշմարիտ եբրայ
Գաղա եցի. * ժառանգորդ վիճակի՝ և
3. 31 ազատութե որդւոցն այ. որք կան
'ի վերայ ներկայականաց, և նշմա
րեն զմշտնջենաւորս. որք առ ան
ցաւորս ձախու ակամբ. և առ երկ
նայինս աջովն նկատեն. զորս կեն
ցաղականք ոչ քարշեն յինքեանս
առ'ի ներյենուլ, այլ մանաւանդ
ինքեանք քարշեն զնոսա առ'ի բա
րեպէս 'ի կիրարկանել. ը որում
կարգաւորեցեալք են յայ, և սահ
մանեցեալք 'ի վեհագունէ ճար
տարապետէ, որ ոչ ինչ եթող ան
կարգ.

կարգ 'ի սանղձուածս իւր։
2. Իսկ՝ եթէ ևս ընդ համայնս դի-
պուածս կայցես հաստատուն, և
ոչ արտաքնով երևութիւ, կամ
ակամբ մարմնականաւ նշմարիցես
զանցեալսն՝ կամ զլինելոցս․ այլ՝
բաղադա խորաքննչութեամբք պատ-
ճառի մանկեցես առժամայն ընդ
Մովսէսի * 'ի տաղաւարն առ 'ի Ելից 24․25
խորանել 'ի մէնէ, ընկեցես մերթ
զնմայնին պատառախառնելին, և դարձ-
ցես ներկրթեցեալ զկնոյ բաղ-
մանց՝ զներկայից, և զապառնեաց։
Քանզի՝ միշտ մօտէ ունէր զկերպս
դիմումն առ տաղաւարն, սակս տա-
րակուսութեանց՝ և խնդրոց լուծա-
նելեաց․ փութացաւ ևս 'ի յօդ-
նութիւնս աղօթից, սակս կասկա-
ծանաց, և անմխորշութեանց մարդ-
կան 'ի բաղբառնալեաց։ Այս-
պէս և դու ձեռպէլ պարտիս առ
խորհրդարանն քոյ սրտի, առ 'ի
մաղթել զնմայնին օժանդակու-
թիւնն։ Զի՝ վասն այնորիկ Յե-
սու, և որդիքն Իսրայելի խաբե-
ցան 'ի Գաբաւոնացւոց, զի՝ * նա Յեսու 9․11
խաղէս ոչ կամեցան զբերան տն
հարցանել, այլ կարծ հաւատալով
քաղցրոց նոցին բանից, պատրո-
զա

զականատես առաքինութիւն նորին, եղեն նշանակեցեալք:

---

## Գլուխ ԼԹ:

### ԹԷ ՈՉ ԻՆՉ ԳՈՐԾ ԱՌՆ ՓՈՒ ՀԱՐԿԱԴԵՔ 'Ի ՅԱՌՆԵԼԻՍ:

1. Որդեակ, յանձնեա՛ ինձ միշտ զպատճառս քո, ես բարեպէս տնօրինեցից 'ի ժամանակի իւրում: Սպասեա՛ կարգադրութեան իմում. և զգայցես անդուստ զօգտութիւն:

2. Տէր իմ, յոյժ կամաւորապէս յանձնեմ քեզ զբնաւս. զի դոյնինչ պատարեբիլ կարեն իմ հոգքս իմ: Վա՜շ թէ ոչ այնքան առյենուի զխորհրդոց հանդերձելոց, այլ զիս քում բարեհաճութեան անյապաղ վերընծայէի:

3. Որդեակ, բազմիցս մարդ զիր ինչ ուժգնապէս շարժէ, քանզի բաղձայ. և մինչ առ այն ժամանէ, սկսանի զայնմանէ այլապէս զգալ. զի խնդիք նորին շուրջ զնոյնով իւիք ոչ են մնայունք, այլ մանաւանդ ներգործողք 'ի միոյն առ միւսն: Ոչ է ուրեմն փոքրագոյն նեղ իմն, եթէ մարդ զինքն եւ ըն փոք-

փորձառութեանս թողուցու:

4. Ճշմարիտ արդիւնաւորու-
թիւն առն, է ուրացումն իւրոյ
անձին. * և որ ուրացեալ զինքն, է Ղուկ. 14.26
ազատ յոյժ, և ապահով: Բայց
հնացեալ թշնամին, հակառակն
բնաւից բարեաց, 'ի փորձութե
ոչ դադարի, այլ 'ի տուընջեան, և
'ի գիշերի հնարէ զծանրունս դա-
տանութեան, զի գուցէ 'ի յոր
թակարդս խաբէութեան զանգիտ
մեւ կարիցէ զանզգոյշս: Ասէ
տէրն մեր. * Հսկեցէք, և աղօթե- Մատթ. 26.41
ցէք, զի մի մտանիցէք 'ի փորձու-
թիւն:

---

Գլուխ Ը:

ԹԷ ՊԱՐՏ ՅԻՇԵԼՆԵ ՉՈՒԼԻՆԼ ԲԱՐՁՐԱՄԻՏ
ԱՌՆԻԼ, ՆԵՒ ԽՈՆԱՐՀԻՆԼ ԱՌԱՋ
ԾԻՒԼ ԽԱՐԻՆԵ:

1. Տէ՛ր իմ, * զի՞նչ է մարդ, զի Սաղմ.
յիշես զնա. կամ 8.5
որդի մարդոյ, զի այցելանիցես
նմա: Զի՞նչ արդիւնաւորեցաւ
մարդ, զի տայցես նմա զշնորհ:
Ահաւասիկ ես տէր իմ, զամենայն
կարեմ գանգատիլ, եթէ զիս 'ի
բացթողկիցես, կամ ուխ ինչ բա
իրաւ

խրատանց նկատիլ, եթէ զոր խընդ-
րեմն ոչ առնիցես: Համառօտապէս
խորհիլ կարեմ, և առել զայս ինչ.
Տ՟ր իմ, ոչ ինչ եմ, զոչ ինչ կարեմ,
և զոչ ինչ բարւոյ ունիմ ես յինէն.
այլ յամենայնում նուաղիմ, և ձըգ-
տիմ միշտ առ ոչ ինչ: Եւ եթէ ոչ
՚ի քէն նպաստաւորիցիմ, և ներքս
տապէս ներհմտանայցեմ, լինելոց
եմ բոլորովին գաղջ, և լքնելոց:
Սաղմ. 121. 29 2. Իսկ դու՝ Տէր իմ, * միշտ
նոյն ինքն ես, և միշտ բարի, ար-
դար՝ և ս՟բ, յարամնաս ՚ի յաւի-
տեան. բարեպէս, արդարապէս,
և սրբապէս ներգործելով, և տրա-
մադրելով զա՟մ ինչ ի՟մ. քում իմաս-
տութեան: Բայց ես՝ որ ՚ի նախա-
դումն մանաւանդ, քանթէ ՚ի յա-
ռաջադիմութիւն հակամիտեմ, ոչ
եմ միշտ ը՟ն միում կացութ՟ե յարա-
մնայուն. զի եօթն ժամանակք փո-
փոխին ՚ի վերայ իմ: Սակայն՝ է-
թէ քեզ հաճոյ թուիցի, զի կար-
կառիցես առ իս զբազուկ քո հզ-
զօր, իսկոյն բարեգոյն եղիցի. զի
դու միայն թարց իմէք մարդկայ-
նոյ օժանդակութեան կարես ինձ
օգնել. և այնքան կազդուրել զիս,
մինչ զի երեսս իմ, ոչ դարձցի միւս
ան

անդամ յիւր տարրերս, այլ առբեղ միայն մերաժոխեցի սիրտ իմ, և 'ի բեղ յարահանդիցէ ։

3. Ուստի՛ թէ բարեպէս գիտէի զնա՞մ մխիթարութիւն մարդկան 'ի բաց հերքել, յաղագս առատանալոյ ջերմեռանդութեան, կամ յաղագս հարկաւորութե՛, որով առնում խնդրել զբեղ, զի ո՛չ ոք 'ի մարդկանէ կարէ սփոփել զիս. յայնժամ մարթ էր ինձ բաւ խրախոյ յուսալ 'ի շնորհս քոյս, և հըրճուհիլ ատկս պարգևի նորոյ մխիթարութեան ։

4. Գոհանամ զբէն, յորմէ յառաջանայ բոլորն, որքանիցս ինձ բարեպէս յաջողի ։ Եւ ես եմ ունայնութիւն, և ոչինչ առաջի քոյ. այր անկայուն, և անհաստատ ։ Ուստի՞ ուրեմն պարծիլ կարեմ, կամ զմէ բաղձամ մեծահամբաւիլ ։ Ո՞չ ապաքէն զոչինչն. որ է ունայնագունեղ ինն ։ Իրաւի՛ ընուն է նանիր փառամոլութի, և մախից ժանտառութիւն, և մեծագունեղ ընդունայնութի. զի զրկէ զիս 'ի ճշմարտէ փառաւորմանէ, և մերկացուցանէ յերկնայնոյ շնորհէ ։ Քանզի՛ մինչ ըզ համոյանոյ

ին

խնդրեան, անհամեմատելոյ քեզ, մինչ-
քաղցրոյ գովութեան մարդկայնոյ,
զերկն 'ի զօրութեանց Ճշմարտին:

5. Է՛ ուրեմն Ճշմարիտ փառք,
և ցնծութիւն սրբ, փառաւորիլն
'ի քեզ՝ և ոչ 'ի յինքեան. խնդալն
յանուն քո, և ոչ 'ի զօրութիւնս
յատուկս, և ոչ բերկրիլն նմաեղ
ծառայութեամբ ինչ՝ եթէ ոչ վա քոյ:
Գովեսցի քոյդ անուն, և ոչ իմ.
փառաւորեսցի քոյդ գործ՝ և ոչ
իմ. օրհնեսցի անուն քո սուրբ, և
ինձ ոչ ինչ ստացեալ եցի 'ի գովու-
թեանց մարդկայնոց: Դու ես
Սաղմ. փառն իմ, դու ես ցնծութիւն
118. սրտի իմոյ: 'Ի քեզ պարծեցայց
111 և ցնծացայց, զոր ամ. ինձ վասն
իմ ոչ ինչ, եթէ ոչ 'ի տկարութիւ
իմ պարծեցայց:

Յովհ. 6. Խնդրիցեն հրեայք փառս
5. 44 'ի միմեանց. ես խնդրեցից զայն,
որ 'ի միայնոյ ԱՅ է: Վասն զի
ամենայն փառք մարդկան, ամե-
նայն պատիւ կենցաղական՝ ամ վեհ-
մութիւն աշխարհական՝ բաղդա-
տեցեալ յաւիտենականայ քոյ
փառաց, է ընդունայնութիւն և
յիմարութիւն: Ով Ճշմարտութի
իմ, ով ողորմութիւն իմ, և ամ
իմ.

խմ. ով Տէր բարերարութեն սուրբ․ քեզ միայնոյ գովութիւն, պատիւ՝ զօրութիւն, և փառք, ընդ անհուն յաւիտենից աւիտեանս:

---

Գլուխ ԽԱ:

Յաղագս համաձայն բնաւից գործոյ ժամանակակցութեան:

1. Որդեակ՝ մի՛ քեզ առաքարկեսցես, եթէ տեսանիցես զայլս պատուածիլ՝ և բարձրանալ, և զքեզ քամահիլ, և խոնարհիլ: Ուղղեա՛ առ իս յերկինս զմիտս քո, և ոչ տրտմեցուսցէ զքեզ քամահումն մարդկան ՚ի յերկրի:

2. Տէ՛ր իմ, ընդ կուրութեան կամք՝ և յընդունայնութեանց փութով պատրիմք: Զի եթէ ուղղապէս ՚ի յիս ակնարկեցեմ, ոչ երբէք զբ տանեմ զանիրաւութիւն ինչ ՚ի խեքէ ստեղծուածոյ առ իս եղեալ զոլ: Ուստի՝ ոչ թէ իրաւանց տըրտնջամ ընդդէմ քեզ: Բայց՝ քանզի յանձնօխապէս, և ծանրապէս մեղայ քեզ, արժանապէս զինի ընդդէմ ինձ համայն ստեղծուած: Ինձ ուրեմն արդարապէս վայելէ ամօթ՝ և պարսաւանս. Իսկ՝ քեզ

գո-

գովութիւն, պատիւ՝ և փառք։ Եւ
եթէ ոչ առ այն զնա նախապատ
րաստեցեալ, զի յօժարեսցիս հաճոյս
բառ 'ի բնութեան առեղծուածոց քա
մահիլ, և թողանիլ՝ և իբր ոչ ինչ
խապառ ունաւնիլ, ոչ կարեմ ներք
առալես խաղաղանալ, և հանդար
տիլ՝ ոչ հաւանորապես բաւառորիլ՝
և ոչ լիապես ընդ քեզ միաւորիլ։

---

## Գլուխ ԽԲ.

## Թէ խաղաղութիւնն ոչ իցէ դնելի 'ի մարդիկ։

1. Որդեակ՝ եթէ դնիցես զխաղաղութիւն քո ընդ ումեք անձին, վասն քոյոյ զգացման, և կենցաղավարութեան, եղիցիս անկայուն, և պարուրեցեալ։ Այլ՝ թէ ունիցիս զվերադարձումն առ մշտնջենակայ՝ և յարամնայ ճշմարտութիւնն, ոչ տխրեցուսցէ զքեզ քոյդ բարեկամ, հեռացեալ 'ի քէն, կամ մեռեալ։ 'Ի յիս պարտի կայանալ սէր բարեկամին. և վասն իմ՝ սիրելի է այն, որ քեզ բարուոք թուեցեալ է՝ և յաւէտ նազելի նոյնմիկ կենցաղումս։ Ո՛չ ինչ արժէ, և ոչ մնասցէ՝ թարց ինձ, սիրե

բնութիւն ինչ. եւ՛ ոչ է ճշմա-
րիտ, և զուտ սիրելութիւն, զոր
ոչ չարադուգեմ ես: Այնպէս մե-
ռանիլ սրտոսի նմանիւք զգաց
մանը սիրելեաց մարդկան, մինչ
զի որքան 'ի քեզ է, բաղձայցես
զոլ առանց մարդկային ընկերակ
ցութե: Այնքան յաւէտ մերձե-
նայ մարդ առ Ած, որքան յամենից
երկրայնոց սփոփանաց 'ի բացձեռա-
նայ: Եւ այնքան բարձրագոյնս
ելէս առ Ած ելանայ, որքան խորա-
գունայէս 'ի յինքեան զիջանէ՛ և
աւաւելագունայ յինքենէ խոտի:

2. Իսկ՛ որ ինքեան զբարութի
ինչ առընծեալէ, զզալուստ շնոր-
հացն Այ առ ինքն՛ արգելու. զի
շնորհ Հոգւոյն սրբոյ, միշտ խոնարհ-
ին՛ զսիրտ խնդրէ: Եթէ գիտէ Սաղմ.
եր զքեզ կատարելապէս ունայնա- 50. 10
ցուցանել, և յամենայն ստեղծականէ
սիրոյ դատարկել, յայնժամ Ած
էր ինձ հանդերձ մեծաւ շնորհիւ
'ի քեզ արտաբղխել: Մինչ ակն
արկես առ ստեղծուածս, նուազէ
ցուցանես 'ի քեզ զանհնարկութի
ստեղծողին: Ուսիր յամենայն յաղ-
թել զքեզ սոսկ ստեղծողին, և
յայնժամ կարասցես ժամանել

առ

առ Ճանաչումն նմային: Թէեւ գոյն իցէ իւրն սիրեցեալ՝ եթէ ան-կարգապէս սիրիցի, և անհարկի-ցի, յամեցուցանէ 'ի ծայրագունէ բարւոյն, և բծաւորէ:

Գլուխ ԽԹ:

Ընդդէմ ընդունայնի, և չէնշահաւի-նի գիտութեան:

1. Որդեակ, մի՛ շարժիցեն զքեզ գեղեցկութիւնք, և նրբութիւնք ասացուածոց մարդ-
1 Կոր՝ կան: Քանզի՝ * արքայութիւնն
4. 20 Աստուծոյ ոչ կայանայ 'ի բանս, այլ 'ի զօ-րութիւնս: Ունկն դիր բանից նո-րա՝ որք զսիրտ բորբոքեն, և զմիտս լուսաւորեն, ներածեն զխայթահարութիւնս, և զզանա-զան ներբերեն մխիթարութիւնս: Մի երբեք ընթեռնուցուս զբանս, զի հմտագոյն և իմաստնագոյն գոլ տեսանիցիս: Ջանա, զի մահացու-ցանիցես զմոլութիւնս՝ զի քեզ առաւել եղիցի այս օգտակար, քան թէ ծանօթութիւն բազմաց դժուա-րինացից խնդրոց:

2. Մինչ զբազումս ընթեռ-նուցուս՝ և ճանաչիցես, պարտ է

քեզ

գեղ միշտ առ մի սկիզբն մերոյու-
ել: Ես եմ, որ ուսուցանեմ մարդ-
կան գիտութիւն. եւ շնորհեմ մանկը-
կանց զպարզագոյն * իմաստու- Սաղմ. 118. 19
թիւն, զոր ոչ ոք 'ի մարդկանէ
կարէ ուսուցանել: Ընդ որում խօ-
սիմ ես, իսկոյն իմաստնանայ, եւ
հոգւով յոյժ պայծառասցի: Վասն այ-
նորիկ՝ որք զբազում վայելչութեամբ
խնդրեն 'ի մարդկանէ որոնեն, եւ
զհանապազորդէ ծառայելոյ ինձ զոյն
ինչ հոգան: Եկեսցէ ժամանակ՝
յորում երեւեսցի Վարդապետն
վարդապետաց Քս, եւ Տրն հրեշ-
տակաց՝ առ 'ի լսել զձայնս, այս
ինքն՝ առ 'ի զննել զխորհրդածութեանց
խնդրեմանս: Եւ յայնժամ * հան- Սոփ. 1. 12
դերձ Քահանայք որոնեսցի երեւա-
ցեմ, եւ յայտնեսցին զաղտնիք իմաս-
տին, * լռեսցեն իսկ առարկու- 1 Կոր. 13. 8
թիւնք լեզուաց:

3. Ես եմ, որ զմիտս խոնարհս
ին կլանում բարձրացուցանեմ. զի
զբազմագոյնս յառ իմանականին Ճշմա-
րտութեան իմանայցէ զբանս,
քան զայն, որ ամաց տասանց կրթի
'ի վարժարանս: Ես եմ, որ ու-
սուցանեմ առանց շշնջման բառից,
առանց շփոթման կարծեաց, ա-
ռանց

ռանց քամահրանան պատուոյ, և թարց ընդդիմամարտութե՛ ա-րկութեանց: Լաւ եմ, որ ուսու-ցանեմ խօսել զերկրայինս, զզա-նել 'ի ներկայականաց՝ խնդրել ըզ-մշտնջենաւորս խնամոյ զաւխա-նակսն, փախչել 'ի պատուոյ, ըմբերել գայթագղութեց, գնել 'ի յիս զյոյսն բոլոր, բաց յինէն ոչ խնդք բաղձալ, և սիրել զիս եռանդագայես 'ի վեր քան զամ:

4. Քանզի ոմն սիրելով զիս 'ի սրտէ, ուսաւ զաձայինս, և խօսէր զզարմանալիս: Առաւել շահե-ցաւ թողլով զամ, քան թէ ուսա-նելով զկրս նրբահայեացս: Բայց ընդ ոմանց խօսիմ զկրաց հասարա-կաց, և ընդ ոմանց զկրաց սեսա-կաւորաց. ոմանց նշանիւք՝ և ձե-ւօք քաղցրաբար երեւիմ, և ոմանց մեծաւ լուսով յայտնեմ զխոր-հուրդս: Մի է ձայն գրոց, բայց՝ ոչ զամենեսեան հանդիսապէս նե-րակերպէ. զի ես եմ 'ի մէջ նոցա,
Ղուկ. վարդապետս ճշմարտութե, քըն-
20. 21 նող սրտից, իմացող խորհրդոց, յառաջացուցիչս գործոց՝ և բաշ-խօղս իւրաքանչիւրոց, ըստ որում արժան դոլ ենթադատեմ:

Գլուխ Խը։

Յաղագս ով փառաւորել տան Տեառն ընդ աղօթս պարգեւեն։

1. Որդեակ՛ պարտ է քեզ
գովել զնա բազում խնդու-
թեամբ, և համբերել զքեզ խրր մե-
ռեալ 'ի մի երկրի, որում ոչ Գաղ.
թէ բոլոր աշխարհ խաչեցեալ իցէ. 6. 14
Պիտոյ է քեզ եւս զբաղմամբ խոնա-
րհութեամբ զանձնաւորել, և խորհել
մտաւոր զօրութեան, որք խաղա-
ղութեան քում պատկանին։ Զգաս
կարողն է զարձմացանել զայս
մտաց անհամբերից, և թողուլ խո-
րագանձութեամբ ումեք զերծին զգա-
ցողութիւն, քան թէ՛ զխօսս մի
ձայնականս 'ի կերպարանել։ Եթէ
կոչեսցես բարեաց ընդ մեզ, և 'ի գա-
տաստանս նորին անձկանիցես,
զխոստովանս յաղթահարեցեալ ըն-
քեզ զգամնիցես։
2. ՈՎ ՏԷՐ իմ, մինչև ց'ո՛ ժա-
մանեցայց։ Ահաւասիկ՛ ողբացել
լինի մեռան կենդանականս. մի մա-
քուր օրինի աշխարհիկք, և ընթա-
նալք, և զառածումն հոգեկան 'ի
մտացածին արկածանսք, և հալա-
ծելեք 'ի մեր անձնսք։ Ահա այն՛

12 Ժի՜ որ

որ գոյն ինչ, կամ ոչ ինչ օգուտ է, զգուշանամք. և զայնու՝ որ ծայրագունայն հարկաւոր է, զանց առնեմք տունկանարար. զի ամ մարդ առ արտաքինս այնթաքի, և եթէ ոչ վաղվաղակի ապաշաւիցէ, կամաւորապէս ի յարտաքինս անկեալ կայցէ:

---

## Գլուխ ԽԷ:

Թէ ո՛չ է հաւատալի ամենեցուն. և յաղագս դիւրին սայթաքման բանից:

Սաղմ. 1. Տո՛ւր ինձ զօգնութիւն՝ տէր
59. 13 իմ, ՚ի նեղութեան, զի ընդունայն է կեցութիւն մարդոյ: Որքանիցս ոչ գտի յայնմիկ զհաւատարմութիւն, յորում զնոյնն ունիլ զիս վարկանէի: Եւ որքանիցս գտի յայնմիկ զնոյնն յորում սակաւագունայն նախադիտե
Սաղմ. ցի: Ընդունայն է ուրեմն դնել
93. 11 զյոյս իւր ՚ի մարդս. իսկ կեցութիւն արդարոց ՚ի քեզ է ա̄ծ իմ: Լեր օրհնեալ՝ տէր իմ, և ա̄ծ իմ, յամենայնում, որ պատահի մեզ: Տկարք եմք՝ և անկայունք, վաղվաղակի պատրիմք, և փոփոխիմք:

2. Ո՛վ

2․ Ո՞վ է մարդ, որ այնքան զգ-
ուշաւորէս, և շրջահայեցաբար յա-
մենայնում զինքն պահպանել մար-
թիցի, զի երբեմն 'ի խաբէութի-
ւնն, կամ 'ի պատրուակ ինչ ոչ ան-
կանիցի: Այլ՝ որ 'ի քեզ ապաւի-
նի Տէր իմ, և մաքրութեամբ սրտի
խնդրէ զքեզ, ոչ այնքան գլորա-
ւէս սահի: Եւ եթէ անկանիցի
'ի նեղութիւն ինչ, նորում խռո-
վեսցի, պարուրեցեալ, վաղվա-
ղակի քո զերծանի, և քո սփոփի․
զի դու ոչ թողուս զյուսացեալս Ս-ղ-
'ի քեզ մինչև յաւիտեան: Հազիւ գը- 9․ 11
տանի բարեկամ ոք, զի ըն ընտա-
ռապանս իւրոյ բարեկամին ցին
յարատևեսցէ: Դու Տէր իմ, դու
միայն ես հաւատարմագունեղ ըն
բնաւս, և բայց 'ի քէն ոչ գոյ այլ
ոք քեզ հանգոյն:

3․ Ո՜հ թէ որպէս իմաստնացու-
ցին այն ոք, որ ասաց: Հաստա-
տեցեալ է միտ իմ, և 'ի Քս հիմնե-
ցեալ: Արդ՝ եթէ և ինձ այսպէս
հանգերձիւր, ոչ այնքան գլորա-
կի վրդովմէր զիս երկիւղ մարդկայ-
ին, և ոչ շարժէին զիս սլաքմունք
բանից: Ո՞վ է, որ զամենայն նա-
խատեսանիցէ, կամ ով է, որ յամե-
նից

Նից առաքինեաց չարեաց նախա_
գգուշանալ բանիցն։ Եթէ նախա
տեսեցեալ էին բազմիցս վնասեն.
զի՞նչ ոչ նախատեսեցեալ էին, եթէ
ոչ ծանուցեալս զձեզ հարուածեն։
Բայց՝ ընդէր ինձ ողորմելւոյս բա
րեալես ոչ նախատեսի։ Եւ զմե
ղինքան գիւրաբար հաստատցի այ
լոց։ Ա՛յլոց՝ եղք մարդիկ, և
ոչ այլ ինչ, եթէ ոչ բեկանեալք
մարդիկ, թէև ՚ի բազմաց համարի
ցին հրեշտակք, և աստուածք։
Ո՞մ հաստատեցից՝ Տէր իմ, ում,
եթէ ոչ քեզ։ Ճշմարտութիւն
ես, որ ոչ խաբես, և ոչ խաբիլ կա
Սաղմ. րես։ Եւ հաւատարմօրէն։ ՚Ամ
115. 2 մարդ է սուտ, անհաստատ, ան
կայուն, և ամենայն մտածմունք
՚ի բանս, մինչզի հողմ երբեք
հաստատ պտտեցի այնմիկ, որ
առ երեսս ուղիղ անսանի.

4. Ո՞ թէ՝ որպէս խոհեմաբար
Միք. նախազգուշեցեր մեզ՝ զգուշանալ ՚ի
7. 6 մարդկանէ. ՚և զի թշնամիք առն՝
Մատ. ընտանիք իւր, վասն որոյ՝ ոչ է հաւա
10. 36 տալի, եթէ ոք ասիցէ։ Ահաւա
սիկ է, կամ ահաւասիկ։ Համա
ցեալէմ վնասու խնամ, և երանի
լինէր ինձ այս՝ թէ ՚ի մեծագոյն
գգու-

զգուշութիւն, և ոչ 'ի յիմարութիւն:
Ասայց անձն· զգոյշ լեր, զգոյշ
լեր, և պահեա՛ զբանն Թագաւո-
րեալ՝ զոր առնեմ: Ինքն ոչ կա-
րող լինել զայն, զոր յինէն լինել
խնդրեաց, այլ՝ վաղվաղակի մատ-
նեաց զնա, և զինքն, և զնոյն:
Արդ՝ յարդարինեաց առատապէս,
և անդրդուելի արանց պաշտպանեսա
զնա՝ Տէր, զի մի անկանիցիմ 'ի
ձեռս նոցին, և մի երբեք զրպարտ
նեալ անդատուրիցիմ: Զբան Շնմա
լին՝ և կարգեն առաք 'ի բերան իմ,
և՝ զձեզա ներդաւար 'ի բաց արա- Սաղմ.
յինէն: Զի որում ոչ կարեմ հան 119. 1
դուրժել, յայտնանէ բաղդամկմն
զդուշանալ արարամ:

5. Ո՜Թէ, որքան բարի է, և
խաղաղական՝ լինել զգոյշ, և ոչ
համառացն անառարկեբար ամե-
նեցուն, ոչ բարբառելն անենայ
զարար զնոց զխաբարդունեց· մէ-
րազայանելն զինքն առակաւց
միայն: Խոնդրելն մեծա զբեղ 'նէր Սաղմ.
նկատօղ սրտից· և ոչ շրջաբե- 7. 10
րելն յամէ հողմոյ բանից, այլ բաղ
ձալն, կատարել զամենայն զնեորին,
և զարդարեն ըստ համաձ Թէ քո
ոյ կամաց: Ո՜Թէ, որքան առաւե-
լա

վարդայն է սակս պահպանութեան երկնային շնորհի, փախչիլն յաուերեւութենէ մարդկան, եւ ոչ տենչալն այնոցիկ, որք առ արտաքս զզուարճացուցին ինն ընծայել թուին-ալ, հեռանալն բոլորիւ հանձամբ այնոցիկ, որք տան զզօրութիւն վարուց, եւ զջերմեռանդութիւն: Որքանից մխաուեալ զօրութիւնն յայտնեցեալ, եւ յամէ ա զովեցեալ: Եւ որքանից եղեւ օգտակար ընլութեան պահեցեալն շնորհ նորա միկ բնակումարի կենցաղում, որոյ բոլորին փորձութիւն է, եւ պատերազմ:

---

## Գլուխ ԽԴ:

### Յաղագս ապաժինելոյ բեն ԱՀԻ, զՆու զերապատիւն արտաքնաւոր բանից:

1. Որդեակ, կայց հաստատուն
սեր, եւ յաւում 'ի յիս:
Բանիցն զի՞նչ են բանք, եթէ ոչ
կուկ խօսք: Ընդ օդս ցնդին, եւ քա
րանց ոչ ինչ մխաւեն: Եթէ պատ
ժապարտ իցես, խորհեաց՝ թէ որ
1. Յով պես զատել զքեզ կարիցես. * Եթէ
3. 21 սիրտ քո ոչ բամբասանիցէ զքեզ,
մտածեա՛ յօժարապար կրել զնո յա
ջողս

ղացս իմ։ Գոյն ինչ է, եթէ եր-
բեմն համբերիցես այլոցն բանից,
որովհետեւ ոչ կարես տանել դեռ
ևս զանից կարծրագունից։ Եւ
ընդէր այնքան տխուր ինչ թա-
փանցէ ՚ի սիրտ քո, վասն զի՝ տակա-
ւին մարմնաւոր ես, և առաւել քան
զպատշաճին՝ լսես մարդկան։
Քանզի երկնչիս ՚ի քամահանաց,
և վասն սխալանաց ոչ կամիս յան-
դիմանիլ, խնդրես իսկ զստուերս
պատճառանաց։

2. Բայց՝ բարւոք նկատեա ՚ի
քեզ, և ճանաչեսցես, զի դեռևս
՚ի քեզ կենդանի է աշխարհ, և
ունայն ցանկութիւն հաճոյանալոյ
մարդկան։ Քանզի՝ մինչ փախչիս
՚ի զիջմանէ, և ՚ի պատկառմանէ
սակս քոյոց պակասութեանց՝ ցու-
ցանես իրաւի, թէ ոչ իցես ճշմա-
րիտ խոնարհ, և ոչ ճշմարտապէս
մեռեալ աշխարհի, և ոչ ես աշխարհ
քեզ խաչեցեալ իցէ։ Բայց լուր
բանից իմոց, և լիցիս անփոյթ ըն-
տասն հազարաց բանից մարդկան։
Վասն զի՝ եթէ որ զ բնաւ բանս կարե-
լիս չարագոյն նիւթելոյ, ասէր
ընդդէմ քեզ. զինչ վնասէին քեզ՝
եթէ թողլ տայիր նոցին անցա-
նել

նել, Թողուլ համարելոյ զնա սատա-
նել քան զխեղ խիճս։ Մի՛ թէ կա
Ղուկ. րելին՝ զհեր մի ՚ի գլխոյ քումմէ
21. 16 ՚ի բացարձակել։

3. Բայց՝ որ ոչ ունի զախտս յին
քենէ, և ոչ ունի զնա ատելութեան,
զխրատարար չարեաց ՚ի բանից սպր
տատակնաց։ Իսկ՝ որ ապաւինի
՚ի յիս, և ոչ բաղձայ կալ նաւանց
նախանձի խրախ զաստուածութեան,
մնացեալ առանց զարգացուցման մերձ
կայից։ Քանզի՝ եւ եմ զատա-
ւոր, և ձանձրոյ համբերելոյ խորհր
դոց. եւ զխոհեմ՝ թէ երկնաւորաց
խոյն գործելեւէ. Եւ ձանձրացեալ
զհոգւոյն, և զհամբերողս։ Ե՛ի
նեն եւ բանս այս, և խոնկ թղթ-
Ղուկ. ատութեանն այս զխոստցաւ, ՚զի
2. 36 յարանցեալն ՚ի բազմաց ամաց խոր
հուրդք։ Նա զպատմատարա, և
զանձինս զատեցից, զորս յաւուր
խնամ ծածկեալ զատողութիւն փոր
ձել կամեցայ։

4. Վերջաւորեալ մարդկան բաղ
մեցս պատրեն. զատողութեան խմ
ձեմարան է, կարգել՝ և ոչ կարծա
նեացի։ Թագաւոր բարեմանդամ,
և ամփոփեալ ու խորհրդածելաս
երեկի. ամենայն ոչ երբեք մնայի,
և

և ոչ սխալել կարէ, Թէև յայս ան-
խառնից ոչ գոյ ուղիղ անուանե-
ցի: Այս իս ուղղեն զխելքն է նո-
ձևայնում զգաստութեան, և ոչ է
յենելն յառակականն հանճարութեան:
Քանզի * արդարոյն ոչ արժէ, որ Առակ
խնդրեն յայլ ձևին զխորհելի: Եւ եԹէ 12. 21
բան ինչ ընդդէմ ձևին արդարոյ
ըլի, ոչ այնքան զգայթ ունել:
Այլև ոչ հզօրն ի ընդդիմայր, եԹէ
այլոց բանաստեղծին անմեղութեան
կացցի: Քանզի յուշանէ, Թէ են
ելեմ, * որ զինեմ զսիրտս, և զերի Սաղմ.
կամաւորս. և ոչ զտանեմ ըղ զխինդ, 7. 10
և բան մարդկային ամբարշտութեան:
Քանզի բարձրացի առ այս իմ զատ
ելի մեծագործելի, որ բան մարդկայ
նոյ զատողութե երկնի գալելի:
5. Տէր իմ, զատաւոր արդար,
* հզօր և երկայնամիտ, որ ձեռաց Սաղմ.
քս զմարդկային բնականութեան, և 7. 11
զխաղաղութեան, ըստ կարողութեան
իմ, և ըստ բաղձալութեան խն-
քանզի ոչ է ինձ բառական խելոքն
մայն խնդիր: Գուն ձեռակս զոյն,
զոր ոչ ձեռագէտ էս. և փառս այսր
ընկ յանձնոյն մ յանցաւորութեան,
արտաքոյն ետ էս խառնաբերութեան
նէ զիս, և հեղարոր ընդերկ:

Այլ՝ ՚ներեա՛ ինձ՝ ով քաղցր իմ,
եթէ երբեմն այնպէս՝ ոչ արարի,
և շնորհեա՛ ինձ վերստին զձիր մե-
ծի համբերութեան : Քանզի՝ բա-
րեգոյն է ինձ ողորմութիւն քո առատ,
առ ՚ի ստանալ զներողութիւն, քան
զարդարութիւն իմ՝ կարծեցեալ,
առ պաշտպանութեան թաքուցելոյ
խղճի մտաց : Եւ թէ ոչ ինչ զմեղն
ընդ գիտակցեմ, ոչ վասն այնորիկ ար-
դարանալ կարեմ. զի ՚ի հեռանալ
Սաղմ. ողորմութեան քո, ոչ արդարա-
142. 2 նայ առաջի քո ամ̃ կենդանի :

---

Գլուխ ԽԷ :

ԹԷ ԱՄ̃ ԾԱՆՐԱՆՔ ԲԱՌՆԱԼԻՔ ԵՆ՝
ՎԱՍՆ ԿԵՆԱՑՆ ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆԱՑ :

1. ՈՐդեակ, մի՛ ընկճեսցեն
զքեզ աշխատանք, զորս
յանձն առեր վասն իմ, և մի՛ տառապանք
կլիցեն զքեզ ՚նեղութիւնք մինչև
իսպառ. այլ յամենայնում դիպուածոյ
կարողացուսցէ զքեզ խոստումն
իմ, և մխիթարեսցէ : Բաւական եմ
ես առ ՚ի հատուցանել ՚ի վեր քան
զամ̃ եղանակ, և չափ : Ոչ աշխա-
տեսցիս աստ ընդ երկար ժամա-
նակ, և ոչ միշտ ծանրասցիս ցա-

օք ։ Համբերեա՛ սակաւիկ մի, և
տեսցես զչարեաց արագահաս
վախճան ։ Եկեսցէ ինձ ժամ, յո-
րում դադարեսցի ամ աշխատու-
թի, և խռովութիւն ։ Ամ ինչ, որ
անցանէ ընդ ժամանակի, գոյնինչ
է, և համառօտ ։

2 · Արա՛, զոր առնելոց ես ։ Հաւ-
տատարմաբէս աշխատասիրեա՛ յայ-
գւոջ իմում, ես եղէց վարձ քո ։
Գրեա՛, ընթերցիր, երգեա՛, հե-
ծեա՛, լռեա՛, աղօթեա՛, համբերեա՛
արիաբար հակառակաց․ զի արժան
է այսոցիկ ամենեցուն, ևևս մեծա-
մեծաց պատերազմաց, կեանն յաւի-
տենական ։ Եկեսցէ խաղաղութի
յաւուր միում, որ է յայտնի Տն․
՝ և եղիցի ոչ տիւ, և ոչ գիշեր, Յայտ․
այլ լոյս մշտնջենաւոր, անբաւ 22 · 5
պայծառութիւն՝ հաստատուն խա-
ղաղութի, և ապահով անդորրու-
թիւն ։ Յայնժամ ոչ ասասցես․
՝ Ո՞ փրկեսցէ զիս ՚ի մարմնոյ Հռոմ
յայսմանէ մահկանացուէ ։ Եւ ոչ 7 · 24
աղաղակեսցես․ ՝ Վա՜յ ինձ, զի ընդ- Սաղմ
երկարեաց եղև պանդխտութիւն իմ․ 119 · 5
զի ընկճեսցի մահ, և եղիցի կեցու-
թիւն անճառելի․ անձկութիւն
ոչ իցէ՝ վայելչութիւն երանական,

ըն

ընկերակցութիւն քաղցր, և զուարճալի։

3. Ո՞ թէ տեսանէիր 'ի յերկինս զպսակս սրբոց մշտնջենաւորս, և թէ որքան այժմ հրճուին 'ի փառս այնորիկ, որք երբեմն քամահելիք էին աշխարհի այսմիկ, և անարժանք համարեալ էին կենաց այնմիկ. արդարև իսկոյն խոնարհեցուցանէիր զքեզ մինչև յերկիր, և բաղձայիր մանաւանդ հպատակ լինել ամենեցուն, քան թէ առաջնորդել միոյն. և ոչ անձկայիր առ աւուրս խնդութեան այսորիկ կենցաղոյս, այլ մանաւանդ ցնծայիր վշտանալ յաղագս Այ. և զառ ոչ ինչ համարիլն 'ի մէջ մարդկան, մեծ իմն շահաւէտութիւն վարկանէիր։

4. Ո՞ թէ այսոքիկ քեզ յուշ լինէին, և խորասուզեալ 'ի սիրտ քո թափանցէին, զի՞ արդ կարէիր երբէք տրտնջալ։ Ո՞չ աշխատութիւնք բանաւորք են առ կեանսն յաւիտենականս։ Ո՞չ է դոյզն ինչ կորուսանելն, կամ շահելն զարքայութիւն երկնից։ Համբարձ ուրեմն զերեսս քո 'ի յերկինս։

Ահաւասիկ ես՝ և ամ՛ սուրբք իմ

ընդ

ընդ իս որք ՚ի կենցաղում այսմիկ կրեցին զմեծամեծ պատուհասս մահու, այժմ ցնծան, այժմ մխիթարին, այժմ են ապահովք, այժմ յարուհանգին, և անդադարեալ ընդ իս յարքայութեան հօր իմոյ յաւիտենիցն:

---

Գլուխ Խը:

Յաղագս աւուր յաւիտենականին, և անձկութեանց այսորիկ կենցաղոյս:

1. Ո՜Վ ամենաերանելի բնակութիւն քաղաքին վերինոյ: Ո՜վ ամենապայծառ օր աւիտենականութեան, զոր ոչ ինչ գիշեր մթագուցանել կարէ, զի մեծագոյն ճշմարտութիւնն ՚ի բերդ միշտ ճառագայթէ. օր խնդութեան յարատեւոյն՝ միշտ անխռովական, որ ոչ երբէք զփոխութիւն ընդ փոխարկէս ՚ի հակառակն: Ո՜հ թէ օրն այն ծագեալ էր զլոյս իւր, և բնաւք կենցաղականք աւարտեալ էին զվախճան: Որ թէպէտ ծագի առ սրբոսն անվախճանականաւն պայծառութեամբ փայլեցեալ, սակայն՝ հեռաւորեալս ՚ի ձեռն հայելւոյ միայն՝ առ պանդխտեալս ՚ի յերկրի:

2. Ծա

2. Ճանաչեն երկնաքաղաքացիքն զնա, թէ՝ որպէս խնդալից իցէ. հեծեն աքսորեցեալ որդիքն Եւայի, թէ՝ որպէս դառն, և ձանձրալի իցէ սա։ Աւուրք սորիկ կենցաղոյս փոքունք են, և չարք, լիք են ցաւովք, և անձկութեք. ուր մարդիկ մեղօք բազմօք աղտեղանան, և որսանին 'ի յախտից բազմաց. բազմօք երկիւղիւք ճնշին, բազմօք հոգովք տարաձգին. բազմօք հետաքրքրութեք տարացնդին, բազմօք ունայնութեք պատատին, բազմօք մոլորութեք շրջապատին, բազմօք աշխատանօք հալին. 'ի փորձութեանց ծանրանան, 'ի հեշտութեանց մեղկանան՝ և 'ի կարօտութէ տագնապին։

3. Ո՛ թէ՝ երբ եղիցի վախճան այսոցիկ չարեաց. երբ ազատեցայց յողորմելւոյ ծառայութենէ ախտից. երբ յիշեցից զքեզ միայն Տէր իմ. երբ ուրախացայց լիապէս 'ի քեզ։ Երբ եղէց թարց իմէք արգելման ըն ճշմարտում ազատութեան, առանց ամէ ծանրութե մտաց՝ և մարմնոյ։ Երբ եղիցի խաղաղութիւն հաստատուն, խաղաղութիւն անդրդուելի և ապահով

հով. խաղաղութիւն՝ ներքին, և
արտաքին, խաղաղութի՛ն յամենից
կողմանց ամրացեալ: Ե՛րբ կայցես
տու 'ի տեսանել զգեղ՝ ով բարի
Յս, երբ յարանկատեցից զփառս
արքայութեան քոյ. երբ եղիցիս
ինձ ամ յամենայնում: Ո՛հ թէ
երբ եղէց ընդ քեզ՝ *յարքայութե Մատթ.
քում, զոր պատրաստեցեր յաւիտե 25. 34
նից քոյոց սիրելեաց: Մնացեալ
եմ աղքատ՝ և վտարանդի յերկրի
թշնամականի, նորում են պատե
րազմունք հանապազորդականք, և
վտարանդութիւնք մեծամեծք:

4. Ափոփեա զաղքատութիւն իմ,
զեքո՛ զցաւ իմ, զի առ քեզ հառաչե
ամ խղճ իմ: Քանզի բեռն է ինձ
ընաւն, զոր 'ի մխոփանս ասա նա
իբրէ ինձ աշխարհ: Ցանկամ ամե
նեքին քե զմայլել, բայց՝ ոչ կա
րեմ արդիւնել: Բաղձամ ներյե
նուլ երկնայնոց, բայց ընկճեն զիս
իրք ժամանակաւորք, և արար ոչ
մահացուցեալք: Մտօք քան զձմ
իր 'ի վերոյ կամիմ, բայց մարմնով
ամենայն ներքոյ ասխիմ: Այս
պէս՝ եմ թշուառ ընդ իս հակա
մարտիմ, և ծանրացեալեմ ինձ
ինքեանս, մինչ հոգի 'ի վեր՝ և
մարմ

մարմնին 'ի վայր գալ խորհրդոց:
5. Ո՜հ՝ զինչ կրեմ 'ի ներքուստ,
մինչ առաձեռնեմ մտօք զիրս երկնայ-
նոց, խռնին ամբոխք մարմնականք
Սաղմ. ինձ առհանդէպ լինին: * Ա՜Ծ իմ, մի
70. 12 հեռանար յինէն, և մի խոտորիր
բարկութեամբ 'ի ծառայէ քումմէ:
Սաղմ. * Փայլեա զփայլատակունս քո, և
143. 6 ցրուեա զնոսա. առաքեա զնետս
քո, և խռովեսցին ամ երեւոյթք
թշնամւոյն: Վերածողեա առ
քեզ զիմ զգայութիւնս, մոռացո
ինձ զբնաւ իրս աշխարհականա-
ւորս ինձ փութով 'ի բացմերժել
և քամահել զցնորմունս մոլութեց:
Հաս ինձ 'ի թիկունս, ով Ճշմար-
տութի յաւիտենական, զի մի շարժե-
ցէ զիս ունայնութիւն ինչ: Մատիր
առ իս, ով երկնային քաղցրութիւն,
և փախիցէ յերեսաց քոց ամ անմաք-
րութիւն: Ներողեա յիս, և ողոր-
մութ. քով ներեա, որքանիցս յա-
ղօթելն իմ՝ բաց 'ի քէն, զայլմէ
խոկամ: Քանզի՛ խոստովանիմ ի-
րաւի, թէ ամփորեալեցեմ յոյժ տա-
րացրուեալս զիս ունել: Զի
բազմիցս անդ ոչ եմ, ուր մարմնա-
պէս կամ, և զետեղիմ. այլ յաւէտ
անդ, յո՛ բերիմ 'ի խորհրդոցս:

Անդ

Ընդ եմ ես, ուր է խորհուրդ իմ:
Ընդ է յանձնարկէն խորհուրդ իմ,
ուր գոյ այն, զոր սիրեմն: Այն
խնդրյն հանդիպի ինձ, որև ընա
կանարար բերկրեցուցանէ, կամ
'ի սովորութենէ համոյ թուի:

6. Ասացի գու՞ մի Ճշմարտու-
թիւն, յայտնապէս ասացեր. ՚ զի Մատթ.
ուր գանձ ձեր է, անդ և սիրտ ձեր 6. 21
եղիցի: Եթէ սիրեմ զերկինս, յօ
ժարապէս զերկնայնոց խորհիմ:
Եթէ սիրեմ զաշխարհ, խնդակ
ցիմ երջանկութեանց աշխարհի,
և տրամիմ սակս նորին ընդդիմա
դարձութեանց: Եթէ սիրեմ զմար
մին, զոր ինչ մարմնոյն է բազմիցս
երևակայեմ: Եթէ սիրեմ զհո
գի, զհոգեւորաց խորհրդոց զուարճա
նամ: Քանզի զոր ինչ և սիրեմ,
զնոյնոյն խօսիմ յօժարապէս, և
լսեմ, և զպատկերս նորին ա
ծեմ ընդ իս 'ի միտ իմ: Բայց
երանի մարդոյն այնմիկ, որ վասն
քոյ, ընտրեալ ամենայն արարածոց զբա
ժանումն յաղթէ, զբնութիւնն
'ի բռնադատէ, և զցանկութիւնս
մարմնոյ խոյս՝ ջերմեռանդութեամբ
հոգւոյն, նուաճէ. զի մատուցէ
խղճի մտօք, զաղօթս մաքուրս
ձեղ

քեզ վերընծայեսցէ, և արժանի լի-
նիցի գտանել՝ ՚ի մէջ հրեշտակացն
խմբից, գովել ներքսառակս՝ և ար-
տաքսառակս ՚ի բնաւից երկրայնոց
՚ի բազմեկնեցեալ։

## Գլուխ ԽԹ։

### Յաղագս փափագման կենին յաւիտե-նականի․ և թէ՝ որքան իցեն բա-րիքն խոստացեալք պատերազ-մողաց։

1․ ՈՐդեակ, մինչ ՚ի քեզ ըղ-
տռփումն անխախտականն
երանութեան ՚ի վերուստ զգաս հե-
ղանել, և բաղձաս ելանել ՚ի սենե-
կէ քոյոյ մարմնոյ, զի զպայծառու-
թիւն իմ առանց ստուերի փոփոխ-
ման համանկարել կարիցես․ Ըն-
դարձակեա՛ զսիրտ քո, և ամբու ըղձիւ
զներշնչումն զայն սբ վերընկալ։
Մատո՛ զառատագոյն շնորհակա-
լութիւնս վերնոյն բարութեանն, որ
ընդ քեզ այսպէս հաճի ներգոր-
ծել, զթածաբար այցանել, ջեր-
մապէս զարթուցանել, և կարողա-
պէս նպաստել, զի մի յատկակա-
նաւ քոյով ծանրութեամբ սահիցիս
առ երկրայինս։ Եւ ոչ ընդունիս
զայս

զայս քոյովդ խոկմամբ, և ջանիւ, այլ միայնով արժանաւորութեամբ վերնայնոյ շնորհի, և ամենայնոյ վերանկատման. զի ՚ի զօրութիւնս, և ՚ի խոնարհութիւն մեծագոյն յառաջանայցես, և առ հանդերձեալն մարտ զքեզ նախապատրաստիցես, ՚ի յիս խակ բոլորիւ բղձիւ սրտի ապյենուցուս, և ջերմեռանդութեամբ հաճոյութ ծառայել փութայցես ։

Հ. Որդեակ՝ բազմիցս հուրն քերբերի, բայց՝ առանց ծխոյ ոչ բարձրանայ բոցն ։ Այսպէս՝ բազումք են, որոց ցանկութիւնք բորբոքին առ երկնայինս, սակայն իղձք նոցին ոչ են ազատ ՚ի փորձութեանց մարմնականաց ։ Վասն որոյ՝ ոչ կարեն աշխատիլ բոլորովիմբ զբաւապէս վասն պատուոյն իմ, զոր այնքան բաղձանօք ՚ի նմանէ հայցեն ։ Այսպէս է բազմիցս և քոյդ ցանկութիւն, զորմէ վկայեցեր գոլ անտանելի ։ Քանզի՝ ոչ է զուտ, և կատարեալ, որ սեպհականաւ հեշտութեամբ է՝ ներախառնեալ ։

Հ. Հայցեմ, ոչ զայն՝ որ քեզ է անձկալի, այլ զայն, որ ինձ է ընդունելի. զի եթէ ուղղապէս զատիցես, առաւել յարգել պարտիս զիմս

պահպանման իմ, քան զբաղդ ցանկու-
թեան, և քան զինչս ոչ ցան-
կալիս, և նմին հետևիլ: Ծառա
չեմ ես զբաղդ ցանկութեան, և ըն-
ամ զհաստատութեան բայց յանձինս:
Այսպէս կամիս զօղ նաղատութե
փառաց որդւոյն ոչ. այժմ ըերբ
ըեցուցանել զգեղ առանն յուրեան
նախանձ, և երկնայինն հայրենեաց, որ
է ըն խնդրութ... բայց ոչ զեննս
հասանել մանն. զի զօղ առաքումն
այլ իմն մատնեալ, այսինքն՝ մա
մնեալ պատերազմի, մատնեալ
աշխատանաց՝ և փորձութեան:
Բաղձաս թերևս՝ վերաբերեալ մի
հաղումեն բարեաւ, բայց ոչ կա
րես այժմ առանձնալ զնոյնն: (Ես
ինքն եմ. ասպասեմ ինձ) առ. Տէր
մինչև եկեսցէ արքայութիւն իմ:
4. Փորձիլ ապաշխարհի առաքումն,
և ներկերթել՝ ի յերկիրս: Տերեսցի
քեզ երբեմն ախորժանն այլ ոչ
շնորհեսցի քեզ առատ լնութեան:
Բ. ամբողջ երեւոյ ուրեմն, և ըեր այլ
զօրութեան, այնքան ՝ի յառաջել,
Ես. ԽԷ. որքան ՝ի կրելիս զհանդստութեան ըն
4. 24 նութեան: Պատրաստ է քեզ զդե
Ա. Թ. Է. նուլ զնոր մարդն, և փոփոխել
10. 6 զքեզ ՝ի յայլ իմն մարդ: Պատրաստ է
քեզ

քեզ բարւոքս առնել զայն, զոր
ես կամիմ. և թողուլ զայն, զոր կա-
միս: Յառաջադասցի այն, որ այլոց
է հաճոյ, խակ որ քեզ է հաճոյ, ոչ
առաջադիցի: Լուիցի այն, զոր այլք
ասեն. խակ այն, զոր դու ասես,
առ ոչինչ համարեսցի: Խնդրեսցեն
այլք, և առնուցուն. խակ զոր դու
խնդրես, ոչ ընդունեսցես:

5. Եղիցին այլք մեծահամբաւ-
եցեալք 'ի բերանս մարդկան, խակ
զքեն լռեսցի: Այլոց այս ինչ.
կամ այն ինչ յանձնեսցի, խակ դու
առ ոչինչ օգտակար գոլ դատես-
ցիս: Վա՛ սորին երբեմն բնու-
թիւն քո տխրեսցի. և մեծ ինն է՝
եթէ լռութեամբ ընկերիցես: Դայս
պիսիս, և'ի բազումս այսին նմանս,
հաւատարիմ ծառայք տեառն
են փորձիլ, թէ որպիսաբար ուրա-
նալ գիտիցեն, և յամենայն զիջա-
նել կարիցեն: Զի ոչ է այնպիսի
ինն, նորում այնքան մեռանելոյ
կարօտանայցես, որքան ըն տեսա-
նելում, և ըն կրելում զայնոսիկ,
որք կամաց քոց են հակառակք.
մանաւանդ՝ մինչ հրամայի քեզ առ-
նել զայնպիսին, որք անպատեհք
տեսանիցին քեզ, և անօգուտք: Ե-

գէ

զի ոչ իշխես ընդդիմամարտել
բարձրագունեղն զօրութեն, գոլով
'ի ներքոյ տէրութեան. մի՛ որոյ՝
կարծր ինչ թուի քեզ՝ հրջիլ բա
նչմարման այլոց ուրուք, և թո
ղուլ զքոյդ անպէտական զգայողու
թիւն :

6. Բայց խորհեաց՝ որդեակ, ըն
պտղոյ այսոցիկ աշխատանաց, զա
րագահաս վախճանէ սոցին, և
զվարձուց յոյժ մեծամեծաց. և
ոչ ունիցիս անդուստ զծանրութի,
այլ զանեւ քոյոյ համբերութեան
զմխիթարութիւն : Քանզի՝ և յա
ղագս փոքու համձութեան, զոր
այժմ յօժարաբար 'ի բացընկե
նուս, ունիցիս միշտ զհամձութիւն
քո յերկինս : Զի՛ անդ գտցես
զամ՛, զոր կամիս, և զամ՛, զոր բաղ
ձալ կարես : Անդ ունիցիս զիշ
խանութն բոլորից բարեաց, թարց
երկիւղի կորուսանելւոյ : Անդ եղի
ցի կամ քո միշտ մի ընդ իս. ոչ
տափացէ խիփք արտաքնոյ, կամ
առանձնականի : Անդ՝ ոչ ոք հա
կառակեսցի՛ քեզ, ոչ ոք արտնջա
ցէ զքեն, ոչ ոք արգելուցու զքեզ,
և ոչ ինչ ընդդիմացի քեզ. այլ
ընաւ բաղձալիք միահաղոյն եղի
ցին

ցին քեզ ՚ներկայք, և զբոլոր խիղճ
քո զովացուսցեն, և առլցուսցեն
մինչև խաղաղ։ Ընդ հատուցից
զփառս՝ փոխանակ ՚նախատանաց.
չնորհերձն գովութիւն՝ փոխանակ
տխրութեան. զգահոյս արքայութեան
՚ի յաւիտենան փոխանակ յետնոյն
տեղւոյ։ Ընդ երևեսցի պտուղն
հնազանդութեան. խնդասցէ աշ_
խատութիւն ապաշխարութեան, և
փառաւորապէս պսակեսցի հպա
տակութիւն խոնարհ։

7. Այժմ ուրեմն խոնարհապէս
լեր հպատակ ՚ի ներքոյ ձեռաց ա_
մենեցուն. և մի եղիցի քեզ փոյթ,
թէ ո՛ զայս ինչ ասաց, կամ հրամայ
եաց։ Այլ մեծաւ ջանիւ հոգա՛,
զի եթէ նախամեծար ոք, թէ ման
կագոյն ոք, և թէ հաւասարակից ոք,
խնդրիցէ ինչ ՚ի քէն, կամ հրամայ
իցէ, զբոլորն փոխանակ բարւոյ
ընդունիցիս, և միամտութ[ե]ամբ փու
թասցես կատարել։ Խնդրեսցէ
ոմն զայս, և այլ ոմն զայն. փառաւ
որեսցի ոք յայսմիկ, և այլք յայն
միկ, և գովեսցի հազարիցս հազար
անգամ. բայց դու ոչ յայսմիկ, և
ոչ յայնմիկ. այլ ՚ի յարհամարհանս
քոյս, և ՚ի բարեհաճութիւն՝ և ՚ի
պա

ապաւէն իմ՝ միայն խնդում։ Այսպէս եղի-
Փիլիպ. ցի քեզ բարձրացի, զի՝ թէ կենօք,
1. 13 և թէ մահուամբ, փառաւորեսցի
'ի քեզ միշտ Ած։

---

## Գլուխ Ծ։

### Թէ որպիսաբար ընծայեալ պարտ է մատուցանել զինքն 'ի ձեռս Աս-տուծոյ։

1. Ո՜վ Տէր Ած՝ և Հայր սուրբ, եղի-
ցի օրհնեալ, և յաւիտեան
բարեբանեսցի. զի որպէս կամիս,
այնպէս լինի. և զոր առնես, բա-
րի է։ Խնդասցէ 'ի քեզ ծառայ
քո, ոչ յանձն իւր, և ոչ յայլ ինչ
այլ. զի դու ես միայն խնդութիւն
ճշմարիտ, դու յոյս իմ, և պսակ
պարծանաց, դու ցնծութիւն իմ, և
պատիւ իմ՝ Տէր։ Զի՞նչ ունի ծա-
1 Կորն. ռայ քո, զոր ոչ ընկալեալ 'ի
4. 7 քէն, թէպէտ և առանց արդեանց.
Քոյք են ամէնք, զորս շնորհեցեր
ինձ, և զորս արարեր ընդ իս։
Սաղմ. Տնանկ, և վաստակաւոր եմ ես
87. 16 'ի մանկութենէ իմմէ. և տխրի հո-
գի իմ երբեմն մինչեւ յարտասուս,
և երբեմն վրդովի յինքեան՝ յա-
ղագս ախտիցն յարուցելոց։

2. Փառաւորեմ խոստովանականին իմն
գոհութեամբ. և ժամեմ զխոստովանու-
թիւն որդւոց քոց, որք լուսով
մխիթարութեան 'ի քեն մնացին
նին. Եթէ շնորհիցես ինձ զխոստովա-
նութիւն, և հնչեցուցես 'ի յիս զերգս
գոհութեան իմ, լցցի հոգի ծառայի
քոյ որ հնարանութեամբ, և ջերմե-
ռանդութեամբ 'ի գովութիւնս քոյս.
բայց եթէ հեռանայցես յինէն, ըստ
որում բարկեցար առ ինձ, ոչ կարաս-
ցէ՛ ընթանալ զճանապարհս պատ- Սաղ.
ուիրանաց քոց. այլ յաւէտ առ 118·32
'ի գերծել զհոգւոց իմ, ծունկք
որքին կարանան. զի ոչ եղիցի նմա
ով երեկին և եռանդն, մինչ ճրագ-
քո ոչ ծառայութեամբ 'ի վերայ Յոբ
գլխոյ նորա. և ընդ համբառնա- 29·3
թեանց քոց նախախնամութեամբ 'ի փառ- Սաղ.
աւորութեանց վերախառնեցելոց: 16·1

3. Հայր սուրբ, և միշտ գովե-
լի, հանապազ ժամ' զի փորձիցի ծա-
ռայ քո: Հայր սիրելի՛ արժան
է, զի ծառայ քո 'ի ժամուս այս-
միկ կրիցէ ինչ վասն քոյ: Հայր
ժամանակեայ պատուելի, և հա-
մանին, զոր յառաջագոյն նախատե-
սեր դու հանդերձեալ. զի զգոյն
ինչ ժամանակ առաջադիմիցի առ

տաղիս ծառայ քո, բայց կեցցէ միշտ 'ի նեղիս առ քեզ. գոյնիւ բանին վարկեսցի՝ խոնարհեցայ, և նուաղեցայ առաջի մարդկան, 'ի յախտից, և 'ի ցաւոց նուաճեցայ. զի վերստին ընդ քեզ ընդ արքա յայս նորոյ ծագմանն յարիցէ, և ի յերկնային փառաւորեսցի: Հայր արբը՝ դու այսպէս հրամայեցեր և այսպէս կամեցար. և եղև այն պէս՝ որպէս պատուիրեցեր:

4. Քանզի՝ այս է շնորհ քաւմբա րեկամի, զի շարշարեսցի՝ և վշտա կեսցի վն սիրոյ քո յաշխարհի այս միկ, ողբասցէ՝ և յորոց գոհանայ ցէ: Թէպէտ խորհրդոյ քում, և նախատեսութեան, և թէպէտ սպա ծումն՝ ոչ ինչ լինի 'ի վերայ երկրի:

Սաղմ. Բարի է ինձ՝ Տէր, զի խոնար

118. 71 հեցուցեր զիս. որպէս զի ուսայց զար

դարութիւնս քո, և 'ի բաց ընկեցից զամենայն գոռոզութիւն, և զինքնահաւա նութիւն: Օրհնեալ է ինձ,

Սաղմ. զի ծածկեաց ամօթ զերեսս իմ.

68. 8 որպէս զի մանաւանդ զքեզ՝ քան թէ

զմարդիկ, 'ի մխիթարութիւն ինձ խնդրեսցեմ: Այսպէս ես ուսանիմ զերկիւղ 'ի քումմէ անքննելի դատաստանէ. որ վշտանեկեա զոր

գործ

գային ընդ ամենայնի, բայց՝ ոչ
առանձին պատուհասութեան, և արդա
րութեան:

5. Շնորհակալեմ զքեզ, զի ոչ
ներեցեր չարեաց իմոց, այլ հարեր
զիս գանիւք ցաւագունիւք, ան
կանելով ՚ի յիս զցաւս, և յղելով
առ իս զնեղութիւնս, ներքինս և
արտաքինս: Ո՛չ ոք է ՚ի բնաւից,
որք են ՚ի ներքոյ երկնից, որ կարի
ցէ մխիթարել զիս, եթէ ոչ դու՝
Տէր Աստուած իմ, երկնաւոր բժիշկ
հոգւոց: *որ հարկանես՝ և բժշ 1. Թա.
կես, տապալես ՚ի դժոխս՝ և վե 2. 9
րածես: Եղիցի *խրատ քո ՚ի վե Սաղմ.
րայ իմ, և գաւազան քո ուսուս 17. 36
ցէ զիս:

6. Ահաւասիկ՝ Հայր սիրելի, ՚ի
ձեռս քոյ եմ ես, ՚ի ներքոյ գաւա
զանի ուղղութեան քոյ խոնարհեցու
ցանեմ զիս: Հա՛ր զթիկունս իմ,
և զպարանոց իմ, զի կորացուցա
նիցեմ զխեղաթիւրութիւն իմ ըստ
կամաց քոց: Արա՛ զիս աշակերտ
բարեպաշտօն՝ և խոնարհ, բայց
որպէս բարւոք սովո՛ր ես առնել,
զի շրջեցայց ըստ քում ա՛մի նշանա
կութեան: Յանձնեմ քեզ զիս, և
զինչ իմս առ ՚ի ուղղել· բարեգոյն
է

է սաստ յանդիմանիլ, քան թէ 'ի
հանդերձելումն: Դու զխաւս ըզ-
բնաւս, և զխորամանկութիւնս, և ոչ
ինչ կարէ թաքչիլ 'ի քէն ըն մարդ-
կային՝ բազմութենէն: Յա-
ռաջ քան թէ լինիցին՝ ծանօթ են 'ի
քեն հանդերձեալք, և ոչ է քեզ
պէտս, թէ այլք ուսուցանիցեն
քեզ, կամ ազդիցեն քեզ զայնս
ինչ, որք ներգործին 'ի մերայ երկ-
րի: Դու գիտես՝ թէ զինչ իցէ
ինձ պատշաճ առ յառաջադիմու-
թիւն իմ, և թէ որքան պիտոյ իցէ
ինձ մշտադնութիւն, առ 'ի մաք-
րել զկեղծիս մոլութեց: Աղա-
չեմ զքո բարեհաճութիւն քոյան
կայլի, և մի արհամարհեսցես զմեղա-
ւոր կեանս իմ, որ ըստ մեզ այնքան
բարերարես՝ և յաջողութեամբ ծանօթ
է, որքան քեզ մերձեմ:

7. Տուր ինձ Տէր, գիտել զայն,
որ գիտելի է. սիրել զայն, որ սի-
րելի է. գովել զայն, որ քեզ ծայ-
րագոյն հաճոյ է. պատուել զայն,
որ քեզ պատուական թուի. ատ-
ել զայն, որ ատելի է յաչս
քոյ: Միթէ թողուցուս ինձ իմ ատե-
թեան այսր արտաքնոց դատել, և
մի ըստ լսոյ ականջաց արանց ա-
համ

հանից դատաւորել. այլ դատաստա-
նի ծնանողին, զերծանելոյ, և զհա-
տկանաց տրամադրելոյ. և 'ի մեր
յուն զմանր, զկամս բարեհաճու-
թեն զա մեզ խորհել։

8. Խորհրդական բաղձիւս 'ի դա-
տելն զգայութեամբ մարդկան. խո-
րին եւ սիրողք կենդանդոյն զերծե-
լու միայն սիրելով։ Օրինակ մարդ-
կանց բարեգոյն, զի համարեցի մե-
ծագոյն 'ի մարդկանէ։ Խորհրդոյ
զկարեւոր, անուանի զանուանս, կայր
զկայր, հեշտեաց զհեշտեաց, այսպէս,
միով զնա բարձրացուցանէ. և խո-
կալէս յանձնարանէ զնա, միով
ընդմեծ զանգտրանէ։ Քանզի որ
յանէ խորհրդականութեան յայս բայս,
այլբան է, և ոչ առնուել, առաջ
խնամքընկ աւրին փրանեկկա։

---

## Գլուխ Ժա.

### Թէ 'ի գործս խոհական ներքնայ-
### նութ է, մինչ նախախնամ 'ի քէ
### հաճոյանք։

1. ՈՐպէսզի ոչ կարես կալ
միշտ ընդդիմանալ առաջ ա-
նու բարձրն առաքինութեանց, և ոչ
կարես համամբառնալ ընդ բարձրա-
գոյ

գունով տարրմանն համանմանութեան. այլ հարկ է քեզ, զի երբեմն սակս սեղ ընականին ապականութեան՝ ու տարբաղդոյս իջանիցես. և բարձցես զբեռն ապականացուի այսորիկ կենցաղոյս, թէև սակաւ, և ընդ ձանձրութեան: Յ'որժամ ժամանակ զմահկանացուդ այդ մին 'ի քեզ կրես, զգաստես զձանձրութիւն, և զծանրութիւն սորա: Պարտ է ուրեմն բազմիցս 'ի մարմնի գոլով, այսու զբեռն մարմնոյ. զի ոչ կարես անդադարապէս ներլինուլ 'ի հոգեկան կրթութիւնս, և յանձնային համանմանութեանս:

2. Այժմ վայելուչ է քեզ համադիմել առ խոնարհս, և առ արտաքին գործս, և սփոփել զքեզ 'ի յոյս բարիս. այսպէս հաստատնով յուսով խնամ դարմանեսն և վերնոյ այցելութեան. և համբերաբար տանել զամ պանդխտութեան, և ցանկութիւն մտաց քոց, մինչև վերստին այցելութեան քեզ, և այսանցից զքեզ 'ի բնաւից անձկութեանց: Քանզի տաց քեզ մոռանալ զաշխատանս, և ներքնոյն յոյսով անդորրութեան վայելել: Տարածեցից առաջի քո զանդաստանս գրոց սրբոց, զի

ըն

լայնացելով սրտիւ սկսանիցիս ըն-
թանալ զճանապարհս պատուիրա-
նաց իմոց: Եւ ասիցես. ՝Ոչ են Հռոմ
համեմատ անձինք չարչարանք այսորիկ 8 . 18
ժամանակի, հանդերձելոյն փա-
ռացն, որ յայտնելոց է 'ի մեզ:

---

Գլուխ ԾԲ:

Թէ ոչ է համարելի զինքն արժանի
մխիթարութեան, այլ յաւէտ պատ-
ժապարտ գանից:

1. Տէ՛ր, ոչ եմ արժանի
քում մխիթարութեան, և
ոչ հոգեկանի ինչ այցելութեան.
վասն որոյ՝ արդարապէս առնես ընդ
իս, մինչ զիս՝ անանկ, և զանանց
թողուս 'ի թշուառութեան: Քանզի թէ
և հանգոյն ծովու զարտասուս հե-
ղուլ կարիցեմ, տակաւին քում
մխիթարութեան ոչ եմ արժանի:
Ուստի՝ ոչ ինչ արժանի եմ, և-
թէ ոչ ձաղել, և պատժել. զի
ծանրապէս, և բազմիցս վշտացու-
ցի զքեզ, և ընդ բազումս կարի յան-
ցեայ: Արդ՝ ըստ ճշմարիտ խոկ-
ման քննելի, և ոչ փոքրագունիցն
ինչ արժանի եմ մխիթարութեան:
Բայց՝ դու բարեգութ, և ողոր-
մած-

մահն ես, որ ոչ կամիս զկորուստ
Հռոմ. ՚ստեղծուածոց քոց, առ ՚ի յայտ
9. 23 նել զմեծութիւն բարութեան
քոյ յանօթս ողորմութեան, եւ
առանց սահմանականի խնդիր որդեան,
մխիթարես զծառայս քո ՚ի մերքսոյն
զերջանիկ մարդկային Վ.մնոյ՝
քոյք ախտութիւնք, ոչ են իրրեւ
զատուադրաբարութիւն մարդկայ
նաս:

2. Օ՜ն, բարուոյ գործեցի, եր
իմ՞ զի շնորհեցես ինձ զմխիթարու
թիւն իմն երկնային: Եւ ոչ ինչ
կերպիւ ենթադրեալ զիս, թէ
զբարի ինչ գործեալ լինէի, այլ թէ՛
միշտ ՚ի մեղս յաճախ լինելոյն,
եւ ՚ի Դրժողութեան նոյին յոյլ երկայ
նեալ: Ճշմարիտ է, զի ոչ կարեմ
՚ի բաց թողուլ: Եթէ բացայայտ
զնոյին, ընդդիմամարտեցի գու
րեցին, եւ այսք կարէր ճառագա
յել զիս: Այլ՝ զինչ արդեօք
ընդդէմ վասն մեղաց իմոց, եթէ ոչ
զգածմամբ, եւ զհոգւոյն առաքինական
Ճշմարտութիւն խոստովանելով, զի
արժանի եմ հանդերձեալ կորստեան
նոցա՝ եւ յաւիտենական, եւ ոչ է վայել
թէ համարձակեցայց ՚ի մէջ քոյոց սր
բոցն եկից: Եւ թէպէտ զայս դատն է
իմն

ինձ լինել. առաջայն ընդդէմ ինձ ին
քեան, ասեա Հզօրութեամբ՝ յան
դիմանեմ զմեղս իմ, զի դիւրաւ
սրբութեան օրինակին զօրութեան
քո աստուածայ:

5. Ով Տէր, առաջին աստուածս
սրբութեան, և լցեալ Համայնիւր
ստացուածութեանց: Ո՞վ ունի զդէ
րան խոստի զայլ ինն բան, բայց
յայտնեսի: Մեկեր, Տէր՝ մեղայ.
ընդդիմեալ ինձ, և տեսցես ինձ:
Թող՝ աւելի ինձ աւելի ինն, զի 10. 20
ծառայեալ զջան իմ, յաւետ բան
Թէ երեսն ընկալ բերկիր խաւարայ
ին, և ծածկեալ մեղաց մահու:
Ով Տէր՝ ամենայն յանձն պաՀանջես
՝ի պատմ առաքեալ, և ՝ի Թշնամու
ցելոյ խնկել մեղաւորի, եթէ ոչ՝
զի առաքեալ իցէ, և խոնարհեցի
առնել յանցանաց իւրոց: ՝Ի Հզօր
ութե աստուածանէ, և ՝ի խոնարհ
մանէ արդի, ծնանի յոյժ Թշնամե.
Հաստատեալ զանձն ամբարիշտն բառ
դիւրութեան. մերձ յօրինին կարօտե
ցեալն շնորհ. աղաչանաւ մարդ
յայտնու Թշնամեաց Թենէ. և Համ
դիւղին մեղաւորաց փախուցանէ. ամ
և աղաչանօքն Հոգի, ՝ի Հանդէպ
սրբութեան:

4. Խոնարհ աղաչանօք մի
ջանալով, քեզ Տէր, և պատարագ
ընդունելի, որ առնել բարե
զմտաւորահամութիւն իւր առաջին քո
Ղուկ. քան զառաջին և խնդրեն: Ասէ
7. 38 Եւ օծանելին այն ամենայն, զոր ո-
տից քոց արտասուելեայ նկրտեցանելի
Սաղմ. կամեցար. Զի զսիրտ փշրեալ և
50. 19 խոնարհ, ոչ երբեք արհամարհե-
ցեր: Այն է տեղի սուրբ յիշեալ յե-
րեսաց բարկութեան թշնամւոյն:
Անդ զգաստ և լուանեալ, որ ինչ
պղծեալ քարշի և ապականեալ է:

---

Գլուխ ԺԴ:

Թէ զգուշաւ Հաղորդութեան ընդ խոր-
հուրդ ընդ Եկեղեցւոյ:

1. Պարտական ամենայն է զգոյշն
լինել, և ոչ կարէ ամենել, զի
խառնեալն ընդ իւրոց աղօթօք,
կամ մտախոհութեան երկրոց
նոց: Պարտ է քեզ ուրեմն 'ի բաց
ձգել զբնաւ արդարութեան զգուշն,
եթէ բարձրա զոյգն զգուշ մեր
ընդունել: Խորհուրդն քեզ զառանձ-
նութիւն, բնակեա մտայնոց ԺԴ քեզ,
մի յայտնել զառաւելութիւնն
ուրախ. այլ մանաւանդ հեղ առա

էի

զի Աստուածոյ զհանգստեան քոյս ըեր
մեռանդս, զի տաժհեցես զձեռ քո
խոնարհեալ, եւ զդատաստանութիւն քո
ժամուր: Առ ոչ ինչ վարկեալ զոր
յօր աշխարհս. զկրաւքն անձայինն
բնութիւն իւրոց արարածոց նախա_
դրեալ: Քանզի ոչ կարես արար
ուել 'ի յետ, եւ մտանգաւորն իբրեւ
ունելով զօրեն արձանել: Պարտ
է բեռ 'ի ծանօթեց, եւ 'ի սիրելեաց
հեռանալ, եւ 'ի բնութեան մարմնոյ
կրիանաց մխիթարութեց զձեռն զա
արձելով: Աշխարհս աղերսեմ ստոր
աստանդեայն Պետրոս, թէ հանդերձ
հասարակութիւն. Քեզ ' իբրեւ զնժդ 1 Պետ.
եհս՝ եւ զպանդխտութեան ունիցին 2. 11
զնիկեայն յաջմիկ աշխարհի:

2. Մ՛թէ՛ որքան հանդարձակու-
թի եղիցի ստն, որ մերձ է 'ի մեռա-
նել. զոր ոչ խնկէք իրի խղձ արդելու-
թաշխարհին: Այլ զանձին սրբաղես
զիրու խաբ մեկնեցեալ յանեքից
իրաց ոչ խնամոց տակաւին ախա
րաժմա որ. եւ ոչ ջնջաւոր որ ձեռնա
ղենդրթեայն մարդոյ զաղաստանի:
Բայց ասակայն՝ եթէ արդարեւ կա
միցի որ լինել հոգեւոր, պարտի ա-
րանալ գինեաւորս՝ եւ զմերձա-
րու. եւ յառաջեալ այնքան զզուշա

նալ

նալ, որպէս յինքեան։ Եւ թէ զինքն-
կատարելապէս յաղթահարեսցես,
զմնացեալս դիւրաւ ենթարկես-
ցես։ Կատարեալ յաղթութիւն
է, զինքեան հրամանաւ կալ։ Վասն
որ զինքն հպատակեցեալ ունի ի՛ն
քեան, զի զգայութիւնն բանակա
նութեան իւրում, և բանականու-
թիւնն ընդ ինքեան իւր հնազանդիցի,
նա ճշմարիտ յաղթօղ է ինքեան,
և տէր աշխարհի։

3. Եւ թէ առ այս ծառայութեն մի-
բանալ անձնաս, սկսիր է քեզ քա-
ջալես սկսանիլ, և զատամարտն առ-
նուլ ընդ, զի խլեսցես, և հաստա-
տեսցես զծառուկ, և զանկարգ նեղ
միտմունս ՛ի քեզ, և առ ամ մարմին
և նուիթասր բարի։ Յայսմանէ
մարթ է, որով որ զանձն իւր կա-
րի անկարգ ասկէս սիրէ, կարի զա-
նեա ընտան, որ յաղթահարէ զի է
արհամարհար․ դրդայութեն չարն է-
թէ յաղթահարեսցես՝ և տարրան
կեցեալ, երկրի խաղաղութի մեծ,
և անդորրութիւն յարատեւ։

Բայց՝ զի առաքէն, որք ինքեանց
կատարելապէս մեռանիլ ջանան,
կամ ձկտել սրտագրեալ ինքեանց. մի
որոց՝ մնան պարտուցեալ ՛ի յին
քեանս

ձեռնս, և ոչ կարեն 'ի վեր բառ-
նալ զինքեանս վերացմամբ հոգւոյ: Իսկ՝
որ ապաստանեալ ընդ իս շրջել կամի,
հարկ է, զի զհանգիստն մանկունս, և զան-
կարգ զգածմունս իւր, մեռուցա-
նիցէ. և ոչ խնդրէ անեղծուածոյ
առաքինականութեան սիրով առա-
ջին առաջնոցս:

## Գլուխ ԾԸ:

### Յաղագս չքննելոյ բարձրագունից իմաստից, և գործոց:

1. Որդեակ՝ զգուշասցիր առ-
գիտելս զչարժմանս իր
ութեան, և չարչարաց. զի կարի՝
հանգստանալ են մխեալոց՝ և նորա
պէս շարժին. և հոգին 'ի հոգւո
րոց, և 'ի նեղութեան լուսաւորէ-
ցելոց արանց արժանաւորսն: Առ
գործ ամէն որ ախորժէ զբարիս, և
բարի իմն վերագրէ 'ի բանս, և
'ի գործս իւր. զի որոյ՝ բարեացն
են, որք խորհին 'ի նեղեալ սրտո
բուռնելի բարւոյ:

2. Բնութիւն նեղութեան է, և
զբարութեան քաղէ առ ինքն, որպէս՝
և պտուղ, և զինքն մխէ ունի մա
նուն վախճանի. իսկ Շնորհն պար
զա-

զատկէս չքնի, խաւարի յամենից տե-
սակաց չարեաց․ ոչ դիւրէ առ խա-
ղէութիւնս, և զնոյն ինչ առնէ զը-
տառակս յաղագս այ, նորա՛ն և եղե-
րակս յարաձանդչի։

3․ Ընտելութիւնն ախտանց մեռա-
նել կամի, ոչ խնդրէ յաղթահա-
րել, ոչ ենթարկել, և ոչ տարա-
ծել․ իսկ Շնորհն ջանայ ամե-
նահաստատ յառաջանալ, ընդ-
դիմանայ զգայականութեան, խնդրէ
հպատակել, ախորժէ յաղթահա-
րել՝ և ոչ կամի զանձնական ազա-
տութիւն իւր ՚ի կիրարկանել․ ցան-
կայ լինել ՚ի ներքոյ խրատուց, և
ոչ բաղձայ տիրել ումեք․ այլ կեալ
միշտ ՚ի ներքոյ կամացն այ, մնալ՝
Ա Պետ. և գալ․ ևևս, վն այ՝ ընտելից՝ բա-
2. 13 ռերձումանց մարդկան արարածոց
է խոնարհաբար հնազանդել։

4․ Ընտելութիւնն յաղագս իւրոյ
հեշտութեան ջանայ, և հայեցի ըղ
ձանն որ յայլոց լինելոյն յառա
ջադայլի․ իսկ Շնորհն ոչ զայն, որ
օգտակար՝ և հեշտալի է ինքեան,
այլ զայն, որ բազմաց շահաւէտ է,
յաւէտ վերաբերեալ է։

5․ Ընտելութին յօժարաբար զպա-
տիւս, և զմեծարանս վերընդու-
նի

նի. Իսկ Տէրն զամբարտաւանս, և
զփառս՝ համատարածութեամբ Աստու
ծոյ ատընէանէ :

6. Երանութիւն երկնիցն 'ի աղքատս
անձանց, և 'ի քամահանաց. իսկ
Տէրն խնդալ մեզ անուանն Յի Գործք
սուսի զքամահանս կրել : 5. 41

7. Երանութիւն սիրէ զդատարկու
թիւն, և զհանգիստ մարմնականն.
իսկ Տէրն զաշխատս դով ոչ կա
րէ, այլ յաժմարարս փարի սուս
խառնայք :

8. Երանութիւն խնդրէ ունել
զմեծամեծս և զգեղեցիկս, խորշի
'ի խաւարեաց՝ և 'ի խոշորից. իսկ
Տէրն զանարգանս 'ի միամիտս,
և 'ի խոնարհս, զխաչ որ ոչ արհա
մարհէ, և ոչ փախչի 'ի զգեստուց
զնանկերան հնացեալս :

9. Երանութիւն նայի 'ի ժամանա
կաւորս, խնդայ 'ի շահս երկրաւ
քինս՝ տրտմի զկորստեան, զայրանայ
թեթև խօսք բանիւք անիրաւութե-
իսկ Տէրն զխաւ առ մշտնջենա
ւորս՝ և ոչ նեցուկ ժամանակաւ
րաց. ոչ տրտմի զկորստեան իրաց,
և ոչ ցասնու 'ի բանս խստաց. քանզի
զի զգանձ իւր, և զճնդութիւն Ղուկ
'ի յերկինս, ուր ոչ ինչ կորնչի՝ կայա 12. 33
ցուցանէ :

10. Բնութիւնն ագահ է, և յօժարագոյնս առնու՝ քան թէ շնորհէ, սիրէ զյատուկս և զառանձնականս. իսկ Շնորհն առատաձեռն է՝ և հասարակ, խորշի յառանձնականաց՝ բաւականանալով սակաւուք,
Գործք. 20. 35 երանելագոյն գտանէ՝ զտալն, քան զառնուլն:

11. Բնութիւնն կորացեալ գտանէ առ արարածս, առ յատուկ մարմինն՝ առ ունայնութիւնս, և առ արտաքին թափառութիւնս. իսկ Շնորհն քարշէ առ Ած՝ և առ զօրութիւնս, հրաժարի յարարածոց՝ փախչի յաշխարհէ, ատէ զցանկութիւնս մարմնոյ՝ զսպէ զթափառականութիւնս, պատկառի երեւել ՚ի հրապարակս:

12. Բնութիւնն յօժարի ունել զմխիթարութիւն ինչ արտաքին, որ ՚ի նմին զգայարանացն լինի զուարճութեան. իսկ Շնորհն խնդրէ զնն միայնում Աստուծում մխիթարութիւն, և ՚ի մեծ հաճութեանն բարոյն ՚ի վեր քան զբնաւ երեւելիսն զուարճանալ:

13. Բնութիւն առնէ զամ ինչ վասն շահու, և վասն յատկականին իւր օգտութեան, ոչ ինչ կարէ առնել ձրի, այլ կամ առ հանդէպ, կամ առ-

ու բարեգոյնն, կամ՝ ու գովու-
թի, կամ ու խնամ՝ ինչ ասելս բա-
րեգործութեան յուսոյ ժամանել.
և բազմայ՝ զի ասէ, և ձիրք իւր մե-
ծագործ իցեն. խոկ Տէրն զոյ ինչ
ժամանակաւ որ խնդրէ. և ոչ զվարձ
ինչ. այլ հայցէ զնոյն միայն ասեն
վարձու իւրոյ. և այնքան կարօտի
ժամանակաւորաց կարեաց, որքան
պիտոյք իցեն ինքեան ՝ի ժամա-
նումն իւրոյ ու խանեմակսեաց:

14. Ընտութիւն խնդրոյ ՝ի բա-
րեկամս, և ՝ի մերձաւորս, պարծի
՝ի նշանաւոր անգին իւր, և ՝ի ծա-
ռայմն առնելն. ծիծաղի զհզօրեաց՝
